



# 21-րդ դար

«Նորագույն» գիտակրթական հետազոտական հանդես

4 (62)

ԵՐԵՎԱՆ

2015

# 21-ՐԴ ԴԱՐ

## տեղեկատվական-վերլուծական հանդես

Լուս է տեսնում 2003 թվականից

4 (62), 2015

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

#### Ալեքսանդր Գասպարիշվիլի

Սոսկվայի Մ.Վ. Հոմնոսովի անվան պետական համալսարանի լաբորատորիայի վարիչ, փ.գ.թ.  
(Սոսկվա, ՌԴ)

#### Ալեքսանդր Կորնիլով

Նիժնի Նովգորոդի Ն.Ի. Լոբաչևսկու անվան պետական համալսարանի  
արտասահմանյան տարածաշրջանագիտության և տեղային պատմության ամբիոնի  
վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր (Նիժնի Նովգորոդ, ՌԴ)

#### Աշոտ Թավաղյան

ՀՊՏ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

#### Արամ Սաֆարյան

Բանասիրական գիտությունների թեկնածու

#### Արթուր Աթանեսյան

ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, ք.գ.դ.

#### Բարեկեն Վարդանյան

«Հայկ հաստատություն» հ/կ տնօրեն, ՀՀ պաշտպանության նախարարի ավագ  
խորհրդական

#### Գագիկ Հարությունյան (համակարգող)

«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

#### Զավեն Եկավյան

Դոկտոր, պրոֆեսոր (Լիսաբոն, Պորտուգալիա)

#### Էդուարդ Լ. Դանիելյան

«Նորավանք» ԳԿՀ խորհրդական, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի  
պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ.

#### Կարեն Վ. Կարապետյան

Տնտեսագիտության դոկտոր (Սոսկվա, ՌԴ)

#### Հրանուշ Հակոբյան

ՀՀ Սփյուռքի նախարար, ի.գ.դ.

#### Միհրան Դարան

Դոկտոր, պրոֆեսոր, Ռուբի համալսարանի պատմության ֆակուլտետին առընթեր  
Սփյուռքի և Յեղասպանության ինստիտուտի տնօրեն (Բոյսում, Գերմանիա)

#### Մուշեղ Լալայան

ՀՀԿ փոխնախագահ

#### Սամվել Մանուկյան

IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի  
վերլուծաբան, ս.գ.թ.

#### Սեյրան Օհանյան

ՀՀ Պաշտպանության նախարար, զեներալ-գնդապետ

#### Սերգեյ Գրինյան

Ռազմավարական գնահատականների և կանխատեսումների կենտրոնի  
գլխավոր տնօրեն, տ.գ.դ. (Սոսկվա, ՌԴ)

#### Վարդան Հարությունյան

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ վարչության նախագահ-գլխավոր տնօրեն, տ.գ.թ.

# 21-ՐԴ ԴԱՐ

տեղեկատվական-վերլուծական հանդես

Թիվ 4 (62), 2015թ.

## ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր իսլամիկ  
Գագիկ Հարությունյան

Պատասխանատու  
իսլամիկ  
Խոնարհիկ  
Քարառողլանյան

Պատասխանատու  
քարտուղար  
Լուսինե Բաղրամյան

Աննա Ժամակրյան  
Արեստակես Սիմավորյան  
Էդուարդ Դանիելյան  
Սերգեյ Սարգսյան  
Վահրամ Հովյան

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### Գագիկ Հարությունյան

Տեղեկատվական գործողություններ  
պատմություն և արդիականություն ..... 5

### Սամվել Սարտիրոսյան

Հայաստանի կիբեռանվտանգության  
խնդիրների մասին ..... 16

### Էդուարդ Դանիելյան

Հայաստանի պատմաքաղաքակրթական  
ժառանգության նշանակությունը տեղեկատվական  
անվտանգության ոլորտում ..... 30

### Ալեքսանդր Սանասյան

Ղարաբաղյան հակամարտությունը  
ԽՍՀՄ տրոհման համատեքստում ..... 47

### Վարդան Աթոյան, Սոֆյա Օհանյան,

### Արփինե Սալօջյան, Շուշան Սովորյան

Հայաստանի բուհական հումանիտար  
վերլուծական կենտրոնները ..... 78

### Վահրամ Հովյան

Հունաստանի հայ համայնքը ..... 94

### Արծրուն Հովհաննիսյան

XX դարի վերջին պատերազմների դասերը ..... 104

### Սերոբ Սուցյան

Անհամաշափ պատերազմը և անջատողականությունը  
որպես XXI դարի պատերազմների հիմնական տեսակ ..... 117

### Արման Մանասերյան

Մրցակցային մարմինները և պետության  
գնային միջամտության խնդիրները ..... 126

### Արուսյակ Ալեքսանյան

Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի  
համեմատական միջերկրային վերլուծություն ..... 138

Հուշագիր հեղինակին ..... 153



# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ<sup>1</sup>

## Գաղիկ Հարությունյան\*

Բանալի բառեր՝ տեղեկատվական պատերազմներ և գործողություններ, «տրոյական ձի», Լառկոռն, ազդեցության գործակալ, տեղեկատվական պատերազմների էվոլյուցիա:

Տեղեկատվական պատերազմները և գործողությունները, դրանց նշանակությունն արդի քաղաքականության մեջ և կենսագործունեության այլ ոլորտներում այսօր դարձել են լայն քննարկումների առարկա: Սակայն երբեմն տպավորություն է ստեղծվում, որ նման պատերազմների էությունը փոքր-ինչ պարզունակ է ներկայացվում և մեկնաբանվում, ինչն, իր հերթին, դժվարացնում է տեղեկատվական անվտանգության առանց այդ էլ բարդ խնդիրների լուծումը: Արդի «տեղեկատվական իրողությունների» ավելի արեկվատ ընկալման համար օգտակար է իմանալ այդ հարցի ինչպես էվոլյուցիան, այնպես էլ ներկա վիճակը: Ուստի, սկզբում կարծ պատմական եքսկուրս կկատարենք, իսկ հետո համառոտ կդիտարկենք տեղեկատվական գործողությունների և պատերազմների մասին արդի պատկերացումները:

### «Տրոյական ձի» գործողությունը. արդի վարկած

Որպես հեռավոր պատմական անցյալում իրականացված տեղեկատվական գործողության դասական օրինակ հաճախ հիշատակվում է Տրոյայի գրավման՝ Ողիսևսի մշակած և իրագործած պլանը (մ.թ.ա. XII դար): Այս իրադարձությունը, որպես կանոն, դիտարկվում է որպես հակառակորդին ապատեղեկացնելու (խաբելու) գործողություն, ո՛չ ավելին: Սակայն ավելի հանգամանալի վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել մտահղացման խորությունն ու հույների ռազմավարական մտածողության բարձր մակարդակն այն հեռավոր ժամանակներում:

<sup>1</sup> 22.05.2015թ. «Նորավանքյան ընթերցումների» ժամանակ կարդացած դասախոսության հիման վրա:

\* «Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն:

Ինչպես նկարագրում է Հոմերոսն (մ.թ.ա. VIII դար) իր հանձարեղ «Իլիական» էպիկական պոեմում, հույները մոտ տասը տարի պաշարել էին Տրոյան, բայց քաղաքը գրավել չեր հաջողվում: Նրանց ջանքերը, թերևս, այդպես էլ ապարդյուն կմնային, եթե Ողիսնար չառաջարկեր սրամիտ մի գաղափար: Ըստ նրա մտահղացման՝ հույները մի հսկայական փայտե ձի պատրաստեցին (որը մեզ հայտնի է «տրոյական ձի» անվամբ), որի մեջ տեղավորեցին հույն զինվորների ընտրյալ մի ջոկատ: Հետո աքեացիների զորքը հավաքեց վրան-ները, բեռնեց նավերն ու թռողեց ծովափը, բայց ուրևորվեց ոչ թե դեպի Հունաստան, այլ Տրոյային մոտ կղզիներից մեկը՝ ափին թռղնելով «փայտե ձին»:

Պարզամիտ տրոյացիները, ուրախանալով հույների «փախուստով», սկսեցին հետաքրքրությամբ ուսումնասիրել փայտե նժույզը՝ չհասկանալով դրա իմաստն ու նպատակը: Այսինքն՝ Ողիսնաի ապատեղեկատվական գործողության մեջ կարևոր տեղ էր զբաղեցնում *հոգերանական ներգործության* հայտնի էֆեկտը, երբ այս կամ այն երևույթը չհասկանալը, որպես կանոն, շփոթեցնում, ապակողմնորոշում է մարդկանց և նրանց դրդում չմտածված քայլերի. նման դրսորումներ մենք տեսնում ենք նաև այսօր: Հենց այդ պահին էլ սկսվում է գործողության երկրորդ փուլը. իր առաջադրանքի կատարմանն է անցնում Իլիոնում Ողիսնաի գաղտնի գործակալ Սինոնը: Նա սկսում է «օգնել» տրոյացիներին հասկանալ իրավիճակը՝ նրանց համոզելով, որ «տրոյական ձին» Աթենաս աստվածուհու նվերն է, դրա համար էլ պետք է քանդել ամրոցի պատը, «ձին» մտցնել Տրոյա և պահել որպես սրբություն: Բոլոր հատկանիշներից ելնելով՝ Սինոնին պետք է համարել գրավոր արձանագրված առաջին «ազդեցության զործակալը» և «զործակալ ազիտատորը» միաժամանակ. չէ՝ որ նրան հաջողվեց իր պերճախոսությամբ ազդել «որոշումների ընդունման» զործընթացի վրա: Ակնհայտ է, որ առանց Սինոնի ջանքերի հունական պլանը հազիվ թե իրականանար: Բայց դա դեռ ամենը չէր:

«Փայտե ձին» Տրոյա մտցնելուն ընդդիմացավ քուրմ Լառկոռնը՝ հայտարելով, թե դա հույների հերթական նենգությունն է և քաղաքին մեծ դժբախտություն կբերի: Այլ խոսքով՝ իմաստուն քուրմը, որը նաև կանխատեսման շնորհ ուներ, փորձում էր պաշտպանել Տրոյայի շահերը և *հակասազիտացիա* վարել Սինոնի դեմ: Գուցե Լառկոռնի խոսքերն ազդեցություն ունենային, եթե այդ պահին ծովից դուրս չգային երկու մեծ օձեր և չխեղդեին քրմին ու նրա որդիներին (մեկ այլ, ավելի դաժան վարկածով օձերը սպանեցին միայն նրա

որդիներին, որպեսզի Լառկոռնը ողջ կյանքում սպար նրանց մահն ու գղջար արածի համար): Կասկած չի հարուցում, որ օձերի հետ կապված պատմությունն առասպելաբանական այլաբանություն է: Իրականում, ամենայն հավանականությամբ, խորամանկ Ողիսևսը կանխատեսել էր իրադարձությունների նման ընթացքը և, Սինոնի տիպի ազդեցության գործակալներից բացի, Տրոյայում ձևավորել էր նաև «հատուկ գործակալական խումբ», որի խնդիրն էր Սինոնի ընդդիմախոսներին չեզոքացնելը: Նրանք կատարեցին առաջադրանքը և ինչ-որ ձևով վերացրին Լառկոռնին: Այսպիսով, ակնհայտ երևում է այն ճշմարտությունը, որ լավ կազմակերպված «ազդեցության գործակալներին» հաճախ հաջողվում է չեզոքացնել նրանց, ովքեր պաշտպանում են իրենց «ազգային շահերը»: Լառկոռնի հանկարծակի մահը վճռորոշ գործոն է հանդիսանում տրոյացիների համար, որպեսզի վերջիններն ընդունեն Սինոնի առաջարկը. քաղաքի պատերը քանդվում են, և փայտե ձին տեղ է գտնում քաղաքում:

Մնացածն արդեն, ինչպես ընդունված է ասել, տեխնիկայի գործ էր: Գիշերը զինված հույները դուրս են զալիս «տրոյական ձիուց», սպանում են իրենց «հաղթանակը» տոնող և ամենայն հավանականությամբ այդ պատճառով ոչ այնքան սթափ տրոյացի պահապաններին, իսկ մերձակա կղզում թաքնված հունական զորքը, պայմանական նշանն ստանալով, շտապում է Տրոյա: Շարունակությունը, թերևս, հատուկ մեկնաբանությունների կարիք չունի:

Սակայն չի կարելի բացառել նաև այն հավանականությունը, որ «փայտե ձին» Հոմերոսի գեղարվեստական երևակայության արգասիքը եղած լինի: Հնարավոր է, որ մեծ հույնը դրանով պարզապես գեղարվեստորեն նկարագրել է բազմաքայլ, այդ թվում և տեղեկատվա-հոգեբանական գործողությունների միջոցով ամրացված քաղաքները գրավելու՝ այն ժամանակ կիրառվող ռազմավարությունը: Սակայն բոլոր դեպքերում Տրոյական գործողությունը «ստրատեգեմայի» իրագործման դասական օրինակ է, ինչը նշանակում է ռազմական կամ քաղաքական նպատակներին հասնելու խորամանկ պլան, յուրատեսակ ձանապարհ: Ստրատեգեմաների արվեստը Եվրոպայում հետագայում զարգացավ ինչպես Հունաստանում, այնպես էլ Հոռմեական կայսրությունում (հայտնի է Մերսոս Հուլիոս Ֆրոնտինի «Ստրատեգեմաներ» աշխատությունը): Արևելքում այս ոլորտին առանձնակի ուշադրություն էին հատկացնում չինացիները, և անուղղակի գործողությունների առավել համակարգված կանոնները ներկայացվել են չինացի ստրատեգ և փիլիսոփա Սուն

Յզիի (մ.թ.ա. VI դար) «Տրակտատ ռազմարվեստի մասին» աշխատությունում (տե՛ս, օրինակ, [1, 2]):

Եթե փորձենք ընդհանրացնել Սուն Յզիի հայեցակարգը, ապա թշնամու դեմ պայքարում գերակա են համարվում անուղղակի, հաճախ՝ զուտ տեղեկատվական գործողությունները, որոնց միջոցով հարկավոր է հասնել «թշնամու մոտ եղած ամեն լավ բան կործանելուն, նրա նշանավոր ներկայացուցիչներին հանցավոր գործողությունների մեջ ներքաշելուն, նրանց հասարակության աշխում ծաղրուժանակի առարկա դարձնելուն, համագործակցության համար ամենազգվելի անձնավորություններին օգտագործելուն»: Հատկանշական է, որ Սուն Յզիի հայեցակարգի հիմնական դրույթներից մեկը՝ «հակառակորդի մոտ խառնաշփոթ և քառս ստեղծիր, և դու կհաղթես նրան», այսօր դրված է *REND* կորպորացիայի կողմից *Պենտագոնի* համար մշակված այսպես կոչված երկրորդ սերնդի տեղեկատվական պատերազմների հայեցակարգի հիմքում (տե՛ս ստորև):

Տեղեկատվական գործողություններն այս կամ այն ձևով կիրառվել են մարդկության մղած գրեթե բոլոր պատերազմներում: Ավելին, XX դարասկզբին, Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, ստեղծվել են հատուկ պետական կառույցներ, որոնց խնդիրն էր հենց նման գործողություններ մշակելը և իրականացնելը: Մեծ Բրիտանիայում, օրինակ, ստեղծվել էր տեղեկատվության նախարարություն լորդ Բիլվերբրուքի ղեկավարությամբ, որի խնդիրների մեջ էր մտնում ակտիվ ազիտացիոն և պրոպագանիստական աշխատանքն Անտանտի հակառակորդ երկրների դեմ: Այդ նախարարությունը լայնորեն օգտագործում էր ապատեղեկատվական գործողությունները Բրիտանական կայսրության ընդհանուր քաղաքականության համատեքստում և դարձել է անզիացի հանճարեղ գրող Չորջ Օրուելի «1984» հակառատոպիական վեպի «Ճշմարտության նախարարության» նախատիպը: Ինչպես հիշում ենք, «Ճշմարտության նախարարությունը» գործում էր «Ճշմարտությունը՝ դա սուտն է» նշանաբանով: Հատկանշական է, որ Օրուելը կանխատեսել էր նաև համակարգիչների ի հայտ գալը, որոնց օգնությամբ «Ճշմարտության նախարարության» աշխատակիցները պարբերաբար խմբագրում էին պատմությունը՝ ելնելով նոր քաղաքական իրադարձությունների տրամաբանությունից: Նշենք, որ անզլոսաքսերն իրենց բնորոշ մտավոր կապիտալի և ավանդույթների հանդեպ հոգատար վերաբերմունքից ելնելով

պահպանել և զարգացրել են տեղեկատվա-հոգեբանական ներգործության մեթոդները: Նրանք այսօր առաջատար դիրք են զբաղեցնում աշխարհում:

Տեղեկատվական պատերազմների վարման մեկ այլ հզոր կառույց դարձավ 1920թ. բոլշևիկների կողմից ստեղծված Ազիտացիոն-պրոպագանդիստական բաժինը՝ «ազիտայրոպը»: Սակայն այդ մարմինը ժամանակի ընթացքում կորցրեց իր հեղափոխական ավյունը, դեզրադացվեց և այդ պատճառով էլ պարտություն կրեց Սառը պատերազմում և անփառունակ վախճան ունեցավ ԽՍՀՄ փլուզման հետ մեկտեղ: Նշենք նաև Երրորդ ռեյխի տեղեկատվական կառույցը՝ «Ժողովրդական լուսավորության և պրոպագանդայի» ռեյխսմինիստր Յոզեֆ Գեբելսի գիսավորությամբ: Հարկ է ընդունել, որ նախարարությանը հաջողվեց սկզբնական շրջանում մորթիլիզացնել Գերմանիայի բնակչությանը նացիոնալ-սոցիալիզմի գաղափարների շուրջ: Բայց, ինչպես հայտնի է, նրանք նույնպես տիսուր վախճան ունեցան: Սակայն վերադառնանք մեր դարաշրջան:

### **Արդի տեղեկատվական պատերազմների էվոլյուցիան**

Տեղեկատվական գործողությունների արդի բովանդակությունը և տերմինաբանությունը սկսել են ձևավորվել 1991թ. [3]: 1998թ. արդեն մշակվեց ԱՄՆ Պաշտպանության նախարարության «Տեղեկատվական գործողությունների միավորված հայեցակարգը»: Այդ փաստաթղթում, որի հիմքում դրվեցին RAND կորպորացիայի («ուղեղային կենտրոն») մշակումները, ներկայացված են, մասնավորապես, «տեղեկատվական գործողություն» և «տեղեկատվական պատերազմ» հասկացությունների հետևյալ սահմանումները.

- տեղեկատվական են համարվում այն գործողությունները, որոնք ձեռնարկվում են հակառակորդի տեղեկատվական համակարգերի կողմից տեղեկատվության հավաքումը, մշակումը, փոխանցումն ու պահպանումը դժվարացնելու նպատակով՝ սեփական տեղեկատվությունն ու տեղեկատվական համակարգերը պաշտպանելիս,
- տեղեկատվական պատերազմը համալիր ներգործությունն է դիմակայող կողմի պետական կառավարման համակարգի և նրա ռազմաքաղաքական դեկավարության վրա, որն արդեն խաղաղ ժամանակ կարող է հանգեցնել տեղեկատվական պատերազմ վարող երկրի համար նպաստավոր որոշումների ընդունման, իսկ զինված հակամարտության

ընթացքում կարող է լրիվ կաթվածահար անել հակառակորդի կառավարչական ենթակառուցվածքի գործառնությունը:

Բերված ձևակերպումից հետևում է, որ տեղեկատվական պատերազմը տեխնիկական և հոգևոր-հոգեբանական տիպի ինֆոգեն սպառնալիքների իրագործումն է: Մշակումներն այս ուղղությամբ շարունակվում են, և ներկայում գործնական հարթություն է տեղափոխվել «Երկրորդ սերնդի» տեղեկատվական պատերազմների հայեցակարգը: Եվ եթե առաջին սերնդի պատերազմը դիտարկվում է որպես կարևոր բաղադրիչ՝ ավանդական միջոցների կողքին, ապա երկրորդ սերնդի ժամանակ այն ձեռք է բերում ինքնուրույն նշանակություն: Այն խնդիրների շարքում, որոնք ենթադրվում է լուծել նման տիպի տեղեկատվական պատերազմների օգնությամբ, առանձնացնենք հետևյալները.

- հոգևորությունից և բարոյականությունից գուրկ մթնոլորտի, հակառակորդի մշակութային ժառանգության հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում,
- հանրային գիտակցության և երկրի բնակչության սոցիալական խմբերի քաղաքական կողմնորոշման մանդպուլացում՝ քաղաքական լարվածություն և քառո ստեղծելու նպատակով,
- անվստահության և կասկածամտության տարածում, քաղաքական պայքարի թեժացում կուսակցությունների միջև, փոխընչացման հրահրում,
- ազգի և պետության կենսականորեն կարևոր շահերի վնասում քաղաքական, տնտեսական, պաշտպանական և այլ ոլորտներում:

Դմվար չէ նկատել, որ այդ սերնդի տեղեկատվական պատերազմների որոշ դրույթներ հիշեցնում են Սուն Ցզիի «Ստրատեգիմաները»: Հայտնի է նաև, որ տեղեկատվական պատերազմների մեթոդաբանությունը լայնորեն կիրառվում է «գունավոր» հեղափոխություններում, եթե ներգործող կողմը, մարտական գործողությունների չղիմելով, լուծում է իր առջև կանգնած քաղաքական կամ գաղափարախոսական խնդիրները: Հարկ է ընդգծել, որ հզոր և չվերահսկվող տեղեկատվական հոսքերի առկայության պարագայում, որոնք նույնպես հանրային գիտակցությունում «վիրտուալ քառո» են ստեղծում (տե՛ս, օրինակ, [4]), գրեթե անհնար է արգելող (կամ միայն արգելող)

մեթոդներով դիմակայել ինֆոգեն սպառնալիքներին։ Արդյունավետ հակազդեցությունը հնարավոր է միայն տվյալ հանրության հոգեմտավոր ռեսուրսների կրիտիկական զանգվածի առկայության և այդ ռեսուրսները նաև տեղեկատվական անվտանգության համատեքստում լավագույն կերպով օգտագործելու կարողության պարագայում։ Այլ խոսքով՝ հեղափոխությունները հնարավոր են լոկ այն երկրներում, որոնցում ինտելեկտուալ ռեսուրսները սակավ են, իսկ գաղափարախոսական և սոցիալ-տնտեսական կառավարման համակարգը գործում է անարդյունավետ։

Միևնույն ժամանակ, XXI դարում «ստրատեգիզմաների» տեսությունը և պրակտիկան սրբնթաց զարգանում են, և այսօր աշխարհում ի հայտ են եկել նոր, արդեն երրորդ սերնդի տեղեկատվական պատերազմներ։

### **Ինքնաձինանսավորվող հոգեբանա-թմրանյութային պատերազմներ ընդդեմ ներքին թշնամու**

Քայլում են ոչխարները, զարկում են՝ թմրուկները,  
Դրանց կաշին տալիս են իրենք՝ ոչխարները։  
*Բերթոլդ Բրեխտ (1898-1956)*

Տեղեկատվական գործողություններն ուղղված են ընդդեմ արտաքին թշնամու, և դրանց հիմնական նպատակն իրականության աղեկվատ ընկալումը խափանելն է և դրանով իսկ հակառակորդին այնպիսի արարքներ պարտադրելը, որոնք ուղղված են ընդդեմ սեփական շահերի։ Հայտնի է, որ գրեթե նույն արդյունքի կարող է հանգեցնել ոչ միայն վերբալ կամ հոգեբանական, այլև հոգեմետ (փսիխոտրոն)<sup>1</sup> ներգործությունը։ Նման այլ միջոց են թմրանյութերը, և այս համատեքստում բավական ուսանելի են Բրիտանիայի «ափինային պատերազմները» Չինաստանի դեմ XIX դարում։ Ումանք այդ պատերազմները դիտարկում են որպես առևտրային կոնֆլիկտ, իբր բրիտանացիները դրանով իսկ ուզում էին ընդամենը Չինաստանից իրենց ներմուծումը կոմպենսացնել ափինի արտահանվող մատակարարումներով։ Բայց առավել խոհեմ հետազոտողները նշում են, որ չինական շուկայի «բացումը» թմրանյութերի մատակարարման առջև (ինչին ընդդիմանում էին չինացի կայսրե-

<sup>1</sup> Прокофьев В.Ф., Проблема психотронного оружия и психотронной войны, <http://csef.ru/ru/oborona-i-bezopasnost/348/1965>.

րը) նպատակ ուներ «բթացնել և քայքայել» թմրանյութերի օգտագործման հակում ունեցող չինացի չինովնիկներին և չինական հասարակությանն ընդհանրապես: Իսկ ռազմավարական նպատակը Չինաստանի քաղաքական ենթարկեցումն էր: Ավիտունային պատերազմների ժամանակակից բրիտանացի դիվանագետն արտահայտվում էր այն ոգով, թե «քանի դեռ Չինաստանը մնում է թմրամոլների ազգ, մենք չպետք ենք վախենանք, որ այդ երկիրը կվերածվի լուրջ ռազմական տերության»: Ավիտունային պատերազմների հատկանշական գծերից մեկն էլ այն էր, որ ռազմատնտեսական կամպանիան Չինաստանի դեմ հիմնականում մղվում էր ի հաշիվ թմրանյութերի այդ նույն մատակարարումների, այսինքն՝ որոշակի իմաստով պատերազմն «ինքնաֆինանսավորվող» էր: Ավելի պարզեցված ձևով նման գաղութային քաղաքականություն վարկում էր աբորիգեններին «կրակե ջուր» վաճառելիս:

Հայտնի է, որ այսօր էլ աշխարհաքաղաքական մրցակիցների դեմ կիրառվում են նման մեթոդներ: ΩΤ Թմրանյութերի շրջանառության վերահսկման դաշնային ծառայության տվյալներով՝ ամերիկյան գորքերի Աֆղանստան մտնելուց հետո ավիտունի կակաչի արտադրությունն ավելացավ գրեթե 40 անգամ<sup>1</sup>: Թմրաթրաֆիկի հիմնական ուղղությունները դարձան Կենտրոնական Ասիան և Ռուսաստանը: Մի շարք հրապարակումների համաձայն՝ մաքսանենգային գործողություններին նպաստում են ամերիկյան հատուկ ծառայությունները:

Սակայն վերջին ժամանակներս արևմտյան հասարակություններում «բացահայտել» են, որ արտաքինից բացի՝ գոյություն ունեն նաև «ներքին» թշնամիներ: Սույն «բացահայտումը» կապված է հետևյալ հանգամանքների հետ. այսօր աշխարհը գտնվում է հեղափոխական փոփոխությունների շեմին, և դա միայն բազմաքննությունների աշխարհակարգի ձևավորումը չէ: Մի շարք խոշոր սոցիոլոգների, քաղաքագետների և փիլիսոփաների կարծիքով՝ այսօր ճգնաժամ է սկսվում ընդհանրապես կապիտալիստական համակարգում, և նրա ոչ հեռու ապագան սցենարների մեծամասնությունում լավատեսություն չի ներշնչում (տե՛ս, օրինակ, [5]): Բնական է նաև այն, որ այս միտումների իրագործման տիտուր արդյունքները բավական աղեկված են ընկալում նաև արևմտյան հասարակության ողջախոհ հատվածը, որը սպառողական հասա-

<sup>1</sup> *Любовь Лулько*, Как США посадили Россию на героин,  
<http://topwar.ru/36131-kak-ssha-posadili-rossiyu-na-geroin.html>

բակության արժեքների բացարձակացման և տեղեկատվական տոտալիտարիզմի պայմաններում սկսում է սուր արձագանքել հասարակական-քաղաքական ոլորտներում վատթարացող իրավիճակին: Արդյունքում՝ ընդլայնվում են բողոքի շարժումները և դժգոհության այլ դրսևորումները, ինչը չի կարող չանհանգատացնել իշխանության դեկին գտնվողներին: Սակայն պարկեշտության անգամ խիստ արժեզրկված «պոստեմոլորատական» նորմերը թույլ չեն տալիս բացահայտ ձնշել բողոքողներին: Դրա հետ մեկտեղ, պարզապես արդեն անհնար է դարձել «Ներքին թշնամիների արարքները» հանդուրժելը: Կան բոլոր հիմքերը ենթադրելու, որ այլախոհության դեմ պայքարի համար սկսել են կիրառել նաև թմրանյութերը. չէ՝ որ մարդիկ դրանց ազդեցության տակ այլ իրականություն են տեղափոխվում, որտեղ ավելի քիչ են խնդիրներն ու ավելի շատ են հաճելի զգացողությունները: Նկատենք, որ ավելի վաղ հասարակության զարգացման վեկտորը կենսա-դեղաբանական (քիո-ֆարմակոլոգիական) տեխնոլոգիաների միջոցով փոփոխելու հնարավորության մասին նշել է նաև Ֆրենսիս Ֆուկույաման [6]:

Այս ամենի համատեքստում ուշագրավ է այն փաստը, որ վերջին տարիներին ամենուրեք տեղի է ունենում «քեթև թմրանյութերի» լեզալացում ինչպես Եվրոպայում, այնպես էլ ԱՄՆ-ում (համապատասխան օրենքներ են ընդունվել արդեն ավելի քան 20 նահանգում): Այնինչ, 1937թ. մարիխուանայի օգտագործումն այս երկրում արգելված էր դաշնային կառավարության կողմից: Նշենք, որ թմրանյութերն ասես «հավելվում» են ուղեղների մշտական «լվացումներին», իսկ նման սիներգետիկ հարձակմանը բավական դժվար է դիմանալ: Այլախոհության դեմ պայքարի նման մեթոդը պետք է բավական արդյունավետ համարել, և նախատեսվում է «առաջալոր» տեղեկատվաթմրանյութային փորձը տարածել նաև այլ երկրներում: Միլիարդատեր Ռիշարդ Բրենսոնի կարծիքով՝ այս իմաստով բավական հեռանկարային է թվում Ուկրաինան<sup>1</sup>:

Հայտնի է, որ տեղեկատվական պատերազմներ վարելը բավական թանկ և ծախսատար գործ է: Մինչդեռ, ինչպես և Չինաստանի դեմ «ափիոնային պատերազմների» դեպքում, նոր տեսակի թմրա-տեղեկատվական պատերազմները (հնարավոր է՝ դրանք արդեն պետք է վերագրել երրորդ սերնդին)

<sup>1</sup> <http://mir24.tv/news/society/12510260>.

նույնպես ինքնաֆինանսավորվող են և մեծ շահույթներ են բերում: Հայտնի է, որ համաշխարհային թմրաթրաֆիկը գնահատվում է տարեկան ավելի քան \$0.8 տրլն, այսինքն՝ համադրելի է նավթի շրջանառության շուկային: Հաշվարկված է նաև, որ եթե տեղի ունենա մարիխուանայի լեզաւացում Ամերիկայի բոլոր նահանգներում, ապա «արդեն առաջիկա տարիներին մարիխուանայի արտադրության ընդհանուր շուկայական արժեքը կհասնի \$36,8 մլրդ-ի՝ \$3 մլրդ-ով գերազանցելով օրգանական սննդարդյունաբերության շուկայի ծավալը»<sup>1</sup>: Ինչպես տեսնում ենք, ինչպես և «ափիոնային պատերազմների» ժամանակ, քաղաքական գործիչների և թմրավաճառների շահերը լիովին համբնվում են:

*Հունիս, 2015թ.*

### Աղյուրներ և գրականություն

1. Китайская военная стратегия (*составитель- В.В. Малевина*), М., Изд-во АСТ, 2002.
2. *Харро фон Зенгер*, Стратагемы, т.1-2, М., Изд-во Эксмо, 2004.
3. *Сергей Гриняев*, «Поле битвы – киберпространство», Минск, 2004.
4. *Андрей Быстрицкий*, «Возрождение вида: «Гражданская журналистика против «профессиональной»: кто и как влияет на самосознание общества». Власть, # 19(1124), с. 26, 2015.
5. *Иммануил Валлерстайн, Рэндалл Коллинз, Майкл Манн, Георгий Дерлугян, Крэйг Калхун*, Есть ли будущее у капитализма?, М., Изд-во Института Гайдара, 2015.
6. *Фрэнсис Фукуяма*, Наше постчеловеческое будущее: последствия биотехнологической революции, М., Изд-во АСТ, 2008.

### ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

#### *Գաղիկ Հարությունյան*

Ամփոփագիր

Հոդվածում դիտարկվում են տեղեկատվական իրողությունների էվոլյուցիան և արդի իրավիճակն այդ ոլորտում: Տեղեկատվական պատերազմները և գործողությունները, դրանց նշանակությունն արդի քաղաքականությունում և կենսագործունեության այլ

<sup>1</sup> *Валерий Куликов*, США и наркотики,  
<http://ru.journal-neo.org/2015/05/10/devil-s-weed-is-getting-legal-in-the-us/>.

ոլորտներում այսօր դարձել են լայն քննարկումների առարկա: Սակայն հաճախ նման պատերազմների էռուժունն ընկալվում և մեկնաբանվում է փոքր-ինչ պարզեցված, ինչն իր հերթին դժվարացնում է տեղեկատվական անվտանգության ապահովման ավելի քան բարդ խնդիրների լուծումը: Այնինչ այսօր ձևավորվում է տեղեկատվական պատերազմների նոր տեսակ, որոնք պահանջում են բազմակողմանի և մանրակրկիտ ուսումնասիրություն:

## ИНФОРМАЦИОННЫЕ ОПЕРАЦИИ: ИСТОРИЯ И СОВРЕМЕННОСТЬ

*Гагик Арутюнян*

### Резюме

В статье рассматривается эволюция информационных реалий и нынешняя ситуация в этой сфере. Информационные войны и операции, их значение в современной политике и в других сферах жизнедеятельности сегодня стали предметом широких обсуждений. Однако иногда складывается впечатление, что суть подобных войн представляется и трактуется несколько упрощенно, что в свою очередь затрудняет решение более чем сложных задач по обеспечению информационной безопасности. Между тем сегодня формируется новый тип информационных войн, которые требуют разностороннего и тщательного исследования.

## INFORMATION OPERATIONS: HISTORY AND MODERNITY

*Gagik Harutyunyan*

### Resume

The article reviews the evolution of information realities and their current situation. The information wars and operations, their significance in modern politics and other areas have become subjects for extensive discussions. However, the essence of such wars is often perceived and interpreted in somewhat simplified manner, which in turn makes it difficult to resolve extremely complicated problems of information security. Meanwhile, a new kind of information warfare is emerging, which requires comprehensive and thorough study.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԻԲԵՌԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԸԵՐԻ ՄԱՍԻՆ

*Սամվել Մարտիրոսյան՝*

*Քանալի բառեր՝ Հայաստան, համացանց, տեղեկատվական անվտանգություն,  
կիբեռանվտանգություն, Աղբքէջան, Թուրքիա:*

Կիբեռպատերազմները ներկա աշխարհի անբաժան մաս են դառնում: Մի շարք երկրներ արդեն ընդունել են անվտանգության ռազմավարություններ, որոնք ենթադրում են պաշտպանություն կիբեռհարձակումներից: Մյուս կողմից, նմանատիպ հարձակումները հաճախ ընթանում են քողարկված, իսկ դրանց բացահայտվելու դեպքում միշտ չեն, որ հնարավոր է ճշգրիտ իմանալ, թե ովքեր են հարձակման պատվիրատուն և իրագործողը:

Կիբեռհարձակումներն աստիճանաբար ավելի արհեստավարժ և վտանգավոր են դառնում: Միևնույն ժամանակ, մարդկության տեխնիկական զարգացումը հանգեցնում է կիբեռհարձակումների տեսանկյունից ավելի ու ավելի խոցելի հանգույցների ստեղծմանը:

Հայաստանը, որպես երկիր և վիրտուալ տիրույթ, նույնպես հանդիսանում է կիբեռհարձակումների թիրախ: 2000թ. տեղի ունեցավ առաջին միջակտական կիբեռընդհարումներից մեկը, նույն թվականի փետրվարին արձանագրվեց հայ-աղբքէջանական առաջին խոշոր ընդհարումը<sup>1</sup>:

Հարձակման են ենթարկվում ոչ միայն կայքերը, անհատները և ներքին ցանցերը, այլև կատարվում են կիբեռհարձակումներ երկրի տեղեկատվական հանգույցների վրա: Այսպես, 2013-2014թթ. արձանագրված մի շարք DDoS հարձակումները<sup>2</sup> (որոնց հեղինակներն այդպես ել մնացին անհայտ) հանգեցրին Հայաստանի ընդհանուր ինտերնետ կապի խափանմանը:

<sup>1</sup> «Նորավանք» ԳՎՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի վորձագետ:

<sup>1</sup> Армянские хакеры ведут войну с азербайджанскими хакерами, 15.02.2000,

<http://lenta.ru/internet/2000/02/15/az/>

<sup>2</sup> What is a DDoS Attack?, <http://www.digitalattackmap.com/understanding-ddos/>

Ընդհանուր առմամբ, Հայաստանի կիբեռտարածքի խոցելիության աճը պայմանավորված է մի քանի հանգամանքներով.

1. Վերջին տարիներին թվայնացումը, հեռահաղորդակցության ոլորտի բուռն զարգացումը Հայաստանում հանգեցնում են երկրի ենթակառուցվածքների խոր ներթափանցման կիբեռտիրույթ, ինչն իր հերթին ստեղծում է բազմաթիվ նոր խոցելի հանգույցներ<sup>1</sup>: Այսօր հանրությանը հայտնի է միայն, որ ԱԱԾ-ն պաշտպանում է պետական կայքերը և ցանցերը<sup>2</sup>: Սակայն հայտնի չէ, թե ինչ վիճակում են գտնվում ոչ պետական, սակայն հանրային կարևորություն ունեցող տիրույթները՝ էներգետիկան, ջրամատակարարումը և այլն:
2. Հայաստանի հիմնական հակառակորդը կիբեռտիրույթում՝ Աղրբեջանը (նաև Թուրքիան՝ որպես քիչ ակտիվ, բայց հնարավոր հակառակորդ), զարգացնում է իր կիբեռհարձակողական ուժերը, որոնց որակը հետզհետե բարելավվում է: Այս ոլորտն, իհարկե, բավական փակ է, և հիմնական զարգացումների մասին քիչ բան է հայտնի դառնում: Սակայն հայտնի է, որ նույն Աղրբեջանում գործում է *CERT - Computer Emergency Response Team*<sup>3</sup> կիբեռպաշտպանության միավոր՝ կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությանը կից: Մյուս կողմից, ոչ անմիջական տվյալներից ելնելով՝ կարելի է փաստել, որ Աղրբեջանն արդեն մի քանի անգամ կիրառել է Հայաստանի պետական և լրատվական ցանցային հատվածների վրա զանգվածային DDoS հարձակումներ<sup>4</sup>: Չնայած դրա համար օգտագործվել են երրորդ երկրի վարձու հաքերային խմբեր, սակայն նման հարձակումների հնարավորության միտումն ակնհայտ է:

<sup>1</sup> Армения занимает 74 место среди 166 стран мира по развитию ИКТ и 9 место по покрытию сел 3G-сетью, 20.03.2015, [http://telecom.arka.am/ru/news/analytics/ameniya\\_zanimaet\\_74\\_mesto\\_sredi\\_166\\_stran\\_mira\\_po\\_razvitiyu\\_ikt\\_i\\_9\\_mesto\\_po\\_pokrytiyu\\_sel\\_3g\\_setyu/](http://telecom.arka.am/ru/news/analytics/ameniya_zanimaet_74_mesto_sredi_166_stran_mira_po_razvitiyu_ikt_i_9_mesto_po_pokrytiyu_sel_3g_setyu/)

<sup>2</sup> ԱԱԾ-ն ազգային համակարգող կդառնա տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում, 03.03.2011 <http://telecom.arka.am/am/news/internet/6508/>

<sup>3</sup> MINISTRY OF COMMUNICATION AND HIGH TECHNOLOGIES CYBER SECURITY CENTER, CERT, <http://www.cert.az/>

<sup>4</sup> Последние атаки азербайджанских хакеров являются беспрецедентными для кибер-пространства Армении - эксперт, 10.09.2012, [http://telecom.arka.am/ru/news/internet/poslednie\\_ataki\\_azerbaydzhan-skikh\\_khakerov\\_yavlyayutsya\\_bespretsednymi\\_dlya\\_kiber\\_prostranstva\\_ar/](http://telecom.arka.am/ru/news/internet/poslednie_ataki_azerbaydzhan-skikh_khakerov_yavlyayutsya_bespretsednymi_dlya_kiber_prostranstva_ar/)

3. Հայաստանի կրիտիկական կարևորություն ունեցող հանգույցները դառնում են խոցելի նաև երրորդ կողմերի՝ այլ երկրների, ինչպես նաև ոչ պետական ահարեկչական կամ քրեական խմբերի համար: Այսօր հարձակման միջոցներն այնքան կատարելագործված են, իսկ պաշտպանությունը՝ այնքան ծախսատար, որ վտանգը կարող է սպառնալ դժվար գնահատելի աղբյուրներից: Օրինակ, մի շարք երկրների պետական հանգույցները ենթարկվել են հարձակումների *Անոնիմուս* համայնքին պատկանող խմբավորումների կողմից, որոնք բազմազան են և տարբերվում են գաղափարախոսությամբ:
4. Հայաստանի հիմնական խոցելի հանգույցները և դրանց պաշտպանական հնարավորությունները հստակ գնահատված չեն: Խոսքը հատկապես ոչ պետական հատվածի մասին է, որի աշխատանքի խաթարումը կարող է հանգեցնել ազգային անվտանգությանն առնչվող վտանգների:
5. Առանձին մեծ խնդիր է ընդհանուր Հայաստանի հասարակությունն ինքը, քանի որ ինտերնետից օգտվողների կտրուկ աճին զուգահեռ՝ վերջին տարիներին չապահովվեց բնակչության նվազագույն համակարգչային կրթվածությունը: Որպես հետևանք՝ մենք ունենք հասարակություն, որը հիմնականում նվազագույն «համակարգչային հիգիենային» տեղյակ չէ: Իսկ սա նշանակում է, որ տեղեկատվական անվտանգության տեսանկյունից խոցելի են ոչ միայն անհատները, այլ նաև զանազան հասարակական խմբերն ու հասարակությունն ամբողջովին:

### **Հայաստանին սպառնացող միջազգային բնույթի կիրեռվտանգները**

Մի շարք վտանգներ կիրեռութիրույթում ընդհանուր են բոլոր երկրների համար, քանի որ չունեն կոնկրետ ուղղվածություն, և Հայաստանն այս դեպքում ոչ թե ուղղորդված թիրախ է, այլ ընդհանուր վտանգների տակ գտնվող երկրների մաս է կազմում:

Նմանատիպ վտանգներից է միջպետական կիրեռլրտեսությունը (ամենաարմկալից դեպքերից է ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների կողմից իրականացվող լայնամասշտաբ միջազգային կիրեռլրտեսությունը), որի թիրախ է հանդիսանում նաև Հայաստանի Հանրապետությունը:

<sup>1</sup> Kaspersky Security Bulletin 2014. Основная статистика за 2014 год, 10. 12. 2014,  
<http://securelist.ru/analysis/24580/kaspersky-security-bulletin-2014-osnovnaya-statistika-za-2014-god/>

Ամերիկյան Ազգային անվտանգության գործակալության (NSA, *National Security Agency*) նախկին աշխատակից Էդվարդ Սնոուդենի բացահայտումները ԱՄՆ գաղտնի ծառայությունների կողմից համացանցում կատարվող գործողությունների մասին փոխեցին պատկերացումները տեղեկատվական անվտանգության մասին<sup>1</sup>: Սնոուդենի բացահայտումներից երևում է, որ ամերիկյան, բրիտանական գաղտնի գործակալություններն ակտիվորեն օգտագործում են սոցիալական ցանցերը, էլեկտրոնային փոստի ծառայություններն ամբողջ աշխարհի մասշտարով գաղտնալսումներ կատարելու համար: NSA գործընկերն է Բրիտանական կառավարական կապի կենտրոնը (*GCHQ*): Պարզ դաշտավ, որ գաղտնալսումների համար օգտագործվում են բոլոր հնարավոր ձանապարհները՝ միջամտություն սերվերների աշխատանքին, տվյալների կորզում մալուխներից, վիրուսային ծրագրերի տեղադրում և այլն:


Սնոուդենի առաջին բացահայտումները ցույց տվեցին, որ ամերիկյան գաղտնի գործակալությունը կարողանում է ներթափանցել սոցիալական ցանցերի և այլ հարթակների սերվերներ և այնտեղից օգտատերերի մասին փակ տվյալներ կորզել: Այդ համակարգը կոչվում է *PRISM* և թույլ է տալիս օգտատերերի մասին ստանալ բոլոր տեսակի տեղեկատվություն. ներքին նամակագրություն, կապեր այլ օգտատերերի հետ, *IP* հասցեներ և այլն: Խոսքը համաշխարհային ամենախոշոր սոցիալական ցանցերի, էլեկտրոնային նամակագրության և շփման այլ հարթակների մասին է. *Microsoft* (օրինակ, *Hotmail*), *Google* (նաև *GMail*), *Yahoo!*, *Facebook*, *YouTube*, *Skype*, *AOL*, *Apple*, *Paltalk*<sup>2</sup>: *PRISM* համակարգը թույլ է տալիս ներխուժել ոչ միայն մարդկանց նամակագրության, այլ նաև ցանցային հեռախոսագանգերի (*VoIP*), տեսազանգերի (*Video conferencing*), իրար փոխանցած ֆայլերի մեջ, ինչը երևում է Սնոուդենի բացահայտած NSA գաղտնի սլայդից (տե՛ս Նկար I).

<sup>1</sup> NSA Primary Sources, <https://www.eff.org/nsa-spying/nsadocs>

<sup>2</sup> NSA slides explain the PRISM data-collection program, 06.06. 2013,  
<http://www.washingtonpost.com/wp-srv/special/politics/prism-collection-documents/>

Նկար 1<sup>1</sup>

Սնուռվենի բացահայտած NSA գաղտնի սլայդը  
PRISM համակարգի աշխատանքի մասին



*PRISM* համակարգի ինտերնետային խոշոր կորպորացիաներին *NSA*-ն սկսել է ներքաշել դեռ 2007թ.<sup>1</sup> սկսելով տեղեկատվություն ստանալ *Microsoft*-ից: 2012թ. վերջինը ներգրավվել է *Apple*-ը: Կարելի է ասել, որ խոշորագույն ցանցերից միայն *Twitter*-ի անունը չի շոշափվել (տե՛ս Նկար 2):


Կորպորացիաները հերքում են իրենց անմիջական մասնակցությունը համակարգին: Սակայն հասկանալի է, որ տեղեկատվության ինչ-որ մի մաս, ըստ դատարանի որոշման, դրանք այսպես թե այնպես տրամադրում են գաղտնի գործակալությանը:

Բացի անմիջական սերվերներից տեղեկատվություն ստանալը, ամերիկյան և բրիտանական գործակալությունները տվյալները կորզում են անմիջապես մալուխներից: Դա հնարավոր է, քանի որ համաշխարհային ինտերնետային և հեռախոսային հոսքերի մեծագույն մասն անցնում է ԱՄՆ տարածքով (տե՛ս Նկար 3):

<sup>1</sup> Նույն տեղում:

Նկար 2<sup>1</sup>

Սնոուլենի քացահայտած NSA զաղտնի սլայդը, որից երևում է, թե երբ են սկսել գործակալության հետ համագործակցել տարբեր կորպորացիաները



Տվյալների ահռելի քանակի մշակման համար նույնպես գործում է առանձին համակարգ՝ *MUSCULAR*: Հայտնի է դարձել, որ զաղտնի գործակալություններին հաջողվել է ներթափանցել *Yahoo* և *Google* ներքին ցանցեր, ինչի շնորհիվ *NSA*-ն և *GCHQ*-ը ամսական ստանում են 180 միլիոնից ավելի գրառում՝ նամակագրություններ, լուսանկարներ, տեսանյութեր, ինչպես նաև այլ տիպի մետատվյալներ:


*NSA* մեկ այլ համակարգ, որը կոչվում է *Boundless Informant*, թույլ է տալիս հետևել քարտեզի վրա, թե որ երկրներից ինչ ակտիվությամբ է կորզվում տեղեկատվությունը (տե՛ս Նկար 4): Սնոուլենի տրամադրած պատկերից երևում է, որ 2013թ. մարտ ամսվա ընթացքում միայն ԱՄՆ տարածքից ստացվել է մոտ 3 միլիարդ տարբեր տիպի տեղեկատվություն: Երկրները ներկայացված են ըստ այդ ամսվա ընթացքում դրանց հանդեպ *NSA*

<sup>1</sup> NSA slides explain the PRISM data-collection program, 06.06. 2013,  
<http://www.washingtonpost.com/wp-srv/special/politics/prism-collection-documents/>

համակարգի ակտիվության, կանաչ գույնը վկայում է ցածր ակտիվության մասին, կարմիրը՝ հակառակը: Տվյալ պատկերի վրա, օրինակ, Հայաստանը դեղին գույնի է՝ ԱՄՆ-ի պես, ինչը խոսում է NSA-ի կողմից միջին ակտիվության մասին<sup>1</sup>:

### Նկար 3<sup>2</sup>

Սնոուդենի բացահայտած NSA զաղոնի սլայդը, որից երևում է, որ համաշխարհային հեռահաղորդակցությունն անցնում է ԱՄՆ տարածքով, ինչը թույլ է տալիս իրականացնել էլեկտրոնային նամակագրության և հեռախոսազանգերի զաղտնալսում



Ամերիկյան և բրիտանական գործակալությունները կիրառել են նաև թիրախային զաղտնալսումներ: Հատ Սնոուդենի, զաղտնալսվել են 35 երկրների ղեկավարների հեռախոսները: Չնայած նրանց անունները նա չի բացա-

<sup>1</sup> Boundless Informant: the NSA's secret tool to track global surveillance data 11.06.2013, <http://www.theguardian.com/world/2013/jun/08/nsa-boundless-informant-global-datamining#>

<sup>2</sup> NSA slides explain the PRISM data-collection program, 06.06. 2013, <http://www.washingtonpost.com/wp-srv/special/politics/prism-collection-documents/>

հայտել բայց արդեն հայտնի է, որ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելն է հանդիսացել զոհերից մեկը:

#### Նկար 4

*Մոռուղենի բացահայտած NSA զաղտնի սլայդը, որից երևում է  
Boundless Informant համակարգի աշխատանքը*



Հայտնի է դարձել նաև, որ բելգիական *Belgacom* խոշորագույն կապի մատակարարողի ներքին ցանցերը բրիտանական գաղտնի գործակալությունների կողմից վարակված են եղել հատուկ վիրուսային ծրագրով, որն ապահովել է գաղտնալսումներ: Նշենք, որ *Belgacom*-ը կապ է տրամադրում Եվրամիության բոլոր ռեկավար օդակներին<sup>1</sup>:

Մոռուղենի բացահայտումները դեռ շարունակվում են, և արդեն հասկանալի է, որ ամերիկյան ու բրիտանական կառավարությունները ստացել են հնարավորինս լայն տեղեկատվություն. խոսքը ողջ աշխարհով մեկ կատարվող գործողությունների մասին է, որոնցից տուժել են գրեթե բոլոր երկրները: Եվրամիությունն արդեն ծրագրում է ստեղծել սեփական հետախուզություն, որը կկարողանա դիմադրել նման զարգացումներին<sup>2</sup>:

<sup>1</sup> Бельгия требует от Лондона объяснений по поводу шпионажа против белгийской компании связи, 10.05.2013, [http://www.novostimira.com.ua/news\\_71553.html](http://www.novostimira.com.ua/news_71553.html)

<sup>2</sup> Собственные ниндзя для Европы?, [http://rus.ruvr.ru/2013\\_11\\_05/249063570/](http://rus.ruvr.ru/2013_11_05/249063570/)

## Համակարգային հարձակումներ Հայաստանի վրա

Համաշխարհային ցանցային անվտանգության ոլորտում հետզհետև ավելի մտահոգիչ են դառնում *DDoS* տիպի հաքերային հարձակումները: Հայաստանը նույնպես վերջին ժամանակահատվածում ավելի հաճախ է դառնում նման հարձակումների թիրախ:

*DDoS* հարձակումների վտանգներից կարելի է նշել այն, որ ցանցահենները դրանց ժամանակ օգտագործում են հազարավոր վարակված համակարգիչներ, որոնք սփռված են աշխարհով մեկ, և հաճախ անհնարին է պարզել, թե ով ինչ պատճառներով է իրականացնում հարձակումը: Բացի դրանից, նման հարձակումներն ավելի ուժեղանում են, դրանց իրականացումը՝ էժանանում:

Ըստ *Incapsula* կազմակերպության տվյալների, 2014թ. ընթացքում արդեն, անցյալ տարվա համեմատ, *DDoS* հարձակումների 240% աճ է նկատվել<sup>1</sup>: Բացի այդ, կտրուկ աճել է առանձին հարձակման ուժգնությունը: Այսպես, *Incapsula*-ի տվյալներով, դեպի թիրախ ընթացող հարձակման ուժգնությունն արդեն հասնում է մինչև 180 Gbps-ի (Նկար 5):

*DDoS* հարձակումներից պաշտպանությամբ զրադարձ կազմակերպությունը հայտնում է ել ավելի կտրուկ աճի մասին: Ըստ այդ կազմակերպության տվյալների՝ արդեն արձանագրվել է հարձակում, որի ուժգնությունը հասել է 400 Gbps-ի<sup>2</sup>:

Նմանատիպ ուժգնության հարձակումները կարող են կաթվածահար անել մեծ հանգույցներ, ընդհուպ մինչև փոքր պետությունների ցանցերի աշխատանքը: Այսօրինակ փորձ արդեն եղել է: Այսպես, 2007թ. Էստոնիայի վրա կատարված հարձակման հետևանքով շարքից դուրս էին եկել ոչ միայն երկրի լրատվական և այլ հանգույցները, այլ նաև գրեթե ոչնչացվել էին պետական կառույցների գործառույթները, որոնք իրականացվում էին ցանցի միջոցով<sup>3</sup>: Ընդ որում՝ հարձակման ուժգնությունն այդ պահին հասնում էր ընդամենը 100 Mbps-ի, ինչը համեմատելի չէ այսօրվա հզոր հարձակումների հետ:

<sup>1</sup> Report: 2014 DDoS Trends - Botnet Activity is up by 240%, 26.03.2014,  
<http://www.incapsula.com/blog/ddos-threat-landscape-report-2014.html>

<sup>2</sup> Technical Details Behind a 400Gbps NTP Amplification DDoS Attack, 13.03.2013,  
<http://blog.cloudflare.com/technical-details-behind-a-400gbps-ntp-amplification-ddos-attack>


<sup>3</sup> Estonian DDoS Attacks – A summary to date, 05.17.2007,  
<http://www.arbornetworks.com/asert/2007/05/estonian-ddos-attacks-a-summary-to-date/>

Զանգվածային հարձակումների էին դիտվում 2008թ. օգոստոսին, ուստի վրացական պատերազմի ժամանակ<sup>1</sup>:

### Նկար 5

*DDoS հարձակումների հզորության աճը 2013-2014 թվականներին,  
բայց Incapsula ընկերության տվյալների*

**In 2013:** Rapid increase in peak attack volumes and bot sophistication.



**In 2014:** The upward trend continues with several ~100Gbps threats, including a **180Gbps NTP DDOS attack**.

Հայաստանը նույնպես դառնում է DDoS հարձակումների թիրախ: Առաջին լուրջ հարձակումները, որոնք ունեին հասարակական ազդեցություն, արձանագրվեցին 2012թ. խորհրդարանական ընտրությունների ժամանակ<sup>2</sup>:

Պատվիրատուններին հայտնաբերել հնարավոր չեր, քանի որ նման հարձակումները կատարվում են վարակված համակարգիչների կողմից:

Մտահոգիչ են դառնում 2013թ. նոյեմբերից արձանագրվող՝ պարբերաբար կրկնվող հարձակումները, որոնք իրականացվում են ինչպես կոնկրետ Հայաստանում տեղակայված կայքերի, այնպես էլ Հայաստանի համացանցային մեծ հանգույցների վրա: Հայտ Google-ի կողմից իրականացվող *Digital Map Attack* կայքի տվյալների<sup>3</sup>, Հայաստանի ցանցի վրա 2013թ. նոյեմբերից մինչև 2014թ. ապրիլ իրականացվել է 8 խոշոր հարձակում, որոնց ուժգույն-

<sup>1</sup>Cyber Attacks Against Georgia - [http://dea.gov.ge/uploads/GITI 2011/GITI2011\\_3.pdf](http://dea.gov.ge/uploads/GITI 2011/GITI2011_3.pdf)

<sup>2</sup>DDoS-ը դառնում է ավանդ՝ լյթ, 08.05.2012 <http://media.am/DDos-attacks-on-websites>

<sup>3</sup>Digital Map Attack, <http://www.digitalattackmap.com/>

թյունը հասել է 50 Gbps-ի, ինչը համեմատելի է Հայաստանի կողմից սպառվող ողջ ինտերնետային թրաֆիքի հետ:

*Հայաստանի վրա կատարվող հարձակումների օրերը և ուժգնությունը*

- 2013թ. նոյեմբերի 2 - 38 Gbps
- 2013թ. նոյեմբերի 12 - 6 Gbps
- 2013թ. նոյեմբերի 21 - 10 Gbps
- 2013թ. նոյեմբերի 29 - 40 Gbps
- 2013թ. դեկտեմբերի 4 - 18 Gbps
- 2014 մարտի 5 - 3 Gbps
- 2014թ. մարտի 31 - 20 Gbps
- 2014թ. ապրիլի 1-3 - 50 Gbps

Հարձակումների հետևանքով Հայաստանում տեղակայված մի շարք կայքեր, որոնց ցանկում հասարակական կարևորություն ունեցող հանգույցներ կան, պարբերաբար անհասանելի են դառնում օգտվողների համար: Բացի այդ, դիտվում են ինտերնետ կապի խափանումներ: Այսինքն՝ հարձակումներն ազդեցություն են ունենում ընդհանուր երկրի վրա: *DDoS* հարձակումների ուժգնության աճի միտումը բավական մտահոգիչ է և ազգային մակարդակով լուծումներ ունենալու խնդիր է առաջադրում:

### **Վտանգներին դիմակայելու հնարավոր քայլերը**

Նման գլոբալ զարգացումները կարող են հանգեցնել լրջագույն խնդիրների, որոնք կարող են առաջ բերել անհատական և պետական տվյալների արտահնոք, ֆինանսական ոլորտի կորուստներ, էներգետիկ և այլ կրիտիկական համակարգերի աշխատանքի խաթարում, տեղեկատվական հոսքերի խափանում: Այսօր, փաստացի, Հայաստանում հստակ ԱԱԾ-ի կողմից կիրեռպաշտպանության տակ են գտնվում միայն պետական կայքերը և ցանցերը (ընդորում՝ չեն պաշտպանվում ՏԻՄ մարմինները, ինչպես նաև Արցախի գրեթե բոլոր պետական մարմինները): Բանկային ոլորտն ակնհայտորեն խոցելի է: Անհատական տվյալներ կրող շտեմարաններն ակնհայտորեն խոցելի են, դրանց պաշտպանության վերաբերյալ չկան հստակ մոտեցումներ:

Հարկ է նշել նաև, որ միայն պաշտպանողական միջոցներով ամբողջ ոլորտի խնդիրները չեն լուծվում: Հաշվի առնելով, որ Հայաստանը գտնվում է

սառեցված պատերազմի վիճակում և Աղբեջանի հետ ընդհարումը մեծ հավանականություն ունի (առնվազն ավանդական պաշտպանության ոլորտում դա միանշանակ գիտակցվում է), լուրջ խնդիր է դառնում այն, որ Հայաստանը դեռևս չունի կիբեռհարձակումների ունակ կայացած կառույցներ: Աղբեջանի հետ հնարավոր պատերազմի ընթացքում Հայաստանին անհրաժեշտ կլինեն ոչ միայն պաշտպանական, այլ նաև հարձակման մեթոդներ: Վերջին տարիներին տեղի ունեցած հակամարտությունները (օրինակ, Ռուսաստան-Վրաստան, Իսրայել-Պաղեստին) ցույց տվեցին, որ կիբեռտարածքում իշխող դիրքեր ունեցող կողմը լրջազույն առավելություն է ստանում ընդհանուր պատերազմական գործողությունների ընթացքում: Միայն հարձակողական ուժերը կարող են ապահովել նման առավելություն կիբեռտարածությունում:

Ենելով վերոհիշյալից՝ առաջարկում ենք.

1. Ձևավորել ուժային կառույցներին կից կիբեռպաշտպանական խմբեր, ինչպես դա արվում է բազմաթիվ երկրներում: Եթե նույնիսկ հակառակորդը հնարավոր պատերազմի ժամանակ չհասցնի ձևավորել սեփական կիբեռզորքերը, ապա պարզ է, որ Հայաստանի դեմ կկիրառվեն երրորդ երկրների հաքերային վարձկանների խմբեր:
2. Ստեղծել կիբեռանվտանգության հանրային գործող մարմին, որը կօժանդակի ոչ պետական կառույցներին, ինչպես նաև հանրությանը կիրազեկի առկա կիբեռվտանգների վերաբերյալ:
3. Վերահսկողության տակ վերցնել ոչ պետական կրիտիկական հանգույցները՝ բանկային, էներգետիկ, հանրային ծառայությունների և այլ տիրույթները: Հաշվի առնելով, որ հիմնականում նման կառույցներն են հանդիսանում արտասահմանյան ներդրողների վերահսկողության տակ գտնվող կազմակերպություններ, այդօրինակ վերահսկողությունն առավել ևս կարևոր է, քանի որ այստեղ հնարավոր են ոչ միայն անպատասխանատվության հետ կապված խնդիրներ, այլ նաև երրորդ երկրների կողմից ներազդեցություն (օրինակ, հաշվի պետք է առնվի երրորդ երկրների կողմից կապի ոլորտի վերահսկողության վտանգը):

Հաշվի առնելով այն փաստը, որ սպառնալիքները կիբեռտիրույթում զարգանում են ավելի արագ, քան տեղի է ունենում դրանց գիտակցումը, առավել ևս՝ դրանց դեմ գործողությունները, կարևորագույն խնդիր է դառնում

պետության համագործակցությունը հասարակության, բիզնեսի, գիտական և տեխնիկական համայնքների հետ անվտանգության ոլորտում:

*Ապրիլ, 2015թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԻԲԵՇԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*Ասմվել Մարտիրոսյան*

Ամփոփագիր

Ներկա աշխարհում կիբեռանվտանգությունը դառնում է ազգային անվտանգության կարևորագույն ոլորտներից մեկը, քանի որ կիբեռհարձակումները կարող են շարքից հանել երկրների կարևորագույն հանգույցները:

Հայաստանը նույնպես հանդիսանում է կիբեռհարձակումների թիրախ (ինչպես ընդհանուր կարգի հարձակումների, որոնք համաշխարհային բնույթ են կրում, այնպես էլ հենց Հայաստանի դեմ ուղղված կիբեռհարձակումների), որոնք հիմնականում իրականացվում են Աղբքեջանի և Թուրքիայի հաքերային խմբավորումների կողմից:

Նման իրավիճակում Հայաստանը պետք է զարգացնի կիբեռանվտանգության ոլորտը՝ իրականացնելով մի շարք կանխարգելիչ քայլեր:

## О ВОПРОСАХ КИБЕР-БЕЗОПАСНОСТИ АРМЕНИИ

*Самвел Мартиросян*

Резюме

В современном мире кибер-безопасности становится одной из важнейших сфер национальной безопасности, так как кибер-атаки могут вывести из строя важнейшие структуры государств.

Армения также является мишенью кибер-атак (как атак общего плана, носящих мировой характер, так и кибер-нападений, направленных именно против Армении), которые в основном осуществляются хакерскими группами Азербайджана и Турции.

В подобной ситуации Армения должна развивать сферу кибер-безопасности, осуществив ряд превентивных мер.

## ABOUT PROBLEMS IN ARMENIA'S CYBERSECURITY

*Samvel Martirosyan*

### Resume

In the modern world cybersecurity is one of the crucial areas of national security, as cyber-attacks may cause failure of the most important functional units of the country.

Armenia is also targeted by cyberattacks that include both general attacks of global nature and specific attacks against Armenia, the latter being mostly conducted by hacker groups of Azerbaijan and Turkey.

Under such circumstances Armenia must develop its cybersecurity by implementing a number of preventive measures.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԺԱՌԱՎՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

*Էղուարդ Լ. Դանիելյան՝*

Բանալի բառեր՝ պատմաքաղաքակրթական արժեհամակարգ, պատմական սկզբնաղբյուրներ, Նոյի տապան, էթնոքաղաքական պաշտպանություն, հայրենասիրություն:

Հայոց ամբողջական պատմաքաղաքակրթական արժեհամակարգի արգասիքը՝ պատմական ժառանգությունը, կարևոր նշանակություն ունի տեղեկատվական անվտանգության ոլորտում:

Հայոց ավելի քան հինգհազարամյա պէտականության ու քաղաքակրթական արժեքների էթնոհոգևոր, քաղաքական և մշակութային պատմությունը վկայված է հնագիտական, սեպագիր, անտիկ և միջնադարյան գրավոր սկզբնաղբյուրներով ու պատմական հուշարձաններով: Հայաստանի տարածքային ամբողջականության արտահայտություններից է բնիկ հայկական տեղանունների համակարգը: Հայաստանն իր բնական միջավայրով հոգևոր պատմության մեջ հայտնի է որպես «սուրբ ծեսերի կամ օրենքների երկիր Արատուս»<sup>1</sup> և *լերինս Արարատոյ* [5] (Արարատ-Մասիս բարձրագույն գագաթով), որը նույնական է հին հունական և վաղ միջնադարյան հայկական սկզբնաղբյուրներում՝ *Հայկական լեռներ* և *լերինս Հայոց* [6, I. 72, 2; 7, XI, 14, 12; 8, I. (19), 131; 9, էջ 320] ու գիտական գրականության մեջ՝ *Հայկական լեռնաշխարհ* անվանումներին<sup>2</sup>: Հայկական էթնոաշխարհագրական անվանումների և տեղանունների ամբողջական համակարգը բնութագրում է Հայաստանի (Արև-

<sup>1</sup> «Նորավանք» ԳՎՀ խորիրդական, պ.գ.դ.:

<sup>2</sup> Ս.թ.ա. III հազարամյակի շումերական հերոսապատում-պոեմում հիշատակվող Արատուսի [1] տեղադրությունը Լ.Ն. Պետրոսյանն առաջարկել է Հայկական լեռնաշխարհում՝ Արատուս անվանումը համեմատելով Արարատ (Ուրարտու) անվանման հետ [2, էջ 123, հմմտ. 3, քր. 68-70, 4, էջ 29-32]:

<sup>2</sup> Գերմանացի երկրաբան, ակադեմիկոս Հերման Աբիլսն (1806-1886) իր աշխատություններում *Das Armenische Hochland or Bergland* տերմինով է բնութագրել Հայաստանի ֆիզիկաաշխարհագրական, երկրաբանական և գեոմորֆոլոգիական պատկերը [10]:

մտյան և Արևելյան Հայաստան՝ հայ ժողովրդի Հայրենիքի բնապատմական միջավայրը և սոցիալ-քաղաքական ու մշակութային պատմությունը:

Հայաստան-Արմենիան պատմական սկզբնադրյուրներում վկայված է Հայկագունների գլխավորած<sup>1</sup> Արատտա, Արմանի/Արմանում [22, ս. 64; 23, ս. 32-33 և այլն], Հայաստան [24, էջ 453; 25, էջ 163-186; 26; 27; 28], Նաիրի, Արարատ (Ուրարտու) Բիայնա (Վան), Արմինա, Մեծ Հայք և Փոքր Հայք թագավորությունների անուններով [29, էջ 30-37]: Պատմական սկզբնադրյուրները վկայում են Հին աշխարհի քաղաքակրթության պատմության մեջ Հայոց հոգևոր և քաղաքակրթական խոր արմատների ու բարձր որակների մասին:

Դ.Մ. Լանգը, բարձր գնահատելով Հայաստանի քաղաքակրթական նշանակությունը, գրել է. «Հնագույն երկիր Հայաստանը տեղադրված է բարձր լեռներում... Թեև Սիցագետքն է իր հնագույն՝ Շումերի և Բաբելոնի քաղաքակրթություններով, Եգիպտոսի հետ մեկտեղ, սովորաբար համարվում քաղաքակրթական կյանքի հիմնական աղբյուրը... Հայաստանը նույնպես կարող է որակվել որպես մարդկային մշակույթի օրիաններից մեկը։ Նախ, ինչպես Ծննդոց գրքում է ասվում, Նոյի տապանը կանգ է առել Արարատ լեռան գագաթին, Հայաստանի հենց կենտրոնում... Բացի այդ, Հայաստանը մեր ուշադրությունն է պահանջում որպես հնագույն մետաղագործության հիմնական օջախներից մեկը, որը սկիզբ է առնում, առնվազն, հինգ հազար տարի առաջ։ Ավելի ուշ Հայաստանը դարձավ քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունած առաջին մեծ թագավորությունը՝ հանդիսանալով եկեղեցական ճարտարապետության այն ոճի սկզբնավորողը, որը մեր սեփական՝ արևմտյան գործիկայի կանխագործումն էր» [30, թ. 9]:

Հայաստանը՝ հազարամյակների ընթացքում արգասավորված քաղաքակրթական արժեհամակարգով, գոյաբանական աշխարհընկալմամբ, հարատևող ամբողջություն է [31, էջ 6-12; 32, էջ 53-74; 33, թ. 78-101]:

Հայոց պետության հզորության գագաթնակետերից էին Արգիշտի I-ի (մ.թ.ա. 786-764թթ.), Արտաշես I-ի (մ.թ.ա. 189-160թթ.) թագավորությունների և, հատկապես, Հայոց աշխարհակալության արքայից արքա Տիգրան II Մեծի (մ.թ.ա. 95-55թթ.) ժամանակները [34, էջ 54-55; 35, էջ 565-573; 36, էջ 58-103; 37, էջ 3-12]:

<sup>1</sup> Հայկագունների գործունեության մասին Մովսես Խորենացու (Վդ.) հաղորդումները [11, էջ 38-39, 63-64] հաստատվում են պատմագիտության մեջ [12, էջ 79-81, 94-96; 13; 14; 15, էջ 129-132; 16, էջ 9-12; 17, ս. 145-161; 18; 19, էջ 7-20; 20, էջ 3-13; 21, էջ 179-198 և այլն]:

Ի դարք Հայոց Արքար թագավորի [11, էջ 142-156]<sup>1</sup> պատմական առաքելության և Հայաստանում վկայված լուսապաշտական ակունքներից ընձյուղվող քրիստոնեական՝ Թաղեռու ու Բարդուղիմեռու առաքյալների քարոզությամբ Հայ Առաքելական եկեղեցու հաստատման ժամանակաշրջանն էր: Հռոմեական կայսրության նվաճողական քաղաքականությանը դիմակայելու պայմաններում պարթևական թագավոր Վաղարշ I Արշակունու եղբոր՝ Տրդատ I-ի (65-88թթ.)՝ Մեծ Հայքի զահին բարձրանալով և երկրի անկախության համար մղած պայքարի շնորհիվ Արշակունիների այս ճյուղը հարյուր տարի անց Հայոց արքաներ Վաղարշ II-ի (185-198թթ.) և նրա որդու՝ Խոսրով I-ի (198-215թթ.) օրոք դարձավ հայկական ժառանգական հարստություն: Քրիստոնեության՝ որպես պետական կրոն աշխարհում առաջինը Հայաստանում հռչակվելով (301թ.) և Մեսրոպ Մաշտոցի՝ հայ գրերի գյուտով (405թ.) ու հաջորդիվ՝ Ուկեղարյան գրական ժառանգությամբ հայ ժողովուրդը հարստացրեց հազարամյակների պատմություն ունեցող իր ազգային՝ հոգևոր մշակութային գանձարանը [40, էջ 13-24]:

Սասանյան Պարսկաստանի ու Արևելահռոմեական կայսրության (Բյուզանդիա) նվաճողական քաղաքականության հետևանքով Հայաստանի բաժանումից (385/7թթ.) և հայ Արշակունյաց հարստության անկումից հետո (428թ.), ըստ Եղիշեի՝ «ի նախարարսն Հայոց անկաներ թագաւորութիւնն» [41, էջ 12], այսինքն՝ պետականության կրողը Հայաստանում մնում էր Հայոց նախարարական համակարգը: Վարդան Մամիկոնյանի (450-451թթ.), այնուհետև Վահան Մամիկոնյանի (481-484թթ.) դեկավարած հայ ժողովորդի ազգային-ազատագրական պայքարի շնորհիվ բարձրացավ Մամիկոնյանների գլխավորած *Տանուտերական* իշխանապետությունը<sup>2</sup>, ինչպես նաև Հայկազուն-Սիսակյան-Առանյան Վաշագան Բարեպաշտի թագավորությունը (484թ.-VIդ. առաջին կես) Հայոց Արևելից կողմերում՝ Արցախում, Ուտիքում և հարակից տարածքներում [43, էջ 51-53; 44, էջ 31; 45, էջ 64-65; 46, էջ 46; 47, էջ 186]:<sup>3</sup>

<sup>1</sup> Անանուն Եղեսացին նույնպես նշել է Ուտիայում զահակալած Արքար V-ի (մ.թ.ա. 4 - մ.թ. 7թթ., մ.թ. 13-50թթ.) հայկական ծագման մասին [38, էջ 195-196; 39, էջ 49-54]:

<sup>2</sup> Ղազար Փարպեցի (Vդ.). ««տէրութիւն Մամիկոնեից և զապարապետութիւնն Հայոց» [9, էջ 424], Մերեռու (VII դ.). «զաշխարհն Տանուտերական իշխանութեանն» [42, էջ 76]:

<sup>3</sup> Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Արդուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 51-53, Բ.Ա. Ոլովրայան, Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության (V-VIIթթ.), Երևան, 1961, էջ 31, նույնի՝ Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, Երևան, 1998, էջ 64-65, Է. Դանիելյան, Գանձասարի պատմություն, Երևան, 2005, նույնի՝ Մովսէս Խորենացու ավանդագրույցի Սիսակ-Առանյան ճյուղի «նորագույն քննադատության» սնանկությունը, ՊԲՀ, 2008, N 2:

VIIդ. 40-ական թթ. Արաքական խալիֆայության գորքերի ներխուժում-ների դեմ հայ ժողովրդի մղած կոխվներն արգասավորվեցին Հայոց անկախ ամբողջական իշխանապետության հաստատմամբ (VIIդ. կեսեր-680-ական թթ.) [48, c. 50-56, 71-74; 49, էջ 225-226]: Այս ժամանակաշրջանում կառուցվեցին հայկական ձարտարապետության գլուխզործոցներից՝ Զվարթնոցի տաճարը, Արուճի եկեղեցին և պալատը, Եղվարդի և Թալինի եկեղեցիները և այլն: VIII-IXդդ. հակախալիֆական ապստամբությունները հայ ազատազրական պայքարի արտահայտություններն էին: Հայոց Բագրատունյաց (885-1045թթ.), Վասպուրականի Արծրունիների (908-1021թթ.), Կարս-Վանանդի (963-1065թթ.), Տաշիր-Չորագետի Կյուրիկյանների (966-1113թթ.), Սյունիքի (970-1170թթ.), Փառիսոսի (Xդ. կես-1044թ.) թագավորությունների, Արցախի՝ Խաչենի իշխանության (X-XVIդդ.), Զաքարյանների իշխանապետության (XIIդ. վերջ-XIIIդ. առաջին տասնամյակներ), Կիլիկիայում Հայկական իշխանապետության (1080-1197թթ.) ու թագավորության (1198-1375թթ.) ժամանակներում Հայոց քաղաքակրթական արժեհամակարգը հարստացավ մշակութային նոր արժեքներով [50-56; 57, էջ 35-52; 58; 59; 60, էջ 7-54; 61 և այլն]: Սորբոնի համալսարանի պրոֆեսոր Շարլ Դիլը համաշխարհային ձարտարապետության գլուխզործոցների շարքում հայ ձարտարապետական արվեստի բազում բարձրարվեստ հուշարձաններից հինգ լավագույնները նշել է Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին, Ս. Հոհիկսիմեի տաճարը, Գանձասարի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, Հաղպատի վանքը և Անիի Մայր տաճարը [50, հ. 2, էջ 25]: Հայաստանում մեծագույն երևույթ էր բարձրագույն կրթության կարևորագույն կենտրոնների՝ Գլածորի և Տաթևի համալսարանների գործունեությունը<sup>1</sup>:

Հետագա դարերում Հայրենիքի պաշտպանության կենտրոնները շարունակեցին մնալ Սյունիքը, Արցախը [63], Տարոն-Սասունը, Բարձր Հայքը, Զեյթունը, Վանը և այլն:

Ծանր էին սելջուկ-թյուրքերի (XIIդ. երկրորդ կեսից), թաթար-մոնղոլների (XIIIդ. երրորդ տասնամյակից-XIVդ.), այնուհետև այլ վաշկատուն ցեղերի ներխուժումների, իսկ XVI-XVIIդդ.՝ թուրք-պարսկական պատերազմների ու

<sup>1</sup> Գլածորի համալսարանում (1280-1340թթ.), որը ժամանակակիցներն անվանում էին «Մայր խմասութեան», «Տոն խմասութեան», «Երկրորդ Աթենք», և Տաթևի համալսարանում (1390-1435թթ.), շարունակելով նախորդ դարաշրջանների ավանդույթները, դասավանդում էին եղակ (քերականություն, ձարտասանություն և փիլիսոփայություն) և քաշակ (թվաբանություն, երաժշտություն, երկրաշափություն և աստղաբաշխություն)՝ «յոր ազատ արվեստներ» կազմող առարկաների հիման վրա: Դրանց համակարգմանը, իր ժամանակին, մեծապես նպաստել էին Դավիթ Անհաղթի աշխատությունները [62, c. 295]:

բաժանումների (1555, 1639թթ.) հետևանքները: XVIII դարում հայ ժողովրդի ազատատենչ ոգին իր դրսնորումները ստացավ Սյունիքում և Արցախում բռնկված ապատամբություններում, ինչպես նաև ազատագրական ծրագրերի մշակման գործում:

Պատմության դժնդակ ժամանակներում Հայ Առաքելական եկեղեցուն էր վերապահված՝ մեծագույն ջանքեր գործադրելով, իր նվիրապետական կառուցվածքով հնարավորինս պահպանել Հայաստանի բաժանված մասերն ազգային և եկեղեցական-թեմական միասնության մեջ:

Օսմանյան զավթողական քաղաքականությունն իրականացվում էր Արևմտյան Հայաստանի [Մեծ Հայքի արևմտյան մաս, Փոքր Հայք և Հայոց (Հյուսիսային) Միջազգետք] և Կիլիկիայի վարչաքաղաքական մասնատումներով, հայ բնակչության դեմ գործադրվող բռնաձնշումներով ու կոտորածներով, պատմական տեղանունների փոփոխմամբ ու աղճատմամբ, որպես պանթուրքիզմի վայրենի գաղափարախոսության վրա հիմնված օտար բռնակալական քաղաքականության դրսնորում [64; 65, էջ 13-15; 66, էջ 9-25; 67, էջ 83-96; 68]: Ժամանակի ընթացքում թուրքական զավթողական քաղաքականությունն իրագործվեց ցեղասպանության հանցագործ ծրագրի կատարմամբ բնիկ հայ ժողովրդի դեմ՝ Հայոց Հայրենիքում [69]: XIXդ. վերջին տասնամյակներից Օսմանյան կայսրությունում արգելվեց Հայաստան անվան օգտագործումը, և դաժանագույն ընթացք ստացան հայերի զանգվածային ջարդերը: 1894-1923թթ. Օսմանյան կայսրությունում սկսվեց և երիտրութերի ու թեմալականների վարչակարգերի կողմից Արևմտյան Հայաստանում ու Կիլիկյան Հայաստանում իրագործվեց Հայոց ցեղասպանությունը: Թուրքական զորքերը, ներխուժելով Արևելյան Հայաստանի որոշ շրջաններ, ինչպես նաև Կուրի ձախափնյակ և Մերձկասպյան շրջաններ, հասան մինչև Բաքու և շարունակելով իրենց հանցավոր գործողությունները [մուսավարականների (1918թ. երկրորդ կեսից-1920թ.) մասնակցությամբ՝ այս տարածքներում բնակվող հայերի դեմ նույնպես իրագործեցին ցեղասպանություն [70; 71]:

1916թ. հունվարի 5-ին ռազմական նախարար Էնվեր փաշան, օսմանյան ռազմաքաղաքական իշխանություններից պահանջելով Օսմանյան կայսրության հայերեն, հունարեն, բուլղարերեն և այլ ոչ մահմեղական ծագումով բոլոր տեղանունները փոխել թուրքերենի, իր հրամանագրում, մասնավորապես, առաջարկելով օգտվել հարմար պահից՝ հանցավոր կերպով հրամայում էր.

«Ձեր իրավասության տակ գտնվող տարածքում զինվորական հրամանատարության և վարչական պաշտոնեության հետ միանալով՝ թող կազմվեն անվանափոխության համապատասխան ցուցակներ, և նահանգի, գավառի, գյուղաքաղաքի կենտրոններն ընդգրկող այս ցուցակները հնարավորինս շտապ մաս առ մաս ներկայացվեն Գլխավոր շտաբ: Հավաքվող ցուցակներն ուսումնասիրելուց ու համանման անունները փոխհամաձայնությամբ փոփոխելուց հետո պետք է ուղարկվեն ներքին գործերի և կապի նախարարություններ՝ ընդհանրացման և կիրառության համար» [72, էջ 33-34]: Յուրաքանչյուր հայկական տեղանվան ոչնչացումը նշանակում էր թուրք հանցավոր իշխանությունների իրականացրած՝ հայկական բնակչության բռնագաղթ և բնաջնջում հայերի հայրենի հողում, ինչպես նաև պատմական հիշողության ջնջում: Քաղաքակրթության ոչնչացումը թուրքական ավազակապետության (վայրենի՝ քոչվոր հիմքի վրա ստեղծված Օսմանյան կայսրությունը<sup>1</sup>, այնուհետև՝ երիտրութերի վարչակարգը, ինչպես նաև հանրապետական Թուրքիան) անբաժան մասն է:

Հայոց ցեղասպանության ընթացքում Թուրքիան՝ որպես մարոկության և քաղաքակրթության դեմ հանցագործություններ կատարող, մեղադրվեց Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի ընդունած համատեղ Հայտարարությամբ (1915թ. մայիսի 24)<sup>2</sup>, որը թուրք իշխանությունների ցեղասպան հանցագործությունը դատապարտող միջազգային իրավունքի առաջին փաստաթուղթն է<sup>3</sup>: Համատեղ Հայտարարությունը մեծագույնս ազդեց Սլքի

<sup>1</sup>XIX դարում թուրքի կերպարի մասին ձևավորված պատկերը սուլյան Աբդուլ Ազիզ I-ի (1861-1876թ.) օրինակով տվել է Մարլ Տվենը (1835-1910թ.): «Աբդուլ Ազիզը բնությամբ և դաստիարակությամբ սսոր, զազանային, տգեսու, հետադիմու, սնուտիամու մի ժողովորի՝ ...բռնակալության, անշատության և արյան մի կառավարության ներկայացուցիչ է» [73, էջ 75]:

<sup>2</sup>«...En présence de ces nouveaux crimes de la Turquie contre l'humanité et la civilisation...» [74, էջ XLIII & document, N 41; 75; 76; 77, էջ 262; 78, էջ 16]: Հայտարարությունում հասուլ նշվել է «նոր հանցագործություններ» արտահայտությունը, քանի որ հայտնի էին հայերի դեմ XIX- և XX- դարներին տասնամյակներին թուրքերի ցեղասպան գործողությունները:

<sup>3</sup>Փարիզի խաղաղության վեհաժողովը՝ «Պատերազմի հեղինակների պատասխանատվության և պատերազմի օրենքների խախտումների համար պատիճների պարտադրման հանձնաժողովն» իր եզրափակիչ զեկուցում լրկնել էր այդ Հայութարարության երկու սկզբունքները՝ (ա) քեւական պատասխանատվության ներքարելը՝ «առանց հաշվի առնելու աստիճանը, ներայալ պետության դեկավաներին», (բ) «մարդկության օրենքների» դեմ գործած հանցագործությունների մեջ մեղավոր Կենտրոնական տերությունների հետ հիշատակվում էր Թուրքիան [79, էջ 165-167, 170, էջ 78, էջ 173, էջ 88]: Դեռևս 1919թ. հունիսի 23-ին Փարիզի վեհաժողովի գերագույն խորհրդի կողմից թուրքական պատվիրակությանը ներկայացված պաշտոնական փաստաթղթում դաշնակից տերությունները փաստում էին, որ քրիստոնյա հայերի կոտորածն իրագործվել էր թուրքական կառավարության հրամանով [80, էջ 647]: Սակայն Վերսալի պայմանագրում (1919թ. հունիսի 28) ընդգրկվեցին միայն գերմանական նախկին կայսր Վիլհելմ II-ի և նրա հրամանատարության տակ գործած ռազմական անձնակազմի համար՝ պատերազմի հանցանքների մեղադրանքով պատիճ սահմանող 227-րդ և 228-րդ հոդվածները, ինչպես նաև 231-րդ հոդվածը, որի համաձայն՝ Գերմանիան ընդունում էր իր, նաև իր դաշնակիցների (որոնցից էր Թուրքիան) պատասխանատվությունն այն բոլոր կորուստների ու վնասների համար, որոնք նրանք Արաջին համաշխարհային պատերազմի ընթացքում պատճառել էին Անտանտի կողայիցիայի դաշնակից և նրանց միացած պետություններին ու նրանց քաղաքացիներին:

պայմանագրի վրա (1920թ. օգոստոսի 10) [81]<sup>1</sup> և պահպանում է իր իրավական ուժը [82, էջ 81-84]:

21 երկիր ու բազմաթիվ միջազգային կազմակերպություններ արդեն ձանաշել և դատապարտել են Հայոց ցեղասպանությունը: Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործում համաշխարհային առանձնակի հնչեղություն ունի 2015թ. ապրիլի 12-ին Հռոմի պապ Ֆրանցիսկոս I-ի մատուցած պատարագը Վատիկանում՝ ի հիշատակ 1,5 միլիոն անմեղ զոհերի [83]: Ապրիլի 15-ին Եվրոպական խորհրդարանը լիազումար նիստում ընդունեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի վերաբերյալ բանաձևը [84]: Ընդունված փաստաթուղթը հաստատում է 1987թ.<sup>2</sup> Ցեղասպանությունը փաստող բանաձևի դրույթներն ու կոչ անում թուրքիային ճանաշել այն [85]: Հայ Առաքելական եկեղեցին ապրիլի 23-ին կատարեց Հայոց ցեղասպանության 1,5 միլիոն անմեղ զոհերի սրբադասումը:

Թուրքական ներկայիս իշխանությունները, շարունակելով զավթողական քաղաքականությունը, Արևմտյան Հայաստանում և Կիլիկյան Հայաստանում հայկական աշխարհագրական անունների և պատմական հուշարձանների ոչնչացման ծրագիրը ծառայեցնում են ցեղասպանության ժխտմանը: Նրանց են հետևում նաև ներկայիս ադրբեջանական կեղծարարները:

1918թ. կեսերից պանթուրքական նպատակներով ստեղծված արհեստածին «Ադրբեջան»-ում<sup>2</sup> (Իրանական Ատրոպատենե-Ատրպատական-Ադրբայգանից կողոպտված անունով) Հայաստանի պատմության ու տեղանունների կեղծարարությունը, հատկապես խորհրդային շրջանում՝ քեմալականների ու բոլշևիկների միջև 1921թ. կնքված Մոսկվայի (մարտի 16) և Կարսի (հունիսի 5) բռնի որոշման հետևանքով իրազործվել է տասնամյակներ շարունակ՝ Նախիջևանի, Արցախի և Ուստիքի բնիկ հայության դեմ իրականացվող բռնագաղթի, հայ մշա-

<sup>1</sup> Ինչպես նշել է Մ.Բասիլյանին, «Սերի պայմանագրի կողմերը նպատակ ունեն պատասխանատվության ենթարկել նրանց, ովքեր «մարդկության դեմ հանցագործություններ» էին կատարել» [79, թ 174]:

<sup>2</sup> Այդ «կազմակորման» արհեստածին լինելու մասին են վկայում կարճ ժամանակաշրջանում դրան «պատվաստված» անվանումները. «Արեւա-կովկասյան մուսուլմանական հանրապետություն», «թաթարական Ադրբեջան» [86, էջ 285], «Ադրբեջանական դեմոկրատական հանրապետություն», առանց միջազգայնութեն ճանաչված սահմանների [87, թ. 15]: Դրանում «գերավշրություն» էին եկվոր անդրալթայան տափաստաններից ներխուժած վայրենի օղուզ-թյուրքական ցեղերից առաջացած տարրերը, որոնք Ռուսական կայսրության (XIXդ.-XXդ. սկիզբ), իսկ այնուհետև խորհրդային փաստաթղթերում կոչվում էին «թաթարներ» կամ պայմանականութեն «կովկասյան թյուրքեր», կամ «անդրկովկասյան թաթարներ» (Կազանի և այլ տեղերի թաթարներից տարբերելու համար) և միայն 1930/40թթ. վերջերից կոչվեցին «ադրբեջանցիներ» [88, թ. I, ս. 641, թ. 1, նշ. 2, ս. 440].

կույրի հուշարձանների ոչնչացման և ցեղասպան քաղաքականության հետ մեկտեղ: Պատմության կեղծարարությունը միևնույն ժամանակ նպատակ ուներ «Խորհրդային Աղբեջանին» Իրանական Աղբեջանի («խորհրդայնացնելու» միջոցով [89, с. 703, 775-776]) բռնակցումը: Սակայն Իրանական Աղբեջանից դուրս «Աղբեջան» երկրանուն 1918թ. կեսերից ավելի վաղ ընդհանուրապես գոյություն չի ունեցել:

Հակառակ համաշխարհային պատմության տվյալների՝ 1930-ական թվականներից թուրքիայում կատարվող կեղծարարություններին գումարվեց Քեմալ Աթաթօւրքի հրահանգով քոչվոր թուրքերի համար գոյություն չունեցող «հին պատմություն» հորինելու և նրանց ներկայությունն Առաջավոր Ասիայում արհեստականորեն «հնացնելու» կեղծիքը, ուստի համաշխարհային պատմության նենգափոխմամբ, ի թիվս հին աշխարհի այլ երկրների, կեղծվում է Հայաստանի պատմությունը [90]: Մյուս կողմից՝ Արցախյան պատերազմում (1991-1994թթ.) պարտություն կրելուց հետո արհեստածին Աղբեջանը պատմության կեղծարարությունը վերածել է Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության դեմ ռազմամոլ քարոզչության:

Հայոց պատմության թուրք-աղբեջանական կեղծարարությունները, որոնք հիմնված են պանթուրքական գաղափարախոսության վրա, ծառայեցվում են Հայոց ցեղասպանության հանցավոր ժխտմանը: Թուրքիան և Աղբեջանը միլիոնավոր դոլարներ են ծախսում պատմության կեղծարարությամբ ապատեղեկատվություն տարածելու համար, սակայն, հակառակ նրանց բոլոր մոլագար ճիգերի, մտավոր ուժն իրական փաստերով առաջնորդվող ճշմարիտ պատմագիտության կողմն է: Հայ պատմաբանները և տեղեկատվական անվտանգության ոլորտի մասնագետները բազմիցս քննադատել են թուրք-աղբեջանական կեղծարարությունները [91-94]: Հատկանշական է, որ Հայաստանի և այլ երկրների հին ու միջնադարյան, ինչպես նաև նոր և նորագույն պատմության թուրք-աղբեջանական՝ գիտական հիմքից բացարձակապես գուրկ և սնանկ կեղծարարությունները բացահայտել են նաև որոշ արևմտյան և ռուս պատմաբաններ [95, pp. 10-16; 96, с. 5-6, 17, 24-26, 59, 69-70, 242, 244; 97, էջ 84-87]:

Աղբյուրների հաղորդումները վկայում են Հայոց պատմության և տեղանունների քաղաքակրթական նշանակության մասին: Դրանով իսկ, օրինակ՝ համաշխարհային ջրհեղեղից մարդկության փրկության Արբազան լեռան

Արարատ անունը այլափոխելով՝ թուրք կեղծարարները ոտնձգում են ոչ միայն Հայոց, այլև համաշխարհային պատմության և քաղաքակրթական արժեհամակարգի դեմ, որը թուրք կեղծարարների հանցավորության ևս մի վկայություն է: Զորջառունի համալսարանի պրոֆեսոր Քլայվ Ֆոսը նշում է, որ թուրքական կառավարությունը «պարբերաբար փոփոխում է գյուղերի անվանումները... Ցանկացած անուն, որ չունի թուրքերեն իմաստ կամ չի հնչում թուրքերենով, անկախ դրա ծագումից, փոխարինվում է Անկարայում գտնվող բյուրոյի կողմից նախատեսված սովորական անունով, առանց հարգանքի տեղական պայմանների կամ ավանդույթների նկատմամբ» [95, pp. 10-16]:

Թուրք կեղծարարներն *Արևմտյան Հայաստան* հասկացության փոխարեն սխալ կերպով օգտագործում են «Արևելյան Անատոլիա» տերմինը, իսկ աղբբեջանական կեղծարարներն Արևելյան Հայաստան հասկացության փոխարեն հորինում են «Արևմտյան Աղբբեջան»<sup>1</sup> տերմինը և սխալ կիրառմամբ շահարկում «Ալբանիա» անվանումը: Սակայն, ըստ պատմական աղբյուրների և պատմագիտական ու աշխարհագրական գրականության, «Անատոլիան» իր բոլոր մասերով (հյուսիսային, հարավային, արևելյան և արևմտյան) համապատասխանում է Փոքր Ասիային, որը գտնվում է Հայկական լեռնաշխարհից արևմուտք [100, c. 14-15], գոյություն չունեցած «Աղբբեջան»-ի անունով «Արևմտյան Աղբբեջան» արհեստածին տերմինի օգտագործումը Արևելյան Հայաստանի նկատմամբ ընդհանրապես հիվանդ ուղեղի զառանցանք է, իսկ «Ալբանիան», իրականում հայերեն ծագմամբ՝ «բուն Աղուանք» (Մեծ Հայքից արևելք՝ Կուրի ձախ ափին) անվան հիշատակությունն է անտիկ՝ հունալատինական աղբյուրներում:

Բարվի կողմից պատմության կեղծարարությունը վտանգներ է ստեղծում տարածաշրջանում: Իրանցի մասնագետները տասնամյակներ շարունակ բողոքում են [101, pp. 66-67; 99, 2010, p. 7], որ Կովկասի՝ Կուրի ձախափնյակում գտնվող շրջանը երեք «Աղբբեջան» չի կոչվել, այն այլ անուն է ունեցել (օրինակ՝ բուն Աղուանք, իսկ հետագայում՝ Շաքի, Շիրվան և այլն):

<sup>1</sup> Խելացնորության աստիճանի հասնող «Արևմտյան Աղբբեջանի հուշարձանները» հակագիտական քարոզական «գրքում» զետեղված կեղծիք-քարտեզը վերնագրված է «Արևմտյան Աղբբեջանի՝ ներկայումս «Հայաստանի Հանրապետություն», քարտեզ՝ թուրքերի և օղուզների հայրենիքը» [98]: Ուսումնական՝ պետական մակարդակի քարձրացված այս թշնամական զառանցանքը հովանավորել է Աղբբեջանի Հանրապետության «Մշակույթի և տուրիզմի մինիստրությունը»: Ու.Գայլյանը այս «գիրքն» անվանել է «աղբբեջանական ֆանտազիաների նորագոյն և ծայրահեղ դեպքերից մեկը» [99, pp. 5-6]:

Պաշտոնական Թեհրանում նաև անհանգստացած են «երկու Աղբբեջանների» «միավորման», այսինքն՝ Ատրպատականից հյուսիս գոյություն չունեցած «Աղբբեջանին»<sup>1</sup> Իրանական Ատրպատենե-Ատրպատական-Աղբբայզան-Աղբբեջանի բռնակցման մասին պարբերաբար հնչող կոչերից [102, թ. 61], որոնք Բաքվի և նրա հովանավորների զավթողական նկրտումների արտահայտությունն են:

Իսկ իրականում, պատմականորեն սահմանը Մեծ Հայքի և բուն Աղվանքի միջև անցնում էր Կուր գետով, իսկ Երասխի (Արաքս) և Կուրի ստորին հոսանքներից հարավ գտնվում էր Փայտակարանը՝ Մեծ Հայքի հարավարևելյան նահանգը, որն արևելքում ձգվում էր մինչև Կասպից ծով, իսկ հարավում՝ սահմանակից էր Իրանի հյուսիս-արևմուտքում գտնվող Ատրպատականին [103, էջ 38, 109]:

Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և Արևելյան Հայաստանի Նախիջևան, Գողթան գավառներում և Ուտիք նահանգում հայկական պատմական հուշարձանների (եկեղեցիներ և մշակութային-կրթական ու շատ այլ կառույցներ) ավերածությունների, թալանի և ոչնչացման հետ մեկտեղ շարունակվում են հայկական տեղանունների աղճատումները և ոչնչացումը: 2005թ. ոչնչացվեց հայկական խաչքարերի (նախորդ տասնամյակներում ոչնչացված տասը հազարից մնացած) վերջին խումբը Հին Ջուղայի հայկական գերեզմանատանը (հին հայկական Գողթան գավառում, Նախիջևան գավառից հարավ-արևելք) հանցավոր աղբբեջանական իշխանությունների հրահանգով [104]: Արևմտյան Հայաստանում հայկական մշակութային ժառանգության ծրագրված ոչնչացման նոր փաստերից են Կարսի Ս.Առաքելոց եկեղեցու բռնի վերափոխումը մզկիթի, հին հայկական տների ավերումը Մուշում (Տարոն գավառ) 2013թ. և այն՝ հանցավոր թուրքական իշխանությունների հրահանգով:

Թուրք-աղբբեջանական բոլոր կեղծարարությունները շախչախվում են՝ բախվելով պատմական սկզբնադրյուրների ամրակութ փաստագրական նյութերին, որոնք վկայում են, որ հնուց հայերը Հայաստանի (ամբողջ Հայկական լեռնաշխարհը) բնիկ ազգն են: Հակահայկական թշնամանքը և ազրեսիվությունը բնորոշ են ներկայիս աղբբեջանական «կրթական համակարգին» և

<sup>1</sup> Թուրքական ցեղասպան քաղաքականության բովերում իսմրված և 1918թ. կեսին Իրանական Աղբբեջանից (Ատրպատական) կողոպտած անվանումով «ստեղծվել» էր պանթուրքիզմին ծառայող մերձկասպյան, արհեստաձին «Աղբբեջան»-ը: Թուրքական և մուսավարական՝ թյուրք-թաթար հրոսակները իրագործեցին հայերի կոտորածները Բաքվում (15-17.IX.1918թ.) և Շուշիում (Արցախ) (23.III.1920թ.):

«պատմագրությանը», քանզի դրանք, անտեսելով պատմական աղբյուրները, գրադարանը են պատմության կեղծարարությամբ [105, с. 4]: Պատմության կեղծարարության «պետպատվերի» դրսորումներից են Աղրբեջանի Հանրապետության նախագահ Իլհամ Ալիևի ձառերը: Աղրբեջանի ակադեմիայի (26/04/2011թ.) տարեկան ընդհանուր ժողովի ժամանակ «պատմաբան ակադեմիկոսներին» նա հրահանգել էր ավելացնել «պատկառելի գիտական աշխատությունների թիվն այն մասին, որ Լեռնային Ղարաբաղը հին ու նախարնակ աղրբեջանական հող է»<sup>1</sup>: Ի կատարումն այդ գառանցանքի հասնող հրահանգի՝ աղրբեջանական «ակադեմիկոսները» շարունակեցին հսկայական քանակությամբ կեղծիքներ հրապարակել, և այդ կարգով ամբողջապես կեղծվում են «պատմության» դասագրքերն Աղրբեջանում, որոնց հիման վրա «դաստիարակվում» են մարդատյաց և գիշատիչ սաֆարովները [107; 108], ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ու Արցախի Հանրապետության սահմանները խախտող նրանց մեղսակիցները, որոնց, սակայն, ջախջախիչ հարված են հասցնում Հայրենիքին անմնացորդ նվիրված հայ սահմանապահները: Քաջարի հայորդիների գաղափարական զենքը հայրենաճանաչողության, պատմական փաստերի և նախնյաց քաջագործությունների վրա հիմնված ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ է: Պատմահայր Մովսես Խորենացին նախնյաց քաջագործությունների մասին մեծ գոհունակությամբ ու խանդակառությամբ գրել է. «Միրեմ կոչել այսպէս ըստ քաջութեան - Հայկ, Արամ, Տիգրան, քանզի ըստ քաջացն՝ ազգք քաջք» [11, էջ 85]:

Հայոց ցեղասպանության դատապարտման և, հատկապես, Հայաստանի մեծ մասը կազմող Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի՝ Հայոց հայրենի հողերի պահանջատիրության գործում անհերքելի և անժխտելի վկայություններն են 1,5 միլիոն հայերի ցեղասպանությունը և հայկական պատմական ժառանգության ոչնչացումը՝ Թուրքիայի կողմից ցեղասպան քաղաքականության իրագործման հետևանքով: Հայկական լեռնաշխարհի պատմաաշխարհագրական տերմինաբանությունը, ներառելով Հայաստանի տեղանունների ամբող-

<sup>1</sup>Պատապարտելով Ի.Ալիևի կեղծարարությունները՝ Վ.Զահիարովը եզրակացրել է. «Ամոք է կարդալ այս պատմական անհեթեթությունը... Այնու փորձում է հիմնավորել աղրբեջանական կողմի հավակնությունները ոչ միայն Ղարաբաղի, այլ նաև բուն Հայաստանի Հանրապետության տարածքի նկատմամբ»: Մինույն ժամանակ, ընդգծելով Աղրբեջանի նախագահի աշխատակազմի դեկավար Ռ.Մելիտինի տիրահռչակ հոդվածի անհեթեթությունները՝ Վ.Զահիարովը նշել է. «...Ոչ մի հեղինակավոր արևմտյան գիտական կենտրոնում չեն կարդում նման գրականություն: Ցանկացած ֆորումի մասնակիցներին հանձնված Բարզի հրատարակությունների նմուշները մնում են հյուրանոցային համարներում կամ է հայտնվում են աղբարկոներում» [106, с. 4, 53-58, 130-150]:

ջականությունը, պատկանում է հայ ազգային լեզվամտածողության հիմնաշերտին: Հայաստանի պատմաքաղաքակրթական ամբողջական ժառանգությունն ազգային անվտանգության կենսական ոլորտում ունի էթնոպաշտպանական նշանակություն, որի պահպանության ազգապետական երաշխավորներն են Հայաստանի Հանրապետությունը և Արցախի Հանրապետությունը:

*Հունիս, 2015թ.*

### Աղբյուրներ և գրականություն

1. *S.N. Kramer*, Enmerkar and the Lord of Aratta: a Summerian Epic Tale of Iraq and Iran, Philadelphia, 1952.
2. *Լ.Ն. Պետրոսյան*, Հայ ժողովրդի փոխադրամիջոցներ, Հայ ազգաբանություն և բանահյուսություն. ժողովածու, 6, Երևան, 1974:
3. *M.Kavoukjian*, Armenia, Subartu and Sumer. The Indo-European Homeland and Ancient Mesopotamia, Montreal, 1987.
4. *Ա.Սովոյան*, Հնագույն պէտությունը Հայաստանում, Արատու, Երևան, 1992:
5. Գիրք Աստուածաշնչը Հին և Նոր Կտակարանաց, Վենետիկ, 1860: Ծննդ., Ը.4:
6. *Herodotus*, with an English translation by A. D. Godley, in four volumes, vol. I, London, 1920.
7. The Geography of Strabo, with an English translation by H.L. Jones, in eight volumes, I, London, 1960.
8. Josephus with an English translation by H. St. J. Thackeray, in nine volumes, I, Contra Apionem, London, 1961.
9. Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1982:
10. *Г.Абич*, Геология Армянского нагорья. Западная часть, Сообщения Кавказского отдела Имперского Российского географического общества, т. XXI, 1899, Восточная часть, т. XXIII, 1902.
11. *Մովսէս Խորենացի*, Պատմութիւն Հայոց, Երևան, 1991:
12. Ղ.Ալիշան, Յուշիկը հայրենեաց Հայոց, հ. Ա, Վենետիկ, 1869:
13. Է.Խանզայյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, Երևան, 1967:
14. *Ա.Մարտիրօսյան*, Արշտիխինիլ, Երևան, 1974.
15. Է.Դանիելյան, Արտաշես Ա-ի ազգարային քաղաքականության հարցի շուրջ, Պատմա-բանասիրական հանդես (ՊԲՀ), 1974, N 4:
16. *Դ.Ավետիսյան*, *Բ.Գասպարյան*, Ազարակի հուշարձանախմբի 2001թ. պեղումները, Հին Հայաստանի մշակույթը, XII, Երևան, 2002:
17. *Բ.Զ. Օրանեսյան*, Се ребр я ны ий кубок из Карапашма, ՊԲՀ, 1988, N 4:
18. Հ.Միմոնյան, Վերին Նավեր, գիրք Ա, Երևան, 2006:
19. Հ.Միմոնյան, Ներքին Նավերի N 4 դամբարանը, Հուշարձան, տարեգիրք, 5, Երևան, 2010:
20. Ժ.Խաչատրյան, Մեծն Արտաշես Առաջինը Հայոց պատմության էջերում, ՊԲՀ, 2012, N 1:
21. Ժ.Խաչատրյան Արտաշատ մայրաքաղաքի վերջին տարիների պեղումների արդյունքները, ՊԲՀ, 2013, N 3:

22. *A.Кифишин*, Географические воззрения древних шумеров при патеси Гудеа (2162-2137гг. до н. э.), Палестинский сб., вып. 13 (76), 1965.
23. *B.B. Иванов*, Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной структуры гимна Вахагну, *ՊԲՀ*, 1983, N 4.
24. *Ն.Մարտիրոսեան*, Հայերէնի յարաքերութիւնը հեթիղերէնի հետ, Հանդէս ամսօրեայ, 1924, N 9-10:
25. *Ն.Մարտիրոսեան*, Նպաստ մը հեթ եւ հայ բառաքննութեան, *ՊԲՀ*, 1972, N 2:
26. *Գր. Կապանցյան*, Խայаса – колыбель армян. Этногенез армян и их начальная история, Ереван, 1956.
27. *Վ.Խաչատրյան*, Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, Երևան, 1998:
28. *Ռ.Ղազարյան*, Հայասայի քաղաքական և մշակութային պատմությունը, Երևան, 2009:
29. *Է. Դանիելյան*, Հին Հայաստանի պատմության հայեցակարգային հիմնահարցերը պատմագրության մեջ, *ՊԲՀ*, 2003, N 3:
30. *D.M. Lang*, Armenia Cradle of Civilization, London, 1970.
31. *Է. Դանիելյան*, *Վ.Թափրյան*, Հայոց պատմական ժառանգության պաշտպանության գործը և անվտանգ տեղեկատվական արդի միջոցները, Հայկական լեռնաշխարհը Հայոց և համաշխարհային քաղաքակրթության բնօրբան, Երևան, 2004:
32. *Է. Դանիելյան*, Հայոց պատմական և քաղաքակրթական արժեհամակարգի պաշտպանության անհրաժեշտությունը, «Լրաբեր» հաս. գիտ., 2010, N 3:
33. *E. L.Danielyan*, Importance of the Armenian Toponyms' Ontological Integrity in the System of National Security. «21st CENTURY», № 2 (14), 2013.
34. *Հ.Մանանյան*, Տիգրան Երկրորդը և Հռոմը, Երևան, 1940:
35. *Գ.Խ. Մարգարյան*, Հայկական տերությունը, նրա տեղն ու դերը Առաջավոր Ասիայում, Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան, 1971:
36. *Ռ.Լ. Մանասերյան*, Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ, Երևան, 1987:
37. *Է. Դանիելյան*, Տիգրան Մեծի քաղաքակրթական գործունեության ռազմավարությունը, *ՊԲՀ*, 2006, N 2:
38. Անանուն Եղեսացի, Ժամանակագրություն, թարգմ. բնագրից, առաջաբանը և ծան. Լ. Տեր-Պետրոսյանի, Օստար առյուրները Հայաստանի և հայերի մասին, 12, Ասորական առյուրներ, Բ, Երևան, 1982:
39. *Է. Դանիելյան*, Ս.Թաղեսու առաքյալի ավանդության արտացոլումը հայ պատմագիտության մեջ, «Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը», Երևան, 2000:
40. *Է. Դանիելյան*, Հայ գրի, թարգմանական և ինքնուրույն գրականության պատմական նշանակությունը քաղաքակրթությունների երկխոսության տեսանկյունից, 21-րդ դԱՐ, 2010, #1:
41. Եղիշէ, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1989:
42. Պատմութիւն Սերէոսի, Երևան, 1979:
43. *Մովսէս Կաղանկատուացի*, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983:
44. *Բ.Ա. Ուլուքարյան*, Դրվագներ Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, Երևան, 1961:
45. *Բ.Ա. Ուլուքարյան*, Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, Երևան, 1998:
46. *Է. Դանիելյան*, Գանձասարի պատմություն, Երևան, 2005:
47. *Է. Դանիելյան*, Մովսէս Խորենացու ավանդագրույցի Սիսակ-Առանյան ճյուղի «նորագույն քննադատության» սնանկությունը, *ՊԲՀ*, 2008, N 2:

48. *A. Ter-Gevondyan*, Армения и Арабский халифат, Ереван, 1977.
49. Է. Դանիելյան, Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ Առաքելական եկեղեցին (VI-VII դարեր), Երևան, 2000:
50. Թ. Թորամանյան, Կյուրեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 1 և 2, Երևան, 1942, 1948:
51. *I.A. Орбели*, Памятники армянского зодчества на острове Ахтамар, Избранные труды, т. I, М., 1960.
52. Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885:
53. *J.Strzygowski*, Die Baukunst der Armenier und Europa, Wien, 1918.
54. *H.M. Токарский*, Архитектура Армении IV-XIV вв., Е., 1961.
55. *Л.А. Дурново*, Очерки изобразительного искусства средневековой Армении, М., 1979.
56. *T.A. Измайлова*, Армянская миниатюра XIв., М., 1979.
57. *Մ.Մ. Հայրապետյան*, Ամարասի ճարտարապետական համալիրը, Լրաբեր, 1975, N 5:
58. Արգամ Այվազյան, Նախիջևանի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1978:
59. Վ. Ա. Հարությունյան, Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992:
60. Բ. Ուլուգարյան, Մ. Հայրապետյան, Դադիվանք, Հայկագետան հայագիտական հանդէս, հ. Ը, Բեյրութ, 1980:
61. Է. Դանիելյան, Գանձասարի վանքը, Երևան, 2009:
62. *C.C. Аревшатян*, Формирование философской науки в древней Армении (V-VI вв.), Ереван, 1973.
63. Շաֆֆի, Խամսայի մելիքությունները, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1987:
64. Է. Դանիելյան, «Քարտեզագրական պատերազմը» և Հայոց տեղանունների պաշտպանության հիմնախնդիրը, <http://blog.ararat-center.org/?p=160>
65. Է. Դանիելյան, Հայկական տեղանունների պաշտպանության հիմնախնդիրը տեղեկատվական պատերազմի քարտեզագրական ոլորտում (Տեղեկատվական անվտանգություն, 2008, N 3):
66. Է. Դանիելյան, Հայաստանն ու հայկական տեղանունները. Հայոց բնապատմական միջավայրի պաշտպանության գիտական առաջադրանքը, Վեմ, 2009, N 1:
67. Լ. Սահակյան, Հայկական տեղանունների թուրքացման քաղաքականությունը Օսմանյան կայսրությունում և հանրապետական Թուրքիայում, Վեմ, 2010, N 1:
68. *L.Sahakyan*, Turkification of the Toponyms in the Ottoman Empire and the Republic of Turkey, Montreal, 2010.
69. *R.Safrastyan*, Ottoman Empire: the Genesis of the Program of Genocide (1876-1920), Yerevan, 2011.
70. Գ. Ստեփանյան, Բարոյ քաղաքի հայության պատմությունը (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 2011:
71. *A.S. Manasyan*, The Turkish Unpunished Crime of Genocide Against the Armenians – the Suicide Road of Mankind, “Fundamental Armenianology”, <http://www.fundamentalarmenology.am/issues/8/ISSUE-1-2015.html>
72. Լ. Սահակյան, Տեղանունների թուրքացումն Օսմանյան կայսրությունում և հանրապետական Թուրքիայում, Մոնթեալ, 2010:
73. *Mark Twain*, The Innocents Abroad or the New Pilgrims' Progress, New York, 1964.
74. *A.Beylerian (ed.)*, Les grandes puissances, l'empire ottoman et les Arméniens dans les archives françaises (1914-1918): recueil de documents, Paris 1983.

75. FO 371/2488/51010, 28 May 1915.
76. History of the United Nations War Crimes Commission and the Development of the Laws of War. London, 1948.
77. V.N. Dadrian, 'Genocide as a Problem of National and International Law: The World War I Armenian Case and Its Contemporary Legal Ramifications' The Yale Journal of International Law, Vol. 14, No. 2, 1989.
78. W.A. Shabas, Genocide in International Law, Cambridge, 2000.
79. M.Cherif Bassiouni, Crimes Against Humanity in International Criminal Law, Boston, 1992.
80. Documents on British Foreign Policy 1919-1939, 1st Series, London, 1952, vol. 4.
81. The Treaties of Peace 1919-1923, vol. II, Carnegie Endowment for International Peace, New York, 1924.
82. U.Մարուբյան, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմահրավական հիմնավորումները, Երևան, 2014:
83. <https://www.youtube.com/watch?v=OYCQZVIDAx8>
84. <http://armeniangenocide100.org/austrian-parliament-recognizes-armenian-genocide/>
85. <http://armeniangenocide100.org/austrian-parliament-recognizes-armenian-genocide/>
86. Հ.Ավետիսյան, Հայկական հարցը 1918թ., Երևան, 1997, էջ 285:
87. A.Manaçyan, Карабахский конфликт. Ключевые понятия и хроника, Ереван, 2005.
88. Большая советская энциклопедия, т. I, М., 1926, с. 641; т.1, изд. 2, М., 1949, с. 440.
89. B.B. Bartol'd, Сочинения, т. II (1), Работы по истории Кавказа и Восточной Европы, М., т. 2, часть I, 1963.
90. U.Զուլայյան, Հայոց պատմության խելաժյուրումը արդի թուրք պատմագրության մեջ (հին և միջին դարեր), Երևան, 1995:
91. «Պատմություն և մշակույթ» ընդդեմ կեղծիքի և ոտնձգության, հիմնադրույթներ, ՀՀ պաշտպանության նախարարին առնելեր հասարակական խորհրդի նախաձեռնած հանրապետական գիտաժողով, Երևան, 2011:
92. Հայկական լեռնաշխարհի պատմա-մշակութային ժառանգությունը: Միջազգային գիտաժողովի նյութեր, ՀՀ ԳԱԱ, ԵՊՀ, ՀՀ Մշակույթի նախարարություն, Արցախի պետական համալսարան, 2012:
93. <http://www.ararat-center.org/index.php?p=9&l=arm>
94. <http://armenpress.am/arm/news/725573/oskanapat-y-paterazm-e-haytararel-hakahaykakan-qarozchutyamb.html>
95. Clive Foss, "When Turks Civilized the World", History Today, Vol. 55, 2005.
96. Դ.Յ. Բոնդարենկո, Ա.Ի. Վծովին, Ա.Դ. Ժոկօ և դր., «Овещение общей истории России и народов постсоветских стран в школьных учебниках истории новых независимых государств», М., 2009.
97. Է.Լ. Դանիելյան, Հայաստանի և այլ երկրների պատմության թուրք-արքքեչանական կենճարարությունների քննադատությունը, Հայաստանի միջազգային Երկրորդ համաժողով «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները», Երևան, 2014:
98. A.Alakbarli, Les Monuments d'Azerbaijan d'Ouest, Baku, 2007.
99. R.Galichian, The Invention of History, London-Yerevan, 2009/2010.
100. Լ.Հ. Յօրգաբյան, Орография Армянского нагорья, Ереван, 1979.
101. K.Bayat, Storm over the Caucasus, Tehran, 2002 (in Persian).
102. P.Michael Croissant, The Armenia-Azerbaijan Conflict, Greenwood, 1998.
103. U.Երեմյան, Հայաստանը լսու «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963:
104. Julfa. The Annihilation of the Armenian Cemetery by Nakhijevan's Azerbaijani Authorities, Beirut, 2006.

105. В.Алиев, Ю.Юсифов, И.Бабаев и др., История Азербайджана. Учебник для 6-го класса. Баку, Тахсил, 2002.
106. «Нагорно-Карабахской Республике 20 лет», ред. проф. В.А. Захаров. М., 2011.
107. <http://www.regnum.ru/news/1127011.html>
108. <http://armenpress.am/arm/news/691678/extradition-of-ramil-safarov-to-azerbaijan-is-unacceptable-nazeli-vardanyan.html>

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

*Էջուարդ Լ. Դանիելյան*

### Ամփոփագիր

Հայոց պատմաքաղաքակրթական արժեհամակարգի արգասիքը՝ պատմական ժառանգությունը, կարևոր նշանակություն ունի տեղեկատվական անվտանգության ոլորտում:

Հայոց ցեղասպանության դատապարտման և, հատկապես, Հայաստանի մեծ մասը կազմող Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի՝ Հայոց հայրենի հողերի պահանջատիրության գործում անհերքելի և անժխտելի վկայություններն են 1,5 միլիոն հայերի ցեղասպանությունը և հայկական պատմական ժառանգության ոչնչացումը՝ Թուրքիայի կողմից ցեղասպան քաղաքականության իրագործման հետևանքով։ Հայկական լեռնաշխարհի պատմաաշխարհագրական տերմինարանությունը, ներառելով Հայաստանի տեղանունների ամբողջականությունը, պատկանում է հայ ազգային լեզվամտածողության հիմնաշերտին։ Հայաստանի պատմաքաղաքակրթական ամբողջական ժառանգությունն ազգային անվտանգության կենսական ոլորտում ունի էթնոպաշտպանական նշանակություն, որի պահպանության ազգապետական երաշխավորներն են Հայաստանի Հանրապետությունը և Արցախի Հանրապետությունը։

## ЗНАЧЕНИЕ ИСТОРИКО-ЦИВИЛИЗАЦИОННОГО НАСЛЕДИЯ АРМЕНИИ В СФЕРЕ ИНФОРМАЦИОННОЙ БЕЗОПАСНОСТИ

*Էջուարդ Լ. Դաниелян*

### Резюме

Итог, плод армянской историко-цивилизационной системы ценностей – историческое наследие – имеет важное значение в сфере информационной безопасности.

В процессе осуждения Геноцида армян и, особенно, требования вернуть армянские земли составляющей большую часть Армении Западной Армении и Килиции неоспоримыми и неопровергими свидетельствами выступают убийство 1,5 млн. армян и уничтожение армянского исторического наследия из-за геноцидогенной политики Турции. Историко-географическая терминология Армянского нагорья, включая совокупность топонимов Армении, принадлежит к краеугольному слою армянского национального языкового мышления. Совокупное целостное историко-цивилизационное наследие Армении имеет этнозащитное значение в жизненно важной сфере национальной безопасности, а национальными и государственными гарантами его сохранения выступают Республика Армения и Республика Арцах.

## THE SIGNIFICANCE OF ARMENIA'S HISTORICAL AND CIVILIZATIONAL LEGACY IN INFORMATION SECURITY

*Eduard L. Danielian*

### Resume

The Armenian historical legacy, which is a product of Armenia's historical and civilizational system of values, has an important role in the information security.

The murder of 1.5 million Armenians and destruction of Armenian historical legacy that were the result of Turkish genocidal policies, are heavyweight evidences for condemning the Armenian Genocide and especially for supporting the claims on the Armenian native country lands in Western Armenia and Cilicia, which constitute the larger part of Armenia. The historical and geographical terminology of Armenian Highland, including the entirety of toponyms of Armenia, belongs to the pivotal layer of Armenian ethnolinguistic mentality. The Republic of Armenia and the Republic of Artsakh are nation-state guarantors for defending Armenia's historical and civilizational legacy in its entirety, which has ethno-protective significance in the critical area of national security.

## **ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՍԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԽՍՀՄ ՏՐՈՀՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

### ***Ալեքսանդր Մանասյան\****

*Բանալի բառեր՝ ղարաբաղյան շարժում, ԽՍՀՄ տրոհում, պերեստրոյկա, ժողովրդավարական վերակառուցումներ, կարգավորման գործընթաց, ԽՍՀՄ-ը տրոհելու Հիմնական ծրագիր:*

Ընդունված տեսակետ կա, թե ղարաբաղյան շարժումը հնարավոր դարձավ Մ.Գորբաչովի նախաձեռնությամբ հոչակված զլասնուսողի (հրապարակայնության), պերեստրոյկայի (վերակառուցման) և արագացման քաղաքականության պայմաններում։ Բայց, ինչպես հայտնի է, քաղաքական բարդ գործընթացներում դեպքերի ժամանակագրական «հանդիպումը» կամ մեկը մյուսին հաջորդելը դրանց միջև պատճառահետևանքային կապերի հայտնաբերման անվերապահ երաշխիք չէ։ Նրանց կապը կարող է լինել ոչ էական կամ նույնիսկ պատահական։ Ավելին, հնարավոր է, որ դրանք երկուսն էլ «սերված» լինեն իրենցից դուրս գտնվող մի այլ հիմքից։ Ղարաբաղյան շարժման և ԽՍՀՄ տրոհման ողջ ընթացքը, ինչպես մենք կփորձենք ցույց տալ ստորև, հաստատում է, որ ԽՍՀՄ քաղաքական կյանքի այդ երկու երևույթներն ունեն նաև իրենցից դուրս գտնվող խորքային շարժադիրների վերլուծության և բացատրության կարիք։

Քանի որ դեպքերը տեղի են ունեցել ԽՍՀՄ-ում, դրանք ճիշտ հասկանալու համար պետք է ենել Խորհրդային Միության ներքաղաքական իրողություններից։ Հիշատակության արժանի առաջին կարևոր հանգամանքն այն է, որ ԽՄԿԿ զլասավոր քարտուղարը նախընթաց տասնամյակներում հաստատված ավանդույթով իրապես ունեցել է անսահմանափակ իշխանություն և քաղաքական որոշումներ կայացնելու փաստացի մենաշնորհ։ Գլխավոր քարտուղարին այդ մենաշնորհից զրկելու միակ ձևը նրան դավադրությամբ պաշ-

\* ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

տոնանկ անելն էր, ինչպես դա կատարվեց, օրինակ, Խրուշչովի դեպքում։ ԽՄԿԿ կանոնադրության համաձայն՝ կուսակցության քաղաքական ուղեգիծը որոշում էր կուսակցության քաղյուրոն, և դեռևս Լենինից եկող դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքի համաձայն՝ նրա որոշումները պարտադիր էին ստորադաս կուսակցական օղակների համար։ Սակայն բուն քաղյուրոյում վճռական դերը պատկանել է կուսակցության գլխավոր քարտուղարին։ Այնպես որ, 1980-ական թթ. Խորհրդային Միությունում ծավալված քաղաքական գործընթացների աշխատեկ-ձարտարապետը ԽՄԿԿ առաջնորդն է եղել։ Դժվար է ասել, թե ինչպես են «խմբագրվել» նրա սոցիալ-քաղաքական հայացքներն արևմտյան գործիչների հետ անձնական շփումների արդյունքում<sup>1</sup>, բայց կասկածից դուրս է, որ զլասնոստի և պերեստրոյկայի գորբաշովյան գաղափարախոսությունն «արևմտյան ծագում» ուներ։ Հայտնի է, որ ժամանակակից գլոբալ զարգացումների մասին Արևմուտքում արդեն կային տեսական մշակումներ այսպես կոչված ժողովրդավարացման ալիքների, ոչ արևմտյան հասարակությունների ժողովրդավարական փոխակերպումների մասին։ Մարդկային դեմքով սոցիալիզմի, տնտեսական ու հասարակական վերակառուցումների և հրապարակայնության զաղափարներն իրենց ներքին պարոսվ հակադրվում էին խորհրդային զորանոցային սոցիալիզմին, կառավարման՝ նրան հատուկ վարչականացական մեթոդներին։ Երկրի առաջնորդի հրապարակ նետած միտքը, թե ողջ հասարակարգը լուրջ փոխակերպումների կարիք ունի, ծայրահետ պահպանողականներից բացի՝ ընդունելի էր բոլորի համար։ Միայն թե երևի ոչ ոք չգիտեր, թե որն է այդ վերափոխությունների ամենաարդյունավետ և անվտանգ ուղին։ Տասնամյակների ընթացքում այնքան խնդիրներ էին կուտակվել, այնքան ցավոտ հարցեր էին «վերևից լուցվել», որ հայտնի չեր, թե ինչ տեղի կունենար, եթե «ներսում եռացող այդ կաթսայի բերանը բացվեր»։ Հասարակարգային փլուզման վտանգն իրական էր։ Բայց Արևմուտքը, որի մասնագետները գուցեն հաշվարկել էին դրա բարձր հավանականությունը, քաջալերում էին Գորբաշովին՝ գովաբանելով «մեծ ռեֆորմատորի խիզախությունը»։ Բանը հասավ Սումգայիթի ու Բարվի

<sup>1</sup> Հայտնի է, որ Գորբաշովին՝ որպես խորհրդային նոր տիպի քաղաքական գործի, որի հետ «Արևմուտքը կարող է աշխատել», 1984թ. դեկտեմբերին Լոնդոն կատարած այցի ժամանակ «հայտնագործել» է Մարգարեթ Թետչերը, որն այդ մասին ԱՄՆ դեկավարությանը տեղյակ պահելու համար հատուկ մեկնել է Վաշինգտոն։ Դա եղել է այն ժամանակ, երբ Գորբաշովը դեռ ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար չէր։

ոճրագործությունից հետո նրան Նոբելյան մրցանակ շնորհելուն (1990թ. հոկտեմբեր): Ինչևէ, գորբաշովյան վերակառուցումների հանդեպ Արևմուտքի ընդգծված դրական վերաբերմունքն ակնհայտ է եղել հենց սկզբից:

ԽՍՀՄ ներքաղաքական կյանքի ըմբռնման համար կարևոր մյուս իրողությունը կապված է ազգային հարցի հետ: Նրա կապը խորհրդային քաղաքական կարգի հետ տարբեր տեսանկյուններ ուներ: Քննարկվող թեմայի տեսակետից կարևոր է ընդգծել, որ հենց ազգային հարցն էր ԽՍՀՄ հնարավոր փլուզման դյուրավառ պայթուցիկը (քաղաքագիտական գրականության մեջ այս հարցը չի վիճարկվում): Նախորդ տասնամյակների փորձն արդեն ցույց էր տվել, որ անարդարությունները, որ ժամանակին բոլշևիկյան Մոսկվան թույլ էր տվել ազգային հանրապետությունների սահմանները որոշելիս՝ տնտեսական ու քաղաքական կարգի հանդեպ ներքնների դժգոհության էներգիան այլ հուն փոխադրելու համար, վերածվել էին դանդաղ գործողության ականների (այս հարցում ևս վերլուծաբանները տարակարծություններ չունեն): Նախընթաց պատմությունը ցույց էր տվել նաև, որ այդ պայթուցիկն ամենից հեշտ գործողության մեջ կարելի էր դնել հենց Լեռնային Ղարաբաղում: Եվ ոչ միայն այն պատճառով, որ 1920-ական թթ. ազգային ամենամեծ անարդարությունն ամենացինիկ ձևով այդտեղ էր իրագործվել: Ինչպես երկրի քաղաքական դեկավարության բարձր օղակներում, այնպես էլ դրսում հրաշալի գիտեին, որ արցախցիները քանականներից ի վեր պարբերաբար բարձրացրել էին կատարված անարդարությունն ուղղելու հարցը<sup>1</sup>:

Եվ այսպես, Ղարաբաղն ամենացավոտ հարցերից մեկն էր, և բնական է, որ եթե եղել է ԽՍՀՄ կազմաքանդման ծրագիր, ապա տրամաբանական պիտի լիներ հենց Լեռնային Ղարաբաղն ընտրել որպես նրա մեկնարկի հրապարակ: Մենք ասում ենք՝ եթե եղել է ԽՍՀՄ կազմաքանդման ծրագիր: Բայց տարօրինակ կլիներ, եթե «մարդկային առաջադիմության հոգսն իր վրա

<sup>1</sup> Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը տարբեր կարգավիճակներով բոլշևիկների կողմից Խորհրդային Ադրբեջանի սահմաններ մտցվեցին Թուրքիային սիրաշահելու, այն մահմեդական Արևելքի հեղափոխության զահակիրը դարձնելու հաշվարկով (սա հարցի մասին պաշտոնական, հրապարակային հնչելություն ստացած, բայց ըստ երևոյթին ոչ միակ տեսակետն է): Հայկական հողերի թալանը կատարվել էր Հայոց ցեղասպանությունից անմիջապես հետո: Պատժվելու փոխարեն թուրքերը կատարված ոճագործության համար յուրատեսակ պարզեներ ստացան: Հայոց ցեղասպանությունը և հայկական հողերը Թուրքիային ու Խորհրդային Ադրբեջանին որպես քաղաքական կաշառք նվիրաբեկը հայոց քաղաքական գիտակցության մեջ մշտապես «կարճ միացման» մեջ գտնվող հարցեր են եղել և մնում են այդպիսին: Ցեղասպանության թեմայի քննարկումը կամ անզամ հիշատակումն անմիջապես արքնացնում էին հայկական հողերի բոլշևիկյան առուծախին վերաբերող հարցեր: Շոշափել առաջինը նշանակում էր օրակարգում դնել նաև երկրորդը:

վերցրած» Արևմուտքը չարիքի կայսրություն հռչակած ԽՍՀՄ-ը պատմական ասպարեզից հեռացնելու նպատակ կամ ծրագիր չունենար: Ոչ թե նման նպատակի լինել-չլինելու հարցը պիտի քննարկվի, այլ այն, թե ինչպես է այն իրագործվել: Այդ դեպքում հետաքրքիր են դառնում այն տեխնոլոգիաները, քաղաքական, գաղափարախոսական այն հնարքները, որոնք գործադրվել են այդ խնդիրն իրագործելիս: Այդ իմաստով 1988-ին պայքարի դրոշ պարզած դարաբաղյան շարժման պատմությունը բացառիկ նյութեր է տրամադրում:

Հատուկ քննարկման նյութ է այն, թե խորհրդային հասարակությունում, նրա կուսակցական և վարչական կառույցներում ինչ աջակիցներ է ունեցել Արևմուտքը: Հայտնի է, օրինակ, որ խրուշչովյան ժամանակներից մտավորականության մեջ արդեն ձևավորվել էր այլախոհների մի շերտ, որը տարված էր արևմտյան ժողովրդավարության և ազատությունների իդեալներով: Դա, իհարկե, ինչ-որ միջավայր կարող էր ստեղծել երկրում վերափոխությունների համար: Բայց դա հազիվ թե բավարար լիներ զորանոցային կյանքին ինչ-որ իմաստով համակերպված զանգվածներին, ներքին կարգապահության կանոններին հետևող կուսակցականներին ոտքի հանելու համար: Պետք էր համակիրներ ունենալ պետության կառավարման բարձրագույն մարմիններում: Քանի գնում, այնքան հետխորհրդային շրջանում ԽՍՀՄ տապալմանը նվիրված ոուսական և արևմտյան քաղաքագիտական գրականության մեջ լայն տեղ է հատկացվում խորհրդային կայսրության տապալման գործում ԽՄԿԿ գլխավոր քարտուղարի՝ Գորբաչովի դերակատարությանը<sup>1</sup>:

Եթե Գորբաչովը ԽՍՀՄ լուծարման ծրագրի մասնակիցն է եղել, ինչպես այսօր պնդում են շատ վերլուծաբաններ, ապա արդեն հետին թվով կարելի է ստուգել, թե նրա նախաձեռնությամբ իրագործված քայլերը, ներառյալ՝ հրապարակայնության և վերակառուցման կարգախոսների տակ իրագործածները, տեղավորվում են արդյոք այդ բարդ գործընթացի համար նախապես մշակված և հընթացս կառավարվող գործողությունների ծրագրում: Պարզվում է, որ 1985թ. ապրիլյան հայտնի պլենումից սկսած մինչև 1991-ի դեկտեմբերը ծավալված բոլոր իրադարձություններն իրոք ընթերցվում են որպես ԽՍՀՄ-ը

<sup>1</sup>Տե՛ս, օրինակ, *Майкол Бешлосс, Стробуф Тэлботт*, Измена в Кремле: протоколы тайных соглашений Горбачева с американцами, М., «Алгоритм», 2012; *Владимир Исаков*, Кто и как развалил СССР, М., «Книжный мир», 2012.

ասպարեզից հեռացնելու համար մշակված և վարպետորեն գործողության մեջ դրված նախագծի իրագործման քայլեր<sup>1</sup>:

Մենք քաղաքագիտական գնահատական չենք տա այն հարցին, թե արդյոք անխուսափելի ու անկասելի է եղել ԽՍՀՄ լուծարումը: Չենք անդրադառնա նաև այն հարցին, թե որքանով էր արդարացված խորհրդային կայսրության կազմաքանդման և նոր տնտեսական ու քաղաքական կարգին անցնելու այն ուղին, որն ընտրվեց<sup>2</sup>: Բայց պետք է նշենք, որ այդ գործընթացների մեկնարկի հենց սկզբում, իրապարակայնության և վերակառուցման կարգախոսների տակ ձևավորված հուսադրող տրամադրությունների այդ շրջանում էր, որ Եվրոպական խորհուրդը 1987թ. հունիսի 18-ին ընդունեց «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևը: Կասկածից դուրս էր, որ նման փաստաթուղթը պիտի արձագանք գտներ հայերի մեջ: Եվ, իհարկե, Լեռնային Ղարաբաղի հայության մեջ: Չնայած Եվրախորհրդի բանաձևը հատկապես Ղարաբաղի մասին չէր, այն օբյեկտիվորեն դարձավ նաև դարաբաղյիններին ուղղված ուղերձ: Եվ այդպիսին պիտի դառնար, եթե անգամ ենթադրենք, որ բանաձևը մշակողների և ընդունողների մտքում նման մտադրություն չկար: Նույն տարում «Известия» թերթը տպագրում է «Столь долгое ожидание»

<sup>1</sup> Նշված ժամանակահատվածում ԽՍԿԿ գլխավոր քարտուղարի և 1990-ից նաև երկրի նախագահի նախաձեռնությամբ իրագործված գործողություններն, իրոք, ստանում են նման մեկնաբանություն, եթե այդ ծրագրով նախատեսվում էր երկիրը նետել «Ժողովրդավարական վերակառուցումների» և քաղաքական ցնցումների հորձանութը և հենթաց ազատել ազգային խնդիրների՝ մինչ այդ փականի տակ գտնվող ջինը: Հրապարակայնության, վերակառուցման, արագացման, նոր քաղաքական մտածողության մասին կարգախոսները պիտի դառնային այդ գործողությունների գաղափարական քողը: ԽՍՀՄ գորբաշովյան շրջանի պատմությունն իր բոլոր իրադարձություններով տեղափոխում է երկրի կազմաքանդման այդ նախագծի մեջ, եթե նույնիսկ ենթադրենք, որ երկրի առաջնորդն այդ ծրագրում ներքաշված է եղել առանց իր իմացության և անկեղծորեն նվիրված է եղել երկրի վերակառուցման գործին:

<sup>2</sup> Դա հատուկ քննարկման նյութ է, որը ենթադրում է սոցիալիզմի կերպափոխման այլ փորձերի (օրինակ, չինական փորձի) վերլուծություն: Ավելին, դա ենթադրում է ԽՍՀՄ լուծարման պատմական փաստին նայել ոչ միայն ռուսական կայսերական հավակնությունների, այլև Խորհրդային Միության մյուս ժողովուրդների շահերի դիտակետից: Խորհրդային Միության մյուս հանրապետությունների ժողովուրդները բնավ դեմ չեն ծավալվող գործնթացին՝ նրանում տեսնելով անկախ պետականության ձեռքբերման հեռանկարը: Նրանց համար Գորբաշովի վարած քաղաքականությունն առաջադիմական է, իսկ դրա արդյունքները պատմական բարեպատեհություն: Գերմանացու համար Գորբաշովն այն քաղաքական գործիչն է, որի օրոք քանդվել է Բեռլինյան պատր: Արևմտյան քաղաքական վերնախավը հանձին Գորբաշովի տեսնում է ԽՍՀՄ այն ներկավարին, որի օրոք պատմական ասպարեզից հեռացավ «չարի կապրությունը»: Խնդիրը մեկ այլ տեսքով է ներկայանում աշխարհաբարձրական զարգացումների լոյսի ներքո: Նույնիսկ արևմտյան մասնագետներից շատերը (օրինակ, Խմանուել Վալերստայնը) գտնում են, որ ԽՍՀՄ հեռացումը գորպալ դաշտից աշխարհը հանել է ռազմագաղաքական այն հավասարակշռությունից, որի մեջ այն գտնվել է տասնամյակներ շարունակ, և մատնացուց են անսում միաբներ աշխարհի այն վտանգները, որ չկային նախորդ շրջանում: Գնահատելով Գորբաշովի ծառայությունները պատմության առջև վերջապես հնարավոր չէ չընդգծել, որ հասարակարգի կերպափոխման ցնցումային այն տարբերակը, որ ԽՍԿԿ գլխավոր քարտուղարի մատուցմամբ ընտրվեց ԽՍՀՄ-ում, սոցիալական մեծ ողբերգությունների ուղին էր:

հողվածն այն մասին, թե ինչպես են Աղրբեջանում ազգային պատկանելության համար հալածում հայերին<sup>1</sup>: ԽՍՀՄ Գերազույն խորհրդի պաշտոնաթերթի հատուկ թղթակիցները հողվածում ներկայացնում են պատմություն այն մասին, թե ինչպես են աղրբեջանցիները Նիշ գյուղի պահածոների գործարանի տնօրեն Դանաքյանի և հաշվապահ, Հայրենական պատերազմի մասնակից Բաղդասարյանի վրա բարորում խոշոր յուրացումների մի գործ, որի հետ նրանք ոչ մի կապ չունեին, ու դատական կարգով նրանց դատապարտում գնդակահարության: Խարդախությունը բացահայտվում է պատահաբար, Հայրենական պատերազմի վետերանների համամիութենական կազմակերպության միջամտությամբ: Հողվածագիրները բաց տեքստով գրում են, որ, ճիշտ է, Բաղդասարյանի և Դանաքյանի նկատմամբ գնդակահարության դատավճիռ էին կայացրել խոշոր յուրացման գործը ծածկելու համար, բայց ահոելի չափերի յուրացումների «մեղավորներին» պատահականությամբ չէ, որ ընտրել էին: Այդ անմեղ մարդիկ դատական և վարչական օղակների (շրջանայինից մինչև համապատասխան հանրապետական մարմինները) հանցագործ համաձայնության զոհ պիտի դառնային միայն այն բանի համար, որ հայ են:

Հետաքրքիր է, որ նույն 1987-ին են ծավալվում իրադարձությունները Լեռնային Ղարաբաղի հյուսիսում՝ ինքնավար մարզից դուրս գտնվող Չարդախլու գյուղում, որին անդրադարձել է Ա.Բեկկերը «Сельская жизнь» թերթում տպագրած իր «Անցյալի գերության մեջ» վերնագրով հողվածում: Դա Խորհրդային Աղրբեջանում սովորական դարձած մի դեպքի նկարագրություն է այն մասին, թե ինչպես էին հայկական գյուղերին պատկանող հողատարածքներն ապօրինաբար օտարում նրանցից՝ հօգուտ սահմանակից աղրբեջանաբնակ գյուղերի: Կոնֆլիկտը բռնկվում է այն բանից հետո, երբ կոլտնտեսության նախագահը վճռականորեն դեմ է դուրս գալիս հողատարածքների թալանին: Գործը հասնում է նրան, որ գյուղ «ժամանած» աղրբեջանական միլիցիան ծեծկուտուք է սադրում և ահաբեկում գյուղացիներին<sup>2</sup>:

<sup>1</sup> Евгений Жбанов, Виталий Пименов, Столъ долгое ожидание, газета “Известия” от 18 апреля 1987г. Մանրամասները՝ А.Беккер, “У прошлого в плену”. Газета “Сельская жизнь” от 24 декабря 1987г.

<sup>2</sup> Հայկական գյուղերի տարածներում աղրբեջանական գյուղեր հիմնելու պրակտիկան կիրառվել է նաև ԼՂՄ-ում: Հայտնի է, օրինակ, Ասկերանի շրջանի Շահրավ գյուղի տարածքում Լեսնոյե (կամ Կարազյալ) անվանմամբ աղրբեջանական գյուղ հիմնելու պատմությունը: Որոշ հայկական գյուղեր գրավվում էին ժողովրդագրական գրոհով, ինչպես, օրինակ, Խոջալուն: 1988-ին աղրբեջանցիներն արդեն հօգուտ իրենց էին թեքում բնակչության կազմի նժարը Տող, Քարաղբյուր հինավուրց հայկական գյուղերում:

## **Արևմուտքը և դարաբաղյան շարժումը 1988-1989թթ.**

Արևմուտքը 20-րդ դարում այլ առիթներ է ունեցել՝ իր վերաբերմունքը դրսնորելու Ղարաբաղի նկատմամբ: Հայտնի է Անգլիայի բացասական դերն արցախյան հարցում 1918-1920թթ., երբ որպես նահանգապետ Բաքվում հայտնված անգլիական գեներալ Թոմսոնը վերջնագրային բնույթի պահանջներ էր ներկայացնում արցախցիներին՝ նրանցից Բաքվին ենթարկվելու համաձայնություն ստանալու համար: Հայտնի է նաև, որ 1918թ. գերմանական զորքեր են ուղեկցել Նուրի փաշայի հրամանատարությամբ Բաքուն զրոհող թուրքական զորքերին և թուրքերի հետ մեկտեղ քաղաքը հանձնելու վերջնագիր են ներկայացրել Բաքվի Հայոց ազգային խորհրդին: Բայց մենք «այդքան հեռու» չենք գնա: Որպես դիտարկումների մեկնակետ մենք կընդունենք ԽՍՀՄ լուծարման նախօրյակին թափ առած դարաբաղյան շարժումը 1988թ.:

**1988-1989թթ. ԱՄՆ և Եվրոպայի դիրքորոշումը դարաբաղյան շարժման նկատմամբ կարելի է բնութագրել որպես ակնհայտ, բայց և զուսպ համակրանքի շրջան, որ նույնքան ակնհայտ զգուշավորության կնիք էր կրում: Արևմուտքն ամեն կերպ աշխատում էր ստվեր չնետել երկրի առաջնորդի անվան և գործի վրա, եթե խոսքն անզամ բացահայտ սայթաքումներին էր վերաբերում: Դա դրսնորվեց նույնիսկ սումգայիթյան ցեղասպանական ակտին Վաշինգտոնի տված գնահատականներում: Թվում էր՝ ժողովրդավարության անունից ամեն չնշին առիթով խոսող «պաշտոնական Արևմուտքը» պետք է դատապարտեր կատարված ոճրագործությունը, ինչպես, ի դեպ, դա անում էին ողջ աշխարհի առողջ հասարակական ուժերը: Բայց ակնհայտ էր, որ արևմտյան մայրաքաղաքները հետ էին մնում իրենց երկրների հասարակական կարծիքից: Նրանք ուշիուշով հետևում էին, թե Մոսկվան ինչ գնահատական պիտի տա Սումգայիթին, որպեսզի հանկարծ նրանից առաջ չանցնեն և ավելի խիստ գնահատական չտան: Այդ տեսակետից բնութագրական էր պաշտոնական Վաշինգտոնի պահկածքը: 1989թ. նոյեմբերի 19-ին ի պաշտպանություն դարաբաղյան շարժման Կոնգրեսի ընդունած բանաձևում Վաշինգտոնը սումգայիթյան ոճրի գնահատման հարցում «Մոսկվայից առաջ չանցնելու» իր կեցվածքը ներկայացրեց բաց տեքստով: Բանաձևի նախաբանի՝ «նկատի առնելով, որ սովետական կառավարությունը 1988թ. փետրվարի 28-29-ին Սումգայիթում, Աղրբեջանում հայերի սպանությունը բնութագրել է**

որպես «ջարդեր»...»<sup>1</sup> ձևակերպումն այդ զգուշավորության ավելի քան թափանցիկ արձանագրումն էր: Ոճրի քաղաքական որակումը պաշտոնական Վաշինգտոնը թողնում էր Մոսկվայի հայեցողությանը<sup>2</sup>՝ ավելի խիստ գնահատականներով նրան հարվածի տակ չդնելու համար: Եվ Վաշինգտոնի այս վարքը «հանգիստ տեղավորվում» է այն վարկածում, որ ԽՍՀՄ առաջնորդը «ներառված» էր (Եթե անզամ ենթադրենք, որ նա տեղյակ չէր այդ մասին) ԽՍՀՄ կազմաքանդման ծրագրերում: Այդ պահին նրան բնակ պետք չէր ներկայացնել որպես մի առաջնորդի, որի թողտվությամբ կատարվել էր սումգայիթյան ոճիրը:

Այն ձևակերպումները, որ տեղ էին գտել Կոնգրեսի վերը հիշատակված բանաձևում, սուկ առաջին հայացքից էին խիստ: Այն ժամանակ Ստեփանակերտում և Երևանում փորձառություն չունեցող հայկական քաղաքական շրջանակները ոգևորված էին Կոնգրեսի ընդունած փաստաթղթով: Այն կոչ էր անում ԽՍՀՄ նախագահ Գորբաչովին «վերականգնել կարգուկանոնը, անմիջապես վերականգնել տնտեսական կառույցների գործառումը և Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի ժողովուրդների մատակարարումը, ապահովել Լեռնային Ղարաբաղի բնակչության ֆիզիկական անվտանգությունը հարձակումներից և շարունակել երկխոսությունը Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների հետ խաղաղ կարգավորման շուրջ...»<sup>3</sup>: Ամեն ինչ ասված է ժողովրդավարության բարձր սկզբունքների անունից: Կոնգրեսը հուսադրում էր դարաբաղցիներին, որպեսզի նրանք հանկարծ չհուսահատվեն, և չէր մեղադրում երկրի ղեկավարին Սուլմանյիթում հայերի ջարդերը չկանխելու համար, մի քան, որ նա պարտավոր էր և կարող էր անել:

### ***Ղարաբաղը ԽՍՀՄ մասնատման ծրագրում նոր բովանդակության վերագրում միութենական հանրապետությունների սահմանների անձեռնմխելիությանը***

ԱՄՆ Կոնգրեսն իր բանաձևն ընդունեց այն ժամանակ էր, եթե արդեն Կրեմլն արտահայտել էր իր տեսակետը ինդրի իրավական կարգավորման վերաբեր-

<sup>1</sup> «Kommuñist» օրաթերթ, 23 նոյեմբերի 1989թ.:

<sup>2</sup> Բայկ վերջինս 1988-ի հունիսին ԽՄԿԿ գլխավոր քարտուղարի միջոցով վճռականորեն մերժել էր տեղի ունեցածը ցեղասպանություն որակելուց, մինչդեռ օբյեկտիվ դիտարկման դեպքում այն չէր կարող ստանալ այլ բնույթագրում:

<sup>3</sup> 1989թ. նոյեմբերի 19-ին ղարաբայլան հիմնախնդրի քննարկումների արդյունքում Կոնգրեսի ընդունած թիվ 178 բանաձևի լրիվ տեքստին կարելի է ծանոթանալ համացանցում՝ <http://Thomas.loc.gov/cgi-bin/query/D?c101:1:/temp/-c101evJtWu>:

յալ: Կենտրոնի փորձագետները խնդրին նվիրված հեռուստահաղորդումներում այդ դիրքորոշումը ձևակերպել էին հետևյալ կերպ՝ ինքնավար մարզը Աղբ. ԽՍՀ-ից Հայկական ԽՍՀ տեղափոխելու համար հարկավոր է ստանալ Բաքվի համաձայնությունը, քանի որ ԽՍՀՄ Սահմանադրության համաձայն՝ միութենական հանրապետության սահմանները կարելի է փոխել միայն նրա համաձայնությամբ: Հղում էր կատարվում երկրի Հիմնական օրենքի 78-րդ հոդվածին: Ի դեպ, նույնն ասվում էր ինքնավար մարզի սահմանների մասին: Ոչ Բաքուն և ոչ էլ որևէ միութենական վերադաս ատյան կամ կառույց իրավասություն չուներ փոխելու ինքնավար մարզի սահմաններն առանց մարզի համաձայնության:

Թվում էր, թե իրադրությունը ներկայացվում է իրավունքի անունից և իրավունքի լեզվով: Սակայն նման փաստարկումը Կենտրոնի վարքի սկզբունքային փոփոխության մասին էր վկայում: Մինչ այդ հանրապետությունների և ինքնավար կազմավորումների սահմանների տասնյակ փոփոխություններ էին կատարվել՝ առանց իրավական լուրջ իմաստ վերագրելու միութենական հանրապետությունների սուվերենության մասին ԽՍՀՄ Սահմանադրության 78 հոդվածին: ԽՍՀՄ՝ որպես միասնական պետության գաղափարն ինքնին գերակա էր դիտվում ազգային-պետական կառուցվածքի սուբյեկտներին (միութենական հանրապետություններին և ինքնավար կազմավորումներին) վերաբերող սահմանադրական դրույթների նկատմամբ: Կար սահմանադրություն, բայց և կար երկրի կոմկուսի կողմից իրազործվող քաղաքական պրակտիկա, որն անհրաժեշտ դեպքերում իրավական ու քաղաքական «փաստարկներով» հիմնավորումներ էր տալիս հանրապետությունների և ինքնավարությունների սահմանների փոփոխմանը, որոնք արդեն իսկ գիտակցվում էին որպես միասնական երկրի ներքին վարչական (այլ ոչ թե սուվերեն պետությունների) սահմաններ: Ամեն ինչ որոշվում էր ԽՄԿԿ քաղբյուրոյում, որի վճիռները պարտադիր էին նաև բարձրագույն օրենսդիր մարմնի՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի համար: Առանց ստանալու Ռուսաստանի համաձայնությունը և առանց համապատասխան ձևականությունների ու ձևակերպումների՝ Խրուշչովը 1956թ. Ղրիմը հանձնել է Ռուսականացին: Եվ նման շուրջ երկու տասնյակ դեպք կար գրանցված ԽՍՀՄ ներքին սահմանների վերանայման պրակտիկայում<sup>1</sup>: Բայց ահա Ղարաբաղի դեպքում ինչ-որ չափով անսպասելի

<sup>1</sup>Նման 23 դեպքի ցուցակ բերված է «Статус Нагорного Карабаха в политико-правовых документах и материалах» (изд. Центра русско-армянских инициатив, Ер., 1995, стр. 93-96) գրքում:

ձևով Կենտրոնն իրական իրավական բովանդակություն դրեց Սահմանադրության 78-րդ հոդվածում, երբ բոլորին հայտնի էր, որ ԽՍՀՄ ներքին քաղաքական կյանքի և սահմանադրության միջև աշխատող կապեր չկային: Իհարկե, կարելի է ենթադրել, որ դա արվում էր հանրային կյանքի ժողովրդավարացման հռչակված ուղեգծի հունում: Կարելի է: Սակայն մյուս կողմից ակնհայտ էր, որ այդ ձևով Կենտրոնն օրինական է դարձնում բռնություններով Լեռնային Ղարաբաղի ժողովրդին պարտադրած՝ ըստ Էռլիշյան ջրնդունված ապօրինի որոշում և փակում օրինական ձևով այն վերանայելու ճանապարհը: Փաստորեն, Կենտրոնը Ադր. ԽՍՀ ոչ լեզիտիմ սահմանները ներկայացրեց որպես անձեռնմխելի: Այս մոտեցումը միայն Ադր. ԽՍՀ սահմաններին չէր վերաբերում: Այն հնչեց որպես միութենական հանրապետությունների ինքնիշխանությանը նոր որակ վերագրելու մոտեցում և խթանեց նրանցում կենտրոնախույս ուժերի ակտիվացումը: Բնական է, որ դա արվում էր խորհրդային սոցիալիզմին ժողովրդավարության նոր որակներ պատվաստելու հայեցակարգի համաձայն: Բայց նկատել է պետք, որ հրապարակայնության և հասարակական կյանքի ժողովրդավարացման հետ Սահմանադրության այդ 78-րդ կետը խիստ միջնորդավորված և նույնիսկ հեռավոր կապեր ուներ, իսկ ահա երկրի կազմաքանդման նախագծում (Եթե ընդունենք, որ այդպիսին կար) այն պիտի անմիջապես կատարեր տրոհման արագացուցիչ դեր:

Ղարաբաղյան խնդրի համատեքստում ԽՍՀՄ Սահմանադրության 78-րդ հոդվածին «նման լրջություն հաղորդելը» անակնկալ մի բան էր երկրի ներքաղաքական կյանքում: Միութենական հանրապետությունների մայրաքաղաքներում զգացին, որ իրենց հանրապետությունները, որոնցից օտարված էին սուվերենության բոլոր կարևոր ատրիբուտները, կարող են հավակնել ավելի բարձր ինքնուրույնության: ԽՍՀՄ-ը լրելու իրավական աշխատակարգը, որի մասին մտածելն անգամ մինչ այդ անհմաստ էր թվում, «ընդհանուր խոսակցության» թեմա դարձավ: Այդ քննարկումներում դժվար չէր բացահայտել, որ երկրի Հիմնական օրենքը միութենական հանրապետությունների սուբյեկտների սուվերենությունն ըստ Էռլիշյան հանգեցնում է նրանց սահմանների՝ սուլ թղթի վրա գրված անձեռնմխելիությանը: Պարզվեց, որ նրանում ոչ մի հոդված չկար, որով իրավաբանորեն ապահովվեր ու կանոնակարգվեր, օրինակ, ԽՍՀՄ-ից հանրապետությունների դուրս գալը: Այդպես 1989թ. ընթացքում քաղաքական օրակարգի համար նախապատ-

րաստվեց 1990թ. ապրիլի 3-ին ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարի կողմից ընդունված «Միութենական հանրապետության ԽՍՀՄ-ից դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքը<sup>1</sup>: Իսկ հետո, 1990-ի դեկտեմբերին, Գորբաչովի նախաձեռնությամբ հանրապետությունների իրական ինքնուրույնության ընդլայնման կամ ինքնիշխանության բարձրացման նույն քաղաքական գծի վրա օրակարգում հայտնվեց նոր միութենական դաշնագրի նախագիծը:

Այստեղ կարևոր է նկատել, որ Արևմուտքն ամենատարբեր ձևերով, բայց նրբանկատորեն քաջալերում էր Գորբաչովի քայլերը և դրան զուգահեռ՝ դարձյալ զուսպ շեշտադրումներով սատարում դարաբառյան շարժմանը: 1989թ. նոյեմբերի 19-ին Կոնգրեսի ընդունած և վերը հիշատակված թիվ 178 բանաձևի ձևակերպումները ցույց են տալիս, թե ինչ զգուշությամբ են ընտրված ձևակերպումները: Կոնգրեսը հորդորում է ԽՍՀՄ դեկավարությանը դարաբառյան խնդրի համար գտնել այնպիսի լուծում, «որը կհամապատասխանի մարզի ժողովրդի հայացքներին»: Փաստաթուղթը կազմողները, իհարկե, կարող էին այդ բառերի փոխարեն հիշատակել ժողովուրդների ազատ ինքնորոշման սկզբունքը, քանի որ տեքստում տեղ գտած արտահայտությունն, ըստ էության, մարզի ժողովրդի ինքնորոշման իրավունքը հարգելու կոչ էր: Կարող էին հենց այդպես էլ ձևակերպել հորդորը, բայց խուսափել են ինքնորոշման սկզբունքի ուղղակի մատնանշումից: Նման խնդիրներով ծանրաբեր բազմազգ ԽՍՀՄ-ի համար այդպիսի հղումը 1989-ին կարող էր ընկալվել որպես երկիրը մասնատելու ուղղակի կոչ, ինչն այդ պահին բնավ նպատակահարմար չէր լինի: Ոչ միայն հիշատակված թիվ 178 բանաձևում, այլև 1988-1991թթ. Կոնգրեսի ընդունած փաստաթուղթերում վերլուծական աչքը կարող է տեսնել ոչ թե ԽՍՀՄ ներքին գործերին չմիջամտելու ԱՄՆ իշխանությունների կեցվածքը կամ դրանով պայմանավորված նրանց նրբանկատությունը (ինչպես կարող է թվալ առաջին հայացքից), այլ մինչև 1991թ. ԽՍՀՄ-ում ծավալված իրադարձությունների նկատմամբ իրապարակայնորեն չբարձրաձայնված որոշակի քաղաքական ծրագրի գոյությունը: Կոնգրեսի բանաձևերում ոչ այնքան նրբանկատություն պետք է փնտրել ու տեսնել, որքան հաշվարկ ու հաշվենկատություն: Անբնական կյանքը, եթե Միացյալ Նահանգների նման երկիրը Գորբաչովի իշխանության գալուց և, առավել ևս, սումգայիթյան եղեռնից հետո

<sup>1</sup>Տե՛ս Հայաստանի Հանրապետության 1990 թվականի մայիսի 24-ի ՀՀ օրենքը՝ «Օ պորядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР» // Ведомости СНД и ВС СССР, 1990, № 15, с. 252.

չունենար ԽՍՀՄ-ում ծավալվող իրադարձությունների հնարավոր սցենարների փաթեթ կամ դեպքերի վրա ազդելու մշակված գործողությունների ու դրանց մշտադիտարկման ծրագիրը: Դարավերջին աշխարհաքաղաքական գործընթացներն ուղղորդելու Արևմուտքի և նրա առաջատարի անթաքույց հավակնությունների համատեքստում նման ծրագրի բացակայությունն ուղղակի բացառում է: Խնդիրը, ինչպես արդեն նշել ենք, այն է, թե որս է եղել այդ կոնկրետ, արդեն գործողության մեջ դրված ծրագիրը: Քաղաքական այն վարկածը, որը մեր կողմից այստեղ առաջադրվում և հիմնավորվում է, հետևյալն է. արդեն 1988թ. Արևմուտքը և, առաջին հերթին, նրա առաջատար ԱՄՆ-ը հետամուտ էին ԽՍՀՄ-ն ըստ միութենական հանրապետությունների լուծարելու (տրոհելու, կազմաքանդելու) ծրագրի իրագործմանը: Մենք հետագա մեր շարադրանքում դա կանվանենք *Հիմնական ծրագիր*:

Մենք դա որակում ենք որպես քաղաքական վարկած միայն այն պատճառով, որ ծրագրի հետ կապված բազմաթիվ փաստաթղթեր և փաստեր դեռ գաղտնազերծված կամ բացահայտված չեն: Իրականում բուն ծրագիրն իր վերջնարդյունքի բանաձևնան տեսքով բացահայտվել է 1991-ի նոյեմբերին, եթե ԱՄՆ պետքարտուղար Բեյքերը հայտարարեց, որ հետխորհրդային տարածքում ԱՄՆ-ը նորանկախ պետությունները կձանաչի նախկին միութենական հանրապետությունների սահմաններում: Մինչ օրս էլ այն դիտվում է իրադարձությունների օբյեկտիվ ընթացքով պայմանավորված և, ուրեմն, հենց 1991-ին ընդունված որոշում և կատարված քայլ: Դա էլ մեկ այլ վարկած է, և մենք համաձայն չենք դրան՝ գտնելով, որ նման ծրագիր ԱՄՆ համապատասխան ծառայություններն ունեցել են վաղուց: Մեր առաջադրած դրույթի հիմնավորումը հանգում է մի կողմից 1988-1991թթ. իրադարձությունների, քաղաքական որոշումների և կարևոր փաստաթղթերի և մյուս կողմից՝ նրա ու ԽՍՀՄ-ում ծավալված իրադարձությունների ներքին կապի և համատեղելիության բացահայտմանը: Այս հարցադրումով վերլուծաբանի առջև ծառացած խնդիրն առաջադրված «վարկածի աշքով» այդ տարիների իրադարձությունները գնահատելուն է հանգում՝ հաստատելու կամ հերքելու համար ստուգվող վարկածը, ինչպես դա արվում է ցանկացած գիտական հետազոտության ժամանակ:

### *Երեք միջանկյալ հարց*

Առաջադրված վարկածի կապակցությամբ անհապաղ պատասխան են պահանջում սկզբունքային բնույթի հետևյալ երեք հարցերը.

1. Խնչո՞ւ ԽՍՀՄ կազմաքանդման հնարավոր ամենատարբեր ծրագրերի մեջ նախապատվությունը տրվեց «տրոհում ըստ միութենական հանրապետությունների» տարբերակին:
2. ԽՍՀՄ բարձրագույն իշխանություններում տեղյա՞կ էին, արդյոք, արևմտյան այդ նախագծի մասին: Եթե այո, ապա ինչպիսի՞ն էր նրանց վերաբերմունքը դրա նկատմամբ:
3. Համաշխարհային պատմական ընթացքի տեսակետից ինչպե՞ս պիտի գնահատվեն ԽՍՀՄ լուծարումն ու նրա հեռացումը միջազգային ասպարեզից՝ հետընթա՞ց էր այն, թե՞ առաջընթաց:

Նախ՝ առաջին հարցի մասին: Գաղտնիք չէր, որ «տրոհում ըստ միութենական հանրապետությունների» բանաձևը կողմնակիցներ կգտներ հենց միութենական հանրապետությունների մայրաքաղաքներում, որտեղ և գտնվում էին ԽՄԿԿ հիմնական զոկատները և ազգայնական ուժերը: Այնպես որ, դժվար չէր հաշվարկել, որ միութենական հանրապետություններին իրական ինքնիշխանությամբ օժտելը ԽՍՀՄ-ը կազմաքանդելու հզոր լիցք ունի և հնարավոր մյուս տարբերակների մեջ ամենից ընդունելին պիտի լիներ երկրի տրոհման գործընթացը սահմանային վեճերով չքարդացնելու առումով: Միութենական հանրապետությունները հոժարակամ մի կողմ պիտի դնեին անցյալից ժառանգած այրավիսի հարցերը՝ անկախության ռեալ հնարավորության պատմական շանսը չկորցնելու համար: Հնարավոր ուղիների մեջ դա էր խորհրդային կայսրությունը «մասերի բաժանելու» ամենակարճ, ամենաարդյունավետ, ամենաանվտանգ և, վերջապես, ամենաքիչ ծախսեր պահանջող ձանապարհը: Հետադարձ հայացք նետելո՞վ դժվար չէ նկատել, որ 1988-1990թթ. իրադարձությունների «ներքին տրամաբանությունը» հանգում էր հենց դրան: Այստեղ ճիշտ տեղն է արձանագրելու առաջադրված քաղաքական մեր վարկածի ստուգմանն ուղղված սեփական դիտարկումների գլխավոր արդյունքը՝ 1988-1991թթ. ԽՍՀՄ-ում ծավալված գործընթացների և ոչ մի դրվագ կամ փաստ ոչ միայն չի հակասում առաջադրված վարկածին, այլև ուղղակիորեն հաստատում է այն:

Երկրորդ հարցի մասին: Տեղյա՞կ էր արդյոք ԽՍՀՄ քաղաքական վերնախավն այդ ծրագրի մասին: Սա հատուկ ուսումնասիրության թեմա է: Վերլուծաբաններն ու քաղաքական գործիչները, որոնք ԽՄԿԿ գլխավոր քար-

տուղարին մեղադրում են գիտակցված ձևով ԽՍՀՄ-ը կազմաքանդելու մեջ, անկասկած, ելնում են այն կանխավարկածից, որ Գորբաչովը գիտեր դրա մասին և գործում էր ըստ այդ ծրագրի: *Մենք նույնպես հակված ենք այդ տեսակետին*, և դրան մեզ բերում են հենց դարաբաղյան հիմնախնդրի նկատմամբ երկրի դեկավարի կատարած կռնկրետ քայլերը: Սույն վերլուծությունը հատկապես դրան չի նվիրված, բայց 1988-ից ի վեր Լեռնային Ղարաբաղի շուրջ ծավալվող իրադարձությունների կապակցությամբ մենք կամա-ակամա կանորադառնանք հարցին այդ կողմից:

Կարևոր է ընդգծել, որ Երկիրն ըստ միութենական հանրապետությունների մասնատելու՝ պետության առաջին դեմքի մտադրությունը ոչ մի հարցում այնքան ակնհայտ չի դրսեռովել, որքան Ղարաբաղի շուրջ ծավալված իրադարձություններում: Սակայն հարցն ունի նաև այլ կողմ: Արդյո՞ք կարող եր գլխավոր քարտուղարը միայնակ գլուխ բերել նման լայնամասշտաբ գործ: Այս հարցը նույնպես կարու է ուսումնասիրության: Բայց կան նաև կասկածից դուրս փաստեր: Օրինակ՝ այն, որ Ալեքսանդր Յակովլևը ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյում եղել է Գորբաչովի ամենամերձավոր թիմակիցը և տարվող քաղաքականության գլխավոր գաղափարախոսներից մեկը: Կասկածից դուրս է, որ ԽՍՀՄ-ը կազմաքանդող «բրիգադի» անդամների ցուցակը նրանցով չի սահմանափակվում:

Եվ այսպես, ԽՍՀՄ կազմաքանդմանը գիտակցված ձևով Գորբաչովի մասնակցությունն ամենից պարզ ու անառարկելի ձևով երևում է նրա «դարաբաղյան գործից», որը դեռ սպասում է իր ամբողջացմանը: Սակայն դա չի նշանակում, որ Երկրի քաղաքական վերնախավում բոլոր անդամները տեղյակ են, թե «ուր է տանում գործը» պետության դեկավարը: Նրանցից շատերն ամենայն հավանականությամբ բանից անտեղյակ են ընդգրկված այդ գործընթացում: Հետաքրքիր է, որ ոմանք Գորբաչովին հասկացան հետին թվով, ԽՍՀՄ փլզումից հետո, երբ, ինչպես ասում են, բանը բանից անցել էր: Բայց դա այլ ուսումնասիրության նյութ է: Այստեղ մեր առաջադրած վարկածի տեսակետից հարցի մեկ այլ կողմ պետք է ընդգծվի: Եվ դա այն է, որ ԽՍՀՄ տրոհումը պետք է քողարկվեր այլ ծրագրերով և կարգախոսներով: Դրանք կարող են ունենալ խորհրդային սոցիալիզմի ժողովրդավարացման տեսական հիմնավորումների, երկրի սոցիալ-տնտեսական վերելքի խոստումնալից կարգախոսների բնույթ: Հրապարակայնության, վերակառուցման, արագացման դրույթների շուրջ ծավալված քննարկումները, դրանց ճակատագրական անհրաժեշտության մասին

քարոզները պետք է կատարեին հենց այդ դերակատարությունը: Իսկ այդ հարցերում օգնության ձեռք կարող էին մեկնել նաև արևմտյան փորձագետներն ու խորհրդատուները, որոնք հաճախ էին այցելում Կրեմլ:

Վերջին հարցի մասին: Այն դեռևս վերջնական պատասխան չի ստացել: Աշխարհաքաղաքական հավասարակշռության վերացումը և միաբներ աշխարհակարգ ձևավորելու ԱՄՆ փորձերի վերջին քանամյակն ավելի կայուն ու անվտանգ չեն դարձրել աշխարհը: Մյուս կողմից՝ լիբերալիզմի հաղթարշավը չի մեղմել համաշխարհային տնտեսության քրոնիկական բնույթ ստացած հիվանդությունները՝ սոցիալական բներացումը, տնտեսական լիբերալիզմի ուղին ընտրած երկրների միջև հակասությունների խորացումը և այլն: Բնական է, որ հարցին պատասխանելու համար հետազոտողը պիտի դուրս գա խորհրդային սոցիալիզմի ձախողված օրինակի սահմաններից և հարցը քննարկի լիբերալիզմի պատմական հեռանկարների, սոցիալիզմի կերպավոխման այլ օրինակների դիտակետից:

### **Ղարաբաղը ԽՍՀՄ մասնատման ծրագրում (Երկրորդ անդրադարձ).**

#### **Դարաբաղյան հակամարտությունը՝ միութենական հանրապետությունների ինքնիշխանության բարձրացման գործիք**

Այսօր արդեն կարելի է հասկանալ, թե Վաշինգտոնն ինչու պիտի սատարեր դարաբաղյան շարժմանը և Գորբաչովի նախաձեռնություններին միաժամանակ: Հարցի պատասխանը գրեթե ակնհայտ է՝ թե՝ մեկում, թե՝ մյուսում երևում էր ԽՍՀՄ լուծարման հեռանկարը: Ղարաբաղն այդ գործընթացներում հատուկ դերակատարություն է ունեցել: Այն կատարել է ամբողջ գործընթացը շարժման դնող առաջին լիցքի կամ, կարելի է ասել, ստարտերի դեր: Որպեսզի Հիմնական նախազիծը (ասել է թե՝ ԽՍՀՄ-ն ըստ միութենական հանրապետությունների տրոհելու նախագիծը) մեկնարկի, դարաբաղյան շարժումը հենց սկզբից խորհրդային տարիների ոգով չպետք է ճնշվեր: Հակառակ՝ պետք էր թողնել, որ այն թափ վերցնի, դառնա երկրի համար կարևոր խնդիր և «զլիավոր գործընթացի» արագացուցիչ: Ըստ Էռթյան, այդպես էլ արվեց: Գորբաչովին դժվար չէր ԽՄԿԿ քաղբյուրոյի անդամներին համոզել, որ խորհրդային տարիների մեթոդներով չի կարելի զապել դարաբաղյիներին, քանի որ դա հակասում է հրապարակայնության ու վերակառուցման հոչակած սկզբունքներին: Բայց միաժամանակ դժվար չէր համոզել, որ չի կարելի

բավարարել նրանց պահանջը, քանի որ այդ նախադեպն, իր, կործանարար կլինի ԽՍՀՄ-ի համար: Ակզիգի խոստումներ և «վարդագույն հոլյուսեր» տրվեցին շարժման առաջնորդներին: Իսկ երբ մարզխորհրդի նիստը 1988-ի փետրվարի 20-ին ընդունեց Խորհրդային Հայաստանին վերամիավորվելու մասին դիմում-խնդրանքը, անմիջապես հետևեց մերժումը: Բայց ոչ այնպես, որ շարժումը կանգ առնի: Հարցին տրվեց կայուն և անլուծելի անհաշուության բնույթ: Չթողնել, որ շարժումը մարի և լուծում չտալ նրան՝ սա է ընթերցվում դարաբաղյան շարժման 1988-1990թթ. պատմությանը վերաբերող իրադարձություններում և փաստաթղթերի փաթեթում:

Այդ եզրակացությանն են բերում հատկապես այդ ժամանակահատվածում Կենտրոնի ձեռնարկած քայլերը, որոնք ակնհայտորեն հակամարտությունը ձգձգելուն, լուծում չտալուն էին միտված: Ղարաբաղի շուրջ և դրանից հետո երկրի տարբեր մասերում (Ֆերգանա, Նովի Ուզեն և այլն) ծագած կոնֆլիկտներն այն քաղաքական ֆոնն էին, որի վրա առաջ էր տարվում Հիմնական ծրագիրը: Հիմնախնդիրների շարքում դարձաղյանն ամենակարևորն էր, քանի որ անմիջապես շոշափում էր հանրապետությունների ինքնիշխանության թեման:

Սահմանադրության 78-րդ հոդվածի հիմքի վրա դարձաղյիների պահանջը մերժելն անխուսափելիորեն պետք է տաներ դեպի հանրապետությունների՝ մինչ այդ միայն «թղթի վրա գրված» ինքնիշխանությանն իրական իրավական բովանդակություն տալուն: Բացառվում է, որ երկրի դեկավարը դա չիմանար կամ գլխի ըրնկներ իրադարձությունների ծավալման ընթացքում: Ղարաբաղյան խնդիրն այդ համատեքստում ստանում է այն հարթակի դերը, որտեղից մեկնարկել է այդ գործընթացը<sup>1</sup>: «Ղարաբաղյան» փետրվարից

<sup>1</sup> ԽՍՀՄ ազգային պետական կառուցվածքում ԼՂԲՄ կարգավիճակի մասին անդրադարձներում սովորաբար անուշադրության է մատնվում այն հանգամանքը, որ ինքնավար մարզը հիմնվել է որպես խորհրդային տիպի պետական կազմավորում: Ճիշտ է, հետագա տարիներին նկատվել է միութենական հանրապետությունների՝ որպես պետական կազմավորումների հատկանիշների ընդգծում, սակայն դա իրավական լորջ բովանդակություն չի ստացել: ԽՍՀՄ ազգային պետական կառուցվածքում ինքնավար կազմավորումներն իրենցից օտարած և նրանց պետականության ատրիբուտներով օժտելու տեսակետից ինքնավար կազմավորումներն էականորեն չեն զիջել միութենական հանրապետություններին: Ժամանակագրութեն վերջին՝ 1977թ. ԽՍՀՄ Սահմանադրության մեջ միութենական հանրապետությունների և ինքնավար կազմավորումների կարգավիճակը սահմանված էր «ԽՍՀՄ ազգային պետական կառուցվածքը» բաժնում, ինչն ուղղակի հաստատումն է այն բանի, որ ինքնավար կազմավորումներն ըստ երկրի Հիմնական օրենքի ունեին ազգային պետական կազմավորումների կարգավիճակ՝ ինքնորոշման ձևաչփած իրավունքու: Սահմանադրութեն արձանագրված իրավական այդ փաստը նոր հաստատում գտավ 1991թ. ԽՍՀՄ Գերազույն խորհրդի «Միութենական հանրապետության ԽՍՀՄ-ից դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» օրենքում, որն արտոնում էր ինքնավար կազմավորումներին՝ ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու դեպքում ինքնուրույն որոշել իրենց ազգային պետական կարգավիճակը:

հետո ընդամենը երկու տարի պահանջվեց, որպեսզի երկրի օրենսդիր մարմինն ընդունի «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման մասին» օրենքը, որը դարձավ Հիմնական ծրագրի կենսագործման հաջորդ հանգրվանը:

Տետին թվով այդ օրենքի ընդունումը երբեմն ներկայացվում է որպես ԽՍՀՄ փլուզումը կանխելու քայլ: Դա արվում է այն հիմնավորմամբ, թե, իբր, միութենական հանրապետությունները չեն համարձակվի դուրս գալ ԽՍՀՄ-ից, քանի որ օրենքն արտոնում էր միութենական հանրապետությունների կազմում հայտնված ինքնավար կազմավորումներին և հավաք ապրող ազգություններին ինքնուրույն որոշել իրենց կարգավիճակի հարցը՝ ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու դեպքում: Ինքնավարություններին իրավունք էր տրվում ընտրություն կատարել երեք հնարավոր տարբերակների միջև: Դուրս եկող հանրապետության հետ միասին լրել ԽՍՀՄ-ը, մնալ ԽՍՀՄ կազմում կամ ինքնուրույն որոշել իրենց ազգային-պետական կարգավիճակը՝ ընդհուպ մինչև անկախ պետության հռչակումը: Դա իրավես ինքնավար կազմավորումների ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքի ճանաչում կամ արդեն իսկ ճանաչված իրավունքի վերահաստատում էր՝ ամրագրված օրենքի ձևով: Առաջին հայացքից թվում է, թե իրենց կազմում ինքնավարություններ ունեցող հանրապետություններն իրոք չեն դիմի ԽՍՀՄ-ից դուրս գալու քայլին՝ իրենց սպառնացող մասնատման վտանգի պատճառով: Բայց հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ օրենքի պաթոսը հենց պետությունն ըստ հանրապետությունների մասնատելն էր: Բանն այն էր, որ մի շարք հանրապետություններ (օրինակ, մերձբալթյան հանրապետությունները, Հայաստանը, Մոլդովան) իրենց կազմում չունեին ինքնավար կազմավորումներ և անվարան կարող էին դիմել ԽՍՀՄ-ը լրելու քայլին՝ սկիզբ դնելով երկիրը տրոհելու այլևս անկասելի գործընթացին: Իրադարձությունների նման ընթացքի կանխատեսումը 1990-ին քաղաքական բարձր պատրաստականություն չեր պահանջում<sup>1</sup>: Ընդամենը ութ ամիս անց՝ 1990թ. դեկտեմբերին, երկրի նախագահն օրենսդիր իշխանությունների քննարկմանը ներկայացրեց ԽՍՀՄ-ը վերակազմավորելու մասին առաջարկը՝ նոր միութենական դաշնագրի նախագծի տեսքով: Համացանցը

<sup>1</sup> Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, հենց այդ հանրապետությունները դարձան անկախության աննահանջ վճռականություն ցուցաբերողները 1991-ին:

լիքն է նախկին ԽՍՀՄ պետական և կուսակցական դեկավար աշխատողների հոդվածներով, որոնցում հիմնավորվում է այն միտքը, որ միութենական նոր դաշնագրի շուրջ սկսված քննարկումները միտված էին ԽՍՀՄ-ը փլուզելու նույն նպատակին: Նոր նախագիծը Խորհրդային Միության 1977թ. Սահմանադրությանն ըստ Էռության որևէ նոր բան չէր կարող ավելացնել, քանի որ նրանում ԽՍՀՄ-ն արդեն սահմանված էր որպես ինքնիշխան հանրապետությունների դաշնություն: Նոր միութենական դաշնագիրը չէր կարող կանխել հանրապետությունների իրավունքների և լիազորությունների սահմանափակումը քաղաքական պրակտիկայում: 1977թ. Սահմանադրությունը տեսականորեն (կամ թղթի վրա) ապահովում էր այդ ինքնիշխանությունը: Բայց դրանք ձևական բնույթ էին ստանում իրական կյանքում, որտեղ տասնամյակներով հաստատված էր մի մշակույթ, որը հանրապետությունների և ինքնավար կազմավորումների իրավունքներն իրականում հանգեցնում էր ոչչի: Այդ իմաստով անելիքները նոր քաղաքական պրակտիկա ձևավորելու մեջ էին, այլ ոչ թե մեկ այլ «սահմանադրություն» ընդունելու:

ԽՍՀՄ քաղաքական և տնտեսական համակարգի բարեփոխումը կարող էր առանց ցնցումների ծավալվել քաղաքական պրակտիկայի աստիճանական վերափոխման հարթությունում, ինչպես, օրինակ, դա տեղի ունեցավ Չինաստանում: Երկրի նախագահի համար նոր միութենական դաշնագրի շուրջ ստեղծված իրարանցումը, ինչպես գտնում են նրա ընդդիմախոսները, ըստ Էռության, նշանակում էր երկիրը նոր վայրիվերումների մեջ պահել: Այստեղ նորից պետք է ընդգծվի՝ եթե ԽՄԿԿ գլխավոր քարտուղարը կամ նույն ինքը՝ երկրի նախագահը պետությունը մասնատելու ծրագիր ունեցել էր, ապա դա եղել է ըստ միութենական հանրապետությունների տրոհման ծրագիր (ստորև կանդրադառնանք 1991-ի դեպքերին, որոնք, ինչպես կտեսնենք, հաստատում են այդ վարկածը): Ընդ որում, ամենահեշտ, ավելորդ գլխացավանք չհարուցող այդ ծրագրով անփոփոխ պիտի թողնվեին նաև միութենական հանրապետությունների ներքին բաժանումները՝ ինքնավար ազգային կազմավորումներն իրենց սահմաններով, քանի որ դրանցում կատարված ցանկացած փոփոխություն կարող էր խառնել բոլոր հաշվարկները: 1991-ին Հիմնական ծրագրի ձախողումը կարող էր կապվել Լեռնային Ղարաբաղի հետ, որը համառոքեն պահանջում էր դուրս բերել իրեն Ադր. ԽՍՀ կազմից և վերամիավորել Խորհրդային Հայաստանին: Պարզ էր, որ նման նախադեպ չէր կարելի թույլ տալ: Այստեղից էլ հասկանալի է դառնում,

թե ինչու էր Կենտրոնը կերպափոխում 1989թ. ամռանը Տարագեհչի հանձնաա-խմբի արած եզրակացությունները՝ մինչև դրանք կդրվեին ԽՍՀՄ ԳԽ նոյեմ-բերյան նիստի քննարկմանը: Դրանցում (վերափոխված-խմբագրվածներում), այնուամենայնիվ, առաջարկ կար այն մասին, որ եթե նույնիսկ ինքնավար մարզը դուրս չբերվի Աղը. ԽՍՀ կազմից, ապա գոնե պետք է ուժեղացվի հա-տուկ կառավարման կարգավիճակը: Գլուցը նետելով ներկայացրած առա-ջարկությունները՝ Կենտրոնը 1989թ. նոյեմբերի 28-ին Գերագույն խորհրդի քննարկմանը ներկայացրեց Հատուկ կառավարման կարգավիճակը վերաց-նելու մասին որոշման նախագիծը: Որոշումն ընդունվեց, և, ինչպես արդեն նշվեց վերը, միութենական հանրապետությունները դրանում տեսնում էին ԽՍՀՄ-ից դուրս գալու սկսված գործընթացի քայլերից մեկը: Չի բացառվում, որ 1988-ից ի վեր հարցին արդարացի լուծում տալու դարաբաղջիների պա-հանջն անթաքույց համակրանքով պաշտպանող մերձբալթյան հանրապե-տությունների պատգամավորները հենց այդ պահից են կռահել կամ հստակ գիտակցել (դրսից նրանց կարող էին բաց տեքստով հուշել) պետության դեկավարի միտքը և սկսել իրենց վարքը մի տեսակ լույսայն, առանց այդ մասին բարձրածայնելու համաձայնեցնել նրա մտադրություններին:

1991-ի գարնանը երկիրը մտավ տրոհիման անմիջական իրագործման փուլ: Մարտին երկրի դեկավարը հանրաքվեի դրեց նորացված միության մասին հարցը<sup>1</sup>: Արդեն իսկ հանրաքվեի դրված «Արդյոք Դուք անհրաժե՞ց եք եք համարում Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միու-թյան պահպանումը...» հարցի ձևակերպումից դժվար չէր կռահել, որ այն կասկածի տակ է դնում հենց ԽՍՀՄ պահպանման անհրաժեշտությունը<sup>2</sup>:

<sup>1</sup> Հետագայում իր հարցագրույցներում և ելույթներում ԽՍՀՄ նախագահն ամեն կերպ կատարվածի պատասխանատվությունը փորձում էր դնել Բորիս Ելցինի վրա: Ընթերցողը կարող է դրանում համոզվել 2011թ. Վետրվարի 28-ին Պոզների հետ հարցագրույցից (<http://www.youtube.com/watch?v=jG1SLdSZIN8>):

<sup>2</sup> Ուսւերեն բնագրում հարցադրումն այսպիսին էր. «Считаете ли Вы необходимым сохранение Союза Советских Социалистических Республик как обновленной Федерации равноправных и суверенных республик, в которой будут в полной мере гарантироваться права и свободы человека любой национальности?». Հանրաքվեին մասնակցած բոլոր հանրապետությունների (այդ թվում և Աղը. ԽՍՀ) բնակչության ճնշող մեծամասնությունը՝ 76%-ը, արտահայտվեց ԽՍՀՄ-ը պահպանելու օգտին: Այդ հանգամանքը հիմք ընդունելով՝ ՌԴ Պետդումնելու է 1990թ. մարտի 15-ին ընդունել է № 156-II ՀԴ և №157-II ՀԴ որոշումներն այն մասին, որ ԽՍՀՄ լուծարումը կատարվել է 1991թ. մարտի 17-ին ԽՍՀՄ բնակչության կամքին հակառակ և օրինական դիտվել չի կարող: № 156-II ՀԴ թվակիր որոշումը կրում էր «ԽՍՀ Միության մեջ միավորված ժողովուրդների ինտեգրման խորացման և 1991թ. դեկտեմբերի 12-ի Ռուսաստանի Խորհրդային Սոցիալիստական Դաշնային Հանրապետության Գերագույն խորհրդի «ԽՍՀՄ կազմավորման մասին Պայմանագրի դենոնսացման մասին» որոշումը չեղյալ հայտարարելու մասին» վերտառությունը: Երկրորդը «Ռուսաստանի Դաշնության Ռուսաստանի համար 1991թ. մարտի 17-ի ԽՍՀՄ հանրաքվեի արդյունքների իրավական ուժի մասին» որոշումն էր, որն ընդունում էր, որ այդ հանրաքվեի արդյունքներն ուժի մեջ են:

Մերձալիքյան հանրապետություններն ու Հայաստանը, Վրաստանը և Մոլդովան բոյկոտեցին հանրաքվեն՝ ի ցույց դնելով ԽՍՀՄ-ից դուրս գալու իրենց վճռականությունը (Վրաստանից բացի՝ մյուս բոլոր հանրապետություններն իրենց կազմում ազգային ինքնավար կազմավորումներ չունեին, ինչը նրանց թույլ էր տալիս շրջանցել 1990թ. ապրիլի 3-ի օրենքի վտանգները): Թե՛ Մերձալիքյանում, թե՛ Հայաստանում իշխանության էին եկել նոր, ոչ կոմունիստական քաղաքական ուժեր, և այդ բոյկոտն ուներ նաև այն ենթատեքստը, որ նոր ուժերի քաղաքական խորհրդատուններն այլևս Մոսկվայում չեն նստում: ԽՍՀՄ պահպանման մասին հանրաքվեն չտվեց Հիմնական ծրագրի համար ցանկալի արդյունքներ: Հանրաքվեին մասնակցած ԽՍՀՄ քաղաքացիների 76%-ն արտահայտվեց ԽՍՀՄ-ը պահպանելու օգտին: Եթե ԽՍՀՄ նախազահն այլ նպատակ չունենար, ապա այդ հանրաքվեի արդյունքները կդարձներ ԽՍՀՄ պահպանման ամենահզոր իրավական կովանը<sup>1</sup>:

### ***Ղարաբաղը՝ Հիմնական ծրագրի գլխավոր խոչընդոտ. «Օղակ» պատճիչ գործողությունը***

ԽՍՀՄ-ն ըստ միութենական հանրապետությունների կազմաքանդելուն ուղղված գլխավոր իրադարձությունները Լեռնային Ղարաբաղում ծավալվեցին 1991-ին: Խոսքն «Օղակ» գործողության մասին է: Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը 1991-ին մնում էր ԽՍՀՄ տրոհման Հիմնական ծրագրի ձախողման թիվ մեկ գործոնը: Հարցը կապված էր ոչ միայն միջազգային հնչեղության հետ, որ ձեռք էր բերել դարաբաղյան հիմնախնդիրը: Կային նաև այլ հանգամանքներ, և գլխավորը դրանց շարքում 1989թ. դեկտեմբերի 1-ի ՀԽՍՀ Գերազույն խորհրդի և ԼՂԻՄ Ազգային խորհրդի միացյալ նիստում ՀԽՍՀ և ԼՂԻՄ վերամիավորման մասին համատեղ որոշումն էր<sup>2</sup>: Հայտնի է, որ (դեռևս) Խորհրդային Հայաստանի գլխավոր քաղաքական ուժն այդ ժամանակ՝ Հայոց համագային շարժումը (ՀՀԸ), դեմ էր «ՄԻԱՅՈՒՄ» որոշման ընդունմանը: Հայտնի է, որ գորբաշովյան Մոսկվան դեմ արտահայտվեց համատեղ նիստում ընդունված բանաձևին: Բայց նաև ակնհայտ էր, որ անհնարին է ՄԻԱՅՄԱՆ մասին

<sup>1</sup>Նորից հիշեցնենք, որ մեր նպատակը ԽՍՀՄ լուծարմանը (կամ կազմաքանդմանը) դրական կամ բացասական գնահատական տալը և այդ գործում Ս.Գորբաչովին մեղադրելը չէ: Մենք փորձում ենք «ղարաբաղյան դիտակետից» երևությունների թիկունքնում տեսնել ԽՍՀՄ-ը պատմական ասպարեզից հեռացնելու ընթացքը և դրանում երկիրի դեկավորության վարքը:

<sup>2</sup>Սումգայիթից սկսած միջազգային հանրային գլխավորության մեջ ձևավորվել էր կոնֆիլկտի կերպար, որտեղ Ստեփանակերտը գործում է իրավունքի, արդարության, իսկ Բաքուն բռնության և ցեղասպանության անունից: Աղբյուղականահայության ցեղասպանությունն առնվազն բարոյական բնույթի անհարմարություն էր առաջ բերում հարցը հօգուտ Բաքվի անվերապահ լուծելու փորձերում:

որոշումն իրավունքի տեսակետից որակել իրքն անօրինական: Ինքնորոշման ձանաշված իրավունքով օժտված ԽՍՀՄ ազգային պետական կառույցի երկու սուբյեկտներ ընդունել էին որոշում, որը լիովին համապատասխանում էր ժողովուրդների ազատ ինքնորոշման մասին միջազգային իրավունքի տառին ու ոգուն: Պատահական չէ, որ համատեղ որոշմանն իր մերժողական դիրքը ցուցադրելուց հետո Կենտրոնը հետագա փաստաթղթերում հորդորում էր հայկական իշխանություններին վերանայել այն և «վերականգնել նախկին սահմանադրական կարգը»: Այդ կոչերն ու հորդորները ընդունված որոշման օրինականության և իրավագործության ուղղակի ապացույցն էին:

Ղարաբաղը գորբաշովյան Կենտրոնի համար ԽՍՀՄ-ը տրոհելու պայքուցիկից դարձել էր Հիմնական ծրագիրը վտանգող գլխավոր գործոն: Այն հայտնվել էր միջազգային շրջանակների ուշադրության կենտրոնում: Վերջապես, պարզվել էր, որ այստեղ են Հիմնական ծրագրին դիմադրող ամենահամառ ուժերը: Երկրի նախագահը և ԽՄԿԿ գլխավոր քարտուղարը 1991-ին, երբ ԽՍՀՄ տրոհման գործընթացն ընդհուպ մոտեցել էր եզրագծին, պետք է վճռական միջոցներ ձեռնարկեր «ղարաբաղյան խոշրնդուտը» վերացնելու համար:

Մինչև 1991-ը ներքին սահմանների վերանայման այլ փորձեր էլ էին եղել: Օրինակ, 1990թ. հունվարի 19-ին Բարձի հայկական շարդերից անմիջապես հետո Խորհրդային Ադրբեջանից դուրս գալու մասին որոշում է ընդունվել Նախիջևանում: Սակայն դա ոչ մեկը լուրջ չի ընդունել, և այն որևէ հետևանք չի ունեցել: Ղարաբաղի դեպքն ուրիշ էր: Նորանկախ պետությունները միութենական հանրապետությունների սահմաններում «տեղավորելու» ծրագիրը լուրջ դիմադրության էր հանդիպում հենց Ղարաբաղի դեպքում: Եվ խնդիրը միայն մարզով չէր սահմանափակվում: ԼՂԻՄ-ին հարող Շահումյանի շրջանը և Խանլարի շրջանի դեռևս հայաբնակ գյուղերը (Գետաշենի ենթաշրջանը) ԽՍՀՄ լուծարման դեպքում նույնպես Հիմնական ծրագրի իրագործման խոշրնդուտներ պիտի լինեին<sup>1</sup>, որովհետև արդեն իսկ արտահայտել էին մարզի հետ միավորվելու իրենց կամքը<sup>2</sup>: Որևէ նախադեպ անընդունելի

<sup>1</sup> 1989թ. հուլիսի 26-ին ժողովատգամավորների Շահումյանի շրջանի արտակարգ նիստը դիմում է Ադր. ԽՍՀ Գլուխին՝ քննարկել և դրական լուծել շրջանը ԼՂԻՄ կազմ մտցնելու հարցը: Շիածամանակ, նիստը նույն որոշմամբ դիմել է ԽՍՀՄ Գլուխին իր հսկողության տակ վերցնել հարցը լուծումը և շրջանի քնակչության անվտանգությունը: Քնական է, որ ոչ Ադր. ԽՍՀ Գերագույն խորհուրդը, ոչ էլ ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը ընթացք չտվեցին շահումյանցիների պահանջին:

<sup>2</sup> 1991թ. հունվարի 14-ին Ադր. ԽՍՀ Գերագույն խորհուրդն ընդունում է Շահումյանի շրջանը լուծարելու և այն ադրբեջանաբնակ Կասում-Բամայիլովի շրջանին միացնելու որոշում: Պարզ էր, սակայն, որ շահումյանցիների համար դա թղթի վրա գրված մի բան էր, որը որևէ ազդեցություն չթողեց նրանց տրամադրությունների և մարզին վերամիավորվելու վճռականության վրա:

պիտի լիներ այդ ծրագրի հեռինակների համար: Լեռնային Ղարաբաղի դեռևս հայաբնակ մասի բռնի հայաթափումը (Երկրամասի հյուսիսային շրջաններն արդեն հայաթափված էին) 1991-ին Կենտրոնի համար դառնում է ըստ Հիմնական ծրագրի շարժվելու միակ եղանակը:

Կարևոր է նկատել, որ Լեռնային Ղարաբաղի դեմ 1991-ին իրագործված «Օղակ» գործողությունը ԽՍՀՄ-ն ըստ միութենական հանրապետությունների տրոհելու ծրագրից դուրս բանական որևէ այլ բացատրություն չի ստանում: «Օղակ» գործողությունը Գորբաշովը կարող էր գործողության մեջ դնել մինչև 1991-ը, ասենք, 1988-ին կամ 1990-ին: Բայց դա չի արվել, քանի դեռ Ղարաբաղը կատարում էր երկիրը ցնցումների մեջ պահելու գործոնի դերը: Իսկ ահա 1991-ին, եթե երկիրն արդեն կարող էր վլուգվել նաև առանց Ղարաբաղի, այն դարձավ Հիմնական ծրագրի իրագործման խոչընդոտը:

Բնական է, որ պատժից գործողությունն ամենաթույլ կետերից պիտի սկսվեր: Դրանք մարզի սահմաններից դուրս գտնվող Խանլարի շրջանի հայկական գյուղերն էին: Նախորդ տարիների փորձն արդեն ցույց էր տվել, որ աղբբեջանցիները դա անկարող են անել սեփական ուժերով: Հայկական ինքնապաշտպանական խմբերը կռվում էին անձնազոհաբար, քանի որ պաշտպանում էին իրենց պապենական հողերն ու իրենց տները: Ահա թե ինչու, «խախտելով խաղի բոլոր կանոնները», երկրի նախագահը Գետաշենի ենթաշրջանի հայկական գյուղերի (Գետաշեն, Մանաշիդ, Բուզլուկ) հայաթափման համար աղբբեջանական կողմի տրամադրության տակ դրեց խորհրդային բանակի ուժերը<sup>2</sup>: Հայտնի է, թե խորհրդային բանակն ու աղբբեջանական ՕՍՕՆ-ն ինչ բռնությունների են դիմել 1991-ի ապրիլ-մայիսին այդ գյուղերի բնակչության տեղահանության համար<sup>3</sup>: 1991թ. հուլիսի 4-ին երկրի

<sup>1</sup> Մյուս գրեթե անհավանական բացատրությունը Գորբաշովի հայատացությունը կարող էր լինել:

<sup>2</sup> «*Memorials*» կազմակերպության դիտորդները հետևյալ կերպ են փաստել խորհրդային ներքին գործերի և բանակային ուժերի մասնակցությունն «Օղակ» գործողությանը. «Ընդհանուր առմամբ, նրանք ոչ միայն չեն խոշրնորում բնակիչների բռնի տեղահանմանը, այլև օգնում են աղբբեջանական ՕՍՕՆ-ի աշխատակիցներին՝ իրականացնել բռնի տեղահանում: Գյուղյուն ուներ աշխատանքի ինքնատիպ բաժանում. զինվորականները շրջափակում են գյուղը, իսկ ՕՍՕՆ-ականները գործում են գյուղի ներսում», [http://www.memo.ru/hr/hotpoints/karabah/Getashen/chapter1.htm#\\_VPID\\_2](http://www.memo.ru/hr/hotpoints/karabah/Getashen/chapter1.htm#_VPID_2).

<sup>3</sup> Ահա թե ինչպես է նկարագրել դեպքերի ականատես ուս գյող հնեսա Բուրկովան. «6 մայիսի 1991թ.: Թաղանում, այրում են տները: Եվ զինվորները, և ՕՍՕՆ-ականները, որոնք վերաբարձել են գյուղ: Պատանդ վեցցված տղամարդկանց մահացու ծեծի են ենթարկում: Տես կապիտանը փորձեց պաշտպանել: Աղբբեջանցի ՕՍՕՆ-ականը դեմն առավ. «Քեզ վճարել են, ձայն կտրիր: Նա հեռացավ թքելով: Վերսկսեցին գնդացիրների, ավտոմատների կրակահերթերը: Ծերոնիները խմբվեցին, կրակը նրանց էր ուղղված: Սպանվածներն ընկնում են: Մյուսները հազիվ ողջ, դուրս են ստղում տներից սպասելով մահվան եղին: Հիվանդ տատիկին անկողնու մեջ սպանեցին: 50 տարեկան Մելիքի Սողոմոնյանին սպանեցին: Նա պառկած էր. ուղերք հիվանդ էին: Վարորդ էր: Խանլար-Գետաշեն երթուղում էր աշխատում: Նրան շատերը գիտեին: Մի ինչ-որ աղբբեջանցի ՕՍՕՆ-ական կացնահարեց նրան անկողնում», <http://sumgait.info/ring/seda-vermisheva/karabakh-deportation-6.htm>.

դեկավարի մտադրություններից անտեղյալ անկախ քաղաքական գործիչների, փորձագետների, լրագրողների, դիտորդների համար անսպասելի և անբացատրելի ձևով ԽՍՀՄ նախազահի հրամանագրով վերացվեց արտակարգ իրավիճակի ռեժիմը Շահումյանի շրջանում (մամուլում որոշումը բացահայտ սխալ որակող հոդվածներ հայտնվեցին): Արտակարգ իրավիճակի վերացումն ըստ էռլյան նշանակում էր, որ արբեջանական գյուղերում տեղակայված ՕՍՈՆ-ականները կարող են անարգել հարձակումներ գործել հայկական գյուղերի վրա: 1991-ի մայիսից «Օղակ» գործողությունը ծավալվեց նաև ԼՂԻՄ հարավային մասում՝ Հադրութի շրջանում և Շուշիի շրջանի Բերդանորի ենթաշրջանում: Հաշվարկը նույնն էր՝ հայաթափել մարզի սահմանամերձ հայկական գյուղերը՝ համընդիանուր խուճապ առաջացնելու և մարզի հայահոծ մասերում տեղահանությունը հեշտացնելու համար<sup>1</sup>: «Օղակ» գործողությունը կարող էր վերջ դնել հայկական ինքնավար մարզի գոյությանը, եթե մինչև օգոստոս դարաբաղցիները խուճապի մատնվեին և զանգվածաբար լքեին իրենց բնակավայրերը: Դա տեղի չունեցավ: Հակառակը՝ մարդկանց չէր լքում հավատը, և դիմադրում էին բռնություններին՝ ինչով կարող էին: Չի կարելի անտեսել նաև մեկ այլ հանգամանք: Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձությունները հայտնվել էին Խորհրդային Միության ազատախոհ մտավորականության և համաշխարհային հասարակության ուշադրության կենտրոնում: Բազմաթիվ ոուս մտավորականներ՝ պատգամավորներ, գրողներ, լրագրողներ, ոչ միայն զանգվածային լրատվամիջոցներում իրենց ելույթներով էին պաշտպանում պապենական հողում ապրելու արցախահայերի իրավունքը, այլև ամենաթեժ տեղերում անձամբ էին փորձում կանխել կամ անհրաժեշտության դեպքում պաշտպանել խաղաղ բնակչության իրավունքները: Վերջապես, հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ ոուս զինվորականները, արհամարհելով վերևի հրահանգները, զանազան հնարքներով օգնում էին դարաբաղցիներին: Դրանք այն զինվորականներն էին, որոնք դեպքերի անմիշական մասնակիցները լինելով՝ համոզվել էին, որ Կենտրոնը վարում է անարդարացի հակահայ քաղաքականություն և խղճի թելադրանքով փորձում էին ծառայողական պարտքի սահմաններում մեղմել այդ քաղաքականության դաժան բնույթը: Նրանցից շատերը Կենտրոնի այդ քայլերն ընկալում ու որակում էին որպես հակառուսական և հակապետական:

<sup>1</sup> 1991-ի մայիս-օգոստոս ամիսներին հայաթափվեցին Հադրութի շրջանի Քարինգ, Առաքյուլ, Բանազոր, Կարմրաքար, Սարալանջ, Արևշատ և Քարավլուս, Շուշիի շրջանի Եխծահող և Հինչեն սահմանային գյուղերը:

Գորբաչովյան Մուսկվային չհաջողվեց «ղարաբառյան խոչընդոտք» վերացնել մինչև օգոստոս, երբ պետք է տեղի ունենար նորացված միության հանրաքվեն: Սակայն օգոստոսի 20-ին նշանակված հանրաքվեն տեղի չունեցավ:

### **Օգոստոսյան խոռվությունը ԽՍՀՄ տրոհման համատեքստում. Ղարաբաղյան «խոչընդոտք» վերացնելու Կենտրոնի վերջին ճիգերը**

Օգոստոսի 18-ին, երբ երկրի ղեկավարը հանգստանում էր Փարոսում, Մոսկվայում տեղի ունեցավ խոռվություն: Ցայսօր օգոստոսյան խոռվությունը հստակ քաղաքական գնահատականներ չի ատացել: Հայտնի չեն խոռվության հղացման կոնկրետ մանրամասներն ու շարժադիրները: Պարզ չէ, թե ինչու ԽՍՀՄ փրկությամբ մտահոգ քաղաքական բարձրաստիճան գործիչները ձախողեցին հենց ԽՍՀՄ փրկության համար նախատեսված հանրաքվեն (գոնեայդպես էր ներկայացվում միջոցառումը): Օգոստոսին արդեն հայտնի էին մարտյան հանրաքվեի արդյունքները, որոնք հաստատում էին, որ ԽՍՀՄ ազգաբնակչության երկու երրորդից ավելին կողմ է ԽՍՀՄ-ը որպես նորացված դաշնային պետություն պահպանելու գաղափարին: Հանրաքվեն փաստորեն իրավական հիմքեր պիտի տրամադրեր Մոսկվային միասնական դաշնային պետության պահպանման համար: Տրամաբանական այդ փաստարկը դժվար թե անհասանելի լիներ քաղաքական հեղաշրջմանը մասնակցած այնպիսի գործիչների համար, ինչպիսիք էին Լուկյանովը, Յանաևը, Յազովը... Հայտնի չէ նաև, թե ինչու հենց այդ օրերին պիտի երկրի ղեկավարը ծովափնյա հանգիստ վայելելու ցանկություն ունենար, երբ դա կարող էր անել հանրաքվեից հետո<sup>1</sup>: Խելքին մոտ որևէ բացատրություն չեն ստանում իշխանությունն այդ օրերին իրենց ձեռքը վերցրած մարդկանց անգործությունն ու անձարակությունը:

Ի վերջո, «խոռվարարների» միակ նշանակալից գործը ԽՍՀՄ-ը փրկելու հանրաքվեի ձախողումը դարձավ: Եվ այսպես, խոռվության կապակցությամբ ծագող բազմաթիվ այլ հարցեր պատասխաններ չունեն մինչ օրս: Բայց ահա ԽՍՀՄ տրոհման Հիմնական ծրագրի համատեքստում այդ բոլոր հարցերը

<sup>1</sup> 2008թ. ոռուական առաջին հեռուստաալիքով Վլադիմիր Պոգների հետ հարցազրույցի ժամանակ Գորբաչովը «խոստովանեց», որ ափսոսում է Փարոս հանգստի գնալու համար. «...պետք չէր Փարոս մեկնել 1991թ. օգոստոսին: Կարծում եմ, նորիրդային Միությունը կպահպանվեր...»: Սակայն օգոստոսյան դեպքերին նախորդած և հաջորդած դեպքերը հաստատում են հակառակը: Փարոսից Մոսկվա վերադարձած Գորբաչովը սեպտեմբերի 6-ին ստորագրեց մերձբալթյան հանրապետությունների անկախության ձանաշման մասին փաստաթուղթը:

ստանում են համոզիչ և նույնիսկ սպառիչ պատասխաններ: Այդ դիտակետից հասկանալի է դառնում այն անթաքույց համակրանքը, որ ԽՍՀՄ նախագահն ուներ աղբքեցանական կողմի նկատմամբ հատկապես այն բանից հետո, եթե Լեռնային Ղարաբաղն այլս պետության կազմաքանդման գործընթացի գլխավոր շարժիչը չէր (առանց Ղարաբաղի էլ ԽՍՀՄ տրոհման գործընթացն ըստ երևույթին 1990-ի կեսերից անդառնալի բնույթ էր ընդունել) և արդեն խոշընդուում էր վերակառուցման գլխավոր նպատակի՝ երկիրն ըստ հանրապետությունների տրոհելու նախագծի իրագործմանը: Դա դրսևորվեց ոչ միայն «Օղակ» գործողության ընթացքում, եթե խորհրդային զինված ուժերի՝ Կիրովաբադում տեղակայված 23-րդ դիվիզիան դրվեց Բաքվի իշխանությունների տրամադրության տակ, այլև նույնիսկ օգոստոսյան խոռվությունից հետո, եթե միութենական կառույցներն արդեն կաթվածահար էին: Այս անգամ երկրի կառավարման իրավասություններն ու լիազորությունները փաստորեն կորցրած նախագահն ամեն ինչ արեց, որպեսզի Բաքուն ավելի շատ զենք ու զինամթերք ձեռք բերի՝ հարցն ինքնուրույն կերպով հօգուտ իրեն լրտելու համար:

Օգոստոսյան խոռվությունից հետո ԽՍՀՄ-ը մտավ ապամոնտաժման եզրափակիչ փուլ: Փարոսից Մոսկվա վերադարձած Գորբաչովն օգոստոսի 25-ին հապճեալ վայր դրեց ԽՄԿԿ գլխավոր քարտուղարի լիազորությունները և հայտարարեց ԽՄԿԿ-ից դուրս գալու որոշման մասին<sup>1</sup>: Օգոստոսի 30-ին անկախություն հռչակեց Աղբքեցանական Հանրապետությունը: Սեպտեմբերի 6-ին Գորբաչովը՝ որպես երկրի նախագահ, ստորագրեց մերձբալթյան հանրապետությունների անկախության ձանաշման փաստաթուղթ: Նոյեմբերին ԱՄՆ պետքարտուղար Բեյքերն ի լուր աշխարհի հրապարակեց հետխորհդային տարածքում նորանկախ հանրապետությունները նախկին միութենական հանրապետությունների սահմաններում ձանաշելու իր երկրի դիրքորոշումը: Դա առնվազն 1985-1986-ից ի վեր գոյություն ունեցող, բայց լրության քողի տակ պահպող ԽՍՀՄ տրոհման Հիմնական ծրագրի քողազերծում-բացահայտումն էր, ծրագիր, որի իրագործման համար հնարավոր ամեն ինչ արել էր ԽՄԿԿ գլխավոր քարտուղարն ու երկրի առաջին և վերջին նախագահը: Տրված առաջադրանքի մասշտաբները և բարդությունը հաշվի առնելով՝ կարելի է արձանագրել, որ այն կատարվել է ոսկերչական ճշգրտությամբ:

<sup>1</sup> Ակնհայտ էր, որ ԽՄԿԿ շարքերը լրելու պատճառը հանգստյան օրերին Մոսկվայում տեղի ունեցած խոռվությունը չէր: Նման որոշումը հասունանում է տարիների կամ գոնե ամիսների ընթացքում:

## **Հիմնական ծրագրի ստվերը հետխորհրդային զարգացումներում**

Միջազգային հանրությունը հետխորհրդային տարածքում չկարգավորված ընդամենը մի քանի կոնֆլիկտային խնդիրներ «ժառանգեց», որոնց թվում նաև դարաբաղյան հիմնախնդիրը: Միջազգային զինված հակամարտության բնույթը ընդունած հակամարտության կարգավորումը 1992-ին հայտնվեց ԵԱՀԿ հովանու տակ: Արևմուտքը հավատարիմ մնաց Հիմնական ծրագրի գլխավոր դրույթին՝ որպես հակամարտության կարգավորման կանխապայման ընդունելով նախկին միութենական հանրապետությունների (այդ թվում և Աղրբեջանական Հանրապետության) տարածքային ամբողջականությունը, նորանկախ Աղրբեջանական Հանրապետությունը ճանաչելով նախկին Աղր. ԽՍՀ սահմաններում: Անտեսվեց այն հանգամանքը, որ վերջինս միակն էր նախկին միութենական հանրապետությունների շարքում, որ միջազգային գործող պայմանագրերի համաձայն չուներ Աղր. ԽՍՀ սահմաններում անկախանալու իրավունք: Անտեսվեցին միջազգային իրավունքի տեսակետից ԼՂՀ կայացման անբասիր լինելու և Լեռնային Ղարաբաղում 1989-ից ի վեր Բաքվի փաստական քաղաքական, տնտեսական ու վարչական վերահսկողության բացակայության հանգամանքները: Անտեսվեցին 1988-1989թթ. դարաբաղյան շարժմանը սատարող Արևմուտքի հայտարարություններն այն մասին, որ խնդրին պիտի տրվի այնպիսի լուծում, որն «իրապես կարտացոլի այդ մարզի ժողովողի հայացքները»: Վերջապես, անտեսվեց աղրբեջանահայության ցեղասպանության փաստը<sup>1</sup>:

Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման դեպքում ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքի հիմնարար սկզբունքն արհեստականորեն հակադրվեց տարածքային ամբողջականության սկզբունքին և հավասարեց-

<sup>1</sup>Այս վերջին հանգամանքը հատուկ ընդգծման կարիք ունի: Պատմությունը կարծես կրկնվեց: 1915-1923թթ. Հայոց ցեղասպանությունն իրազործած Թուրքիան պատմվելու փոխարեն յուրահատուկ պարզևատրություն ստացավ: Գզրոց նետվեց Սկրի պայմանագիրը, Հայոց ցեղասպանության թեմայի վրա դրվեց «ռության փական»: Նոյն մոտեցումը հետխորհրդային շրջանում Արևմուտքը դրսերում է աղրբեջանահայության ցեղասպանության հարցում, որը Հայոց ցեղասպանության նույն հանցագործ ծրագրի շարունակությունն է Արևելյան Անդրկովկասի տարածքներում: Արևմտյան Հայաստանում և Արևելյան Անդրկովկասում հայերի ցեղասպանությունն իրազործման մեթոդների տեսակետից շատ նմանություններ ունի: Բավական է ասել, որ երկու դեպքում էլ հանցագրծության անմիջական իրազորդող թուրքն էր: Երկու դեպքում էլ հայերին կոտորում էին իրենց հայրենիքում, բնակության իրենց հազարամյա վայրերում: Բայց կան նաև տարբերություններ: Եթե Արևմտյան Հայաստանում խոսք կարող է լինել կայսության ժողովուրդներից մեկի ցեղասպանության մասին, ապա երկրորդ դեպքում խոսքը չէ միայն բնիկ, այլև Աղր. ԽՍՀ հիմնադիր ժողովուրդի ցեղասպանության մասին է: Կա նաև երկրորդ տարբերությունը: Եթե արևմտահայության՝ տասնամյակների դավադիր լուրջան քողի տակ պահված ցեղասպանության մասին այսօր խոսում է ողջ աշխարհը, ապա աղրբեջանահայության ցեղասպանության թեման դեպքերից քառորդ դար հետո քաղաքական արգելքի տակ է մնում:

վեց դրան, չնայած վերջինիս բուն գաղափարը և ինքը՝ սկզբունքը, պատմականորեն, տրամաբանորեն, իրավաբանորեն ածանցվում են ինքնորոշման սկզբունքից:

Ինքնին պարզ էր, որ եթե Բաքվին հաջողվեր 1991-1994թթ. կոտրել Արցախի դիմադրությունը և շարունակեր ցեղասպանական քաղաքականությունը ԼՂՀ ազգաբնակչության նկատմամբ, ապա Արևմուտքը «դատապարտող» մի քանի ձևական հայտարարություններից այն կողմ չէր գնա: Բայց պարզվեց, որ առանց խորհրդային բանակի օգնության և ռազմական գործողություններին անմիջական մասնակցության Բաքուն ոչ միայն չկարողացավ իրեն ենթարկել անկախություն հռչակած ԼՂՀ-ն, այլև պարտություն պարտության հետևից կրեց և 1994թ. ստիպված եղավ Բիշքեկում Ստեփանակերտի և Երևանի հետ ստորագրել հրադադարի արձանագրություն: Ղարաբաղյան առակատումն ընդունեց միջազգային գինված հակամարտության բնույթ, և նրա կարգավորումը տարածաշրջանի աշխարհաքաղաքական դիրքի բերումով հայտնվեց գլոբալ ուժային կենտրոնների շահերի հատման կետում: 1992-ից ի վեր հակամարտության կարգավորման միջնորդների՝ կողմերին առաջարկվող բոլոր նախագծերի վրա ընկած է 1991-ին լեզվացված *ԽՍՀՄ տրոհման հիմնական նախագծի* ստվերը: Դրանք միաժամանակ ներառում են թե՛ տարածքային ամբողջականության, թե՛ ժողովուրդների ազատ ինքնորոշման սկզբունքները՝ որոնց համատեղման փորձերը ոչ բացահայտ ձևով ենթադրում են ինքնորոշման սկզբունքի արժեզրկում: Կարգավորման գործընթացում անտեսվում են կողմերի նկատմամբ այդ սկզբունքների կիրառման հետ կապված կարևոր հանգամանքներ: Մասնավորապես, անտեսվում է այն, որ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը վաղուց և մի քանի անգամ ճանաչված է (և ճանաչվել է ոչ միայն Բաքվի կողմից): Վերջին անգամ՝ 1990թ. ապրիլի 3-ին, եթե «Միութենական հանրապետության ԽՍՀՄ-ից դուրս գալու հետ կապված հարցերի լրտեսական կարգի մասին» օրենքով վերահաստատվեց Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքը: Անտեսվում է այն հանգամանքը, որ «Աղբբեջան» անունով ոչ մի պետություն տարածաշրջանում չի կայացել ժողովուրդների ազատ ինքնորոշման սկզբունքի համաձայն: Ոչ Աղբբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը, որը հիմնել է Նուրի փաշայի հրամանատարությամբ Անդրկովկաս ներխուժած թուրքական կանոնավոր բանակը, ոչ Խորհրդային Աղբբեջանը, որն ինքնորոշման

սկզբունքի շրջանցումով հիմնվել է Խորհրդային Ռուսաստանի 11-րդ Կարմիր բանակի կողմից, ոչ ել մերօրյա Աղրբեջանական Հանրապետությունը, որի՝ նախկին Խորհրդային Աղրբեջանի սահմաններում կայանալու իրավունքը սահմանափակված էր Կարսի պայմանագրով<sup>1</sup>, Լեռնային Ղարաբաղին վերաբերող Կովկասությունի որոշման ազօրինությամբ<sup>2</sup>, ԼՂ կայացման իրավական անբասիրությամբ, որ տեղի է ունեցել մինչև Աղրբեջանական Հանրապետության պաշտոնական ձանաշումը և ՄԱԿ ընդունվելը 1992-ի մարտին: Այդ իրավական փաստերը նաև նշանակում են, որ Աղրբեջանական Հանրապետության նկատմամբ մեխանիկորեն կիրառելի չէ տարածքային ամբողջականության սկզբունքը: Արևմուտքը այդ բոլորն անտեսել է 1991-ին և շարունակում է անտեսել մինչ օրս:

### **Եղրակացություններ**

1. Ղարաբաղյան հակամարտության հետ կապված բոլոր իրադարձություններն ու փաստերն «առանց դիմադրության», առանց հակասությունների հիմնավորում են այն վարկածը, ըստ որի՝ ԽՄԿԿ գլխավոր քարտուղար և ԽՍՀՄ նախագահ Միխայիլ Գորբաչովը տարել է ԽՍՀՄ-ն ըստ միութենական հանրապետությունների տրոհելու քաղաքականությունը: Այդ առումով Գորբաչովի «ղարաբաղյան գործն» ակնհայտ առավելություններ ունի նրա վարքը ճիշտ «ընթերցելու» խնդրում: Ահա փաստերի ու իրադարձությունների համառոտ շարքը, որը հաստատում է ասվածը.

ա. Արդեն 1987-ին կենտրոնական մամուլում հրապարակվում էին նյութեր այն մասին, թե ազգային հողի վրա ինչ հալածանքների են ենթարկվում

<sup>1</sup>Պայմանագրով արդեն Խորհրդային Հայաստանի անկապտելի մաս ձանաշված Նախիջևանը ոչ թե հանձնված էր Արդ. ԽՍՀ ինքնիշխանությանը՝ որպես նրան պատկանող տարածք, այլ միայն նրա հովանավորությանը: 1991-ին Արդ. ԽՍՀ իրավահաջորդությունից հրաժարվելու ակտով Բաքուն նաև գրկվել է Նախիջևանի իրեն կողմից հովանավորվող տարածք ունենալու իրավունքից:

<sup>2</sup>ՀնՍՀ Գերագույն Խորհուրդը 1990թ. փետրվարի 13-ի որոշմամբ արձանագրել է այդ ակտի անօրինական բնույթը: Հայ հեղինակների մոտ հաճախ հանդիպող այն միտքը, թե Կովկասություն 1921թ. հուլիսի 4-ի որոշմամբ տվել է հարցի օրինական լուծում, իսկ հուլիսի 5-ին՝ ազօրինի որոշում, ըննադատվում է աղրբեջանական տեսաբանների կողմից այն փաստարկումով, որ չի կարելի որոշում ընդունող նույն մարմինը մի դեպքում իրավագոր դիմել, մյուս դեպքում՝ ոչ: Ընդ որում, հղում է կատարվում այն փաստին, որ այդ ժամանակ իրավագոր այլ մարմիններ չեն եղել: Բարվի մասնագետներն անտեսում են հետևյալ հակափաստարկը. եթե նույնիսկ Կովկասություն դիմումի որպես նման որոշում ընդունելու համար իրավագոր մարմին, ապա ստիպված պիտի լինենք հաշվի նատել այն հանգամանքի հետ, որ հուլիսի 4-ին որոշումն ընդունվել է առանց կանոնակարգի խախտման, իսկ հաջորդ օրը՝ հուլիսի 5-ին, կոպիտ խախտումներով: Ըստ էության, այն չի ընդունվել, քանի որ ոչ ըննադատվել է, ոչ ել քվեարկվել:

հայերն Աղք. ԽՍՀ-ում: Նախօրյակին ԼՂԻՄ-ից Մոսկվա ժամանած պատվիրակներին հուսադրում էին, ինչը շարժումն սկսելու խրախուսանք էր:

բ. Կենտրոնը չկանխեց վայրի ամբոխի երթն Աղդամից դեպի Ստեփանակերտ, չնայած կարող էր դա անել, մանավանդ որ նախապես տեղեկացված էր: Չնայած քրեական գործ բացվեց այդ երթի երկու աղբեջանցի մասնակիցների սպանության կապակցությամբ և չնայած կային դեպքին ներկա վկաներ, սպանության բացահայտումն այդպես էլ ընթացք չստացավ:

գ. Խորհրդային զորքերի Սումգայիթ մտցնելու որոշումն անհասկանալի հանգամանքներում ձգձգվեց, իսկ հետո, ուշացումով քաղաք մտնելուց հետո, զորքերն անգործության էին մատնված՝ համապատասխան հրաման չստանալու պատճառով:

դ. Սումգայիթյան ոճրագործությանը Կենտրոնը համապատասխան քաղաքական գնահատական չուվեց՝ այն որակելով խուլիզանություն, ինչն, ըստ Էռլիքյան, շարդերը շարունակելու թույլտվություն էր:

ե. Միութենական հանրապետությունների սահմանների անձեռնմխելիությանը բացարձակ իմաստ վերագրելու միջոցով, որը նոր երևույթ էր ԽՍՀՄ քաղաքական պրակտիկայում, Կենտրոնը որդեգրեց հակամարտությունը փակուլի մտցնելու և ավելի բորբոքելու գիծ:

զ. Խորհրդային զորքերը Բաքու չմտցվեցին, երբ այնտեղ մոլեգնում էին հայ բնակչության կոտորածները:

է. 1991թ., երբ արդեն ԽՍՀՄ տրոհման գործընթացը մտել էր ավարտական փուլ, Կենտրոնը Լեռնային Ղարաբաղի դեմ իրազործեց «Օղակ» պատժիչ գործողությունը:

Այս և մի շաբք այլ փաստեր և իրադարձություններ գալիս են հաստատելու, որ ԽՄԿԿ գլխավոր քարտուղարը գործում էր ԽՍՀՄ-ն ըստ միութենական հանրապետությունների տրոհելու Հիմնական ծրագրի հունում:

2. ԽՍՀՄ-ն ըստ միութենական հանրապետությունների տրոհելու ծրագիրը մշակվել է Արևմուտքում, որի վարքը և կոնկրետ քայլերը 1988-1991թթ. հաստատում են այդ վարկածը: Ահա այդ դրույթը հաստատող մի քանի փաստեր.

ա. 1988-1989թթ. Արևմուտքը սատարում էր ղարաբաղյան շարժմանը՝ գուգահեռաբար պաշտպանելով «ղարաբաղյան խարույկը» բորբոք պահելու Գորբաշչովի քաղաքականությունը:

ք. 1988-ին մեկնարկած ԽՍՀՄ տրոհման գործընթացում Արևմուտքը ղարաբաղյան շարժմանը բարոյապես սատարեց այնքանով, որքանով որ այն կատարում էր երկրի տրոհման պայքուցիկի դերը:

զ. 1989-ին հորդորելով ԽՍՀՄ ղեկավարությանը գտնել խնդրի այնպիսի լուծում, որն «իրապես կարտացոլի այդ մարզի ժողովրդի հայացքները», 1991-ին Արևմուտքը ղարաբաղյան հարցում ընդունեց տրամագծորեն հակառակ որոշում՝ Լեռնային Ղարաբաղը երկրամասի ժողովրդի կամքին հակառակ ձանաչելով Աղբքեջանական Հանրապետության սահմաններում:

*Մայիս, 2015թ.*

## ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԽՍՀՄ ՏՐՈՀՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒԻՄ

### *Ալեքսանդր Մանասյան*

Ամփոփագիր

Չկա այնպիսի թեմա, որն ավելի համարժեք ձևով բացահայտի ԽՍՀՄ ղեկավարության վարքը երկրի տրոհման գործընթացներում, ինչպիսին գերտերության քաղաքական օրակարգում հայտնված ղարաբաղյան հիմնախնդիրն է: Այն, անկասկած, ուներ միջազգային քաղաքական տեսանկյուններ: Բայց դարասկզբին սկսված և 1988-ին վերաբռնորդված կոնֆլիկտն այն հայելին դարձավ, որում անդրադարձան ԽՍՀՄ ներքին քաղաքական, ազգային և տնտեսական հիմնախնդիրները և երկրի ղեկավարության պահվածքը դրանք հաղթահարելու հարցում: Պարզվում է, որ նրանց գործողությունները և ձեռնարկած կոնկրետ քայլերը միշտ չեն եղել ծագած խնդիրների լուծմանը: Ղարաբաղյան հակամարտության 1988-1991թթ. պատմությունը հսկայական նյութ է տրամադրում այն մասին, որ Կենտրոնի և անձամբ ԽՄԿԿ գլխավոր քարտուղարի գործունեությունն ավելի շուտ ուղղված է եղել ոչ թե կոնֆլիկտի հարթմանն ու կարգավորմանը, այլ ծավալմանը, որն, անշուշտ, պիտի դառնար ԽՍՀՄ տրոհման արագացուցիչ, ինչպես որ եղավ:

## КАРАБАХСКИЙ КОНФЛИКТ В КОНТЕКСТЕ РАЗВАЛА СССР

*Александр Манасян*

### Резюме

Нет такой темы, которая бы адекватнее отражала поведение руководства СССР в процессах развала страны, как оказавшаяся в политической повестке сверхдержавы карабахская проблема. У нее, безусловно, были международные политические аспекты. Но начавшийся в начале 20 века и вновь обострившийся в 1988г. конфликт стал тем зеркалом, в котором отразились внутриполитические, национальные и экономические проблемы СССР и позиция руководства по их урегулированию. Оказывается, их действия и предпринятые конкретные шаги не всегда были направлены на решение возникших проблем. История карабахского конфликта 1988-1991гг. предоставляет огромный материал о том, что деятельность Центра и лично генерального секретаря ЦК КПСС были скорее направлены не на сглаживание и урегулирование конфликта, а на его углубление, что, несомненно, должно было стать катализатором развала СССР, как это и произошло.

## THE KARABAKH CONFLICT IN THE CONTEXT OF DISINTEGRATION OF THE USSR

*Alexander Manasyan*

### Resume

There is probably no other topic that can more adequately uncover the behavior of the Soviet leadership during the processes of disintegration of the USSR than the Karabakh problem, which at the time popped up in the superpower's political agenda. Certainly, it did have international political aspects. However, the conflict that started early 20<sup>th</sup> century and re-unleashed in 1988 became a mirror, which reflected the USSR's internal political, national and economic problems and the behavior of the country's leadership in tackling those. It turns out, their actions and specific steps undertaken were not always aimed at solving the problems arisen. The history of Karabakh conflict in 1988-1991 provides enormous volumes of material showing that the actions of the Center and personally the general secretary of the Communist Party of the USSR were not driven toward alleviating and resolving the conflict, but rather, they were aimed at intensifying it, which undoubtedly was intended to work as an accelerator of the USSR's disintegration, as it actually did.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՀԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ<sup>1</sup>

*Վարդան Աթոյան՝, Սոֆյա Օհանյան՝,  
Արփինե Մալքյան՝, Շուշան Սովսիսյան՝<sup>2</sup>*

*Բանալի բառեր՝ բարձրագույն ուսումնական հաստատություն, գիտահետազոտական աշխատանք, բուհական հումանիտար վերլուծական կենտրոն, գիտահետազոտական լաբորատորիա:*

Արդի դարաշրջանի քաղաքական, տնտեսական, սոցիոմշակութային մարտահրավերների համատեքստում, որոնք արմատական փոփոխությունների են ենթարկում ժամանակակից հասարակության բոլոր ոլորտները՝ վերջիններս դարձնելով ավելի բազմաբնույթ և բազմաշերտ, կարևորվում է բուհական-ակադեմիական միջավայրում գործող հետազոտական, վերլուծական, հատկապես հասարակական և հումանիտար կենտրոնների դերը:

Սակայն, միևնույն ժամանակ, հարկ է ընդգծել, որ հասարակագիտական ոլորտի այս կարևոր դերակատարությունը Հայաստանի Հանրապետությունում դեռևս հստակորեն և լիովին գիտակցված չէ. բնագավառի անհրաժեշտությունը գրեթե չի արժնորդվում (բացառություն է կազմում, թերևս, հայագիտության ոլորտը): Դա պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

1. ՀՀ-ում բարձրագույն ուսումնական հաստատություններում գիտահետազոտական ուսումնասիրությունների իրականացումը թույլ հիմքերի վրա է դրված. բուհերում գիտահետազոտական աշխատանքներն ու դա-

<sup>1</sup> Հոդվածը գրվել է «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի և ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից համատեղ իրականացվող «ՀՀ բուհերին կից գործող հումանիտար վերլուծական կենտրոնները» հետազոտության շրջանակներում:

<sup>2</sup> ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի «Ազգային անվտանգության հետազոտություններ» ծրագրի տնօրեն, տնտեսագիտության թեկնածու:

<sup>3</sup> ՀՊՏՀ փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոնի դասախոս:

<sup>4</sup> ՀՊՏՀ փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոնի «Ազգային անվտանգության հետազոտություններ» ծրագրի կրտսեր փորձագետ:

սավանդումը հիմնականում տարանջատված են միմյանցից: Բուհական կրթությունն առաջին հերթին դիտվում է որպես գոյություն ունեցող գիտելիքներն ու գիտությունը վերարտադրող համակարգ, որտեղ նոր գիտելիքների ստեղծումը երկրորդական նշանակություն ունի: Թերևս, դա է պատճառը, որ ՀՀ որոշ բուհերում, թեև իրականացվում են հետազոտություններ առանձին ծրագրերի շրջանակներում, սակայն բացակայում են հետազոտական կենտրոնները:

2. Թույլ է գիտություն - քաղաքականություն - տնտեսություն - հասարակություն կապը, որի պատճառներից մեկն այն է, որ հումանիտար և հասարակական գիտություններն իրենց բնույթով բավական տեղայնացված են և պարփակված հետազոտական որոշակի համայնքների (հետազոտական ինստիտուտներ, ոչ կառավարական կազմակերպություններ և բուհեր) սահմաններում: Թեև ՀՀ բուհական հումանիտար վերլուծական կենտրոններն ունեն այլ երկրների և օտարերկրյա կազմակերպությունների հետ համագործակցության որոշակի փորձ, որն իրականացվում է հիմնականում հրատարակությունների ֆինանսավորման, համատեղ հետազոտությունների անցկացման և գիտաժողովների կազմակերպման ձևերով, այնուամենայնիվ, խսպառ բացակայում է բուհական կենտրոնների՝ միմյանց հետ համագործակցությունը, որը դրսևնորվում է թե՝ համագործակցության հանդեպ նախաձեռնողականության բացակայության և այդ ուղղությամբ աշխատանքներ տանելու անտարբերության, թե՝, երբեմն, համագործակցությունից բացահայտ հրաժարման ձևերով:

Բարեբախտաբար, ներկայումս փոխվում է այն մտայնությունը, որ ՀՀ-ում բուհերն առավելապես կրթական հաստատություններ են, իսկ հետազոտական աշխատանքները և գիտական ուսումնասիրությունները պետք է իրականացվեն բացառապես համապատասխան գիտահետազոտական ինստիտուտներում: Ձևավորվում են մեխանիզմներ և գործիքներ, որոնք հնարավորություն են տալիս բուհերում խրախուսել և խթանել գիտական, գիտահետազոտական գործունեությունը, ինչի վկայություններից է հասարակական գիտությունների բնագավառում իրականացվող հետազոտությունների մասնագիտական մակարդակի բարձրացման ու հասարակության արդի պա-

հանջներին համապատասխանեցման նպատակով Գիտության պետական կոմիտեի կողմից ՀՀ կառավարությանը ներկայացված հումանիտար և հասարակական գիտությունների զարգացման հայեցակարգը, որը մշակվել է ՀՀ կառավարության 2010թ. մայիսի 27-ի նիստի արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Գիտության ոլորտի զարգացման ռազմավարության» հիմնադրույթներին համապատասխան<sup>1</sup>:

ՀՀ բուհական-ակադեմիական միջավայրում գործող հումանիտար վերլուծական կենտրոնների թիվը վերջին տարիներին աճել է: Ներկայումս ՀՀ բուհերում գործում է 28 հումանիտար վերլուծական կենտրոն, որից 2-ն իր գործունեությունը սկսել է դեռևս խորհրդային տարիներին. Երևանի պետական համալսարանն ունի 15 հումանիտար վերլուծական կենտրոն, Հայաստանի ամերիկյան համալսարանը՝ 4, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիան՝ 3, Երևանի պետական լեզվահասարակագիտական համալսարանը՝ 2, Հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանը՝ 2, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը՝ 1, Գորիսի պետական համալսարանը՝ 1:

Այս կենտրոնները, թեև աշխատում են «ուղեղային կենտրոնների» ոճով, սակայն էապես տարբերվում են միմյանցից թե՝ կառուցվածքային առումով, թե՝ հրապարակային թափանցիկության, թե՝ հետազոտական աշխատանքների բովանդակությամբ ու բնույթով.

⇒ Կառավարման մարմնի առկայությամբ առանձնանում են.

- ԵՊՀ Եվլոպական ուսումնասիրությունների կենտրոնը (Կառավարման խորհուրդ՝ բաղկացած 31 անդամից),
- ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը (Գիտական խորհուրդ՝ բաղկացած 27 անդամից),
- ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնը (Գիտական խորհուրդ՝ բաղկացած 11 անդամից),
- ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնը (Գիտական խորհրդատվական խորհուրդ՝ բաղկացած 9 անդամից),
- ԵՊԼՀ Եվրախորհրդի լեզվակրթական ծրագրերի իրականացման կենտրոնը,

<sup>1</sup> <http://www.scs.am/files/has-git-zarg-tsragir-jamanakacuyc.pdf>

- ՀԱՀ Թրիանձեան գյուղական համայնքների զարգացման ծրագիրը (Գործադիր կոմիտե՝ բաղկացած 4 անդամից):

⇒ Կառուցվածքային ստորաբաժանումներ ունեն.

- ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը (6 բաժին, 2 լաբորատորիա),
- ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնը (3 ծրագիր),
- ԵՊԼՀ Բրյուսովյան գիտական կենտրոնը (Բրյուսովի թանգարան):

⇒ Համացանցում ներկայացվածությամբ (Էլեկտրոնային հասցե, պաշտոնական կայք, էջեր սոցիալական ցանցերում) աշքի են ընկնում.

- ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը,
- ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնը,
- ԵՊՀ Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնը,
- ԵՊՀ Միզրացիայի ուսումնասիրությունների կենտրոնը,
- ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնը,
- ՀԱՀ Հակոբյան բնապահպանական կենտրոնը,
- ՀԱՀ Հանրային առողջապահական ծառայությունների հետազոտությունների և զարգացման կենտրոնը:

Որոշ բուհերում գործող կենտրոնները չունեն առանձին կայքեր, մյուսների կայքերում տեղակայված տեղեկատվությունը հին է, որոշ կենտրոնների կայքերում տեղեկատվությունը պարբերաբ թարմացվում է, բայց ամբողջական չէ:

Կենտրոնների ֆինանսավորումն իրականացվում է ՀՀ պետական բյուջե-ից, բուհի միջոցներից, նվիրատվություններից, դրամաշնորհային ծրագրերից:

Ըստ հետազոտական ուղղվածությունների՝ բուհական հումանիտար վերլուծական կենտրոնները կարելի է դասակարգել հետևյալ խմբերի.

**Ա. ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ** կենտրոններն են ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը (2008թ.) և Գորիսի պետական համալսարանի (ԳՊՀ) «Սյունիք» հայագիտական հետազոտությունների կենտրոնը:

**ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ:** Երևանի պետական համալսարանի Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի<sup>1</sup> ուսումնասիրությունների հիմնական առանցքը կազմում են Հայկական հարցը և Հայոց ցեղասպանության պատմությունը, պատմագրությունը և մատենագիտությունը, հնագիտությունը, հայագիտական պատմագիտական և աղբյուրագիտական ժառանգության ուսումնասիրությունը, Հայաստանի պատմական աշխարհագրության, քարտեզագրության ուսումնասիրությունը, հայ-վրացական հայ-քրդական, հայ-օսմանական առնչությունները: Հատուկ ուշադրություն է դարձվում վիրտուալ (էլեկտրոնային-համացանցային) հայագիտությանը, մասնավորապես իրականացվում են հայագիտական հետազոտությունների պրոֆեսիոնալ թվայնացում և համացանցային պաշարներում հայագիտական նյութերի ներկայացվածության ապահովում: Ինստիտուտն իրականացնում է նաև մագիստրոսական և ասպիրանտական կրթական ծրագրեր, իսկ սփյուռքում հայագետների պատրաստման և մասնագիտական հմտությունների ապահովման նպատակով ինստիտուտում գործում է հեռառության համակարգը: Ինստիտուտը հրապարակում է պարբերական, գրքեր, հոդվածներ, փաստաթղթեր, քարտեզներ, «Հայագիտության հարցեր» գիտական պարբերականը (2014թ. սկսած): 2013-2014թթ. հրատարակվել է 66 հոդված, 16 գեկուցումների թեզիսներ:

**Բ. ՄՇԱԿՈՒԹԱՔՍՂԱՔԱԿՐԹՄԿԱՆ** կենտրոններն են Երևանի պետական լեզվահասարակագիտական համալսարանի (ԵՊՀ) Բրյուսովյան գիտական կենտրոնը (1962թ.), Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Թրիֆանձեան հասարակական հետազոտությունների կենտրոնը (1995թ.), ԵՊՀ Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնը (2006թ.), ԵՊՀ Եզիականագիտության հայկական կենտրոնը (2006թ.), ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնը (2007թ.), ՀՀ պետական կառավարման ակադեմիայի (ՀՀՊԿԱ) տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնը (2014թ.):

**ԵՊՀ Բրյուսովյան գիտական կենտրոն:** Երևանի պետական լեզվահասարակագիտական համալսարանի Բրյուսովյան գիտական կենտրոնի հետազոտությունների հիմնական առանցքը կազմում են հայ-ռուսական

<sup>1</sup> <http://www.armin.am/>

գրական և մշակութային կապերը, արծաթե դարի ոռու գրականությունը և արվեստը, ուստական սփյուռքի գրականությունը և արվեստը: Կենտրոնը հրատարակում է «Բրյուսովյան ընթերցումներ» ժողովածուն<sup>1</sup>:

**ՀԱՀ ԹՐԻՖԱՆԱՏԵԱՆ հասարակական հետազոտությունների կենտրոն:** Հայաստանի ամերիկյան համալսարանի Թրիֆանատեան հասարակական հետազոտությունների կենտրոնը<sup>2</sup> հիմնականում աշխատում է միջազգային հասարակական կազմակերպությունների (հայաստանյան ներկայացուցչությունների), ինչպես նաև պետական կառույցների պատվերների շրջանակներում: Տարբեր քաղաքական հիմնախնդիրների լուծման նպատակով տրամադրում է հետազոտական ծառայությունների ամբողջական փաթեթ՝ տվյալների որակական և քանակական վերլուծության համար անհրաժեշտ մեթոդաբանություն, ցուցանիշների մշակում, հաշվետվությունների պատրաստում, ինչպես նաև իրականացնում է հարցումների և հասարակական կարծիքի ուսումնասիրման, ֆոկուս խմբերի, քաղաքականության և իրավական դաշտի վերլուծության, վիճակագրական վերլուծությունների կատարման սցենարների մշակում: 2012-2014թթ. կենտրոնում կատարվել է 5 հետազոտություն:

**ԵՊՀ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ:** Երևանի պետական համալսարանի Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի<sup>3</sup> հետազոտությունների հիմնական առանցքը կազմում են «Եվրոպական ուսումնասիրություններ» միջմասնագիտական մագիստրոսական ծրագրի կոռորդինացումը, «Մարդու իրավունքներ և ժողովրդավարացում» միջմասնագիտական տարածաշրջանային մագիստրոսական ծրագրի կոռորդինացումը, գիտական և միջմասնագիտական հետազոտությունների նախաձեռնումը և իրականացումը ԵՄ, ԵՄ-Հայաստան, ԵՄ-Հարավյան Կովկասի առանձին հիմնախնդիրների համագործակցության վերաբերյալ և այլն: 2013-2014թթ. հրատարակվել է 2 հետազոտություն:

**ԵՊՀ ԵԳԻՎՈՒԱԳԻԽՈՒԹՅԱՆ ՀԱՅԼԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ:** Երևանի պետական համալսարանի Եգիպտագիտության հայկական կենտրոնը<sup>4</sup> զբաղվում է Հին Եգիպտոսի քաղաքակրթության ուսումնասիրությամբ, նրա նպատակն է

<sup>1</sup>Տվյալները բերված են ըստ բուհից հետազոտական խմբի գրությանն ուղարկված պատասխանի:

<sup>2</sup><http://tcpa.aau.am/>

<sup>3</sup><http://www.ces.am/>

<sup>4</sup><https://armenianegyptologycentre.wordpress.com/>

ստեղծել եզիպտագիտության հայկական դպրոց և սեփական ներդրում ունենալ այս գիտության զարգացման գործում: 2013-2014թթ. հրատարակվել են 1 մենագրություն, 2 հոդված:

**ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն:** Երևանի պետական համալսարանի Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնի<sup>1</sup> ուսումնասիրությունների հիմնական առանձը կազմում են ինքնության և արժեքային համակարգերի մրցակցության խնդիրները զլորակացման պայմաններում, հայ-թուրքական առնչություններն արժեքարանական տեսանկյունից, «Մեծ Միջին Արևելք» ծրագրի հիմնադրույթները և Հայաստանը, մշակութային ադապտացիոն մեխանիզմների դերը և առանձնահատկությունները, տարածաշրջանային անվտանգության համակարգերը և Իրան-ԱՍԽ հարաբերությունները, «Արևելյան գործընկերություն» ծրագիրը և Հայաստանը: Կենտրոնն իրականացնում է հանրային քաղաքականության խորհրդատվություն, հրատարակում է հոդվածներ, մենագրություններ: 2007-2014թ. կենտրոնը հրատարակել է 6 վերլուծական տեղեկագիր: 2013-2014թթ. հրատարակվել են 5 հոդված, 6 գեկուցումների թեզիսներ:

**ՀՀՊԿԱ տարածաշրջանային հետազոտությունների կենտրոն:** «Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոն» ծրագիրն իրականացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի և ՀՀ պետական կառավարման ակադեմիայի միջև կնքված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» պայմանագրերի շրջանակներում<sup>2</sup>: Ուսումնասիրվել են մարտահրավերներն ու հնարավորությունները, որոնք ստեղծվում են Հայաստանի համար՝ Մաքսային միությանը և Եվրասիական տնտեսական միությանն անդամակցության արդյունքում, Եվրամիության ընդլայնման ծրագրերի ազդեցությունը Հայաստանի և տարածաշրջանի վրա, Մերձավոր Արևելյան երկրներում ընթացող գործընթացները և դրանց ազդեցությունը Հայաստանի Հանրապետության ու հայկական համայնքների վրա: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել է 3 սեմինար, հրատարակվել է 2 հոդված:

<sup>1</sup> <http://cccsysu.com/>

<sup>2</sup> Տվյալները բերված են ըստ բուհից հետազոտական խմբի գրությանն ուղարկված պատասխանի:

**Գ. ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ** կենտրոններն են ՀԱՀ Թրիխանձեան գյուղական համայնքների զարգացման ծրագիրը (2006թ.) և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ) «Ամբերդ» հետազոտական կենտրոնը (2013թ.):

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոն: Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի<sup>1</sup> հետազոտությունների հիմնական առանցքը կազմում են համալսարանում գիտահետազոտական, գիտակրթական և գիտամեթոդական գործունեության զարգացումը, երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և անվտանգության ապահովման ոլորտներում հետազոտությունների իրականացումը, կրթական գործընթացի հետ գիտական հետազոտությունների կապի ապահովումը, գիտահետազոտական աշխատանքներին ուսանողների և ասպիրանտների ներգրավումը, աշխարհի և հայաստանյան առաջատար «ուղեղային կենտրոնների» փորձի ուսումնասիրությունն ու տեղայնացումը, հետազոտական աշխատանքների արդյունքների առևտրայնացումը, նորարարական մշակումների իրականացումը, գիտական, ուսումնակրթական սեմինարների և աշխատաժողովների անցկացումը: 2013-2014թթ. հրատարակվել է 17 կոլեկտիվ մենագրություն, կայքում հրապարակվում են վերլուծականներ, առկա է վիճակագրական տվյալների բազ: Տվյալ ժամանակահատվածում կենտրոնի աշխատակիցների կողմից հրապարակվել է նաև 33 գիտական հոդված (որից 6-ը՝ միջազգային ամսագրերում):

**Դ. ՍՈՑԻՈԼՈԳԻԿԱԿԱՆ** կենտրոններն են ԵՊՀ տարածաշրջանային ինտեգրման և կոնֆլիկտների լուծման կենտրոնը (1996թ.), ԵՊՀ Կիրառական սոցիոլոգիական հետազոտությունների գիտահետազոտական լաբորատորիան (2006թ.), ԵՊՀ Միգրացիայի ուսումնասիրությունների կենտրոնը (2011թ.) և ԵՊՀ Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնը (2013թ.):

ԵՊՀ Տարածաշրջանային ինտեգրման և կոնֆլիկտների լուծման կենտրոն: Երևանի պետական համալսարանի Տարածաշրջանային ինտեգրման և կոնֆլիկտների լուծման կենտրոնն<sup>2</sup> աջակցում է տարածաշրջանային ուսումնասիրությունների խնդիրներին ուղղված գիտական գործունեությանը,

<sup>1</sup> <http://www.amberd.am/>

<sup>2</sup> <http://ysu.am/faculties/hy/Sociology/section/structure/amb/134>

մասնավորապես՝ Հարավային Կովկասի ինտեգրացիոն գործընթացներին, կոնֆլիկտների կանխարգելմանն ու տարածաշրջանում լարվածության թուլացմանը, «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն հասարակության» հիմնահարցերին և ժողովրդավարական փոխակերպումների հնարավորություններին: Կենտրոնի հիմնական նպատակներից է կոնֆլիկտի և խաղաղության հետազոտման մասնագիտական կարողությունների զարգացումը Հայաստանում: Կենտրոնում կազմակերպվում են գիտաժողովներ, ամառային դպրոցներ, պատրաստվում են դասագրքեր և ուսուցողական նյութեր:

**ԵՊՀ Կիրառական սոցիոլոգիական հետազոտությունների ԳՀ լարորատորիա:** Երևանի պետական համալսարանի Կիրառական սոցիոլոգիական հետազոտությունների գիտահետազոտական լաբորատորիայի<sup>1</sup> աշխատանքային գործունեության հիմնական կիզակետը համալսարանական կրթության տարբեր հիմնախնդիրների ուսումնասիրությունն է, կրթության արդյունավետության բարձրացմանը նպաստող առաջարկներով հանդես գալը: Լաբորատորիայի գործունեության առաջնային ուղղություններից են համալսարանական կրթության որակի մոնիթորինգը և գնահատումը:

**ԵՊՀ Միգրացիայի ուսումնասիրությունների կենտրոն:** Երևանի պետական համալսարանի Միգրացիայի ուսումնասիրությունների կենտրոնի հետազոտությունների հիմնական առանցքը կազմում են տեղեկատվական *Online platform*-ի<sup>2</sup> ստեղծումը՝ ուղղված միգրացիայի բնագավառում գիտահետազոտական կենտրոնների և մասնագետների միջև արդյունավետ համագործակցության ապահովմանը և խթանմանը, միգրացիոն իրավիճակի շարունակական մոնիթորինգի ապահովումը և կանխատեսումը: Կենտրոնը համագործակցում է 28 կայքի և կենտրոնի հետ:

**ԵՊՀ Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոն:** Երևանի պետական համալսարանի Գենդերային հետազոտությունների և առաջնորդության կենտրոնի<sup>3</sup> հետազոտությունների հիմնական առանցքը կազմում են հայ հասարակությունում գենդերային հիմնախնդիրների վերաբերյալ տեղեկացվածության մակարդակի բարձրացումը և գենդերային հարցերին վերաբերող քաղաքականության վրա ազդեցությունը՝ խորհրդատվա-

<sup>1</sup> <http://ysu.am/science/hy/1350281587>

<sup>2</sup> <http://mcc.y-su.am/hy/>

<sup>3</sup> <http://www.y-su.am/gender/>

կան, հետազոտական, իրավունքների և շահերի պաշտպանության ու հանրային գործունեության շնորհիվ: Կենտրոնը հրատարակում է հոդվածներ, ունի նաև առցանց հրապարակումներ, կրթական նյութեր: 2013թ. սկսած՝ կենտրոնը հրապարակում է գիտական լրատու: 2013-2014թթ. հրատարակվել է 9 հոդված:

**Ե. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ** կենտրոններն են ԵՊՀ Անձի և մասնագիտական գործունեության հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիան (1979թ.), ԵՊՀ Փորձարարական հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիան (2005թ.), ԵՊՀ Կիրառական հոգեբանության կենտրոնը (2008թ.), Հոգեբանության և սոցիոլոգիայի (ՀՍ) «Ուրարտու» համալսարանի Կիրառական վարքային վերլուծության կենտրոնը (2009թ.), ԵՊՀ Անձ և սոցիալական միջավայր գիտահետազոտական լաբորատորիան (2011թ.), ՀՍ «Ուրարտու» համալսարանի Ընտանիքի հետազոտման և աջակցության կենտրոնը (2013թ.) և ՀՀՊԿԱ Կառավարչական գործունեության հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիան (2014թ.):

**ԵՊՀ Անձի և մասնագիտական գործունեության հոգեբանության ԳՀ լաբորատորիա:** Երևանի պետական համալսարանի Անձի և մասնագիտական գործունեության հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիայի<sup>1</sup> հետազոտությունների հիմնական առանցքը կազմում են անձի գործունեության հուսալիությունն ապահովող հոգեբանական գործոնների հետազոտումը, անձի հոգեբանական անվտանգության հասկացության ուսումնասիրումը և հստակեցումը, ուսանողի անձի հոգեբանական անվտանգությունը:

**ԵՊՀ Փորձարարական հոգեբանության ԳՀ լաբորատորիա:** Երևանի պետական համալսարանի Փորձարարական հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիայի<sup>2</sup> հետազոտությունների հիմնական առանցքը կազմում են կիրառական հոգեբանության բնագավառում փորձարարական հետազոտությունների մեթոդաբանության հիմնահարցի հետազոտումը, փորձարարական հետազոտության մեթոդների կատարելագործման և ներդրման օրինաչափությունները հոգեբանության կիրառական բնագավառներում, հոգեբանական թեստերի մշակումը, սոցիալ-մշակութային տեղայնացումը: Լաբորատորիան իրականացրել է 3 դրամաշնորհային ծրագիր:

<sup>1</sup> <http://ysu.am/science/hy/1350281632>

<sup>2</sup> <http://ysu.am/science/hy/1350282331>

**ԵՊՀ Կիրառական հոգեբանության կենտրոն:** Երևանի պետական համալսարանի Կիրառական հոգեբանության կենտրոնի<sup>1</sup> հետազոտությունների հիմնական առանցքը կազմում են ուսուցողական գործունեությունը, կորպորատիվ և անձնային աճի թրեյնինգները, հոգեթերապիան և հոգեբանական խորհրդատվությունը, գիտահետազոտական աշխատանքները: 2013-2014թթ. հրատարակվել է 14 հոդված:

**ԵՊՀ Անձ և սոցիալական միջավայր ԳՀ լաբորատորիա:** Երևանի պետական համալսարանի Անձ և սոցիալական միջավայր գիտահետազոտական լաբորատորիայի<sup>2</sup> հետազոտությունների հիմնական ուղղություններն են անձի ուսումնասիրման ժամանակակից մեթոդիկաների տեղայնացումը և հայերենով մեթոդիկաների մշակումը, սոցիալ-մշակութային փոփոխման պայմաններում անձի արժեքների, համոզմունքների և նույնականացման միտումների ուսումնասիրությունը: Լաբորատորիայում իրականացվում է դրամաշնորհային ծրագիր (ASCN), որն ուղղված է ժամանակակից հայ հասարակությունում արժեքային կողմնորոշումների ու համոզմունքների դրսուրման և դինամիկայի առանձնահատկությունների և դրանց՝ սոցիալական դիրքորոշումների ու վարքի վրա ազդեցության ուսումնասիրմանը:

**ՀՀՊԿԱ Կառավարչական գործունեության հոգեբանության ԳՀ լաբորատորիա:** «Կառավարչական գործունեության հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիա» ծրագիրն իրականացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի և ՀՀ պետական կառավարման ակադեմիայի միջն կնքված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» պայմանագրերի շրջանակներում<sup>3</sup>: Ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել են կառավարչական տարբեր աստիճանի պաշտոններ և դասակարգվել ըստ հոգեբանական նմանության: Ուսումնասիրության արդյունքում դասակարգվել են կառավարչական գործունեության մասնագիտությունները: Կազմվել են կառավարչական տարբեր աստիճանի պաշտոնի բնութագրերը (պրոֆե-

<sup>1</sup> <http://ysu.am/psy/>

<sup>2</sup> <http://ysu.am/science/hy/1350282636>

<sup>3</sup> Տվյալները բերված են ըստ բուհից հետազոտական խմբի գրությանն ուղարկված պատասխանի:

սիոնքամա և փսիխոգրամա): Հրատարակվել են 1 ձեռնարկ, 9 հոդված, պատրաստվել և տպագրության է հանձնվել 1 մենագրություն:

**Զ. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ-ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ** կենտրոններն են ՀԱՀ Հակոբյան բնապահպանական կենտրոնը (1992թ.), ՀԱՀ Հանրային առողջապահական ծառայությունների հետազոտությունների և զարգացման կենտրոնը (1995թ.) և ԵՊՀ Էկոլոգիական իրավունքի կենտրոնը (2008թ.):

**ՀԱՀ Հակոբյան բնապահպանական կենտրոն:** Հայաստանի ամերիկյան համալսարանի Հակոբյան բնապահպանական կենտրոնի<sup>1</sup> հետազոտությունների հիմնական առանցքը կազմում են բնապահպանական քաղաքականությունը, բնական ռեսուրսների կայուն կառավարումը, հետազոտական, կրթական ծրագրերի իրականացումը Հայաստանի կենսաբազմազանության և բնական ռեսուրսների պահպանման նպատակով:

**ՀԱՀ Հանրային առողջապահական ծառայությունների հետազոտությունների և զարգացման կենտրոն:** Հայաստանի ամերիկյան համալսարանի Հանրային առողջապահական ծառայությունների հետազոտությունների և զարգացման կենտրոնի<sup>2</sup> հետազոտությունների հիմնական առանցքը կազմում են ՀԱՀ հանրային առողջապահության մագիստրատուրայի ծրագրի ուսանողներին հետազոտությունների և ծրագրերի զարգացման ուսուցմամբ ապահովումը, տեխնիկական աջակցությունը հայաստանյան նախարարություններին և հետազոտական կենտրոններին, ՀՀ նախարարությունների հետ համատեղ առողջապահական ծառայությունների զարգացման խթանումը մարգերում:

**ԵՊՀ Էկոլոգիական իրավունքի կենտրոն:** Երևանի պետական համալսարանի Էկոլոգիական իրավունքի կենտրոնի<sup>3</sup> հետազոտությունների հիմնական առանցքը կազմում են ՀՀ Էկոլոգիական օրենսդրության գնահատումը, իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ հանրային քննարկումների կազմակերպումը, պետական կառավարման մարմիններին, գործարար ոլորտի ներկայացուցիչներին և հասարակական կազմակերպությունների խորհրդատվության տրամադրումը: 2013-2014թթ. հրատարակվել են 1 ուսումնական ձեռնարկ, 6 հոդված, 1 գեկուցումների թեզիսներ:

<sup>1</sup> www.ace(at)aua.am

<sup>2</sup> http://www.auachsr.com

<sup>3</sup> http://www.elrc.yss.am/

**Է. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ-ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ** կենտրոններն են ԵՊՀ Ռազմավարական հետազոտությունների գիտահետազոտական լաբորատորիան (2014թ.) և ԵՊՀ Անգլալեզու հակահայկական քարոզչական դիսկուրսի հետազոտությունների լաբորատորիան (2015թ.):

**ԵՊՀ Ռազմավարական հետազոտությունների ԳՀ լաբորատորիա:** Երևանի պետական համալսարանի Ռազմավարական հետազոտությունների գիտահետազոտական լաբորատորիայի<sup>1</sup> հետազոտությունների հիմնական առանցքը կազմում են ներքին և արտաքին միջավայրում հակահայկական քարոզչության հիմնական ուղղությունների և թեզերի ուսումնասիրությունը և հակաքարոզչության կազմակերպումը, տեղեկատվական ներքին հոսքերի մշտադիտարկումը, ինֆոգեն վտանգների բացահայտումը և դրանց դեմ պայքարի մեթոդաբանության մշակումը, հասարակության սոցիալական (հատկապես ազգային անվտանգության տեսակետից վտանգ ներկայացնող) դիրքորոշումների ձևավորման աղբյուրների, մեխանիզմների և տարածման ձանապարհների ուսումնասիրությունը, հակագրման մեխանիզմների մշակումը, հայկական ինքնության ձևավորման հարցում լրատվամիջոցների դերի ուսումնասիրությունը, ԶԼՄ-ի միջոցով սոցիալական դիրքորոշման ձևավորման մեխանիզմների, դրանց կառուցվածքի, առաջացման և փոփոխման նախապայմանների ուսումնասիրումը, զանգվածային հաղորդակցության միջոցների ազդեցության և դրա հնարավոր հետևանքների ուսումնասիրումը: 2013-2014թթ. հրատարակվել է 1 մենագրություն:

**Հ. ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ** կենտրոններն են ԵՊՀ Եվրախորհրդի լեզվակրթական ծրագրերի իրականացման կենտրոն: Երևանի պետական լեզվահասարակագիտական համալսարանի Եվրախորհրդի լեզվակրթական ծրագրերի իրականացման կենտրոնի խնդիրն է ժամանակակից լեզուների ուսումնառության, դասավանդման և գնահատման ոլորտում ԵԽ գաղափարախոտության և հիմնարար արժեքների տարածմանը,

<sup>1</sup>Տե՛ս ԵՊՀ 2013-2014 ուստարվա գրքունեություն, էջ 781-783, [http://documentation.yus.am/wp-content/themes/easel/uploads/2013-2014\\_%D5%B8%D6%82%D5%BD%D5%BF%D5%A1%D6%80%D5%BE%D5%A1\\_%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D6%82%D5%B6%D5%A5%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B62.pdf](http://documentation.yus.am/wp-content/themes/easel/uploads/2013-2014_%D5%B8%D6%82%D5%BD%D5%BF%D5%A1%D6%80%D5%BE%D5%A1_%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D6%82%D5%B6%D5%A5%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B62.pdf)

ներդրմանը և ՀՀ բարձրագույն կրթության համակարգին ներդաշնակեցմանը նպաստելը<sup>1</sup>:

**ՀՀՊԿԱ Գիտության կառավարման հետազոտական կենտրոն:** Գիտության կառավարման հետազոտական կենտրոն ծրագիրն իրականացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտեի և ՀՀ պետական կառավարման ակադեմիայի միջև կնքված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» պայմանագրերի շրջանակներում<sup>2</sup>: Ծրագրի նպատակն է նպաստել գիտության և կրթության կառավարման համակարգի հետազարգացմանն ու արդիականացմանը, գիտական հաստատությունների կառավարման գործընթացների բարելավմանը, գիտության ոլորտի կառավարիչների պատրաստման կարիքների բացահայտմանը, գիտության կառավարման ոլորտի մասնագետների պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:

Այսպիսով, ամփոփելով ՀՀ բուհական հումանիտար-վերլուծական կենտրոնների արդի վիճակը՝ կարելի է նշել, որ վերջիններս իրենց գործունեության առկա հիմնախնդիրներով, զարգացման տեմպերով և ռեսուրսներով մասամբ են համապատասխանում ընդունված միջազգային չափանիշներին (թերևս, որոշ բացառություններով), ավելին, դեռ ամբողջական չէ պատկերացումն այն մասին, թե ինչպիսին պետք է լինի «ուղեղային կենտրոնն»՝ իր բոլոր չափորոշիչներով:

Մեծ է տարբերությունը նաև պետական և ոչ պետական բուհերի միջև, ինչը նույնպես մտահոգության տեղիք է տալիս: Վերջիններս բավարարվում են միայն գիտառուսումնական բաժնի իրականացրած գործառույթներով, որոնք ավելի հաճախ կազմակերպական և համակարգող բնույթ ունեն (նույնը կարելի է ասել նաև որոշ պետական բուհերի մասին):

Ցածր է այս կենտրոնների ինտեգրվածության մակարդակը, թույլ են գիտահետազոտական ոլորտում կապերը, շփումները, հանրապետությունում տեղի ունեցող քաղաքական, տնտեսական, սոցիոմշակութային փոփոխություն-

<sup>1</sup> Տվյալները բերված են ըստ բուհից հետազոտական խմբի գրությանն ուղարկված պատասխանի:

<sup>2</sup> Տվյալները բերված են ըստ բուհից հետազոտական խմբի գրությանն ուղարկված պատասխանի:

Ներին ու մարտահրավերների լուծմանը միտված համատեղ ջանքերը: Մինչդեռ նրանց գլխավոր խնդիրը հենց պետք է լինի հանրապետությունում տեղի ունեցող փոփոխությունների ու զարգացումների արտացոլումը, անհրաժեշտ գիտական հենքով ապահովումը, ուղենիշների ուրվագծումը, քանի որ բուհերն առանցքային դերակատարություն ունեն ոչ միայն գիտելիքների փոխանցման և տարածման, այլև գիտելիքների ստեղծման ու կիրառման հարցում:

Ապրիլ, 2015թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՀԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

**Վարդան Աթոյան, Սոֆյա Օհանյան, Արմինե Մալքյան, Շուշան Մովսիսյան**

Ամփոփագիր

Ժամանակակից քաղաքական, տնտեսական, սոցիոմշակութային մարտահրավերների համատերսում կարևորվում է բուհերում գործող հետազոտական, վերլուծական, հատկապես հումանիտար կենտրոնների նշանակությունը: ՀՀ-ում երկար ժամանակ բուհական կրթությունը հիմնականում համարվում էր գոյություն ունեցող գիտելիքները վերարտադրող համակարգ: Այդ մտայնությունը, սակայն, փոխվում է, և հայկական բուհերն աստիճանաբար վերածվում են գիտահետազոտական կենտրոնների: Ներկայումս ՀՀ բուհերում գործում է 28 հումանիտար վերլուծական կենտրոն, որոնք թեև աշխատում են «ուղեղային կենտրոնների» ոճով, սակայն միմյանցից տարբերվում են կառուցվածքային առումով, հրապարակային թափանցիկությամբ, հետազոտական աշխատանքների բովանդակությամբ ու բնույթով:

## ГУМАНИТАРНЫЕ АНАЛИТИЧЕСКИЕ ВУЗОВСКИЕ ЦЕНТРЫ АРМЕНИИ

*Вардан Атоян, Софья Оганян, Арpine Малкджян, Шушан Мовсисян*

### Резюме

В контексте современных политических, экономических, социокультурных вызовов важное значение имеют гуманитарные аналитические, исследовательские центры, действующие в вузовской среде. В РА вузовское образование долгое время считалось в основном системой воспроизведения существующих знаний. Однако в последнее время это умонастроение меняется, и армянские вузы постепенно превращаются в научно-исследовательские центры. В настоящее время в вузах РА действует 28 гуманитарных аналитических центров, которые, хотя работают в формате «мозговых центров», но отличаются организационными структурами, прозрачностью деятельности, содержанием и характером научно-исследовательских работ.

## UNIVERSITY AFFILIATED HUMANITARIAN ANALYTICAL CENTERS OF ARMENIA

*Vardan Atoyan, Sofya Ohanyan, Arpine Malqjyan, Shushan Movsisyan*

### Resume

The current political, economic, social and cultural challenges highlight the importance of the university affiliated analytical centers, especially humanitarian research centers. In the Republic of Armenia higher education was for long considered as a system for reproduction of the existing knowledge. However, this concept is changing, and the Armenian universities are gradually turning into research institutions. Currently there are 28 university affiliated humanitarian analytical centers in Armenia. They all act as think tanks, but differ in structure, transparency, research areas and by their nature.

## ՀՈՒԱՍՏԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ

### Վահրամ Հովհաննեսի պատմությունը

Բանալի բառեր՝ հունահայ համայնք, հայրենադարձություն, եկեղեցի, կապեր մայր հայրենիքի հետ, Հայ դատ, մարտահրավերներ և հնարավորություններ:

### Թշարանակը և սկիռվածությունը

Պայմանավորված տարատեսակ գործոններով՝ Հունաստանի հայ համայնքի թվաքանակը 20-րդ դարում պարբերաբար ենթարկվել է տատանումների: 1923թ. այն հասավ գագաթնակետին (120 հազ. մարդ)՝ կապված դեռևս 19-րդ դարի 90-ական թթ. հայկական կոտորածների, 20-րդ դարասկզբի Հայոց ցեղասպանության և հույն-թուրքական պատերազմի (1919-22թթ.) հետևանքով հազարավոր հայերի՝ դեպի այդ երկիր գանգվածային գաղթի հետ:

Հետազայում, սակայն, նկատվել է հայ բնակչության արտահոսք Հունաստանից ինչպես Խորհրդային Հայաստան, այնպես էլ Եվրոպական ավելի զարգացած երկրներ ու ԱՄՆ:

Դեպի Խորհրդային Հայաստան գաղթը պայմանավորված էր հայրենադարձության քաղաքականությամբ, որին ակտիվ և ոգևորված մասնակցություն ունեցավ Հունաստանի հայ համայնքը: Միայն 1946թ. Հունաստանից Հայաստան ներգաղթեց մոտ 5 հազ. հայ: Ընդհանուր առմամբ 1924-27թթ., 1932-33թթ. և 1946-47թթ. Մեծ հայրենադարձության տարիներին Խորհրդային Հայաստանի ճամփան բռնեցին մոտ 60 հազ. հունաստանարնակ հայեր<sup>2</sup>:

Իսկ դեպի Եվրոպական ավելի զարգացած երկրներ և ԱՄՆ հունահայերի գաղթը պայմանավորված էր սոցիալ-տնտեսական գործոններով: Ներ-

\* «Նորավանք» ԳՎՀ Հայագիտական կենտրոնի փորձագետ:

<sup>1</sup> Սարգսյան Համեմատ, 1946-1948թթ. հայրենադարձության աշխարհագրությունը և ժողովրդագրությունը, «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի գեկուցումների ժողովածու, Երևան, Լիմուշ, 2009, էջ 54 (48-54):

<sup>2</sup> «Հայ սփյուռք» հանրագիտարան, խմբագիր՝ Այվաղյան Հ. և ուր., Երևան, «Հայկական հանրագիտարան» հրատարակչություն, 2003, էջ 370:

կայում է, թեև Հունաստանը անդամակցում է Եվրոպական միությանը, սակայն նրա տնտեսությունը լավագույններից չէ Եվրոպայում: Վերջին շրջանում Հունաստանում բռնկված տնտեսական ճգնաժամը, որն իր հետ բերեց նաև կառավարական ճգնաժամ, դրա վառ ապացույցներից մեկն է: Այդ պատճառով հունահայ համայնքի ներկայացուցիչներն այժմ ավելի բարեկեցիկ և ապահով կյանքի ակնկալիքով փորձում են զաղթել դեպի Եվրոպական ավելի զարգացած երկրներ ու ԱՄՆ:

Սրան գուգահեռ՝ վերջին երկու տասնամյակում Հայաստանի անկախացմամբ, պատերազմով, երկրաշարժով, շրջափակմամբ և այլ բարդություններով պայմանավորված՝ մեծ թվով հայերի արտագաղթի ալիքը, ի թիվս այլ երկրների, ուղղվել է նաև Հունաստան: Վերջին երկու տասնամյակների ընթացքում Հունաստան զաղթած հայերի թիվը հաշվվում է մոտ 30-40 հազ.<sup>1</sup>: Իսկ համաձայն որոշ տվյալների՝ Հայաստանից դեպի Հունաստան զաղթի արդյունքում տեղի հայ համայնքի թվաքանակը մեծացել է մոտ 7 անգամ՝ 12-13 հազարից հասնելով 70-80 հազարի<sup>2</sup>:

Հունաստանի հայ համայնքը սփոռված է երկրի տարբեր բնակավայրերում: Ամենահայահոն բնակավայրերը մայրաքաղաք Աթենքը և Սալոնիկն են, որտեղ հայերի թվաքանակը կազմում է համապատասխանաբար 10 հազ. և 11.5 հազ.:

### ***Համայնքի արդի բնութագիրը***

Լինելով Սփյուռքի ավանդական համայնքներից մեկը՝ Հունաստանի հայ համայնքը ներառում է հայկական հոգևոր-մշակութային, հասարակական-քաղաքական հարուստ կյանքի գրեթե ողջ ներկապնակն ու բազմազանությունը: Այստեղ առկա են Հայության քաղաքական, հոգևոր, սոցիալական գրեթե բոլոր շերտերն իրենց կառույցներով: Հունաստանի հայ համայնքի ներքին բազմազանությունը երևում է հիմնականում երեք՝ սոցիալական, քաղաքական և հոգևոր հարթություններում:

*Սոցիալական* հարթությունում Հունաստանի հայ համայնքի ներքին բազմազանությունն ապահովող գործոն է համայնքի տարաբաժանումը

<sup>1</sup> Badalyan Arevik, Greek Armenian Community: the struggle continues

<http://arevik.wordpress.com/2010/06/27/greek-armenian-community-the-struggle-continues/>

<sup>2</sup> Հունաստանի հայ համայնքը պատրաստվում է Հայաստանի նախագահի հետ հանդիպմանը, <http://www.armenialiberty.org/content/article/2279357.html>

ավանդական և ժամանակակից սփյուռքերի: Ավանդական սփյուռքը կազմում են Հայոց ցեղասպանության հետևանքով և դրանից առաջ Հունաստան գաղթած հայերը: Իսկ ժամանակակից սփյուռքի մեջ են մտնում 1990-ականներից Հայաստանից Հունաստան գաղթածները: Ուշագրավ է, որ տեսակարար կշռի առումով ժամանակակից սփյուռքը գերազանցում է ավանդականին, որի թվաքանակը տարբեր հաշվարկներով ներկայում կազմում է 13-15 հազ.: Մնացյալ հատվածը կազմում են ժամանակակից սփյուռքի ներկայացուցիչները: Ընդ որում, եթե ավանդականի պարագայում նկատվում է թվաքանակի նվազման միտում, ապա ժամանակակից սփյուռքում թվաքանակի ավելացման միտումը շարունակվում է, քանի որ թեկուզ ոչ նախկին տեմպերով, սակայն շարունակվում է Հայաստանից բնակչության արտահոսքը դեպի Հունաստան:

*Քաղաքական առումով Հունաստանում շարունակում են գործել հայկական ավանդական երեք կուսակցություններից երկուսը՝ ՀՅԴ-ն (Հայ հեղափոխական դաշնակցություն) և ՌԱԿ-ը (Ռամկավար ազատական կուսակցություն): Այդ երկու ավանդական կուսակցությունների գործունեությունն ապահովում է Հունաստանի հայ համայնքում գաղափարաքաղաքական դաշտի բազմազանությունը՝ ազգային սոցիալիստական (ի դեմս ՀՅԴ-ի) և ազատական (ի դեմս ՌԱԿ-ի): Որպես քաղաքական մարմին համայնքում իր ուրույն տեղն ունի նաև ՀՅԴ Հայ դատի հանձնախումբը:*

*Հոգևոր բազմազանության առումով, թեև Հունաստանի հայ համայնքի գերակշիռ մեծամասնությունը կազմում են Հայ Առաքելական եկեղեցու հետևորդները, սակայն նրանց կողքին, թեկուզ սահմանափակ քանակությամբ, գոյակցում են նաև կաթողիկե և ավետարանական դավանանքի հետևորդ հայերը: Վերջիններիս թվաքանակը կազմում է մի քանի հարյուրական:*

*Հունաստանի հայ համայնքում ներկայում գործում են 10 Հայ Առաքելական և 2-ական Հայ Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիներ: Եթե առաքելական հայերը, մայրաքաղաք Այենքից բացի, սփոփած են նաև Հունաստանի այլ քաղաքներում ու բնակավայրերում, ապա կաթողիկե և ավետարանական հայերը կենտրոնացած են հիմնականում Այենքում:*

*Հայ Առաքելական, Կաթողիկե և Ավետարանական եկեղեցիների միջև հարաբերությունները կառուցվում են հիմնականում հանդուրժողականու-*

թյան և համագործակցության հիման վրա: Դավանանքային հողի վրա առձակատման դրսորումներ համենայն դեպք հայտնի չեն:

### **Համայնքային կառույցները**

Հունաստանի հայ համայնքի կենտրոնակությունը պայմանավորված է նաև նրա կազմակերպվածությամբ, որն ապահովում է համայնքային կառույցների գործունեությամբ: Բացի ավանդական կուսակցություններից և հայկական երեք եկեղեցիներից (Առաքելական, Կաթողիկե և Ավետարանական), որոնց մասին խոսվեց վերևում, գործում են նաև այլ կառույցներ ու կազմակերպություններ:

Համայնքի դեկանար կառույցներն են Ազգային առաջնորդարանը և Ազգային վարչությունը: Ազգային առաջնորդարանը ներկայացնում է հայ համայնքը պետության առջև:

Հունաստանի հայ համայնքի մյուս կազմակերպչական կառույցները ծագման առումով կարելի է բաժանել երկու խմբի:

- **Համահայկական կազմակերպությունների տեղական մասնաճյուղեր:** Այնպիսի համազգային կառույցներ, ինչպիսիք են ՀԲԸՄ-ը (Հայկական բարեգործական ընդհանուր միություն), ՀՍԸՄ-ը (Հայ մարմնակրթական ընդհանուր միություն), Համազգային հայ կրթական և մշակութային միությունը, Հայաստան համահայկական հիմնադրամը և այլն, ունեն Հունաստանի իրենց տեղական մասնաճյուղերը:
- **Համայնքային կազմակերպություններ:** Համահայկական կառույցների տեղական մասնաճյուղերի կողքին գործում են նաև համայնքային տարատեսակ կառույցներ, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական խմբերը.

*1. Տեղեկատվական կառույցներ:* Հունաստանում գործող հայկական տեղեկատվական կառույցները կազմում են տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցները: Տպագիր լրատվամիջոցներից գործում են «Ազատ օր», «Նոր աշխարհ», «Հայաստան» և այլ պարբերականները:

Պարբերական հրատարակություններին վերջին շրջանում, կապված գիտատեխնիկական առաջընթացի, մասնավորապես՝ համացանցի լայն տարածման և կիրառման հետ, ավելացել են նաև էլեկտրոնային լրատվամիջոց-

ները՝ համացանցային կայքերը: Բացի Հայ Առաքելական եկեղեցու Հունահայոց թեմի կայքից ([www.armchurch.am](http://www.armchurch.am)), ներկայումս գործում են նաև համայնքային կայքեր ([www.armeniancommunity.gr](http://www.armeniancommunity.gr), [www.armenika.gr](http://www.armenika.gr)):

Տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցներն արտացոլում են հայաստանյան, Հունաստանի հայ համայնքի, Սփյուռքի այլ համայնքների կյանքը, ինչպես նաև անդրադառնում են համազգային իրադարձություններին:

**2. Կրթական հաստատություններ:** Հունաստանի հայ համայնքում ավանդաբար գործել և շարունակում են գործել հայկական կրթական հաստատություններ, որոնցից նշանավոր են հատկապես Սոֆի և Լևոն Հակոբյան, Զավարյան, Գալիխակյան վարժարանները:

**3. Մշակութային կառույցներ:** Որպես մշակութային կառույցներ նշանավոր են, օրինակ, «Հայաստան» կենտրոնը, «Արաքս» մշակութային միությունը և այլն:

**4. Սոցիալական կառույցներ:** Այսպիսի կառույցներից նշանավոր է, օրինակ, «Երևան» միության գործունեությունը, որը գրադարձում է Հունաստանի ռազմական ուսումնական հաստատություններում սովորող հայ կուրսանուների կեցության խնդիրներով: «Հայաստան» կենտրոնը նույնպես, բացի մշակութային գործունեությունից, ծավալում է ակտիվ հասարակական գործունեություն:

### ***Մարտահրավերներ և հնարավորություններ***

Հունաստանի հայ համայնքը Սփյուռքի մյուս համայնքների նման գտնվում է դրական և բացասական գործունների ազդեցության ներքո: Դրական են այն գործունները, որոնք նպաստում են համայնքի ամրապնդմանը և բարձրացնում նրա կենտրոնակությունը: Բացասական գործունները նպաստում են համայնքի թուլացմանը:

Հունաստանի հայ համայնքի կյանքում ներկայումս բացասական գործուններ կամ մարտահրավերներ են հանդիսանում հետևյալները.

- 1. Տնտեսական ճգնաժամը,** որը խթանում է հայերի արտագաղթն այդ երկրից:
- 2. Թեմական խնդիրը՝** Հայ Առաքելական եկեղեցու Հունահայոց թեմի պատկանելության հարցը, այն է՝ թեմը պատկանում է Մայր աթոռ սուրբ Էջմիածնի՝ թե՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը: 1920-ական

թթ. ստեղծված Հունահայոց թեմը սկզբում գտնվում էր Մայր աթոռ սուրբ Էջմիածնի ենթակայության տակ: Սակայն 1958թ. այն անցավ Անթիլիասի կաթողիկոսության ենթակայությանը: Մայր աթոռ սուրբ Էջմիածինը շհամակերպվեց այդ իրավիճակի հետ և ստեղծեց իրեն ենթակա թեմական կառույցը: Ներկայումս այդ երկու կառույցները շարունակում են գոյատևել և հավակնել համայնքի առաջնորդությանը: Թեև այդ հանգամանքն անառողջ մրցակցության պատճառ է դառնում, սակայն առ այսօր չի հանգեցրել համայնքի պառակտմանը:

3. *Լեզվի խնդիրը:* Թեև Հունաստանում գործում են մի շարք հայկական կրթական հաստատություններ, այնուամենայնիվ, դատելով համայնքային կայքերի ([www.armeniancommunity.gr](http://www.armeniancommunity.gr), [www.armenika.gr](http://www.armenika.gr)) հունալեզու լինելու հանգամանքից, կարելի է նշել, որ Հունաստանի հայ համայնքում նույնպես, ինչպես Սփյուռքի մյուս գաղթօջախներում<sup>1</sup>, հայոց լեզվի պահպանման խնդիրը լուրջ է: Հայերի մի զգալի հատված չի տիրապետում մայրենի լեզվին: Հունաստանի հայ համայնքում նույնպես ազգային խնդրության ատրիբուտների, այդ թվում նաև լեզվի կորուստն ընթանում է ակտիվորեն:

Որպես համայնքային կյանքի վրա դրական ազդող, այն աշխուժացնող գործոն հանդես է գալիս Հայաստանի Հանրապետությունը: Հայաստանի անկախացումը 1991թ., Հայաստանի և Հունաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը (1992թ.), Հունաստանում ՀՀ դեսպանության հիմնումը նոր լիցք հաղորդեցին Հունաստանի հայ համայնքի կենսունակությանը և աշխուժությանը: Համայնքն իր թիկունքում սկսեց էլ ավելի շոշափելիորեն զգալ մայր հայրենիքի և պետության շունչն ու հովանավորությունը: ՀՀ Սփյուռքի նախարարության հիմնադրմամբ (2008թ.) այս գործոնի ազդեցությունն էլ ավելի մեծացավ:

Հայաստանի Հանրապետության գործոնի ազդեցությունը հունահայ համայնքում կապված է ՀՀ դեսպանության, ՀՀ Սփյուռքի նախարարության գործունեության, Հայաստանի և Արցախի նախագահների և այլ բարձրաստիճան պաշտոնյաների այցելությունների հետ: Թվարկված գործոնները համայնքի վրա թողնում են բարերար ազդեցություն, ինչպես, օրինակ.

<sup>1</sup>Հովհան Վահրամ, Հայկական սփյուռքի անվտանգության մարտահրավերները, «Գլոբուս», 2014, թիվ 5, էջ 39-47:

- **Համայնքային կյանքի աշխուժացումը:** ՀՀ ղետանությունը տարատեսակ միջոցառումների կազմակերպմամբ և իրականացմամբ ակտիվություն է հաղորդում համայնքային կյանքին: Ուշագրավ էր, օրինակ, հայկական բանակի կազմավորման 20-ամյակին նվիրված միջոցառումը 2012թ. հունվարի 26-ին<sup>1</sup>:
- **Մայր հայրենիքի հետ կապերի ամրապնդումը:** Հայաստանի անկախացմամբ և դիվանագիտական հարաբերությունների հաստատմամբ Հայաստանի և Հունաստանի միջև ամրապնդվեց կապը Հունաստանի հայ համայնքի և մայր հայրենիքի միջև: Օրինակ՝ Հունաստանի հայ համայնքը նույնպես ակտիվորեն ընդգրկված է և մասնակցում է ՀՀ Սփյուռքի նախարարության կողմից կազմակերպվող «Արի տուն» ծրագրին:
- **Հայաստանից համակարգված և նպատակային օգնությունը:** ՀՀ-ն որպես պետություն հիմնականում Սփյուռքի նախարարության միջոցով տարբեր կերպ նպաստում է Հունաստանի հայ համայնքի խնդիրների լուծմանը: Այս առումով կարևոր են դպրոցների համար դասագրքերի պատրաստումը և տրամադրումը, ուսուցիչների վերապատրաստման ծրագրերը և այլն:

### ***Հայ համայնքը՝ որպես գործոն***

Հունաստանի հայ համայնքը, չնայած առկա դժվարություններին, նշանակալի գործոն է հանդիսանում Հայության և Հայաստանի համար: Համայնքը, լինելով Հայության անբաժանելի մասը, իր գործունեությամբ նպաստում է համազգային խնդիրների լուծմանը՝ իր հնարավորությունները ծառայեցնելով համագույն նպատակներին: Այդ գործոնի պահպանումը և զարգացումը լուրջ նշանակություն ունեն Հայության ներուժի համար:

Հունաստանի հայ համայնքը՝ որպես գործոն, Հայության կյանքում դիտարկվում է հետևյալ հարթություններում:

*1. Քաղաքական:* Հունաստանի հայ համայնքի՝ որպես քաղաքական գործոնի, դերը կարևորվում է նրա պայքարով համազգային հիմնահարցերի<sup>2</sup> լուծմանը նպաստելու համար: Այս խնդիրների լուծման ձանապարհը Հունաստանի հայ համայնքի համար լորրիստական գործունեությունն է: Հայկա-

<sup>1</sup> Հայոց բանակի կազմավորման տոնն Աթենքում, <http://armchurch.gr/archive.php>

<sup>2</sup> Սիմավորյան Արեստակես, Հովհան Վահրամ, Սփյուռքի գիտավերլուծական ներուժի անհատական և խնստիտուցիոնալ մակարդակները, «21-րդ ԴԱՐ», 2014, թիվ 2, էջ 87-88:

կան լորրիստական գլխավոր կառույցը Հունաստանում ՀՅԴ Հայ դատի հանձնախումբն է: Դեռևս 1996թ. ՀՅԴ Հայ դատի հանձնախումբի լորրիստական ջանքերի շնորհիվ Հունաստանի խորհրդարանը ճանաչեց Հայոց ցեղասպանությունը: Սակայն հայ համայնքի համար պայքարը դրանով ավարտված չէ, քանի որ գլխավոր խնդիրը, այն է՝ Հայոց ցեղասպանության ճանաչումը Թուրքիայի կողմից և փոխհատուցումը, դեռևս լուծված չէ: Այս ուղղությամբ էլ շարունակում է պայքարը Հունաստանի հայ համայնքը: Մասնավորապես Թուրքիայի՝ Եվրոպական միությանն անդամակցության խնդրում Եվրոպայի հայությունն ամեն կերպ փորձում է բարձրացնել Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման հարցը<sup>1</sup>: Քանի որ Հունաստանը Եվրամիության անդամ է, նրա դիրքորոշումը վճռական նշանակություն ունի Թուրքիայի անդամակցության հարցում: Հայ համայնքն ակտիվորեն աշխատում է Հունաստանի իշխանությունների հետ այս ուղղությամբ: Այն լուրջ գործոն է ընտրությունների ժամանակ, և Հունաստանի քաղաքական ուժերը չեն կարող հաշվի չառնել նրա դիրքորոշումը տարբեր, այդ թվում նաև արտաքին քաղաքական հարցերում<sup>2</sup>:

2014թ. սեպտեմբերին Հունաստանի հայ համայնքը հասավ նոր հաջողության Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործում: Հունաստանի խորհրդարանն օրենքով քրեականացրեց Հայոց ցեղասպանության ժիւտումն այդ երկրի տարածքում<sup>3</sup>:

Հաջորդ կարևոր համազգային հարցը, որի լուծմանն են ուղղված Հունաստանի հայ համայնքի ջանքերը, արցախյան հիմնախնդիրն է: Հունաստանի հայ համայնքը փորձում է իր հնարավորությունների սահմաններում նպաստել Ղարաբաղյան հակամարտության խաղաղ և հայանպաստ կարգավորմանը: Այս շրջանակներում ուշագրավ է 2009թ. Աղրբեջանի նախագահ Ի.Ալիևի Հունաստան կատարած այցի ընթացքում Հունաստանի հայ համայնքի կազմակերպած բողոքի ցույցն ընդդեմ Աղրբեջանի ռազմատենչության և հավակնությունների<sup>4</sup>:

<sup>1</sup> Խօճայն Կարինե, Роль и значение Европейского Парламента в деятельности армянских организаций Диаспоры, «21-й ВЕК», 2014, № 1, с. 69-85.

<sup>2</sup> Badalyan Arevik, նշվ. աշխ:

<sup>3</sup> Հունաստանը դարձավ ԵՄ 2-րդ երկիրը, որը քրեականացրեց Հայոց ցեղասպանության հերքումը, <http://www.mediamax.am/am/news/foreignpolicy/11549/>

<sup>4</sup> Տէ՛ u Azeri President met with angry Armenian protesters in Greece

<http://www.panarmenian.net/eng/world/news/28661/>

**2. Տնտեսական:** Համայնքը, չնայած տնտեսական ճգնաժամին, ակտիվութեն մասնակցում է նաև հայրենիքի օգնության ծրագրերին՝ հիմնականում Հայաստան համահայկական հիմնադրամի տեղական մասնաճյուղի գործունեության միջոցով: Օրինակ՝ 2011թ. հեռախոսամարաթոնի ընթացքում համայնքը հիմնադրամին նվիրաբերեց մոտ 35 հազ. եվրո<sup>1</sup>:

**3. Քաղաքակրթական:** Հունաստանի հայ համայնքն իր կազմակերպած տարատեսակ մշակութային միջոցառումներով ապահովում է հայկական քաղաքակրթության ներկայությունը Եվրոպայում և մասնավորապես՝ Հունաստանում: Այս առումով նշանակալից է, օրինակ, 2011թ. դեկտեմբերի 28-ին ՀՀ դեսպանությունում բացված հայկական հնատիպ գրքերի և Հայաստանին վերաբերող վիմանկարների ցուցահանդեսը՝ նվիրված հայկական տպագրության 500-ամյակին<sup>2</sup>:

**Հոկտեմբեր, 2014թ.**

## ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ

### **Վահրամ Հովհանն**

Ամփոփագիր

Հունաստանի հայ համայնքը ներառում է հայկական հոգևոր-մշակութային, հասարակական-քաղաքական հարուստ կյանքի գրեթե ողջ ներկապնակն ու բազմազանությունը: Այստեղ առկա են Հայության քաղաքական, հոգևոր, սոցիալական գրեթե բոլոր շերտերն իրենց կառուցներով: Հունաստանի հայ համայնքի ներքին բազմազանությունը երևում է հիմնականում երեք՝ սոցիալական, քաղաքական և հոգևոր հարթություններում, որոնց էլ անդրադարձ է կատարվում հողվածում:

<sup>1</sup> Панъевропейский телефонный марафон Всеармянского фонда «Айастан», зарегистрировал согласие абонентов пожертвовать 1 миллион 350 000 евро <http://himnadram.org/index.php?id=23817&lang=3>

<sup>2</sup>Տե՛ս Հունաստանում ՀՀ դեսպանությունում բացվել է հայ գրատպության 500-ամյակին նվիրված ցուցահանդես <http://www.tert.am/am/news/2011/12/29/ingreecarmenianembassy/>

## АРМЯНСКАЯ ОБЩИНА ГРЕЦИИ

*Vahram Hovyan*

### Резюме

Армянская община Греции охватывает практически всю палитру богатой духовно-культурной, общественно-политической жизни. Здесь представлены политические, духовные, социальные слои Армянства со своими структурами. Внутреннее разнообразие армянской общины Греции особенно заметно в трех сферах: социальной, политической и духовной, которые и рассматриваются в данной статье.

## ARMENIAN COMMUNITY OF GREECE

*Vahram Hovyan*

### Resume

The Armenian community of Greece incorporates almost the whole rich gamut and variety of Armenian cultural, spiritual, public and political life. Almost all political, spiritual and social layers of Armeniancy are present here along with their structures. The internal diversity of the Armenian community in Greece can be seen mostly in three dimensions – social, political and spiritual, and the article reviews these dimensions.

## XX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԱՆ ԴԱՍԵՐԸ

### *Արձրուն Հովհաննիսյան՝*

*Բանալի բառեր՝ Էրիթրեա, Եթովպիա, Հնդկաստան, Կարգիլ, պատերազմ, զորք,  
ՀՕՊ, օղուժ, տանկեր, հրետանի:*

Սովորաբար ռազմարվեստի ուսումնասիրման հարցում առաջնային տեղ է տրվում գերտերութունների մարտական գործողություններին, քանի որ դրանց ժամանակ են հիմնականում ի հայտ գալիս ռազմական գործի նորությունները, առաջանում մարտավարական նոր լուծումներ, փորձարկվում նոր զինատեսակներ և այլն: Սակայն փոքր պատերազմների ժամանակ ևս օրինակելի շատ բաներ կան, մանավանդ մեր պարագայում, երբ մենք ևս այդ փոքր պետությունների իրավիճակում ենք, իսկ գերտերություններն այս կամ այն կերպ կրկին մասնակցում են այդ պատերազմներին:

XX դարի վերջին աշխարհում տեղի ունեցած բազում պատերազմներից և մարտական գործողություններից կան երկուսը, որոնք իրենց բնույթով և մարտական գործողությունների առանձնահատկություններով մեզ համար չափազանց կարևոր են և օրինակելի: Փորձենք մանրամասն վերլուծել դրանք:

1993թ. երկարամյա հակամարտութունից հետո Եթովպիայից անկախություն ստացավ Էրիթրեա նորակազմ պետությունը, որը գտնվում է Եթովպիայի հյուսիսային մասում և փաստացի Եթովպիայի ծովային ելքն էր հանդիսանում: Նորակազմ պետությունը Եթովպիայի հետ վիճելի տարածքներ ուներ, դրանք փակում էին վերջինիս ծովային ելքի հնարավորությունը: 1997թ. կոնֆլիկտը կրկին թեժանում էր, սակայն կողմերն ակտիվ մարտական գործողությունների չեղն պատրաստվում, սպառազինության մրցավազք չկար, բանակներն ակտիվ գորավարժություններ չեղն անում: Եթովպիական բանակը 1997թ. դրությամբ կազմում էր մոտ 100 հազար, զինված էր մոտավորապես 300 միավոր խորհրդային T-55, T-62 տանկերով և նույնքան էլ ԲՄՊ-1, ԲՏР-60

---

<sup>1</sup> Ռազմական վերլուծաբան:

և այլ զրահամեքենաներով [1, с. 85-88]: Հրետանին ևս մեծ թիվ չեր կազմում՝ հիմնականում խորհրդային 85, 100, 122 և 152 մմ-ոց քարշարկվող միջոցներ, որոշ քանակությամբ ռեակտիվ համազարկային կայանքներ, իսկ օդուժը չնայած փոքր չեր, սակայն հիմնականում հնացած խորհրդային *Մի՛Ռ-21*, *Մի՛Ռ-23* կործանիչներ էին, *Մի՛-8*, *Մի՛-24* ուղղաթիռներ, ընդհանուր՝ մոտ 80-90 միավոր, օդաշուները նույնպես լավ պատրաստված չէին: Էրիթրեական բանակը կազմում էր մոտավորապես 50 հազար, տեխնիկապես կրկնակի պակաս էր գինված, գրեթե լրիվ նույն տեսականին էր, սակայն այն պատերազմին համեմատաբար ավելի լավ էր պատրաստվում, և տարեցտարի պաշտպանության համար նախատեսված գումարներն ավելացվում էին:

1998թ., ըստ որոշ տեղեկությունների, մարտական գործողություններն սկսեց Էրիթրեան՝ զորքեր մտցնելով վիճելի Բաղմէ մարզը: Եթովպական զորքերն այդ հարձակմանը պատասխանեցին մի փոքր ուշ, սակայն արդեն մեկ ամիս անց՝ 1998թ. հունիսից, մարտական գործողությունները լայնածավալ բնույթ ստացան: Եթովպական բանակը սկզբում մեծ հաջողություններ շուներ: Մինչև ամսվա վերջ Զալաբասու քաղաքը երկու անգամ ձեռքից ձեռք անցավ: Էրիթրեական բանակը գործում էր բավական հանդուզն, մինչև հուլիս մեկ մոտոհրածագային բրիգադ բավական հաջող ռազմարշավային գործողություններ էր իրականացնում եթովպական տարածքում [2, с. 52]: Պատերազմն ընթանում էր երեք ճակատով, որոնք իրարից բավական հեռու էին: Հուլիսից սկսվեցին անձրևային եղանակները, և առանց այն էլ դժվարանցանելի տարածքներն անանցանելի դարձան: Կողմերը դադար տվեցին և սկսեցին զինվել: Կողմերը գերադասեցին նորագույն զինատեսակներ չգնել, այլ բավարարվել արդեն եղածով: Տարբեր երկրներից ձեռք բերվեցին արդեն կիրառված տանկեր, զրահամեքենաներ և հրետանային միջոցներ [3; 2, с. 58]: Միայն օդուժն էր, որ լրջորեն թարմացվեց երկու կողմում էլ:

Սկզբում Էրիթրեան Բելառուսից, այլ տվյալներով՝ հենց ՌԴ-ից գնեց 10 միավոր *Մի՛-29* կործանիչ [4, с. 300-301]: Եթովպական, լավ ուսումնասիրելով իրադրությունը, ավելի խելամիտ քայլի դիմեց. նախ կատարելագործեց ունեցած հին խորհրդային կործանիչները, հետո ՌԴ-ից գնեց ուր *Cy-27* կործանիչ, ընդ որում՝ 6 համեմատաբար կատարելագործված *Cy-27CK* [4, с. 300-301]: Կողմերն ավելի հաճախ օգտագործվող օդային հարձակման միջոցների մեջ հիմնական շեշտը, բնականաբար, պետք է դնեին այս կործանիչների վրա:

Կողմերը ձեռք բերեցին նաև Cy-25 գրոհիչներ, Եթովպիան՝ ավելի ժամանակակից ոռուսական տարրերակը, ինչպես նաև ուղղաթիռներ:

Պատերազմը վերսկսվեց 1999թ. փետրվարին, կրկին ավելի ակտիվ էր ավելի փոքր կողմը: Էրիթրեան լայնածավալ հարձակում սկսեց նույն շրջաններում: Մարտական գործողություններն ավելի էին սաստկանում: Արդեն փետրվարի վերջին եթովպական բանակը բոլոր երեք ճակատներում վարում էր լայնածավալ հարձակողական գործողություններ: Իսկ Բաղմե քաղաքի շրջակայքում մոտավորապես 60 կմ ճակատով կուտակելով վեց դիվիզիա և մեծաքանակ զրահատեխնիկա՝ Եթովպիան լայնածավալ հարձակում սկսեց: Բավական մեծ խտություն էր գոյացել գորքերի կենտրոնացման առումով: Սակայն լավ պատրաստված ամրաշինական կառույցներով հագեցած էրիթրեական պաշտպանական բնագիծը հեշտությամբ չէր տրվում [5]: Համառ մարտերից հետո, գրավելով Բաղմե քաղաքը, եթովպական գորքերը շտապեցին ամրագրել հաջողությունը և զարգացնելով հարձակումը՝ դուրս եկան Զալամբեսու շրջան, որտեղ, սակայն, նրանց կանգնեցրեց էրիթրեական գորքերի համար դիմադրությունը: 4 կմ ճակատի վրա տանկային լայնածավալ գրոհն «արժեցավ» 57 տանկ և հարձակման հետագա տապալում: Արյունահեղ մարտերը մեծ հաջողություն չերեցին: Տարբեր գնահատականներով՝ եթովպական լայնածավալ հարձակումները միայն 1999թ. փետրվար-մարտ ամիսներին 15-17 հազար զինվորի և սպայի կյանք են արժեցել [6]: Հակառակ կողմի կորուստները զգալիորեն քիչ էին: Էրիթրեական բանակը փորձեց օգտվել առիթից, սակայն բոլոր հարձակումները երեք ճակատներում էլ մեծ հաջողություններ չերեցին: 1999թ. մարտական գործողությունների ժամանակ արդեն կողմերը փորձեցին լայնորեն օգտագործել օդուժի հնարավորությունները: Եթովպիան ամեն ինչ անում էր, որ լիովին ոչնչացներ մոտավորապես 10 անգամ փոքր էրիթրեական օդուժը հենց գետնի վրա: Ինքնաթիռները մշտապես փորձում էին ոմբակոծել էրիթրեական օդանավակայանները, սակայն դրանք մեծ արդյունք չէին տալիս: Համեմատաբար հաջող էր գործում եթովպական օդուժը ցամաքային գորքերին աջակցելու համար (մասնավորապես՝ ոռուսական նոր գրոհիչները և ուղղաթիռները): ՄիГ-29 և Cy-27 կործանիչների հանդիպումն օդային մարտում անխուսափելի էր: Սկզբում էրիթրեայի կողմում կռվող ուկրաինական օդաչուները փորձում էին ծուղակը զցել եթովպական կործանիչները: Առաջին անգամ հավանաբար այս կործանիչները հանդիպեցին 1999թ. փետրվարի 25-ին:

Տեղի ունեցան օդային մի քանի մարտեր, կողմերն ամեն անգամ կիրառում էին նորանոր մարտավարական հնարքներ: Սակայն ամեն անգամ իրական կամ պայմանական հաղթող էր դուրս գալիս ավելի ծանր և հզոր Cy-27-ը: 1999թ. և 2000թ. օդային մարտում եղել է նաև դեպք, երբ հանդիպել են երկու Cy-27 չորս ՄիԳ-29-ի հետ՝ առանց օդային դեկավարման կետի, և մարտն ավարտվել է առաջինների հաղթանակով: 1999թ. վետրվարի 26-ի մարտում կողմերը մեծ հեռավորությունից իրար վրա արձակելով P-27 հրթիռ՝ հաջողության չհասան և ստիպված գնացին մոտակա օդային մարտի: Մոտակա օդային մարտում (մոտավորապես նույն թոխքային պատրաստություն ունեցող օդաշուներով՝ ոռու և ուկրաինացի<sup>1</sup>) երկար պտտվեցին իրար շուրջ, քանի որ այս կործանիչների ճկունության մեջ տարբերությունը մեծ չէ: Սակայն այս մարտում ՄիԳ-29-ին նորից դավաճանեց իր հիմնական թերությունը: Շուտ ծախսելով իրենց վառելիքը՝ էրիթրեական ՌՕՌ հիմնական կործանիչները մարտից դուրս գալու ճանապարհներ էին որոնում: Արդյունքում՝ մարտից փախչող ՄիԳ-29-երին գտան Cy-27-ից արձակած մոտակա գրքորության հրթիռները: Տարբեր տվյալներով՝ եթովպական կործանիչները խոցել են 3-5 ՄիԳ-29-ը [7-11]:

Ամուսն կեսին կրկին սկսվեցին անտանելի անձրևները, և քանակները կրկին անցան վերազինման և ուժերի կուտակման: 2000թ. պատերազմաշրջանին կողմերը պատրաստվում էին նույն տեմպերով, գնվեց մեծ քանակությամբ տեխնիկա, մասնավորապես՝ հրետանային: ՌԴ-ն երկու կողմին էլ հաջողությամբ զինում էր: Եթովպիան ուներ մոտավորապես 350 հազարանոց բանակ, իսկ Էրիթրեան՝ մոտավորապես 250 հազար: Երեք ճակատներից ոչ մեկում, սակայն, Եթովպիան չուներ 1.5-ից ավելի քանակական առավելություն [1, ս. 85-88]: 2000թ. մայիսի 12-ին սկսվեց եթովպական բանակի լայնածավալ հարձակումը, որը հիմնականում վարվում էր Բաղմեի ուղղությամբ և զարգանում էր բավական հաջող [12]: Հարձակումն ինչ-որ առումով անակնկալ եղավ մյուս կողմի համար, քանի որ սկսվեց մի փոքր ուշ և չսպասված տեղում: Եթովպական բանակը կարողացավ խարել հիմնական հարվածի հարցում. նրա գործողությունները շաբան չէին. գաղտնի թիկունք էին տեղափոխվել դիվերսիոն ուժեր՝ հրետանային, հակատանկային միջոցներով, և դրանցով անակնկալ հարված հասցվեց՝ գորքերի ճակատային հարվածների հետ միաժամանակ:

<sup>1</sup> Ուստական որոշ արդյուներ պնդում են, որ երկու կողմում է որպես օդաշուներ հիմնականում գործել են ոռու ու ուկրաինացի մասնագետները:

Գրագետ գրոհները, որոնք հասցվում էին հրետանու և օդուժի խելամիտ կենտրոնացված հարվածներով, մի քանի շաբաթում ջախջախեցին Երիթրեական 13 դիվիզիա: Արդեն մայիսի 25-28-ին եթովպական բանակը սպառնում էր մտնել Երիթրեայի մայրաքաղաք Ասմերա: Եթովպացիները գործում էին գրագետ, հարվածները հասցնում էին արագ և ոչ միշտ՝ ճակատային գրոհներով, քաղաքները հիմնականում շրջանցում էին՝ թողնելով գրոհող խմբերին, օդուժին և հրետանուն: Արևելքում ևս եթովպական բանակը գրեթե գրավել էր Ասեր ծովային քաղաքը, երբ ավարտվեց պատերազմը: Կողմերը պատերազմի ընթացքում ամենահամեստ տվյալներով կրել են 30-40 հազար զոհ: Հրադադարի կնքումից հետո տարածաշրջանում էին խաղաղապահները, բայց երբ Երիթրեան արբիտրաժային դատարանով հետ ստացավ Բաղմեի շրջանն ու քաղաքը, իրավիճակը կրկին սրվեց: Կողմերն այս պահին տարածաշրջանում գորքեր են պահում մարտական վիճակում, իրավիճակը մշտապես լարված է, ուղեկցվում է երկուստեք սաղրանքներով և զոհերով:

Այս պատերազմին գրեթե զուգահեռ՝ Հնդկաստանի հյուսիսարևմտյան մասում ընթանում էր մեկ այլ պատերազմ, որը ևս իր բնույթով և առանձնահատկություններով մեզ համար ուսանելի կարող է լինել:

Հնդկաստանի և Պակիստանի միջև ընթացող հակամարտությունը շատերին է հայտնի: Հնդկաստանը Պակիստանի սահմանային հատվածում ունի մի տարածք՝ Կարգիյան բարձունքները, որոնց միջին բարձրությունը կազմում է մոտ 3800-4000 մ, որոշ գագաթներ ունեն 5000-5300 մ բարձրություն: Դրանք վիճելի տարածքներ են, երկար ժամանակ հսկվում են հնդկական գորքերի կողմից, սակայն քանի որ անանցանելի են դառնում սեպտեմբերից հետո, գորքերը ձմեռային ժամանակ հանվում են, և հսկողությունը հաստատվում է միայն մայիսի վերջ-հունիսին: 1998թ. ձմռանը պակիստանյան կողմը քաղաքական տարբեր շարժառիթներով որոշեց դիմել արկածախնդրության: Փետրվար-մարտին Պակիստանի բանակի որոշ ուժեր, մասնավորապես՝ լավ պատրաստված զինյալներ, թեթև լեռնագրոհային հետևակի ուժերը (մինչև 5000 զինծառայող կազմով) գրավեցին լրված բարձունքները: Հնդկական կողմը, ոչինչ չիմանալով այդ մասին, մայիսի սկզբին սովորականի նման փորձեց կրկին գրադեցնել իր մարտական դիրքերը, սակայն ընկավ պակիստանյան բանակի դարանը: Մարտական առաջին գործողությունները տեղի ունեցան մայիսի 6-7-ին: Անակնկալից ուշի գալով՝ հնդկական կողմն արդեն մայիսի կեսերին

սկսեց լայնածավալ մարտական գործողությունների նախապատրաստությունը: Հունիսի վերջին արդեն հնդկական զորախումբը կազմում էր ավելի քան 730 հազար զինվոր ու սպա [13, ս. 102]: Մայիսի 26-ին հնդկական բանակը սկսեց «Վիջայ» կոչվող ռազմագործողությունը, որին ակտիվորեն ներգրավված էին միայն հատուկ լեռնային պատրաստություն ունեցող զորքերը, իրետանին և օդուժը, մոտավորապես 300 միավոր իրետանային միջոցներ, մեծ մասամբ հառւիցներ և ականանետեր, որոնք կարող էին կրակել մեծ անկյան տակ<sup>1</sup>: Տարածաշրջանում կուտակվել էր նաև ավելի քան 300 ինքնաթիռ՝ հարվածներ հասցնելու և հետախուզության համար, ինչը չափազանց կարևոր էր: Ամեն մի բարձունքը գրավվում էր լուրջ պատրաստությունից, առանձին հետախուզությունից, հզոր օդային և իրետանային հարվածից հետո՝ անմիջական օդային ու իրետանային աջակցությամբ: Երբեմն բարձունքներ կային, որոնք գրավվում էին միայն 5000 իրետանային կրակոցից հետո միայն, իսկ ընդհանուր առմամբ հնդկական կողմը նշում է, որ ծախսել է մոտ 250 հազար իրետանային արկ (հիմնականում 155 մմ-ոց<sup>2</sup>): Այսինքն՝ մարտական գործողություններն ինչ-որ առումով սովորական չեին, հատուկ էին: Մարտական գործողություններն ավարտվեցին հուլիսին, հնդկական կողմի հաղթանակով: Ինչպես նկատեցինք, այս պատերազմները սովորական չեին մի քանի պատճառով: Փորձենք դրանց հիմնական դասերն ամփոփել ըստ հիմնական առանձնահատկությունների, զորատեսակների և այլն:

- Եթովպական պատերազմը ցույց տվեց, որ պետության բնակչության 5-6-ակի գերազանցությունն անգամ որոշիչ չէ, և մարտական գործողությունների ժամանակ նախապես անցկացված համապատասխան պատրաստության դեպքում կարելի է բանակի թվաքանակը հասցնել մի քանի անգամ մեծ հակառակորդի բանակի թվաքանակին: Այս իրավիճակը որոշակի նմանություն ունի մեր իրավիճակին:
- Ինտենսիվ մարտական գործողություններն արագորեն սպառում են պետությունների երկարամյա կուտակումները, և միջոցները սպառվում են: Սկսվում են որոշակի դադար ու նոր մրցավազք:
- Ցամաքային լայնածավալ մարտական գործողությունները, որոնք հիմնականում համարվում են չորրորդ սերնդի պատերազմների գործոննե-

<sup>1</sup> 1999 Kargil Conflict // Веб-страница <http://www.globalsecurity.org/military/world/war/kargil-99.htm>

<sup>2</sup> Նույն տեղում:

ից, վարվում են կրկին մեծ զնիերի գնով, և հատկապես ամրաշինական կառույցները հաղթահարելը չափազանց բարդ և դժվարին գործ է, ինչը պահանջում է մեծաքանակ զրահատեխնիկա, հրետանու հզոր ու զրագետ կրակ, մեծ զնիեր: Ներկայումս մեր սահմաններն Ադրբեջանի հետ հագեցած են նման ամրաշինական կառույցներով:

- Հագեցած ամրաշինական կառույցները չափազանց կարևոր են, մեզանում դրանք նաև ամրացված են լեռնային տեղանքով, որը չկար Եթովպիայում:
- Զրահատանկային միավորները որքան էլ որ արագազործ են, չեն կարող հետևակից անջատ գործել, քանզի ընկնում են հակառակորդի դարանները, մասնավորապես՝ օդուժի ու հրետանու կրակի տակ: Կտրվելով համազորային լիարժեք համազործակցությունից՝ զրահատանկային միջոցները խոցելի են դառնում: Համազորային լիարժեք համազործակցությունը պարտադիր է, եթե վարվում է ընդհանուր համազորային մարտ:
- Նույն ժամանակ, սակայն, եթե կողմերից որևէ մեկն անզամ սահմանափակ, բայց լավ կազմակերպված գործողությունների է դիմում այլ գորատեսակներով, ինչպիսիք են, օրինակ, օդուժը, հատուկ նշանակության գորքերը և այլն, ապա կարող է ունենալ լուրջ մարտավարական հաջողություններ: Խոսքը վերաբերում է օդային հարվածներին, մեծ տեղ ունեն դիմերսիոն գործողությունները, մասնավորապես՝ հակառակորդի թիկունքում և թևերում գործող մարտական խմբերը՝ մինչև անզամ ուժեղացված գումարտակի կազմով: Սա կարող է համարվել ընդհանուր առմամբ չորրորդ սերնդի պատերազմների մեջ բացառիկ դրսերում, արդեն հինգերորդ սերնդի պատերազմ:
- Կարգիյան պատերազմից հետո հնդկական կողմն իր համար հետաքրքիր եզրակացություններ կատարեց այս առանձնահատուկ մարտական գործողություններից, որոնք յուրահատուկ են մի քանի առումներով: Բարձրեռնային տարածքում ընթանում էին այնպիսի գործողություններ, որտեղ մեծաքանակ զորքերը միաժամանակ մարտական խնդիրներ չէին կատարում, իիմսականում գործում էին գումարտակի կազմով: Զրահատեխնիկան իսպառ բացակայում էր, մեծ տեղ էր հատկացված հրետանուն և օդուժին: Չկար դասական համազորային մարտ:

- Բարձրեռնային տեղանքում մարտական գործողությունները լրացուցիչ շանքեր են պահանջում հետախուզության ապահովման, զորքերի տեխնիկական և թիկունքային ապահովման համար: Սա, ըստ էության, կարևոր գուգահեռներ ունի մեր նախիջևանյան և Տավուշի հատվածների հավանական մարտերի հետ:
- Նման իրավիճակներում օդուժի և հրետանու խելամիտ կիրառությունը չափազանց կարևոր է: Հնդկական օդուժն առաջին անգամ համեմատաբար մեծ քանակով կիրառում էր ռեկավարվող ավիաոռումբեր: Երբեմն լինում էին դեպքեր, երբ այս կամ այն բարձունքին հասցված հզոր օդային և հրետանային հարվածն այնքան նշանակալի էր լինում, որ գրոհող խմբերը մեծ խնդիրներ չեն ունենում դրանք գրավելու հարցում: Որոշ բարձունքներ այդ ժամանակ վերցվում էին 30-40 հոգանոց խմբերով:
- Հնդիկ իրամանատարները պնդում են, որ նման իրավիճակում հնդկական քանակի խորհրդային և արևմտյան բոլոր հրետանային միջոցներից լավագույնը 155 մմ-ոց շվեդական FH-77B հառլիցն էր, որի առավելությունների մասին էին նշում անգամ պակիստանցիները [14, p. 282-283]: Որոշվեց անգամ հետազայում մեծացնել այս զենքերի ձեռքբերման ծավալները:
- Ինչպես ցույց տվեց XX դարի վերջին դասական պատերազմը, ցամաքային պատերազմներում օդուժի դերը որոշիչ չի կարող լինել անգամ նորագույն տեխնոլոգիաների, գերճշգրիտ զենքերի կիրառության դեպքում, եթե դրանք չեն կիրառվում մեծ ինտենսիվությամբ ու կազմակերպվածությամբ, հատկապես այլ զորատեսակների հետ համագործակցության առումով: Օդային հարձակման գերճշգրիտ միջոցները, չնայած արդյունավետ կիրառությանը<sup>1</sup>, եղել են ընդամենը մի քանի օրինակով: Կարգիլյան պատերազմում դրանք սահմանափակ խնդիրներ էին լուծում, դրա համար էլ արդյունավետ էին, իսկ լայնածավալ պատերազմի ժամանակ դրանք արդյունավետ են լինում միայն մեծ ինտենսիվությամբ կիրառելիս: Եթովպական օդուժի 10-ակի գերազանցությունը և երիթրեական տարածքի ոմբակոծություններն առարկայորեն ոչինչ

<sup>1</sup>Այս պատերազմում ռուսական զենքի կիրառությունը եղել է բացառիկ հաջող և արդյունավետ, թեկուզ ոչ մեծ ծավալներով: Նման արդյունավետություն չի եղել ոչ մինչ այդ, ոչ հետագայում, նույնիսկ անմիջապես ռուսական ՌՕՌ-ի դեպքում:

շովեցին մարտական գործողություններին: Օդային հարձակման միջոցների հարցում նույն իրավիճակն էր նաև 1994թ. ապրիլից մինչև հուլիսը Հյուսիսային և Հարավային Եմենների միջև պատերազմում, երբ կողմերն ակտիվորեն իրար վրա էին արձակում խորհրդային *Լուհա M, Տօչկա* մարտավարական և *Скал Թ* օպերատիվ-մարտավարական հրթիռներ: Ընդհանուր առմամբ, այս կարձատն պատերազմի ընթացքում երկու կողմից արձակվել էր մոտավորապես 300 նման հրթիռ, որոնք, սակայն, հիմնականում իրենց թույլ դիպուկության պատճառով արձակվում էին քաղաքների ուղղությամբ և մեծ ազդեցություն չթողեցին մարտական գործողությունների վարման վրա [15, с. 44]:

- Եթովպական պատերազմի օդային մարտերի մանրամասն նկարագրությունը ցույց է տալիս, որ *МиГ-29*-երի համար ճակատագրական են փոքր թոփքի հեռավորությունը, փոքր ուժատարողությունը, ընդամենը երկու միջին հեռահարության հրթիռի հնարավորությունը, ինչպես նաև կրակի դեկավարման համակարգի այլ խնդիրներ: *Cy-27*-ը սովորաբար կրում է վեց նման հրթիռ: Պատերազմից հետո Էրիթրեան ստիպված ևս գնեց ոռուսական նման կործանիչներ<sup>1</sup>:
- *МиГ-29*-երի առումով նույն վիճակն էր նաև Հնդկաստանում: Բարձրեռնային պայմաններում ոչ մի խորհրդային արտադրության ինքնաթիռ և հարվածային ուղղաթիռ չկարողացավ մարտական խնդիրը կատարել անհրաժեշտ որակով [16]: Ի վերջո, հիմնական թերու ընկավ ֆրանսիական *Mirage-2000* կործանիչի վրա, որին ուղեկցող *МиГ-29*-երը ընդամենը 20 րոպե էին կարողանում ուղեկցել վերջիններիս<sup>2</sup>: Ֆրանսիական այս կործանիչները գերճշգրիտ հարվածներ էին հասցնում *Matra PGM 1000* կզ ռումբերով, որոնք արդյունավետ խոցում էին հակառակորդի հենակետերը և թիկունքային ռազմաբազաները<sup>3</sup>: Նկատենք, որ հար-

<sup>1</sup> Այստեղ երեսն եկան նաև այլ խնդիրներ, մասնավորապես՝ միջին հեռահարության ռուսական համապատասխան հրթիռները, փաստորեն, այնքան էլ հուսալի չէին: Դրանք հիմնականում անարդյունավետ էին գործում, հաշվվել է մոտ 24 արձակում, որոնք չեն հասել նշանակետներին:

<sup>2</sup> Ю.Голдаев, Мираж-2000 в Каргильском конфликте 1999г., <http://www.airwar.ru/locwar.html>; Defence News, 30.10.2000. Philip Camp, The Mirage-2000 at Kargil, <http://www.bharat-rakshak.com/IAF/History/Kargil/PCamp.html>.

<sup>3</sup> Ved S., Operation Safedsagar: A New Chapter in History of Military Aviation // Bharat Rakshak Monitor, Volume 2(2), 1999; հակամարտությունում հնդկական ավիացիան կիրառել է մոտավորապես 9 կառավարելի ավիառումբ:

վածների համար խորհրդային կործանիչն ընդհանրապես չկիրառվեց, իսկ որպես կործանիչ էլ իր թռիչքի հեռահարության պատճառով կարողանում էր ուղեկցել ընդամենը 20 րոպե, այսինքն՝ ոչ մարտական գոտում: Հատուկ նշենք, որ *Mirage-2000* և *MiG-29* կործանիչները համարվում են նույն սերնդի և մրցակից մեքենաներ: Խորհրդային այս կործանիչը նույն թերությունների պատճառով նույն ձակատագրին արժանացավ նաև նույն թվականին ընթացող Հարավսլավիայի պատերազմում: Պատահական չէր, որ վերջին տարիներին հնդկական բանակի համար գրեթե բոլոր տեսակի մարտական թռչող սարքերի մրցույթներում ռուսական մեքենաները պարտվում են: Ահա իրական բացատրությունը: Կործանիչների կիրառության այս հարցերը մեզ համար առարկայական նշանակություն ունեն, քանզի մենք դրանց ձեռքբերման ձանապարհին ենք, և թեկնածուները նույն մեքենաներն են:

Մեր կարծիքով, հոդվածում քննարկված հարցերը և եզրակացությունները խիստ այժմեական են նաև մեզ համար: Բերված օրինակներում մեծ է հենց խորհրդային ռազմական դպրոցի, ավանդույթների և սպառագինության դերը, ինչը կրում ենք նաև մենք ու դրանց կատարելագործման փուլում ենք այսօր: Ներկայումս, երբ պատերազմների սերնդափոխություն է տեղի ունենում, մեզ համար այս օրինակները կարևոր են հետևողունների իմաստով: Ամեն ինչից զատ, տարածքային պատերազմի օրինակներն իրենց երկարատևությամբ, տեղանքի առանձնահատկություններով և այլ բաղադրիչներով ես նման են: Այսօր մենք մեր բանակի պատրաստության և մարտական գործողությունների վարման հավանական սցենարներում այս օրինակների հետ համընկնող հարցեր ու խնդիրներ շատ ունենք: Դրանք են:

- Պետությունն իր բոլոր ճյուղերով (տնտեսություն, հասարակական թև և այլն) պատերազմի պատրաստելը:
- Ամրաշինական կառույցներով հագեցած պաշտպանական բնագծերի հաղթահարման խնդիրները (տվյալ դեպքում, ինչպես պաշտպանվելիս, այնպես էլ հարձակողական գործողություններ վարելիս):
- Գրագետ հարձակումների և ձեղքումների իրականացումը, զրահատանկային միավորների կիրառությունը:

- Պաշտպանության կազմակերպումը բարդ իրավիճակներում, մասնավորապես՝ լեռնային տեղանքում:
- Հավանական են դառնում անկանոն, ոչ դասական պատերազմների կիրառման մոդելը և մասնակիորեն համագորային մարտից հրաժարվելը, թեկուզ հատուկ դեպքերում: Մեզ սպասվող պատերազմն ամենայն հավանականությամբ կլինի դեռ չորրորդ սերնդի, սակայն այն կունենա ինչպես նոր՝ հինգերորդ, այնպես էլ հին՝ երրորդ սերնդի պատերազմներին բնորոշ որոշակի դրսևորումներ:
- Չորատեսակների համագործակցության խնդիրները, հատկապես անկանոն գործողությունների ժամանակ:
- Մեր հակառակորդը ներկայումս Նախիջևանում համագորային բանակ է ստեղծում, և այդ օպերատիվ ուղղությունը շատ նման է Կարգիյան թատերաբէմին, որին նման է նաև Տավուշի հատվածը, որտեղ հակառակորդը տարեցտարի ավելացնում է լարումը: Հետևաբար, Հնդկաստանում 1999թ. տեղի ունեցած մարտական գործողություններից մենք վերցնելու շատ բան ունենք, հարկավոր է մանրամասն ուսումնասիրել դրանք (լեռնային տեղանքի մարտական գործողություններ, որոնք շատ դեպքերում վերածվում են հատուկ գործողությունների), դրանց վարման առանձնահատկությունները, տեխնիկական ապահովումը, հետախուզությունները և այլն:
- Փոքր մարտական գրոհող խմբերի մարտավարությունը, որը մենք փայլուն կիրառել ենք պատերազմի նախորդ փուլում:
- Օդուժի կիրառության ձևաչափերը, մասնավորապես՝ կործանիչների ձեռքբերման հարցերը և այլն:

*Մայիս, 2015թ.*

### Աղյուրներ և գրականություն

1. Коновалов И., Война между Эфиопией и Эритреей. Чужие войны. Под. ред. Р.Пухова, М., 2012.
2. Жирохов М., Шаповаленко М., Последняя Классическая война XX века // История авиации, N1, 2002.
3. Ethiopia And Eritrea. Acrimonius divorce // IISS Strategic Comments, Vol. 6, N2, March 2010.

4. *Б.Кузык, Н.Новичков, В.Шварев, М.Кенжетаев, А.Симаков*, Россия на мировом рынке оружия. Анализ и перспективы, М., "Военный парад", 2001.
5. Africa Research Bulletin, Vol. 36 N2, p. 13424; *Negash T. and Tronvelli*, Brothers at War. Making Sense of the Eritrean-Ethiopian War, Ohio Press University, 2001, p. 2.
6. Euthopiaplans renewed offensive // Jane's Intelligence review 01.04.2000; No compromise for Eritrea and Ethiopia // Janes Intelligence Review 01.01.2001.
7. *Котлобовский А.В.*, Оправдавший предназначение, Авиация и Время, № 6, 2007.
8. *Жирохов М.А., Шаповаленко М.*, Последняя классическая война XX века, История Авиации, № 2, 2002.
9. *Жирохов М.А., Шаповаленко М.*, Последняя классическая война XX века, История Авиации, № 3, 2002.
10. *Wasilewski Jacek*, Wojna etiopsko-eritrejska w powietrzu, cz. I, in Lotnictwo, No. 5, 2005.
11. *Wasilewski Jacek*, Wojna etiopsko-eritrejska w powietrzu, cz. II, in Lotnictwo, No. 6, 2005.
12. Euthopiaplans renewed offensive // Jane's Intelligence Review, 01.04.2000; Africa Research Bulletin. Vol. 37, N5, p. 13959.
13. *Барабанов М.*, Индо-пакистанский конфликт в Каргиле. Чужие войны, под ред. Р.Пухова, М., 2012.
14. *Shaukat Q.*, An analysis of the Kergil conflict 1999 // The RUSI Journal, 147 (April 2002); World Defence Almanac 2002-2003.
15. *Куделев В.*, Вооруженный конфликт между Северным и Южным Йеменами. Чужие войны, под ред. Р.Пухова. М., 2012.
16. Institute of Peace and Conflict Studies. New Delhi. Article №546, 17.08.2001; Foreign Affairs, January/February 2002, p.115; *Джоунс Родни*, Ядерная стратегия Пакистана: в поисках гарантированного сдерживания // Ядерное распространение, выпуск 34, январь-март 2000, с. 37; *Шилин А.А.*, Стратегический баланс в Южной Азии, М., 2004, с. 108-109.

## XX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԴԱՍԵՐԾ

### Արձրուն Հովհաննիսյան

Ամփոփագիր

XX դարի վերջին աշխարհում տեղի ունեցած պատերազմներից և մարտական գործողություններից կան երկուսը, որոնք իրենց բնույթով և մարտական գործողությունների առանձնահատկություններով մեզ համար կարևոր են և օրինակելի:

1998թ. կրկին սկսվեց Եթովպա-էրիթրեական նոր պատերազմը: Եթովպական բանակը սկզբում մեծ հաջողություններ չուներ, սակայն այն վերածվեց հյուծման պատերազմի երկու կողմերի համար էլ:

Այս պատերազմին զուգահեռ Հնդկաստանի հյուսիսարևմտյան մասում ընթացող պատերազմը ևս մեզ համար ուսանելի կարող է լինել:

Մենք կարծում ենք, որ հոդվածում քննարկված հարցերը և եզրակացություններն այժմեական են նաև մեզ համար: Այսօր մենք մեր բանակի պատրաստության և մարտական գործողությունների վարման հավանական սցենարներում այս օրինակների հետ համընկնող հարցեր ու խնդիրներ շատ ունենք:

## УРОКИ ПОСЛЕДНИХ ВОЙН ХХ ВЕКА

*Արցրւն Օվանիսսյան*

### Резюме

Среди войн и боевых действий конца XX века две войны для нас особенно важны и показательны по своему характеру и специфике боевых действий.

В 1998г. возобновилась эфиопско-эритрейская война. Эфиопская армия вначале не добилась большого успеха, однако боевые действия превратились в войну на истощение для обеих сторон.

Одновременно с этой войной на северо-западе Индии шла другая война, которая может послужить нам примером.

Мы считаем, что обсуждаемые в статье вопросы и выводы актуальны и для нас. На сегодня в подготовке нашей армии и вероятных сценариях ведения боевых действий есть много вопросов и проблем, совпадающих с этими примерами.

## THE LESSONS OF THE LAST WARS OF THE 20<sup>TH</sup> CENTURY

*Artsrun Hovhannisyan*

### Resume

Among the wars and military clashes of the late 20<sup>th</sup> century there are two that seem important and archetypal for us in terms of their nature and peculiarities of military operations. In 1998 a new war broke out between Ethiopia and Eritrea. The Ethiopian army initially had no much success, but later it turned into a war of attrition for both belligerents.

Another war that went on in parallel in northwestern part of India can also be a learning point for us.

We believe the problems discussed in the article and its conclusions are up-to-date for us, too. There are many questions and issues that correlate with those related to readiness of our army and possible scenarios of military operations.

**ԱՆՀԱՄԱՉԱՓ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ  
ԱՆՁԱՏՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԽXI ԴԱՐԻ  
ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿ**

***Մերոք Սուցյան՝***

*Բանալի բառեր՝*<sup>1</sup> ազրեսիա, ահարեկչություն, անկախություն, անհամաշափ, անջատողականություն, դիվերսիա, կրոն, հակամարտություն:

Նախկին զանգվածային բախումներով մասշտաբային գլոբալ պատերազմներին այսօր փոխարինելու են եկել տարածաշրջանային, հիբրիդային, անհամաշափ պատերազմները և հակամարտությունները: Արդի ժամանակաշրջանում գերտերությունների հետ հավասարը հավասարի պայքարելու աշխարհի պետությունների զգալի մասի անկարողությունը հանգեցրել է ահարեկչական ակտերի, զինված հակամարտությունների և լոկալ կամ տարածաշրջանային պատերազմների էական աճի: Արդյունքում՝ ձևավորվել է հակամարտությունների կամ պատերազմների մի տեսակ, որը ռազմաքաղաքական տեսաբանների կողմից անվանվում է *անհամաշափ*:

Անհամաշափ կամ ասիմետրիկ պատերազմը զուտ ռազմագիտական տեսանկյունից ընդգրկուն հասկացություն է և, ըստ Էության, ներառում է պաշտպանության և հարձակման վերաբերյալ ժամանակակից ռազմական գիտության ոլորտում առկա մի շարք հայեցակարգեր ու ենթադրում է դրանց համադրությունը՝ պայմանավորված պատերազմի բնույթով ու նպատակներով, պատերազմի ընթացքում ի հայտ եկած կոնկրետ խնդիրներով: Ռազմական ուղիներից զատ, անհամաշափ պատերազմի ռազմավարությունը ենթադրում է թշնամուն այլընտրանքային, ոչ ռազմական ձանապարհով թուլացնելու հնարքների ակտիվ կիրառություն:

Ներկայումս աշխարհի մի շարք տարածաշրջաններում ընթանում են տարբեր բնույթի գործողություններ, որոնց մեծ մասը պարունակում է անհամաշափ պատերազմներին և հակամարտություններին բնորոշ տարրեր:

<sup>1</sup> Փոխգնդապետ, ՀՀ ԶՈՒ ԳԴ ռազմատեղագրական բաժին, աշխ.գիտ.թ.:

Տարեցտարի այդ գործողություններում ավելանում են անհամաշափ մարտավարությանը հասուկ ահաբեկչությունն ու դիվերսիան:

Եթե ավանդական պարտիզանական շարժումները ձգտել են հակառակորդի նկատմամբ հասնել համաշափության, իսկ հետո հաղթել նրան զինված պայքարում, ապա ահաբեկչականի պարագայում այդ խմբերը ձգտում են կոտրել հակառակորդի բարոյահոգեբանական ներուժն առանց նրա ռազմական մեքենայի հետ անմիջական շփման պայմաններում: Միևնույն ժամանակ, նրանք ընտրում են առավել խոցելի տեղերը՝ ուղղակիորեն շրջանցելով բոլոր ռազմական արգելքները, պաշտպանական մեխանիզմները, որի ստեղծման համար ներդրվել են մեծ միջոցներ՝ անվտանգությունն ապահովելու համար:

Ահաբեկչական գործողություններից ներկայումս լայն կիրառում ունեն անջատողական և քաղաքական ու հատկապես կրոնական տեսակները: Մասնավորապես, իսլամական ահաբեկչության դեպքում հազվադեպ են քննարկվում պայքարի նպատակները, և մարտական գործողությունների մասնակցող անձնակազմի հոգեբանական վիճակն ամբողջությամբ բնութագրվում է «հաղթանակ կամ մահ» կարգախոսով: Հաճախ օգտագործվում են պայթուցիկ սարքավորումներ, ինքնառջնացումներ, զինված հարձակումներ, նպատակային սպանություններ, փոխանակում կատարելու նպատակով երբեմն հակամարտության հետ կապ չունեցող մարդկանց առևանգում, բնակչության շրջանում վախի մթնոլորտի ձևավորում և այլն: Օգտագործվող միջոցներն ունեն լայն տիրույթ: ավանդական սպառագինությունից մինչև քիմիական գենք, լայնորեն կիրառվում են նաև հոգեբանական պատերազմի մեթոդները:

Աշխարհաքաղաքական զարգացումների արդյունքում 21-րդ դարի առաջին երկու տասնամյակի ռազմական հակամարտությունների հիմնական ձևը դարձել են ահաբեկչությունը և պայքարը դրա դեմ: Ահաբեկչությունն ընդգրկում է ինչպես դասական դիվերսիոն պատերազմները, այնպես էլ կենդանի ուժի նպատակային ոչնչացումը պայթեցումներով, հաճախ՝ մահապարտների միջոցով: 21-րդ դարը սկսվեց անհամաշափ պատերազմի տեսակ համարվող զանգվածային ահաբեկչական գործողությամբ, երբ 2001թ. սեպտեմբերի 11-ին «Ալ Քահիդայի» մահապարտների գործողությունների արդյունքում ոչնչացվեցին Նյու Յորքի 2 երկնաքերերը և հարձակում կատարվեց Պետագոնի վրա: Այս իրադարձություններն ունեցան, ինչպես զիտենք, զլորալ հետևանքներ՝ պատերազմներ Աֆղանստանում, Իրաքում և այլն:

Անհամաշափ պատերազմների պրակտիկան այն է, որ հակամարտության այս տիպը կարելի է հիմնովին ընդգրկել պատերազմ հասկացության մեջ, որը հաստատվում է վիճակագրական տվյալներով. 1990թ. հունվարից մինչև 2012թ. մարտ ահաբեկչական գործողությունների (հարձակումների) արդյունքում ամբողջ աշխարհում մահացել է 8254 և վիրավորվել 12576 մարդ, ընդ որում՝ 1990-ականների համեմատ այդ թիվը 21-րդ դարի 1-ին տասնամյակում ավելացել է 560 անգամ: Այս սպանդն իր տեղն է գտել մի ժամանակահատվածում, որը պատմաբաններն ու քաղաքագետները համարում են արդյունաբերական երկրների համար խաղաղ: Այս առումով կարևոր է ցույց տալ, որ Պարսից ծոցում իրաքյան 2-րդ պատերազմում կոալիցիայի կորուստները կազմել են 4836 մարդ, որը վերջին 20 տարվա անհամաշափ հակամարտությունների ընթացքում եղած զոհերի կեսից մի փոքր ավելի է: Հարկ է նշել, որ ներկայի անհամաշափ հակամարտություններում ակտիվ է արմատական խլամը, սակայն ներկայացված են նաև ոչ խլամական ուժեր. փորձենք թվարկել այդ կազմակերպությունները.

- Մերձավոր Արևելքում - «Համաս» (Իսլամական ընդդիմադիր շարժում), լիբանանյան «Հրզբոլլահ» (Աստծո կուսակցություն), ալ-Ակսիի նահատակների բրիգադ, Ֆատահ Թանզիմ, Պաղեստինի ազատագրության ազգային ճակատ, Պաղեստինի խլամական զիհադ, Թուրքիայի ազգային ժողովրդավարական ազատագրության ճակատ կուսակցություն, Մեծ Արևելքի հեծյալների խլամական ճակատ, և, իհարկե՝ «Ալ-Քահիդա» ու «Խլամական պետություն»:**
- Աֆրիկայում - «Բոկո Զարամ» (Նիգերիա), «Ալ Շաբաար» (Սոմալի), «Անսար աշ Շարիա» (Թունիս, Լիբիա):**
- Եվրոպայում - բասկերի ԷՏՍ շարժում, «Արմատա Կորսա» (կորսիկական բանակ), Իռլանդական հանրապետական բանակ:**
- Լատինական Ամերիկայում - պերուական «Տուպակ-Ամարու» և «Փայլող ուղի» (Սեն-դերո Լումինոս), կոլումբիական Ազգային-ազատագրական բանակ և հեղափոխական զինված ուժեր:**
- Ասիայում - ճապոնական «Վերին Ճշմարտություն» (Առում Սինրիկյո), Կարմիր բանակ, «Անսար ալ Իլամ» (խլամի մարտիկներ), «Հիզբ-ալ մոջահեդին» Քաշմիրում, Թամիլ-Իլամի ազատագրության Վագրեր, Ուզբեկստանի խլամական շարժում և պակիստանյան Լաշկարե-Թայբա:**

Թեև իսլամական արմատականությունը ներկա պահին անհամաշափ պատերազմի ոլորտում գլխավոր դերակատարն է, այնուամենայնիվ, այն չպետք է բերի մեզ սխալ եզրակացության, և պետք է գիտակցենք, որ իսլամական աշխարհում գոյություն ունի խոր տարանջատում չափավոր իսլամիզմի, որը քարոզում է մարդկանց միջև բարիդրացիական հարաբերությունները և քննադատում է ահաբեկչությունը, և արմատական իսլամիզմի միջև, որը պաշտպանում է շարիաթի կրոնական օրենքը, ձգտում է գլոբալ խալիֆայության ստեղծման և արդարացնում է ցանկացած բռնարարք, որը կատարվում է ջիհադի անվան տակ նպատակին հասնելու համար:

Անհամաշափ պատերազմի ահաբեկչական գործողությունների տեսակի մյուս կարևոր ձևն անջատողականությունն է: Բոլոր մայրցամաքներում անջատողականության երևույթն առկա է: Բավական է ասել, որ ներկայումս աշխարհի 95 պետությունում կան ոչ վաղ անցյալում տեղի ունեցած, ներկայումս ընթացող կամ տեսականորեն հնարավոր 292 անջատողական շարժում և պայքար: Դրանց մեծագույն մասն ունի ռազմական բնույթ, և միայն մի քանիսն են ընթանում խաղաղ ձանապարհով (օրինակ՝ շոտլանդական հանրաքվեն անկախության համար): Այսօր անջատողականության գլխավոր օջախներն են՝

**Աղբեջան - Ավարստան - Աղբեջանի հյուսիսում ապրող ժողովուրդը** ցանկանում է միավորվել Դաղստանում ապրող իրենց ազգակիցներին և ստեղծել ինքնավարություն:

**Թալիշստան - 1993թ. հունիսին թալիշները Աղբեջանի հարավային 7 շրջաններում հռչակել են Թալիշ-Մուղանի ինքնավար հանրապետություն՝ 4 658 կմ<sup>2</sup> տարածքով: Սակայն նույն թվականի օգոստոսին աղբեջանական իշխանություններին հաջողվեց բռնի ուժով ոչնչացնել Լենքորանի իշխանությունը: Անկախանալու և սեփական պետություն ունենալու գաղափարը թալիշների մոտ հիմա էլ առկա է:**

**Լեզգիստան - լեզգիներն Աղբեջանի հյուսիսում ձգտում են անկախության կամ վերամիավորման Դաղստանի հարավում ապրող իրենց ազգակիցների հետ:**

**Ամերիկայի Միացյալ Նահանգներ - ԱՄՆ հարավ - ինքնավարության պահանջով հարավային նահանգների միավորումով ձգտում են վերականգնել նախկինում 1.995.392 կմ<sup>2</sup> մակերես զբաղեցնող տարածքով Ամերիկայի**

Համադաշնային Նահանգներ անվանումով պետությունը: ԱՄՆ հարավը ոչ պաշտոնական անվանում են Դիքսիլենդ: Այս տարածաշրջանը ԱՄՆ ամենազարգացած տնտեսաաշխագրական շրջանն է:

**Տեխաս** - նահանգի անջատականները կարծում են, որ 1845թ. Տեխասն անօրինական անեքսիայի է ենթարկվել, և ներկայումս այն օկուպացված տարածք է ԱՄՆ-ի կողմից: Տեխասի անջատողական շարժում կազմակերպությունը ցանկանում է ստեղծել Տեխասի Հանրապետություն անկախ պետությունը՝ նահանգի սահմաններում:

Ընդհանուր առմամբ ԱՄՆ-ում առկա է անջատողականության 13 օջախ:

**Անգոլա** - **Կարինդա** - հիմնականում Կոնգոյում և Անգոլայում ապրող բանտու խմբի ընդհանուր 2 մլն թվաքանակով քրիստոնյա ժողովուրդը ցանկանում է ստեղծել Լունդա Չոկվե միացյալ թագավորությունը: Կարինդայի համար երբեմն-երբեմն զինված ընդհարումներ են տեղի ունենում:

**Աֆղանստան** - **Թալիբներ** - իսլամական շարժումը, որը ստեղծվել է 1994թ. փուլշտունների միջավայրում, Աֆղանստանը կառավարել է 1996-2001թթ., որը կոչվել է Աֆղանստանի Իսլամական Էմիրություն: 2004-ից դեկավարել է նաև Վազիրիստանի տարածաշրջանը, որը գտնվում է Պակիստանի հյուսիսում և կոչվել է Վազիրիստանի Իսլամական Հանրապետություն:

**Հազարստան** - շիա մահմեդական հազարները ցանկանում են ստեղծել անկախ պետություն արդի Աֆղանստանի տարածքի կենտրոնական հատվածում: Իրենց ապագա երկրի մայրաքաղաքը հազարները համարում են Բամիյանը:

**Բելգիա** - **Ֆլամանդական տարածաշրջան** - նպատակն է ստեղծել Ֆլանդրիա պետությունը: Միավորում է Բելգիայի հյուսիսային 5 պրովինցիաները, որոնք միասին ունեն  $13.522 \text{ կմ}^2$  տարածք և 6.353 հազար բնակիչ: Պաշտոնական լեզուն նիդեռլանդերենն է:

**Վալլոնական տարածաշրջան** - նպատակն է ստեղծել Վալլոնիա պետությունը կամ միավորվել Ֆրանսիային: Միավորում է Բելգիայի հարավային 5 պրովինցիաները, որոնք միասին ունեն  $16.844 \text{ կմ}^2$  տարածք և 3.498 հազար բնակիչ: Առավել տարածված լեզուն ֆրանսերենն է:

**Եմեն** - **Հարավային Եմեն** - չնայած 1990թ. 2 Եմենների միավորմանը, այնուամենայնիվ, մինչ օրս հարավային հատվածում պահպանվում են անջատական տրամադրությունները:

**Թափլանդ** - *Մահմեդականներ* - ուզում են ազգային անախ պետություն ստեղծել Նարատիհվատ և Սունգախ Կողոկ պրովինցիաներում, որտեղ հաճախակի են զինված ընդհարումները: Ներկայումս իրենց ազդեցության ոլորտում են պահում Նարատիհվատ, Պատտանի և Յալա պրովինցիաները:

**Թուրքիա** - *Քրդաստան* - նպատակն է թուրքիայի Իրանի, Իրաքի, Սիրիայի տարածքում ապրող 35-40 մլն քրդերին մոտ 500 հազար կմ<sup>2</sup> տարածքով պետությունում միավորելը:

**Իսպանիա** - *Բասկերի երկիր* - Իսպանիայի մարզ հանդիսացող Բասկերի երկրի մեջ մտնող Բիսկայա, Գիպուտկոռա և Ալավա պրովինցիաները և Նավարան ցանկանում են ստեղծել Բասկերի երկիր անկախ պետությունը, որը ներառելու է նշված մարզերը և Ֆրանսիայի ծայր հարավարևմտյան՝ բասկերով բնակեցված Լաբուրդան, Զուբերու և Ներքին Նավարա շրջանները: Գլխավոր նախաձեռնող և շարժիչ ուժը Բասկերի երկիր և ազատություն ռազմական կազմակերպությունն է (ETA):

**Կատալոնիա, Վալենսիա, Բալեարյան կղզիներ** - Իսպանիայի արևելքում, հյուսիս-արևելքում և Միջերկրական ծովի արևմուտքում գտնվող ինքնավար համայնքները ցանկանում են միավորել կատալոնական բոլոր հողերը և ստեղծել միասնական անկախ պետություն՝ Կատալոնիա: Պաշտոնական լեզուներն են կատալոներենը, իսպաներենը, օրսիտաներենը:

**Իրաք** - *Իրաքի և Լիանտի իսլամական պետություն* - նպատակն է ստեղծել իսլամիքայություն, որը կմիավորի բոլոր իսլամական պետությունները՝ Հյուսիսային Աֆրիկայից մինչև Կենտրոնական Ասիա:

**Կանադա** - *Ալբերտա, Բրիտանական Կոլումբիա + ԱՄՆ Խաղաղօվկիանոսյան հյուսիս-արևմուտք, Նյուֆաունդլենդ և Լաբրադոր, Սասկաչեան*:

**Նուշալլ** - այս ժողովուրդն ապրում է Բրիտանական Կոլումբիա պրովինցիայում՝ մոտ 16.000 կմ<sup>2</sup> տարածքում: Նրանց թվաքանակը 3 հազար է: Բաժանվում են 4 հիմնական ցեղերի, որոնք համախմբված պայքարում են ինքնավարության համար:

**Քվերեկ** – անկախության համար պայքարող ամենաակտիվ շրջանն է Կանադայում, որտեղ անկախ պետության ստեղծման համար պայքարում են բազմաթիվ հասարակական և քաղաքական կազմակերպություններ:

**Մալի** - երկրի հյուսիս-արևելքում մինչև վերջերս հնչում էին կրակոցներ՝ Ազավադ պետության ստեղծման համար:

**Մյանմա** - այստեղ առավել հայտնի և ակտիվ անջատողական շրջաններն ու ժողովուրդներն են՝ *Արական*, *Կաչին*, *Կարեն*, *Մոն*, *Շան*, *Վա*, *Չին*, որոնք պայքարում են անկախության կամ ինքնավարության համար:

**Նիգերիա** - այստեղ առկա է 6 անջատողական պայքար, որոնցից գլխավորը, թերևս, երկրի հյուսիս-արևելքում «Բոկո Ջարամ» իսլամական շարժման պայքարն է, որոնք ցանկանում են ստեղծել իսլամական խալիֆայություն՝ շարիաթի օրենքներով:

**Ռուսաստան** - Ռուսաստանում ընդիանուր առմամբ առկա է 21 հնարավոր անջատողական օջախ, որոնցից առավել ակտիվներից են՝ *Շեչնիա*, *Ինգուշեթիա*, որոնք ցանկանում են ստեղծել Կովկասյան Էմիրաթ պետությունը: Այս հանրապետությունների անջատականների երազանքն է միավորել Հյուսիսային Կովկասի մահմեդականներին մեկ պետության կազմում: 2007թ. այս «պետության» կազմի մեջ էին մտնում Դաղստանը, Չեչնիան, Ինգուշեթիան, Կաբարդինո-Բալկարիան, Կարաչաև-Չերքեզիան, Ադրգեյան, Հս.Օսիան, Ստավրոպոլի և Կրասնոդարի երկրամասերը: Նշված սուրբեկտները Էմիրության կազմում կոչվում են վիլայաթներ:

Ռուսաստանում անջատական շարժումներ կան նաև հետևյալ հանրապետություններում և տարածաշրջաններում՝ *Աղրգեյա*, *Բաշկորտոստան*, *Բուրյաթիա*, *Կարելիա*, *Մորդովիա*, *Չերքեզիա*, *Սախա-Յակուտիա*, *Տիվա*, *Ուդմուրտիա* և այլն:

**Ուկրաինա** - *Դոնբաս* - փաստացի գոյություն ունի Դոնեցկի ժողովրդական Հանրապետությունը, *Լուգանսկինա* - փաստացի գոյություն ունի Լուգանսկի ժողովրդական Հանրապետությունը:

**Անջատողական շարժումներ**, զինված պայքար և հակամարտություններ կան նաև հետևյալ երկրներում՝ Ալժիր, Անտիգուա և Բարբուդա, Ավստրալիա, Ավստրիա, Արգենտինա, Բանզարեշ, Բունիա-Շերցեգովինա, Բրազիլիա, Գերմանիա, Դանիա, Եգիպտոս, Եթովպիա, Զամբիա, Էկվադոր, Ինդոնեզիա, Իտալիա, Իրան, Լաոս, Խորվաթիա, Կամերուն, Կոլումբիա, Կոնգո, Կոտ դ'Իվուար, Հարավաֆրիկյան Հանրապետություն, Հնդկաստան, Հունաստան, Ղրղզստան, Մալայզիա, Մալի, Մարոկկո, Մեքսիկա, Միացյալ Թագավորություն, Մոլդովա, Նամիբիա, Նիդեռլանդներ, Շրի Լանկա, Չիլի, Չինաստան, Պակիստան, Սերբիա, Սուլան, Վրաստան, Տանզանիա, Տաջիկստան, Ուզբեկստան, Ֆիլիպիններ, Ֆրանսիա և այլն:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ անհամաշափ պատերազմները և անջատողականությունը ժամանակակից պայմաններում ամենատարածվածն են և ունեն ամենամեծ աշխարհագրությունը: Անհամաշափ պատերազմներում ներկայումս լայն կիրառում է ստացել ահաբեկչությունը, որը լուրջ վտանգ է պետությունների խաղաղության, կայունության, տարածքային ամբողջականության պահպանման համար: Ժամանակակից ահաբեկչության հատկանիշներն են համարվում.

- մարդկային կորուստները և նշանակալի նյութական վնասները,
- ահաբեկչական կառույցներին ֆինանսական և նյութատեխնիկական աջակցություն ցուցաբերելու բարձր մակարդակը,
- կայուն կապերի առկայությունն ահաբեկչական և միջազգային ու ազգային կառույցների, ինչպես նաև հանցավոր կազմակերպությունների և հանցավոր բիզնեսի սուբյեկտների միջև,
- վարձկանների ակտիվ օգտագործումը,
- զանգվածային ռչնչացման միջոցներին տիրանալու ձգտումը,
- ռազմավարական նշանակություն ունեցող ենթակառուցվածքների նկատմամբ ահաբեկչական գործողություններ կատարելու հնարավորությունը,
- ահաբեկչական կառույցների գործունեությունը որպես ազգային-ազատագրական կամ հավատքի համար պայքար ներկայացնելը,
- հասարակական միավորումների քողի տակ մարտիկների պատրաստման կենտրոնների և բազաների, ինչպես նաև զենքի, զինամթերքի, հաներձանքի պահեստների ստեղծումը:

*Ապրիլ, 2015թ.*

## ԱՆՀԱՄԱՇԱՓ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԱՆՁԱՏՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԽXI ԴԱՐԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿ

### *Մերոր Սույշան*

Ամփոփագիր

Հոդվածում ներկայացված են ժամանակակից պատերազմներին բնորոշ գծերը, որտեղ մեծ դերակատարություն են ստացել անհամաշափ պատերազմը և նրա բաղկացուցիչը կազմող ահաբեկչությունն ու անջատողականությունը: Համապա-

տապահանաբար ակտիվացել են տեղեկատվական և տնտեսական պատերազմները: 21-րդ դարասկիզբն անհամաշափ պատերազմների և ակտիվ անջատողական գործողությունների ժամանակաշրջան է հանդիսանում: Անկախության և ինքնավարության համար զինված կամ ոչ զինված պայքար է ընթանում աշխարհի 95 երկրի շուրջ 300 տարածքներում:

## АСИММЕТРИЧНАЯ ВОЙНА И СЕПАРАТИЗМ КАК ОСНОВНОЙ ТИП ВОЙН XXI ВЕКА

*Serob Sujyan*

### Резюме

В статье представлены черты, присущие современным войнам, когда большое значение приобрели асимметричные войны и их компоненты – терроризм и сепаратизм. Соответственно активизировались информационные и экономические войны. Начало 21-го века – период асимметричных войн и активных сепаратистских действий. Вооруженная или невооруженная борьба за независимость и суверенитет ведется примерно в 300 областях 95 стран мира.

## ASYMMETRIC WARFARE AND SEPARATISM AS MAJOR WAR TYPES IN THE 21<sup>ST</sup> CENTURY

*Serob Sujyan*

### Resume

The article presents characteristic traits of modern wars, in which asymmetric warfare and its integral components of terrorism and separatism play important roles. Correspondingly, the information and economic wars are also on the rise. The beginning of the 21<sup>st</sup> century is a period of asymmetric warfare and active separatist movements. Armed or unarmed struggle for independence and autonomy is ongoing in about 300 places of 95 countries.

## **ՄՐՑԱԿՅԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՅԻՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

### ***Արման Մանասերյան\****

Բանալի բառեր՝ շուկայական տնտեսվարում, մրցակցային միջավայր, մենաշնորհային, հակամենաշնորհային, պայքար չարաշահումների դեմ, արդյունավետ կառավարում:

Շուկայական տնտեսվարման պայմաններում ինչպես ազգային տնտեսությունների մակարդակում, այնպես էլ համաշխարհային առևտրատնտեսական հարաբերությունների շրջանակներում սահմանափակ ռեսուրսների բաշխման և դրանց արդյունավետ օգտագործման հարցում էական կարևորություն է ստանում մրցակցային միջավայրի ձևավորումը:

Տնտեսական մրցակցության բարենպաստ միջավայրի պայմաններում դրական ազդեցություն է ապահովվում ինչպես պետության, այնպես էլ ձեռնարկությունների և սպառողների համար: Մասնավորապես, ձեռնարկությունների համար այն հնարավորություն է տալիս իրականացնել արդյունավետ կառավարում՝ նպատակ ունենալով սահմանափակ ռեսուրսների արդյունավետ բաշխման միջոցով ապահովել առավելագույն շահույթ և ծավալների ընդլայնում, հասարակության համար հնարավորություն է ստեղծում օգտվել ապրանքների լայն տեսականուց, որը շուկայում ներկայացվում է մրցակցային գներով, իսկ պետության դեպքում այն հանգեցնում է պետական եկամուտների ավելացմանը և կատարվող ծախսերի արդյունավետության բարձրացմանը:

Հետևապես, ներկայիս տնտեսակարգի պայմաններում տնտեսական գարգացման հարցում էական դերակատարում են ստանում տնտեսական մրցակցության պաշտպանության համար ստեղծված պետական մարմինները: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ չնայած

\*Տնտեսագիտության թեկնածու, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի մեթոդաբանության և ծրագրերի մշակման վարչության պետ:

տարբեր երկրներում նշված մարմիններն ունեն տարբեր անվանումներ, այդուհանդեռձ, նրանց համար ընդհանրական նպատակ է հանդիսանում ազատ և բարեխիղճ մրցակցության պայմանների ապահովումը:

Տնտեսական մրցակցության բարենպաստ միջավայրի ստեղծման նպատակով մրցակցային մարմինները հիմնականում փորձում են հնարավորինս կանխել ապրանքային շուկաներում կենտրոնացվածության մակարդակի մեծացումը, որը կարող է որպես վերջնարդյունք հանգեցնել մրցակցության թուլացմանը, ինչպես նաև իրացնում են համապատասխան լիազորությունները խոշոր ընկերությունների նկատմամբ՝ նպատակ ունենալով կանխել վերջիններիս կողմից շուկաներում կատարվող հնարավոր չարաշահումները: Այս կապակցությամբ պետք է նկատել, որ ապրանքային շուկաներում խոշոր ընկերությունների առկայությունը բազմաթիվ դեպքերում պայմանավորված է լինում օբյեկտիվ տնտեսական գործոններով, և շուկաներում նման ընկերությունների առկայությունը դեռևս ինքնին մրցակցային օրենսդրության խախտում չի ներկայացնում: Ուստի մրցակցային մարմինները հիմնականում շունեն ապրանքային շուկաներում գործող խոշոր ընկերությունները մասնաւելու լիազորություններ: Արդյունքում՝ հիմնական շեշտադրումը կատարվում է հսկողության այնպիսի մեխանիզմների կիրառման ուղղությամբ, որոնք հնարավորություն կտան նախ կանխել գերիշխող դիրքի չարաշահումները, իսկ այդպիսիք կատարած լինելու դեպքում՝ կիրառել մրցակցային միջավայրի վրա ունեցած բացասական ներգործությունը մեղմացնող միջոցներ:

Ապրանքային շուկաներում կենտրոնացվածության աստիճանը համարվում է բարձր, եթե դրանցում առկա են գերիշխող կամ մենաշնորհ<sup>1</sup> դիրք ունեցող ընկերություններ: Ընդ որում, ՀՀ-ում կիրառվող մեթոդաբանությամբ ապրանքային շուկայում ընկերությունն ունի գերիշխող դիրք, եթե ապրանքների իրացման կամ ձեռքբերման ծավալներով գերազանցում է սահմանված քանակային շեմը կամ այդ շուկայում ունի շուկայական իշխանություն:

Մրցակցային միջավայրի ձևավորման առաջավոր միջազգային փորձի ուսումնասիրության տեսանկյունից հետաքրքրական է Եվրամիության մրցակցության պաշտպանության օրենսդրության պահանջների ներկայացումը: Այս կապակցությամբ Եվրամիությունում գործող օրենսդրության համաձայն՝ գերիշխող դիրք ունենալու հարցում հիմք է ընդունվում բացառապես

<sup>1</sup> Ապրանքային շուկայում ընկերությունը համարվում է մենաշնորհ դիրք ունեցող, եթե չունի մրցակից:

որակական հատկանիշը, այսինքն՝ անկախ այն հանգամանքից, թե որքան է կազմում ընկերության իրացման մասնաբաժինը շուկայում, գերիշխող դիրքի առկայությունը կարող է արձանագրվել միայն շուկայական իշխանության առկայության դեպքում: Այսինքն՝ ի տարբերություն ՀՀ-ում կիրառվող մեթոդաբանության, որը ներհատուկ է նաև Եվրասիական տնտեսական միության անդամ մյուս երկրներին, Եվրամիությունում միայն քանակային չափանիշների հիմքով ընկերությունները չեն կարող համարվել գերիշխող դիրք ունեցող:

ՀՀ գործող ընթացակարգերի համաձայն՝ գերիշխող դիրքի չարաշահումները հիմնականում դրսուրվում են իրացման կամ ձեռքբերման չհիմնավորված, խտրական գների սահմանման, կիրառման, օրենսդրությանը հակասող առևտրի այլ պայմանների ուղղակի կամ անուղղակի պարտադրման, այլ տնտեսվարող սուբյեկտի առևտրի, արտադրության արդիականացման, ներդրումների սահմանափակման, ապրանքների ներկրման կամ արտադրության չհիմնավորված կրծատման, ապրանքային շուկայում պակասորդի ստեղծման կամ պահպանման, այլ տնտեսվարող սուբյեկտների կամ սպառողների նկատմամբ խտրական պայմանների կիրառման, պայմանագրի կողմին կամ պայմանագիր կնքել ցանկացող անձին պայմանագրի բուն առարկայի հետ չառնչվող լրացուցիչ պարտավորությունների պարտադրման, տնտեսվարող սուբյեկտների վերակազմակերպման կամ տնտեսական կապերի խզման պարտադրման, տնտեսվարող սուբյեկտի շուկա մուտք գործելուն խոչընդոտման, մրցակցային անհավասար միջավայր առաջացնող պայմանների առաջարկի կամ կիրառման, իրացման կամ ձեռքբերման գների գեղչերի, արտոնությունների սահմանման, փոփոխման, պահպանման, ապրանքի գնի չհիմնավորված բարձրացման, իջեցման, պահպանման ձևերով<sup>1</sup>: Իսկ համաձայն Եվրամիությունում գործող կարգավորումների, գերիշխող դիրքի չարաշահումները վերաբերում են ձեռքբերման կամ իրացման անարդար գների ուղղակի կամ անուղղակի կիրառմանը, առևտրի անարդար պայմանների կիրառմանը, արտադրության, շուկաների և տեխնոլոգիական զարգացման խոչընդոտմանը, համադրելի գործարքների նկատմամբ ոչ համադրելի պայմանների կիրառմանը, պայմանագրի կողմին պայմանագրի առարկայի հետ առնչություն չունեցող լրացուցիչ պայմանների պարտադրմանը<sup>2</sup>:

<sup>1</sup>Տե՛ս «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք:

<sup>2</sup><http://eur-lex.europa.eu>

Համեմատելով ներկայացված կարգավորումները՝ կարող ենք փաստել, որ, ըստ էության, դրանք հիմնականում նույնական են, թեև ՀՀ օրենսդրությամբ գերիշխող դիրքի չարաշահման դեպքերը ներկայացված են առավել մանրամասն: Միաժամանակ, պետք է փաստել, որ ապրանքային շուկաներում տեղի ունեցող գնային փոփոխություններն ինչպես ՀՀ, այնպես էլ Եվրամիության մրցակցային օրենսդրությամբ հանդիսանում են ուսումնասիրության օբյեկտ: Սակայն եթե ՀՀ-ում մրցակցային մարմնից սպառողների հիմնական սպասումները հաճախ կապված են կենտրոնացվածության բարձր մակարդակ ունեցող, հատկապես սոցիալական նշանակության պարենային շուկաներում գնային չհիմնավորված բարձրացումների զավման հետ, ապա Եվրամիության երկրներում դրանք դրսնորվում են բոլորովին այլ ձևով:

Գերիշխող դիրքի չարաշահման ժամանակակից ուղղությունները, այդ թվում՝ գնային չարաշահումներին վերաբերող խնդիրները հասկանալու համար կարևորվում է բացահայտված գործերի դիտարկումը: Այս առումով ևս արժեքավոր է Եվրամիության մրցակցային օրենսդրությանը վերաբերող գործերի ուսումնասիրությունը: Մասնավորապես, ԵՄ մակարդակում մրցակցությանն առնչվող հարցերը դիտարկվում են Մրցակցության հարցերով գլխավոր տնօրինության կողմից<sup>1</sup>: Այսպես, 2014թ. տնօրինության կողմից դիտարկվել է հակամենաշնորհային<sup>2</sup> 11 գործ, որոնք վերաբերել են հեռահաղորդակցության, դեղերի շրջանառության, պատենտավորման, էներգետիկայի, էլեկտրոնային վճարման համակարգերին, ավտոմեքենաների իրացման և սպորտի բնագավառներին<sup>3</sup>: Ըստ այդմ, ուշագրավ են հետևյալ գործերը.

1. Տնօրինության կողմից դիտարկված գործը վերաբերել է հեռահաղորդակցության բնագավառին: Մասնավորապես, «Slovak Telekom» ընկերությունը, լինելով շուկայում արդեն գործող ընկերություն, արհեստականորեն (անընդունելի պայմանների կիրառմամբ) սահմանափակել է այլ ընկերությունների մուտքը ծառայությունների բնագավառ, չնայած այն հանգամանքին, որ կարգավորող մարմինը պարտավորեցրել է

<sup>1</sup> Եվրամիության մրցակցության հարցերով գլխավոր տնօրինության կողմից դիտարկվում են մրցակցության խոշնդրության անդրահմանային դեպքերը, այսինքն՝ այնպիսիք, որոնք վերաբերում են անդամ երկրների միջև առևտությունների:

<sup>2</sup> Հակամենաշնորհային գործերը ՀՀ օրենսդրության շրջանակներում համարելի են գերիշխող դիրքի չարաշահումների դեպքերին:

<sup>3</sup> <http://ec.europa.eu>:

ապահովել այլ ընկերությունների հասանելիությունն այդ ծառայություններին: Բացի այդ, չարաշահման մեջ մեղադրվող ընկերությունը միմյանց հետ փոխկապակցված շուկաներում իրականացրել է այնպիսի գնային քաղաքականություն, որով ցածր մարժաներ (իր ցանցին միացման և ծառայությունների մանրածախ գների տարրերություն) կիրառելու արդյունքում մրցակից ընկերությունների կողմից լայնաշերտ ծառայությունների մատուցումն այն նույն գներով, որով աշխատում է հենց «Slovak Telekom» ընկերությունը, դարձրել է ոչ շահավետ՝ ստեղծելով շուկա մտնելու խոշընդուներ: Կատարված խախտման համար ընկերությունը տուգանվել է 38.8 մլն եվրո:

2. Տնօրինության կողմից քննված գործը վերաբերել է դեղերի շրջանառության բնագավառին: Մասնավորապես, ֆրանսիական դեղագործական «Servier» ընկերության կողմից շարունակաբար իրականացվել են միջոցառումներ՝ ուղղված ընկերության իրացման առավել մեծ ծավալներ ապահովող «Perindopril» դեղամիջոցն այլ ջեներիկների<sup>1</sup> մրցակցությունից պաշտպանելուն: Չնայած պատենտների գծով առկա կարգավորումներին՝ ընկերության կողմից ավելի էժան ջեներիկների շուկա մուտքի համար ստեղծվել են խոշընդուներ, ինչն էլ հանգեցրել է գերիշխող դիրքի չարաշահման: Կատարված խախտման համար ընկերությունը տուգանվել է 427.7 մլն եվրո:
3. Տնօրինության կողմից քննված գործը վերաբերել է պատենտավորման խնդիրներին: Մասնավորապես, գործող ընթացակարգերի համաձայն՝ սմարթֆոնների արտադրություն իրականացնող ընկերություններն արտադրություն իրականացնելիս ստիպված են օգտագործել մի շարք պատենտներ: Տնօրինության մտահոգությունն այն է եղել, որ պատենտ ունեցող ընկերությունները, որոնք նաև հանդիսանում են սմարթֆոնների արտադրողներ, այլ արտադրողների մրցակցությունից խուսափելու նպատակով կարող են դիմել դատական մարմինների՝ թույլ չտալու այլ արտադրողների կողմից նշված պատենտների օգտագործումը՝ զրկելով նրանց արտադրության իրականացման հնարավորությունից: Տվյալ դեպքում «Samsung» ընկերությունը հանդիսացել է մի շարք պատենտնե-

<sup>1</sup> Ջեներիկ են համարվում այն դեղամիջոցները, որոնք իրացվում են միջազգային չպատենտավորված անվանմամբ կամ պատենտավորված անվանմամբ, որը տարրերվում է դեղամիջոցն ստեղծողի (մշակողի) հեղինակային անվանումից:

Իի իրավատերը: Նշված խնդրի լուծման նպատակով տնօրինությունը պարտավորեցրել է «Samsung» ընկերությանը այլ արտադրող ընկերություններին չզրկել պատենտների օգտագործման հնարավորությունից, որոնք ստորագրում են լիցենզավորման հատուկ փաստաթուղթ, ըստ որի՝ լիցենզավորված ընկերությունները պարտավորվում են պատենտներն օգտագործել բարեխղճության և խտրականության բացառման սկզբունքների պահպանմամբ: Տվյալ դեպքում կատարված խախտումը ևս վերաբերում է շուկա մուտքի խոչընդոտների կիրառմանը: Նմանօրինակ գործ է հանդիսացել նաև «Motorola» ընկերության կողմից «Apple» ընկերության նկատմամբ կիրառված շուկա մուտքի խոչընդոտներին վերաբերող ուսումնասիրությունը:

4. Տնօրինության կողմից իրականացված վարույթը վերաբերում է Էներգետիկայի բնագավառին: Մասնավորապես, ոռումինական «OPCOM» ընկերությունը, հանդիսանալով Էլեկտրաէներգիայի փոխանակման բորսա (հարթակ), մուտքի խոչընդոտների համար՝ պահանջելով անցնել համապատասխան գրանցում՝ չնայած այն բանին, որ ընկերություններն իրենց գրանցման վայրում արդեն անցել են նման գրանցում: Տվյալ դեպքում ևս գերիշխող դիրքի չարաշակումը վերաբերում է շուկա մուտքի խոչընդոտների կիրառմանը: Նշված գործողության համար ընկերությունը տուգանվել է 1,031 մլն եվրո:
5. Տնօրինության կողմից քննված վարույթը վերաբերել է «Visa Europe» վճարման համակարգին: Մասնավորապես, տնօրինության կարծիքով՝ անկանխիկ գնումների դեպքում կիրառված միջբանկային վճարի չափը եղել է ֆիքսված, և վերավաճառողներն ու սպառողները հնարավորություն չեն ունեցել մրցակցության միջոցով ազդել դրա մեծության վրա: Արդյունքում՝ այն խոչընդոտել է միասնական տնտեսական տարածքում ապրանքների ազատ տեղաշարժին և սահմանափակել է սպառողների ընտրության հնարավորությունը: Ըստ Էռլիշյան, խախտումը վերաբերել է չհիմնավորված գների սահմանմանը: Արդյունքում՝ տնօրինությունը պարտավորեցրել է ընկերությանը նվազեցնել միջբանկային վճարի չափը և վերափոխել գործող ընթացակարգերն այնպես, որ դրանք նպաստեն Եվրամիության անդամ երկրների միջև առևտրի խթանմանը:

Վերը նշված գործերից բացի, տնօրինությունը 2014թ. ուսումնասիրել է ևս 5 գործ, այդ թվում՝ «DataCell» ընկերության բողոքը «Visa» և «MasterCard» համակարգերի վերաբերյալ, «Auto Team» ընկերության բողոքը «Magyar Suzuki» ընկերության վերաբերյալ, սպորտային ակումբների բողոքը «UEFA»-ի արդար խաղի ֆինանսական կանոնների վերաբերյալ, «Federauto» ավտոդիլերների միության բողոքը «Volkswagen Group Italia» ընկերության վերաբերյալ, ինչպես նաև բողոքը Էլեկտրաէներգիայի մեծածախ իրացման բնագավառում գործող «Électricité de France SA» ընկերության վերաբերյալ։ Հարկ է նշել, որ վերը թվարկված գործերի գծով, որոնք վերաբերել են հիմնականում շուկա մուտքի խոշընդոտների ստեղծմանը, տնօրինության կողմից կատարված նախնական ուսումնասիրությունների արդյունքներով ներկայացված բողոքները մերժվել են դրանցում ուսումնասիրությունը շարունակելու բավարար հիմքեր շլինելու պատճառով։

Վերը ներկայացված գործերի ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստել, որ առնվազն ԵՄ մակարդակում տնտեսվարող սուբյեկտների կողմից մրցակցությանը խոշընդոտող վարքագիծը դրսորվում է ոչ թե գների հիմնավորված բարձրացման, պահպանման կամ իջեցման, այլ ապրանքային շուկաներ ընկերությունների մուտքի խոշընդոտների ստեղծման ուղղությամբ։

Հետաքրքրական է նաև մրցակցային մարմինների փորձը մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող ընկերությունների գնային չիմնավորված բարձրացումներին վերաբերող չարաշահումների բացահայտման տեսանկյունից։ Այսպես, Եվրահանձնաժողովի մակարդակում 2010-2014թթ. տնօրինությունն ուսումնասիրել է ընդամենը 4.564 գործ, որից միայն 43 գործերն են հանդիսացել հակամենաշնորհային, կամ որ նույնն է՝ ուսումնասիրված գործերի կառուցվածքում հակամենաշնորհային գործերի քանակը կազմել է ընդամենը 0.95%<sup>1</sup>։ Նմանատիպ ցուցանիշներ են արձանագրվել նաև ԵՄ անդամ երկրների ազգային օրենսդրության մակարդակում։ Այսպես, ԵՄ անդամ Գերմանիայի մրցակցային մարմինը 2010-2013թթ. ընդունել է շուրջ 4.698 որոշում, որից ընդամենը 3%-ը, կամ որ նույնն է՝ 162 որոշում է վերաբերել գերիշխող դիրքի չարաշահմանը։ Ըստ որում, ընդունված որոշումներից ընդամենը 2-ը, կամ որ նույնն է՝ 0.03%-ն է վերաբերել չիմնավորված գների կիրառմանը<sup>2</sup>։

<sup>1</sup> <http://ec.europa.eu>:

<sup>2</sup> <http://www.bundeskartellamt.de>:

Միաժամանակ, դիտարկվել են Ֆրանսիայի մրցակցային մարմնի կողմից ուսումնասիրված գործերը, որի արդյունքում պարզվել է, որ Ֆրանսիայի մրցակցային մարմինը երբևիցե մենաշնորհ կամ գերիշխող դիրք ունեցող ընկերությունների կողմից գների չհիմնավորված բարձրացման գործեր չի ունեցել:

Նմանօրինակ պատկեր է ստացվում նաև Մեծ Բրիտանիայի մրցակցային մարմնի գործերի ուսումնասիրության արդյունքում: Մասնավորապես, 2010-2014թթ. Մեծ Բրիտանիայի մրցակցային մարմինն ունեցել է գերիշխող դիրքի չարաշահման տարեկան միջինը 2 գործ, որոնցից և ոչ մեկը չի առնչվել գների չհիմնավորված բարձրացմանը<sup>1</sup>:

Վերը նշվածը հիմք ընդունելով՝ կարող ենք փաստել, որ ներկայումս մրցակցային մարմիններն առավելապես առկա ուսուրանության ուղղում են ոչ թե գերիշխող դիրքի չարաշահման, այլ պետական օժանդակության միջոցով մրցակցության խաթարման, համակենտրոնացումների արդյունքում մրցակցության հնարավոր սահմանափակման, ընկերությունների միջև հնարավոր գաղտնի համաձայնությունների դեպքերի բացահայտմանը: Անզամ գերիշխող դիրքի չարաշահման դեպքերի բացահայտման շրջանակներում առավելապես ուշադրության կենտրոնում են պահվում ոչ թե գների չհիմնավորված բարձրացումները, այլ շուկա նոր ընկերությունների մուտքի խոչընդոտների, ինչպես նաև շուկայում արդեն գործող ընկերությունների գործունեության համար հնարավոր խոչընդոտների բացահայտմանը վերաբերող խնդիրները:

Ըստ որում, առհասարակ գնային բարձրացումներին վերաբերող չարաշահումները միջազգային պրակտիկայում ընդունված է դիտարկել այն ապրանքային շուկաներում, որոնցում առկա են բացառիկ ենթակառուցվածքներ, թույլտվություններ և այլն: Մասնավորապես, Գերմանիայում 2010-2013թթ. արձանագրվել է չհիմնավորված բարձր գների կիրառման ընդամենը 2 դեպք, որոնք վերաբերել են բնական մենաշնորհներ ունեցող ընկերությունների կողմից մրցակցային օրենսդրության խախտումներին: Առաջին դեպքում էլեկտրաէներգիայի մատակարար «Entega» ընկերությունը 2007-2009թթ. տնային տնտեսությունների և բիզնեսի նկատմամբ կիրառել է չհիմնավորված բարձր գներ, իսկ վերջիններս, հաշվի առնելով էլեկտրական ջերմամատակա-

<sup>1</sup> <http://webarchive.nationalarchives.gov.uk/>,  
<https://www.gov.uk/government/organisations/office-of-fair-trading>

բարման ենթակառուցների կառուցվածքը, հնարավորություն չեն ունեցել նշված ծառայությունները ստանալ այլ մատակարարներից: Չիմնավորված բարձր գների կիրառմանն առնչվող հաջորդ գործը վերաբերում է խմելու ջրի մատակարարմանը: Մասնավորապես, «*Berliner Wasserbetriebe*» ընկերությունը, հանդիսանալով ջրամատակարարման գերմանական խոշորագույն ընկերությունը, սպառողների համար սահմանել է չիմնավորված բարձր գներ, և քանի որ ընկերությունն ունեցել է բնական մենաշնորհ, սպառողները տվյալ դեպքում ևս հնարավորություն չեն ունեցել օգտվելու այլ մատակարարների ծառայությունից<sup>1</sup>:

Միաժամանակ պետք է նկատել, որ ԵՄ շրջանակներում գնային բարձրացումներին վերաբերող խնդիրները դիտարկվում են առավելապես գնային իշեցումների (ցածր գների) լույսի ներքո, որն էական ազդեցություն կարող է թողնել մրցակցային միջավայրի և շուկաների կենտրոնացվածության վրա: Այսպես, խոշոր ընկերությունների կողմից ապրանքները ցածր գներով իրացնելու դեպքում փոքր ընկերությունները կարող են սնանկանալ և (կամ) դրւում մղվել շուկայից՝ արդյունքում հանգեցնելով շուկաներում կենտրոնացվածության մակարդակի բարձրացմանը: Ահա հենց այս պատճառով է, որ միջազգային պրակտիկայում մրցակցային մարմինները գներին վերաբերող չարաշահումների շրջանակներում շատ ավելի մեծ կարևորություն են տալիս գների չիմնավորված իշեցմանը և պահպանմանը, որը հանգեցնում կամ կարող է հանգեցնել շուկայում մրցակիցների թվի նվազմանը, քան գների չիմնավորված բարձրացմանը: Մինչդեռ պետք է նկատել, որ ապրանքային շուկաներում բարձր գները միջնաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով ոչ թե խաթարում են մրցակցությանը, այլ խրախուսում են շուկա նոր ընկերությունների հայտնվելուն՝ նպաստելով նրանց միջև մրցակցության խորացմանը և շուկաների կենտրոնացվածության մակարդակի նվազմանը:

Վերը նշվածը հիմք ընդունելով՝ կարող ենք փաստել, որ ժամանակակից աշխարհում շուկայական տնտեսվարման հարուստ պատմություն և ավանդույթներ ունեցող երկրներում մրցակցային պաշտպանության մարմինները ապրանքային շուկաներում խոշոր իրացման (ձեռքբերման) ծավալներ, կամ որ նույնն է՝ գերիշխող դիրք ունեցող ընկերությունների կողմից մրցակցային

<sup>1</sup> <http://ec.europa.eu>:

միջավայրի խաթարման գործողությունների կանխարգելման և դրանց գծով պատասխանատվության միջոցների կիրառման նպատակով կատարվող աշխատանքում առկա ռեսուրսները հիմնականում օգտագործում են ոչ թե գների բարձրացման (բարձր գների կիրառման) գծով հնարավոր չարաշահումների դեմ պայքարելու, այլ առավելապես շուկա ընկերությունների մուտքի խոչընդոտների բացահայտման և վերացման գործերում։ Ընդ որում, գնային չարաշահումների բացահայտման առումով մրցակցային միջավայրի վրա ունեցած ազդեցությամբ առավել խնդրահարույց է գների չիմնավորված իջեցումը կամ պահպանումը, քան գների չիմնավորված բարձրացումը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ բարձր գները նշանակում են նաև շահութաբերության բարձր մակարդակ, ինչն իր հերթին տվյալ շուկա նոր ընկերությունների մուտքը դարձնում է ավելի գրավիչ։ Միաժամանակ գնային բարձրացումներին վերաբերող գործերը միջազգային պրակտիկայում (դիտարկված երկրներում) հիմնականում վերաբերում են այնպիսի շուկաներին, որոնցում ընկերությունների գերիշխող դիրքը պայմանավորված է համապատասխան հատուկ ենթակառուցվածքների, թույլտվությունների և այլնի առկայությամբ։ Այսինքն՝ դրանք չեն վերաբերում պարենային ապրանքների շուկաներին, ինչպիսիք են հացը, ձեթը, հնդկածավարը, մակարոնեղենը և այլն, քանի որ նշված շուկաներում գների բարձրացումը շուկա մուտքի խոչընդոտների բացակայության պայմաններում միջնաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով չի կարող թողնել էական բացասական ազդեցություն։ Հետևապես, ապրանքային շուկաներում մրցակցային միջավայրի ձևավորման տեսանկյունից առավել արդյունավետ է մրցակցային մարմինների կողմից ոչ թե մրցակցության խաթարման հետևանքների (ընկերությունների կողմից գների չիմնավորված իջեցում, պահպանում, բարձրացում), այլ ապրանքային շուկաներում կենտրոնացվածության բարձր մակարդակի ձևավորման պատճառների (ընկերությունների կողմից շուկա մուտքի խոչընդոտների և խտրական պայմանների կիրառում, լրացուցիչ պայմանների պարտադրում, պետության կողմից սահմանված իրավական ընթացակարգերի կիրարկմանը վերաբերող խնդիրներ և այլն) բացահայտումը և դրանց վերացման ուղղությամբ միջոցների կիրառումը։

*Մարտ, 2015թ.*

## ՄՐՅԱԿՑԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՅԻՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ԽՆԴՐՄՆԵՐԸ

*Արման Մանասերյան*

Ամփոփագիր

Ժամանակակից աշխարհում շուկայական տնտեսվարման հարուստ պատմություն և ավանդույթներ ունեցող երկրներում մրցակցային պաշտպանության մարմինները ապրանքային շուկաներում խոշոր իրացման ծավալներ և գերիշխող դիրք ունեցող ընկերությունների կողմից մրցակցային միջավայրի խաթարման գործողությունների կանխարգելման և պատասխանատվության միջոցների կիրառման նպատակով կատարվող աշխատանքում առկա ռեսուրսներն օգտագործում են ոչ թե գների բարձրացման հնարավոր չարաշահումների դեմ պայքարելու, այլ առավելապես շուկա ընկերությունների մուտքի խոչընդոտների բացահայտման և վերացման գործերում։ Գնային չարաշահումների բացահայտման առումով, մրցակցային միջավայրի վրա ունեցած ազդեցությամբ, առավել խնդրահարույց է գների չիմնավորված իշեցումը կամ պահպանումը, քան գների չիմնավորված բարձրացումը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ բարձր գները նշանակում են նաև շահութափերության բարձր մակարդակ, ինչն իր հերթին տվյալ շուկա նոր ընկերությունների մուտքը դարձնում է ավելի գրավիչ։

## КОНКУРЕНТНЫЕ ОРГАНЫ И ПРОБЛЕМЫ ЦЕНОВОГО ВМЕШАТЕЛЬСТВА ГОСУДАРСТВА

*Арман Манасерян*

Резюме

В современном мире в государствах с богатой историей и традициями рыночных отношений органы защиты конкуренции используют имеющиеся ресурсы по предотвращению нарушения конкурентной среды со стороны доминирующих компаний с крупным объемом реализации продукции на товарном рынке и привлечению их к ответственности не для борьбы с возможным повышением цен, а преимущественно для выявления и ликвидации барьеров, мешающих появлению тех или иных компаний на рынке. В плане выявления ценовых злоупотреблений, влияющих на конкурентную среду, проблематичнее необоснованное снижение или сохранение цен, нежели необоснованное повышение цен, обусловленное тем, что высокие цены означают и высокий уровень прибыльности, что, в свою очередь, делает данный рынок привлекательнее для новых компаний.

## AGENCIES FOR PROTECTION OF COMPETITION AND PROBLEMS OF PRICE INTERVENTIONS

*Arman Manaseryan*

### Resume

In modern world the agencies for protection of completion in the countries with rich history and traditions of market economy use their available resources for preventing disruption of competitive environment by companies with large sales volumes and dominating market position, and for enforcing accountability measures. However, in doing so, they not so much combat against potential abuses in price hiking, but mostly reveal and eliminate barriers for market entry of new companies. In terms of pricing manipulations and their impact on competitive environment, the unjustified price decrease or perpetuation is even more problematic than an unjustified price hike, as the latter may actually make the market entry for the new companies more attractive.

# **ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲՆԴԵՔՄԻ ՀԱՄԵՍՏԱԿԱՆ ՄԻԶԵՐԿՐԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

## ***Արուսյակ Ալեքսանյան՝***

*Բանալի բառեր՝ ժողովրդավարության մակարդակի ինդեքս, միջերկրային վերլուծություն, ժողովրդավարություն, ժողովրդավարության չափում:*

### ***Ներածություն***

Ժողովրդավարության չափման մոտեցումների զարգացումը սկսվել է XX դարի 60-ական թվականներից: Մասնավորապես, 1980-1990թթ. սոցիալական գիտությունների շրջանակներում համակողմանիորեն դիտարկվեցին ժողովրդավարությանը նպաստող գործոնները և դրանց ազդեցության գնահատման եղանակները: Այսօր ժողովրդավարությունը չափելուն ուղղված ուշադրությունն ու պահանջը նույնիսկ ակադեմիական շրջանակներից դուրս են, մինչդեռ այն կարող է բնորոշել պետության միջազգային վարկանիշը:

Արդի պայմաններում ուշագրավ է Հայաստանի, Վրաստանի, Աղրբեցանի, Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ուկրաինայի և Մոլդովայի ժողովրդավարության մակարդակների չափումը՝ կապված ինտեգրման գործընթացների հետ: Այս պետություններից Մոլդովան, Վրաստանը և Ուկրաինան, 2014թ. ստորագրելով ԵՄ Ասոցացման համաձայնագրի և՝ տնտեսական, և՝ քաղաքական մասը, հաստատեցին Եվրոպական ինտեգրման վեկտորը զարգացնելու հեռանկարը: Մինչդեռ Հայաստանը միացավ Ռուսաստանի, Ղազախստանի և Բելառուսի ինտեգրման նոր նախագծին՝ Եվրասիական տնտեսական միությանը:

Ժողովրդավարության չափման մոդելի [1, էջ 61-64] (Ժողովրդավարության մակարդակի ինդեքս) միջոցով հետազոտվել են հիշյալ ութ պետությունների ժողովրդավարության մակարդակները՝ բացահայտելու արդյոք ինտեգրման տարբեր ուղղություններ ընտրած պետություններն ունեն ժողո-

<sup>1</sup>ԵՊՀ Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի դասախոս, փորձագետ, քաղաքական գիտությունների թեկնածու:

վրդավարության միանմա՞ն, թե՝ տարբեր մակարդակներ: Արդյոք ժողովրդավարության այդ մակարդակները տարբե՞ր են միևնույն վեկտորով շարժվող պետություններում:

Միջերկրային վերլուծության համար պետությունների ժողովրդավարության մակարդակի ինդեքսի (ԾՄԻ) հաշվարկման մեթոդաբանությունը նույն է, ինչ ներերկրայինի դեպքում [1, էջ 61-64], այն տարբերությամբ, որ վերջինիս ինդեքսը մշակելիս արժեքները ներմուծվում են մոդել մեկ պետության համար տարբեր տարիների կտրվածքով, իսկ միջերկրային վերլուծության պարագայում՝ մի քանի պետությունների համար մեկ տարվա կտրվածքով: Բացի այդ, ներերկրային ուսումնասիրությունների դեպքում որպես առավելագույն և նվազագույն արժեքները ընդունվում են երկրի տարբեր ժամանակահատվածների համապատասխան արժեքները: Միջերկրային վերլուծության մեջ մի շարք փոփոխականների համար նվազագույն և առավելագույն արժեքները սահմանվել են՝ ըստ աշխարհի գրեթե բոլոր պետությունների վերջին մի քանի տարիների առավելագույն և նվազագույն ցուցանիշների ուսումնասիրությունների: Առաջնորդվելով մեթոդաբանական մի շարք սկզբունքներով՝ ընտրվել են նշված ժամանակահատվածում «երեք պետության» գրանցած առավելագույն և նվազագույն արժեքների առանձին միջինացված ցուցանիշները:

Ժողովրդավարության մակարդակի միջերկրային ինդեքսն արտահայտվում է 0-ից +100 միջակայքում ընկած համապատասխան միավորներով, որտեղ պետությունները որակվում են հետևյալ կերպ:

1. [0] - [32]- ոչ ժողովրդավարական,
2. [33] – [66] – մասնակի ժողովրդավարական,
3. [67] - [100] – ժողովրդավարական:

1. *Ոչ ժողովրդավարական քաղաքական համակարգերն առանձնանում են հանրային իշխանության «գերկենտրոնացմամբ»:* Բացակայում է ազատ գործող քաղաքական ընդդիմությունը: Քաղաքացիների ազատություններն ու իրավունքները եթե նույնիսկ սահմանադրությունը ամրագրված են, ապա ձևական են՝ քաղաքացիները փաստացի օտարված են քաղաքական գործընթացներից, քանի որ ոտնահարվում են մարդու իրավունքները, ուժի կիրառմամբ ճնշվում են քաղաքացիական բոլոր անհնագանդությունները: Ոչ ժողովրդավարական քաղաքական համակարգին բնորոշ գծերից են նաև տնտեսա-

կան ոլորտների վերահսկողությունը, մենաշնորհը, կոռուպցիան, հասարակության խիստ բնեոացումը, աղքատության բարձր մակարդակը:


**2. Մասնակի ժողովրդավարական քաղաքական համակարգերում** պետական իշխանությունների տարանջատումը, սահմանադրորեն ամրագրված լինելով հանդերձ, գործնականում կարող է «խեղաթյուրվել»: Մարդու իրավունքների պաշտպանության և օրենքի գերակայության ոլորտներում թերությունները հաճախակի երևույթ են: Բնակչության բնեոացումը, բնակչության աղքատացումն ու նեղ շրջանակի մարդկանց հարստանալը, քաղաքացիական անհնազանդությունների բարձր մակարդակն ու դրանց ձնշումները չեն բացառվում: Անցումային շրջանում գտնվող պետություններում այս կամ այն մակարդակով տեղի են ունենում շուկայական հարաբերությունների զարգացում, տնտեսական ազատականացմանն ուղղված բարեփոխումներ, քաղաքական բազմակարծության ձևավորում, կուսակցական համակարգի ու քաղաքացիական հասարակության կայացում, կրթության և գիտության զարգացմանն ուղղված ներդրումներ և այլն: Սոցիալ-տնտեսական զարգացումը որոշակի տատանումներով և անկումներով, այնուամենայնիվ, ունի աճի միտում:

**3. Ժողովրդավարական քաղաքական համակարգերում** հասարակությունն օրենքով սահմանված կարգով լիազորում է ներկայացուցիչներին իշխանության տարբեր մակարդակներում ընդունել հասարակական կյանքի ոլորտներին վերաբերող որոշումներ: Ավելին, ամրագրված ընթացակարգերի միջոցով հասարակությունը մասնակցում է պետական կառավարման որոշումների ընդունմանը, վերահսկում դրանց իրականացումը: Հստակ գործում է իշխանությունների տարանջատման սկզբունքը: Ժողովրդավարական պետությունների կարևոր բնութագրիչներից են նաև բազմակուսակցականությունն ու բազմակարծությունը, իսկ ընդդիմությունը քաղաքական գործընթացների անբաժանելի մասն է: Իշխանությունը պատկանում է մեծամասնությանը, բայց փոքրամասնությունների իրավունքները պաշտպանված են: Ժողովրդավարական քաղաքական համակարգերի կարևոր սկզբունքներից է իշխանության «հերթափոխությունը», որը տեղի է ունենում օրենքի սահմաններում և չի ուղեկցվում համակարգի ապակայունացմամբ: Այս համակարգին բնորոշ են նաև հասարակության սոցիալ-տնտեսական ոլորտի կայուն զարգացումը և սոցիալական երաշխիքների արդյունավետ ապահովումը:

## Ժողովրդավարության մակարդակի ինդեքսը և ենթախնդեքսները

*Գծապատկեր 1*

*Ժողովրդավարության մակարդակի ինդեքսը (ԺՄ), (2012թ., 2013թ.)<sup>1</sup>*



Միջերկրային վերլուծությամբ ստացված տվյալների համաձայն (տե՛ս Գծապատկեր 1)` դիտարկվող բոլոր պետությունները մասնակի ժողովրդավարական են: ԺՄԻ ամենաբարձր ցուցանիշն ունի Մոլդովան (53,4), որին որոշ չափով զիջում է Վրաստանը (48,1), այնուհետև՝ Ուկրաինան (45,6): Հայաստանը ստացել է 42,5 միավոր: Ամենացածր ինդեքսն ունի Աղրբեջանը (37,5), որը Ղազախստանի հետ բավական մոտ է գտնվում «ոչ ժողովրդավարական քաղաքական համակարգ» կատեգորիային: 2012թ. համեմատությամբ 2013թ. գրեթե բոլոր պետություններում ԺՄԻ անկում է նկատվում: Բացառություն են Բելառուսն ու Ղազախստանը, ինչպես նաև աննշան դրական փոփոխություն է արձանագրել Ռուսաստանը: Ավելին, Բելառուսը, մոտ երեք միավորով բարելավելով իր ցուցանիշը նախորդ տարվա համեմատությամբ, դիրքային փոփոխություն է ունեցել՝ առաջ անցնելով Ռուսաստանից:

Ժողովրդավարության մակարդակի ենթախնդեքսների (տե՛ս Գծապատկերներ 2, 3, 4, 5, 6) և դրանց փոփոխականների վերլուծությունը (տե՛ս Աղյուսակ 1) հնարավորություն է տալիս վեր հանել այն գործոնները, որոնք պայմանավորել են պետությունների ժողովրդավարական գործընթացները նշված ժամանակահատվածում:

<sup>1</sup> Աղյուսակ՝ հեղինակի կատարած հաշվարկներ:

## Աղյուսակ 1

**ԺՄԻ հիմնական փոփոխականների արժեքները<sup>1</sup>**  
**(Հայաստան, Վրաստան, Աղբյուրեցան, Ռուսաստան, Բելառուս, Ղազախստան,  
 Ուկրաինա, Մոլդովա, 2013թ.)**

Ժպատան	Վրաստան	Ադրբեյչան	Ռուսաստան	Բելառուս	Ղազախստան	Ուկրաինա	Մոլդովա
1. Քաղաքական կայունություն (0-100)	49,76	30,81	33,18	22,27	46,45	34,6	21,33
2. Օրենքի գերակառություն (0-100)	45,02	53,55	30,33	24,64	20,38	30,81	23,22
3. Մամուլի ազատություն (100-0)	62	47	84	81	93	85	63
4. Քաղ. իրավունքներ և քաղաքաց. ազատ. (7-1)	4,5	3	6	5,5	6,5	5,5	3,5
5. Կոռուպցիայի ընկալման ինդեքս (0-10)	36	49	28	28	29	26	25
6. Քաղաքական համակարգ (0,1,2)	0	1	0	0	0	0	1
7. Խորհրդարանական մեծամասնություն (0,1,2)	0	0	0	0	0	0	1
8. Սոց. անհանգստութ. և քաղ. ճնշ. (0-5)	1,9	2	1,9	1,8	1,5	2,5	0,5
9. Գնդերային հավասարություն	0,663	0,675	0,658	0,698	0,714 <sup>a</sup>	0,722	0,694
10. ՀԱԱ 1 շնչ հաշվով \$ (PPP)	8140	7040	16180	23200	16940	20570	8960
11. Արտաքին առևտրաշրջ. (% ՀՆԱ)	77,6	102,4	75,6	50,9	125,2	67,1	102,2
12. Տնտ. ազատության ինդեքս (0-100)	68,9	72,6	61,3	51,9	50,1	63,7	49,3
13. Տնտեսության վարկավորում (% ՀՆԱ)	46	42,9	25,5	48,3	39,9	40,4	95,7
14. ՕՌՆ (% ՀՆԱ)	3,5	6,3	3,6	3,4	3,1	4,3	2,1
15. Գնաճ (%)	5,8	-0,5	5,4	6,8	18,3	5,8	-0,3
16. Բյուջեի դեֆիցիտ (% ՀՆԱ)	-1,7	-1,19	6,06 <sup>d</sup>	-1,27	-0,93	-2 <sup>b</sup>	-4,82
17. Իրական աշխատավարձ \$ (PPP)	660	726 <sup>a</sup>	700 <sup>a</sup>	1105	1067	772	728
18. Գործազրկության մակարդակ (%)	18,6	14,3	5,5	5,8	5,9	5,2	7,9
19. Զինվ. ինդեքս <sup>a</sup>	0,303	0,414	0,33	0,397	0,265	0,286	0,248
20. ՄԶՀ-կրթության բաղադրիչ	0,683	0,733	0,656	0,778	0,872	0,833	0,839
21. Անտուրիան ծախսերը կրթության ոլորտում (% ՀՆԱ) <sup>a</sup>	3,3	2,0	2,4	4,1	5,1	3,1	6,2
22. Կյանքի սպասվող տևադրությունը/2012 <sup>a</sup>	74,4	73,9	70,6	70,5	72,1	69,6	70,9
23. Անտուրիան ծախսերն առողջապահության ոլորտում (% ՀՆԱ) /2012 <sup>a</sup>	4,5	9,2	5,4	6,3	5,0	4,2	7,6

Այսպես, դիտարկելով ԺՄԻ Քաղաքական գործոնների ինդեքսը (Ենթահնդեքսը)<sup>c</sup> ակնհայտ է դառնում, որ առաջատար դիրքերում է Մոլդովան, իսկ


<sup>1</sup> Հաշվարկների հիմք են հետևյալ աղյուրները՝

1, 2 - [www.govindicators.org](http://www.govindicators.org), 3, 4 - <http://www.freedomhouse.org>, 5 - <http://www.transparency.org>, 6, 7, 8 - գնահատված է հետազոտողի կողմից, 9 - <http://www.weforum.org/issues/global-gender-gap>, 10, 11, 13, 14, 15, 19, 21, 22, 23 - <http://data.worldbank.org/indicator>, 12 - <http://www.heritage.org/index>, 16 - <http://countryeconomy.com/deficit>, 17 - <http://w3.unece.org/>, 18 - <http://www.ilo.org/>, 20 - <http://hdr.undp.org>:

Նշված աղյուրներում որոշ տվյալների բացակայության դեպքում հաշվարկներում օգտագործվել են՝ а – տվյալ աղյուրի նախորդ տարվա/տարիների տվյալները, б – նշված պետությունների ազգային վիճակագրական տարեգրերը, դ – այլ աղյուրներ (մուտքը՝ 15.11.14):

Աղբբեջանն այդ երկրների շարքում զբաղեցնում է ամենացածր հորիզոնականը: Ըստ որում, անջրպետը Մոլդովայի և Աղբբեջանի միջև բավական մեծ է (տե՛ս Գծապատկեր 2)։

Գծապատկեր 2  
Քաղաքական գործոնների ինդեքսը (ՔԳԻ), (2012թ., 2013թ.)<sup>1</sup>



Անդրադառնանք Քաղաքական գործոնների ինդեքսի առանձին փոփոխականներին (տե՛ս Աղյուսակ 1): Ըստ «Ազատության տան» (*Freedom House*)՝ քաղաքական իրավունքների և քաղաքացիական ազատությունների լավագույն ցուցանիշներն են զրանցել (2012թ., 2013թ.) Մոլդովան (3), Վրաստանը (3) և Ուկրաինան (3,5), որոնք բնութագրվում են որպես «մասնակի ազատ»՝ բավականաչափ մոտ գտնվելով «ազատ» երկրների կատեգորիային: Հայաստանն իր ազատության վարկանիշով ևս հայտնվել է «մասնակի ազատ» երկրների շարքում՝ քաղաքական իրավունքի և քաղաքացիական ազատության կատեգորիաներում արձանագրելով համապատասխանաբար 5 և 4 միավորներ: Մնացած պետությունները (Ռուսաստան, Ղազախստան, Աղբբեջան, Բելառուս), ըստ գեկույցի փորձագիտական գնահատականների, գտնվում են «անազատ» երկրների շարքում [2]: 2013թ., նախորդ տարվա համեմատությամբ, քաղաքացիական ազատությունների ոլորտում Աղբբեջանն ունեցել ցուցանիշի անկում<sup>2</sup>:

<sup>1</sup> Աղյուսակ՝ հեղինակի կատարած հաշվարկներ:

<sup>2</sup> <http://www.freedomhouse.org/report-types/freedom-world> (19.10.2014):


Համաշխարհային բանկի կողմից հրապարակվող քաղաքական կայունությունը բռնության բացակայությունը ինդեքսի [3] տվյալների համաձայն՝ դիտարկվող պետությունների շարքում Հայաստանը 2012թ. և 2013թ. քաղաքականապես ամենակայունն է, իսկ Ռուսաստանը (2012թ.) և Ուկրաինան (2013թ.)՝ անկայունը: Ընդ որում, եթե նախորդ տարվա համեմատությամբ Հայաստանի նշված ցուցանիշը նվազել է 1 միավորով, ապա Ուկրաինայինը՝ 20 միավորով: Ինչ վերաբերում է օրենքի գերակայությանն ու մամուլի ազատությանը, ապա այս ոլորտներում ամենամեծ խնդիրներն ունի Բելառուսը, իսկ լավագույն արդյունքները գրանցել է Վրաստանը (տե՛ս Աղյուսակ I): Ըստ «Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի՝ Վրաստանում (49) առավել հաջողված է կոռուպցիայի դեմ պայքարը, իսկ ամենախնդրահարույց իրավիճակը պահպանվում է Ուկրաինայում (25) (գնահատվում է 0-10 քալային համակարգով, ընդ որում, 0-ն նշանակում է կոռուպցիայի ընկալման ամենաբարձր մակարդակը, 10-ը՝ ամենացածր) [4]: Ուկրաինայում գրանցվել է նաև քաղաքացիական անհնազանդությունների ամենաբարձր քանակը, որը զագարնակետին հասավ 2013թ. տարեվերջին Մայդանում տեղի ունեցած իրադարձությունների զարգացմամբ: Այս առումով, թերևս, ամենահանգիստ իրավիճակը Մոլդովայում էր: Ինչ վերաբերում է ԺՄԻ «քաղաքական համակարգ» փոփոխականին [1, էջ 62], ապա տեղին է նշել, որ եթե 2012թ. և մինչ այդ դիտարկվող պետությունների շարքում միայն Մոլդովայի քաղաքական համակարգն էր բնորոշվում նախազահի սահմանափակ, իսկ խորհրդարանի առավել լայն լիազորություններով, ապա 2013թ. Վրաստանը գնահատման իր նիշով (1) հավասարվեց Մոլդովային (տե՛ս Աղյուսակ 1): Հարկ է նշել, որ Վրաստանի ժողովրդավարական գործնթացներում հատկանշական են վերջին տարիների իրադարձությունները: 2012թ. Վրաստանի ընտրություններին՝ ընդդիմությունը խորհրդարանում կազմեց բացարձակ մեծամասնություն՝ առաջին անգամ իրականացնելով իշխանության խաղաղ փոխանցում: Ավելի վաղ՝ 2010թ. հոկտեմբերի 15-ին, խորհրդարանը հաստատեց սահմանադրական նոր մոդելը, որով էականորեն կրածառվեցին նախազահի լիազորությունները (փոփոխություններն ամբողջությամբ ուժի մեջ մտան 2013թ. նախազահական ընտրություններից հետո)` ի հաշիվ վարչապետի և խորհրդարանի լիազորությունների ընդլայնման: Ընդդիմադիր և իշխանական ուժերի «հակա-

<sup>1</sup> <http://info.worldbank.org/governance/wgi/index.aspx#home> (19.10.2014):

կշռման սկզբունքը», սակայն, երկար չգործեց, քանի որ վարչապետը (գործադիր իշխանության գլուխը) և նորընտիր նախագահը խորհրդարանում մեծամասնություն կազմող «Վրացական երազանք» կուսակցության ներկայացուցիչներ են: «Խորհրդարանական մեծամասնություն» փոփոխականի [1, էջ 62-63] շրջանակներում 2013թ. գնահատման լավագույն նիշերն ունեն միայն Մոլդովան և Ուկրաինան (տե՛ս Աղյուսակ I), որոնց խորհրդարաններում իշխանության և ընդդիմության պատգամավորական տեղերի բաշխումը մոտավորապես հավասար է: Մնացած բոլոր պետություններում գործադիր իշխանության դեկավարի կուսակցությունն ունի բացարձակ մեծամասնություն, կամ պատգամավորների բացարձակ մեծամասնությունը, անկախ կուսակցական պատկանելությունից, նախագահին հարող ուժեր են:

Ինչ վերաբերում է Տնտեսական գործոնների ինդեքսին (ենթախնդեքսին), ապա ստացված տվյալների համաձայն՝ ոլորտի առաջատարն է Ադրբեյչանը (47,4), իսկ Բելառուսի արձանագրած արդյունքը (41,5) զիջում է մնացած պետություններին (տե՛ս Գծապատկեր 3).

*Գծապատկեր 3  
Տնտեսական գործոնների ինդեքսը ( $S_{RF}$ ), (2012թ., 2013թ.)<sup>1)</sup>*



Ադրբեյչանը, լինելով նավթ արդյունահանող պետություն, տնտեսության զարգացման տեմպերն արագացրեց հատկապես 2006թ. սկսած, երբ շահագործման հանձնվեց Բաքու-Թբիլիսի-Զեյխան նավթամուղը, որը հնարավորություն տվեց կտրուկ ավելացնել նավթի արտահանման ծավալները: Ադր-

<sup>1</sup> Ադրյուրը՝ հեղինակի կատարած հաշվարկներ:

բեջանի նավթային արդյունաբերությունը պայմանավորում է երկրի արտահանման 94%-ը, տեղական արդյունաբերության 60%-ը և պետական բյուջեի եկամուտների 70%-ը [5, p. 58]: Ինչ վերաբերում է Բելառուսին, ապա այն մեծ խնդիրներ ունի մասնավորապես գնաճի մասով, որը 2013թ. 18,3% էր (տե՛ս Աղյուսակ 1), իսկ 2012թ.<sup>1</sup> 59,2%:


2013թ. նախորդ տարվա համեմատությամբ Ռուսաստանի ՏԳԲ-ն (42,7) անկում է ապրել, ինչը հանգեցրել է երկրի՝ երրորդից հինգերորդի դիրքային փոփոխության: Դա մեծապես պայմանավորված էր բյուջեի հաշվեկշռով, որը նախորդ տարվա պրոֆիցիտայինի փոխարեն 2013թ. դեֆիցիտային էր: Այնուամենայնիվ, 1 շնչի հաշվով ՀԱԱ լավագույն ցուցանիշը Ռուսաստանինն է (տե՛ս Աղյուսակ I):

Այստեղ կարևոր է նաև անդրադառնալ այն հանգամանքին, որ եթե Քաղաքական գործոնների ինդեքսում դիտարկվող պետությունների արձանագրած ցուցանիշների տարբերությունները մեծ են, ապա Տնտեսական գործոնների ինդեքսում՝ հակառակը: Այսինքն՝ քաղաքականության ոլորտում իրական բարեփոխումների և առաջընթացի տեսակետից նշված պետությունները բավական տարբեր են, իսկ տնտեսական զարգացածության առումով գտնվում են զրեթե միևնույն մակարդակում:

Ի տարբերություն ՏԳԲ-ի, ԺՄԻ Սոցիալական գործոնների ինդեքսի 2013թ. ամենաբարձր ցուցանիշն ունի Բելառուսը՝ (տե՛ս Գծապատկեր 4).

#### Գծապատկեր 4

*Սոցիալական գործոնների ինդեքսը (ՏԳԲ), (2012թ., 2013թ.)<sup>1</sup>*



<sup>1</sup> Աղյուսակ՝ հեղինակի կատարած հաշվարկներ:

Բելառուսի կառավարության վերջին տասնամյակի սոցիալական քաղաքականությունը բավական արդյունավետ էր [6]: Համեմատության համար տեղին է նշել, որ եթե 1999թ. բնակչության աղքատության մակարդակը 46,7% էր, 2000թ.՝ 41,9%, ապա 2013թ. այդ ցուցանիշը եղել է ընդամենը 5,5%<sup>1</sup>: Դիտարկվող պետությունների շարքում Բելառուսի միջին ամսական աշխատավարձը (Ճշգրտված ԱՄՆ գնողունակության ցուցանիշով) ամենաբարձրերից է, իսկ գործազրկության մակարդակն ու Զինի ինդեքսը՝ ամենացածրերից (տե՛ս *Աղյուսակ I*): Հատկանշական է, որ Բելառուսի ՍԳԲ-ի և ՏԳԲ-ի կոռելյացիոն գործակիցը բավական բարձր է ( $R_{SGB/TGB} = 0,9$ ), որը խոսում է վերջիններիս սերտ կապի, ինչպես նաև սոցիալական ոլորտում տնտեսական զարգացման արդյունքների ներդրման մասին:

ՍԳԲ-ի նվազագույն ցուցանիշն ունի Վրաստանը, որին հաջորդում է Հայաստանը: Ե՛վ Վրաստանը, և՝ Հայաստանն ունեն գործազրկության հետ կապված լուրջ խնդիրներ: Մասնավորապես, Վրաստանում բավական բարձր է Զինի ինդեքսը (0,414): Հատկանշական է, որ թեև Վրաստանում աղքատության մակարդակը ցածր է, այնուամենայնիվ, հասարակության բնեուացվածության մակարդակը բարձր է: Մինչդեռ, Հայաստանի սոցիալական ոլորտում առկա լրջագույն խնդիրներից է հենց աղքատության մակարդակը, որը 2012թ. տվյալներով՝ կազմել է 32,4%<sup>2</sup>:

ԳԳԲ-ի լավագույն ցուցանիշն ունի Մոլդովան (63,1) (տե՛ս *Գծապատկեր 5*): Վերջին տասը տարում Մոլդովայի կառավարությունը գրեթե կրկնապատկել է կրթությանն ուղղված ծախսերը: Մասնավորապես, ճգնաժամային 2009թ. դրանք եղել են ՀՆԱ 9,5%<sup>3</sup>, այն դեպքում, եթե միջին եվրոպականը 5,5% է: 2012թ. կրթության ոլորտում պետության կատարած ծախսերն ութ պետությունների շարքում ամենաբարձրն են՝ 8,4% (տե՛ս *Աղյուսակ I*):

Ինչ վերաբերում է Աղբեջանին, որը նվազագույն նիշն է ստացել այս ոլորտում (37,5), ապա հարկ է նշել, որ կրթության որակն անկախությունից հետո անկում է ապրել՝ հատկապես լայնատարած կոռուպցիայի պատճառով: Հետխորհրդային այլ պետությունների համեմատ՝ Աղբեջանում բավական


<sup>1</sup> <http://data.worldbank.org/indicator/SI.POV.NAHC> (20.10.2014):

<sup>2</sup> <http://data.worldbank.org/indicator/SI.POV.NAHC>, <http://www.armstat.am> (20.10.2014):

<sup>3</sup> <http://data.worldbank.org/indicator/SE.XPD.TOTL.GD.ZS> (20.10.2014):

ցածր է բարձրագույն կրթության հաստատություններում ընդգրկվածների մասնաբաժինը՝ 15%, այն դեպքում, եթե Կովկասում այդ ցուցանիշը միջինը 28,3% է [7]: Կրթությանն ուղղված ծախսերն աստիճանաբար նվազել են՝ 1999թ. գրանցված ՀՆԱ 4,2%-ից 2011թ. հասնելով 2,4%-ի<sup>1</sup>, ինչը նշանակում է, որ պետության «նավթային հաջողություններն» ու տնտեսության ոլորտում արձանագրած առաջընթացը շրջանցում են կրթության ոլորտը: Դրա մասին է վկայում նաև Աղբբեջանի ԿԳԲ-ի և ՏԳԲ-ի կոռելյացիոն գործակիցը, որը նույնիսկ բացասական է ( $R_{ԿԲ/ՏԳԲ} = -0,3$ ):

***Գծապատկեր 5***  
***Կրթական գործոնների ինդեքսը (ԿԳԲ), (2012թ.<sup>2</sup>)<sup>3</sup>***



ԱԳԲ-ի ամենաբարձր ցուցանիշն ունի Վրաստանը (57,9), իսկ նվազագույնը՝ Ղազախստանը (38,2) (տե՛ս Գծապատկեր 6):

Վերջին տասը տարում Վրաստանում առողջապահությանն ուղղված պետության ծախսերն<sup>4</sup> ավելացել են գրեթե երկու անգամ՝ 2012թ. կազմելով 9,2%: Կյանքի սպասվող տևողությունը նույնպես դրական աճ է արձանագրել ուսումնասիրվող ժամանակահատվածում (տե՛ս Աղյուսակ 1): Ղազախստանում կյանքի սպասվող տևողությունը նույնպես աճել է: Եթե 1995թ. այս երկրում մարդկանց կյանքի սպասվող տևողությունը 64,9 տարեկանն էր, ապա 2012թ. դրությամբ այդ ցուցանիշն արդեն եղել է 69,6 տարեկանը: Իսկ ահա

<sup>1</sup> <http://data.worldbank.org/indicator/SE.XPD.TOTL.GD.ZS> (20.10.2014):


<sup>2</sup> Հաշվի առնելով, որ ՀՀ պաշտոնական կայքում 2013թ. համապատասխան տվյալները դեռ հրապարակված չեն, ԿԳԲ-ի հաշվարկներն իրականացվել են միայն 2012թ. տվյալների հիման վրա:

<sup>3</sup> Աղյուսը՝ հեղինակի կատարած հաշվարկներ:

<sup>4</sup> <http://data.worldbank.org/indicator/SH.XPD.TOTL.ZS> (20.10.2014):

պետության՝ առողջապահության ոլորտի ծախսերը 1990թ. երկրորդ կեսի համեմատությամբ կրճատվել են: Հատկանշական է, որ դիտարկվող պետությունների բնակչության շարքում հայաստանաբնակներն ամենաերկարակյացն են, որոնց կյանքի սպասվող տևողությունը կազմում է 74,4 տարեկանը (տե՛ս Աղյուսակ I):

*Գծապատկեր 6  
Առողջապահական գործոնների ինդեքսը (ԱԳԲ), (2012թ.<sup>1</sup>)<sup>2</sup>*



### *Եզրակացություններ*

Հետխորհրդային ութ երկրի ԺՄԻ քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրթական և առողջապահական գործոնների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած արձանագրված առաջընթացին, այնուամենայնիվ, բոլոր երկրները զգալի անելիքներ ունեն ժողովրդավարական բարեփոխումների ուղղությամբ: Քաղաքական համակարգի կայունության պահպանման տեսանկյունից անհրաժեշտ է ժողովրդավարական համախմբում: Մասնավորապես, դրա վկայությունն են 2013-2014թթ. Ուկրաինայում տեղի ունեցած և շարունակվող քաղաքական իրադարձությունները:

Այսպիսով՝ հիմնվելով ԺՄԻ միջերկրային վերլուծության արդյունքների վրա՝ կատարվել են հետևյալ եզրականգումները:

<sup>1</sup> Հաշվի առնելով, որ ՀԲ պաշտոնական կայքում 2013թ. համապատասխան տվյալները դեռ հրապարակված չեն, ԱԳԲ-ի հաշվարկներն իրականացվել են միայն 2012թ. տվյալների հիման վրա:

<sup>2</sup> Աղյուսակ՝ հեղինակի կատարած հաշվարկներ:

- Դիտարկվող պետությունների շարքում ժողովրդավարության ամենասրածը ինդեքսն ունի Մոլդովան, ամենացածը՝ Ադրբեյջանը: Եվրոպական ինտեգրման վեկտորն ընտրած Մոլդովայի, Վրաստանի և Ուկրաինայի ժողովրդավարության ինդեքսն ավելի բարձր է, քան ԵՏՄ անդամ պետություններինը, որոնցում առաջատարը Հայաստանն է:
- Հարավային Կովկասի երկրների պարագայում, ըստ ԺՄԻ-ի, պետությունները դասավորվել են հետևյալ հաջորդականությամբ. Վրաստան (48,1), Հայաստան (42,5), Ադրբեյջան (37,5):
- ՔԳԻ-ի փոփոխականների վերլուծությունը ցույց է տալիս, որ Մոլդովայում և Վրաստանում գերակայում են խորհրդարանական հանրապետությանը բնորոշ տարրերը: Ուկրաինայի և Մոլդովայի խորհրդարաններում, ի տարբերություն մյուս երկրների, իշխանության և ընդդիմության պատգամավորական տեղերի բաշխումը քիչ թե շատ հավասարաշափ է: Մյուս վեց պետություններում գործադիր իշխանության դեկավարի կուսակցությունը կամ նրան սատարող ուժերը կազմել են պատգամավորների բացարձակ մեծամասնություն:
- Եթե Քաղաքական գործոնների ինդեքսում դիտարկվող պետությունների ցուցանիշների միջակայքային հեռավորությունը մեծ է, ապա Տնտեսական գործոնների ինդեքսում՝ հակառակը: Այսինքն՝ քաղաքական ոլորտում, իրական բարեփոխումների և առաջընթացի տեսակետից, եվրոպական ինտեգրման ուղղությամբ շարժվող պետությունների ցուցանիշները բավական բարձր են (ընդ որում, Հայաստանի գրանցած արդյունքները շատ ավելի մոտ են այս խմբի պետություններին): Մինչդեռ, տնտեսական առաջընթացի և զարգացման առումով՝ բոլոր պետությունները գտնվում են գրեթե միևնույն մակարդակում:
- ՏԳԻ-ի լավագույն ցուցանիշն ունի Ադրբեյջանը: Բելառուսը, այս ինդեքսում գրավելով վերջին հորիզոնականը, միևնույն ժամանակ առաջատար դիրք ունի ՍԳԻ-ում, ինչը վկայում է այդ երկրի սոցիալական արդյունավետ քաղաքականության մասին: Բելառուսի ՏԳԻ-ի և ՍԳԻ-ի կոռելյացիոն գործակցի բարձր ցուցանիշը մատնանշում է տնտեսական ներդրումների բարձր մակարդակը սոցիալական ոլորտում:
- Հատկանշական է ԺՄԻ-ում ընդգրկված փոփոխականներից տնտեսական ազատության ինդեքսի համեմատական վերլուծությունը, որի հա-

մածայն՝ Հայաստանն ու Վրաստանը արձանագրել են բարձր ցուցանիշներ, որոնց միջինը մոտ է ԵՄ ցուցանիշին (71), այնինչ Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի միջինացված ցուցանիշը հավասար 55-ի (տե՛ս Աղյուսակ I): Սա նշանակում է, որ Հայաստանի և Վրաստանի տնտեսություններն ավելի ազատականացված են և այս առումով ավելի մոտ են ԵՄ տնտեսական համակարգին:

Մարտ, 2015թ.

### Աղյուրներ և գրականություն

1. *Ալեքսանյան Արույսակ*, Հայաստանի մողովդավարության մակարդակի ինդեքսը (1995-2012թթ.) // Բանբեր Երևանի համալսարանի /Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն/ 144.6, 2014 (№ 3), էջ 60-75:
2. Freedom House. 2014. Freedom in the World. Annual Report.
3. Kaufmann, Daniel, Kraay, Aart and Mastruzzi, Massimo, 2010, "The Worldwide Governance Indicators: Methodology and Analytical Issues." World Bank Policy Research Working Paper No. 5430. Washington, D.C.
4. Transparency International, 2013, "Corruption Perceptions Index".
5. Bayramov, Vugar, 2012. "Spotlight on the Azerbaijani economy." In Spotlight on Azerbaijan, edited by Adam Hug, pp. 56-64. London: The Foreign Policy Centre. Accessed March 11, 2014. <http://fpc.org.uk/fsblob/1462.pdf>
6. Vienna Institute for International Economic Studies. 2010. Social protection and social inclusion in Belarus, Moldova and Ukraine - Synthesis Report. Vienna. Accessed May 02, 2014. <http://www.erisee.org/downloads/2013/2/Social%20protection%20and%20social%20inclusion%202010.pdf>
7. UNICEF. 2010. "Education in Azerbaijan: Country Profile", p. 2. Accessed September 15, 2014. [http://www.unicef.org/ceecis/Azerbaijan\\_2010.pdf](http://www.unicef.org/ceecis/Azerbaijan_2010.pdf)

### ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԻՆԴԵՔՍԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՄԻՋԵՐԿՐԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

#### Արույսակ Ալեքսանյան

Ամփոփագիր

Հոդվածում հաշվարկվում և ներկայացվում է Հայաստանի, Վրաստանի, Աղյօքանի, Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ռւկախնայի, Մոլդովայի 2012 և 2013թթ. ժողովրդավարության մակարդակի ինդեքսը, կատարվում է համեմատական վերլուծություն: Հեղինակը վերլուծում և համեմատում է նաև վերոնշյալ ութ պետություններն ըստ քաղաքական, տնտեսական, սոցիալական, կրթական և առողջապահության մակարդակի ինդեքսը:

հական գործոնների ինդեքսների: Հետազոտությունն ուղղված է բացահայտելու՝ արդյոք ինտեգրման եվրոպական և եվրասիական վեկտորներ ընտրած պետություններն ունեն ժողովրդավարության միանման՝ թե՝ տարբեր մակարդակներ:

## СРАВНИТЕЛЬНЫЙ МЕЖСТРАНОВОЙ АНАЛИЗ ИНДЕКСА УРОВНЯ ДЕМОКРАТИИ

*Арутсьяк Александян*

### Резюме

В статье автор измеряет и представляет Индекс уровня демократии Армении, Грузии, Азербайджана, России, Беларуси, Казахстана, Украины, Молдовы 2012 и 2013гг., дается сравнительный анализ. Автор также исследует и сравнивает данные страны по индексам политических, экономических, социальных, образовательных и здравоохранительных факторов. Исследование выявляет, насколько одинаковы или различны уровни демократии стран европейской и евразийской интеграции.

## COMPARATIVE CROSS-COUNTRY ANALYSIS OF THE INDEX OF DEMOCRACY LEVEL

*Arusyak Aleksanyan*

### Resume

In the article the author measures and presents the Index of Democracy Level of Armenia, Georgia, Azerbaijan, Russia, Belarus, Kazakhstan, Ukraine, Moldova in 2012 and 2013, and makes comparative analysis.

The author also examines and compares the mentioned countries by their indices of political, economic, social, educational, and public health factors. The study is aimed at identifying whether the countries that have chosen the European and Eurasian integration have similar or different levels of democracy.

## ՀՈՒՇԱԳԻՐ ՀԵՂԻՆԱԿԻՆ

«21-րդ ԴԱՐ» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ, որոնցում առաջնային են ՀՀ հիմնախնդիրների վերաբերյալ թեմաները: «21-րդ ԴԱՐ» հանդեսի խմբագրական խորհրդի կողմից պատվիրված նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳՎՀ-ի սեփականությունը: Զեռագրերը գրախոսվում են: «21-րդ ԴԱՐ» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

### Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), *«Sylfaen»* տառատեսակով, 11 տառաշափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 15 էջը:
2. Հոդվածի հետ պարտադիր ներկայացնել հեղինակի ինքնակենսագրությունը (*CV*), ինչպես նաև բանալի-բառեր:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև բացվածքը՝ 1.5: Հոդվածը պետք է ունենա ամփոփագիր (հայերեն, ռուսերեն, անգլերեն):
4. Հոդվածում օգտագործված աղյուրների և գրականության հղումները բերվում են քառակուսի փակագծերում՝ միացյալ և հաջորդական համարակալումով, այդ համարի կողքին նշելով հոդված էջ(եր)ը, եթե հյուման աղյուրը մեկից ավելի անգամ է օգտագործվում ամբողջ հոդվածում: Էջը պետք է նշել աղյուրի բնագրի լեզվով՝ էջ (հայերեն), ս. (ռուսերեն), թ. (անգլերեն, ֆրանսերեն կամ այլ լեզվով աղյուրներ). օրինակ՝ [1], [2, с. 11-12]: Հոդվածի վերջում, «Աղյուրներ և գրականություն» բաժնում, նույն հաջորդականությամբ բերվում է գրականության ցանկը, 10 տառաշափով, բնագրի լեզվով, օրինակ՝
  - *Մարգարյան Ա.*, Երկրի մրցակցային ռազմավարությունը տնտեսական անվտանգության համատերասում, «21-րդ դար», # 1, էջ 5, 2003:
  - *Шарипова Р.*, Панисламизм сегодня: идеология и практика Лиги Исламского Мира, с. 15, М., 1986.
  - *Yasha Lange*, Media in the CIS, Center for Civil Society International, Amsterdam, 1997, from <http://www.internews.ras.ru/books/media>, Sept. 28, 1998.
5. Ինտերնետային աղյուրների հղումները ցանկալի է նշել տողատակում:
6. Հայկական, լատինական և կյուրելյան տառերից տարբեր աղյուրների դեպքում հղումները կատարել լատինական այրութենով՝ փակագծերում տալով թարգմանությունը և լեզուն. օրինակ՝ *Al-Arman fi Lubnan* (Հայերը Լիբանանում, արաբ.):

Խմբագրություն

**«21-ՐԴ ԴԱՐ» տեղեկատվական-վերլուծական հանդես  
Խմբագրական խորհուրդ**

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ  
ՀՀ Արդարադատության նախարարության  
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.  
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժեթիքի 23/1  
Կայք՝ [www.noravank.am](http://www.noravank.am)  
Էլ.-փոստ՝ [21dar@noravank.am](mailto:21dar@noravank.am), [office@noravank.am](mailto:office@noravank.am)  
Հեռախոս՝ +(374 10) 44 38 46  
Ֆաք + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 20.07.2015թ.  
Թիվ 4 (62), 2015թ.  
Տպաքանակ՝ 200:

Թուղթը՝ կավճապատ, ֆորմատը՝ 70x100 1/16  
Պայմանական 8 մամուլ: Տառատեսակը՝ Sylfaen  
Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում